




ԹՈՐԳՈՄ ԱՐՔ.
ԳՈՒՇԱԿԵԱՆ

ՅԱԿՈԲ
ՕՇԱԿԱՆԻ
«ՍԱՀԱԿ
ՊԱՐԳԵԷԱՆ»
ՎԷՊԻՆ
ԳԼԽԱԿՈՐ
ՀԵՐՈՍՆԵՐԸ



ՎԱՀԱՆ
ԹԷՔԷԵԱՆ



ԶԱՊԷԼ
ԵՍԱՅԵԱՆ



ՍՈՒՐԵՆ
ՊԱՐԹԵԷԱՆ



ԱՐՇԱԿ
ՉՕՊԱՆԵԱՆ



ԱՐՓԻԱՐ
ԱՐՓԻԱՐԵԱՆ



ԱԼԵՔՍԱՆԴՐ
ՇԻՐՎԱՆՉԱԳԷ

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

- | | |
|--------------------------------------|--------------------------|
| 1.-Յ. ՄԱՆՈՒԿԵԱՆ | Բանաստեղծություններ |
| 11.-* * * | Հրանդ Մարգարեան |
| 13.-Հ. ՄԱՐԳԱՐԵԱՆ | Շրջանակ |
| 29.-Ռ. ԴԱԻՈՅԵԱՆ | Մղձաւանջ - 31 |
| 30.-Գ. ԱԲԷԼԵԱՆ | Պէյրուք |
| 44.-Մ. Ռ. ԱՐՈՒՍԷՅԵԱՆ | Դու այն մարդն էիր... |
| 45.-Վ. ԲԱԲԱՅԵԱՆ | Բերդաձորի Անդրանիկը |
| 47.-Ա. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ | Հայաստան աշխարհ... |
| 48.- » » | Օրը ցուրտ է, մառախլապատ |
| 53.-Պ. ՍՆԱՊԵԱՆ | A Room in Paris |
| 71.-* * * | Հրամանագրով |
| 75.-ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԳՐՈՂՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ | Բողոքի գիր |
| 76.-* * * | Նախատիպարներու հետքերով |
| 79.-* * * | Վերծանման փորձեր |
| 124.-* * * | Նոր վկայութիւն մը |
| 126.-Վ. ՇՈՒՇԱՆԵԱՆ | Օրագիր |
| 136.-Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ | Հետաքրքրական նախաբայլ մը |
| 141.-* * * | Լոյս տեսան |
| 146.-* * * | Մշակութային լուրեր |

ՀԱՄԱՋԳԱՅԻՆԻ
ՆՀԱՆ ՓԱԼԱՆՃԵԱՆ ՃԵՄԱՐԱՆ
ԱՀԱԿԵՐՏԱԿԱՆ ԳՐԱՂԱՐԱՆ

Բագին

ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ Կ. ԱՐՈՒԵՍՏԻ

ԼԳ. ՏԱՐԻ 1-2-3 ՅՈՒՆ.-ՓԵՏՐ.-ՄԱՐՏ 1995 ՊԵՅՐՈՒԹ

Յ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

ՄԻՋ ՕՐԷԻՍ

Եթէ ի միջօրէական աստուծոյ
փորձոթեանցն արեւոյնակէզ
վարենիշ խորշակնն զիս ի
յարմարոյց խախտել կարծիցէ,
ի զօրոթեանն նշանիդ լոսոյ
խլեալ Գոսասցի:

Բան Կ.Զ
ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԸՅԻ

Շաքօ Տ'իֆի թիարանէն խոյս տուած
Թիապարտն եմ երէկի,
Որ ափերուդ կենսալոյս՝
Կը խարսխէ առասպելն իր գոյութեան՝
Որոնելով հանգրուաններն հեռակայ՝
Նոր հաւատքի մը բոցուն:

Ես չեմ յարիր լուսամուտին անցեալիս,
Որուն խուցին շիրմաստուեր՝

Յիշատակներ դեռ կ'այրին,
 Վկայելով համակ խանդը ոգեսպան՝
 Կալանաւոր պահերուս,
 Ջի հրահոս երակներուդ մէջ ահա,
 Երազներուդ ոսկիգէտ,
 Արդ, գտած եմ վերջապէս,
 Լոյսիդ տենդի՛ն բացուելու
 Հուսկ երաշխիքն օրհնարեր...


Մեղա՛յ լոյսիդ,
 Որ երգեցի բաղձանքները ցայգաստուեր՝
 Ուղիներու փշածաղկ.
 Մեղա՛յ շունչիդ,
 Որ խնկեցի ադուալոյսը տրտմայուշ՝
 Երազներու անիմաց.
 Մեղա՛յ կանչիդ,
 Որ կառչեցայ ծփանքներուն հողմածուփ՝
 Աղջամուղջի խոհերու:

Ես կ'ողջունեմ խինդն ասիերուդ հրաշագեղ,
 Ուր օրերն իմ կ'առնեն նոր թափ, նոր յղացք,
 Զգտումներով լուսամբարձ,
 Խոկումներով լուսակերպ...

Ես կ'ողջունեմ լոյսն հայեացքիդ տեսլագեղ,
 Ուր կը խայտայ հին երազն իմ տխրաւեր՝
 Ապրումներով կենսախայտ,
 Խոյանքներով տենդայոյզ...

Շողերուդ տակ կ'այլակերպիմ ես ահա,
 Կ'այլակերպի գոյավիճակն իմ անցեալ.
 Շողերուդ տակ զիս նոր երգեր կ'առնեմ
 Դիւցազնարոյր եւ հզօր...

Շողերուդ տակ կ'այլակերպի յուշ առ յուշ
 Թիարանն այն գետնամած,
 Ուր քանի՛ ցայգ, քանի՛ ցերեկ,
 Ողջունեցի լոկ ժպիտը ախտածէտ՝
 Տառապայեղ փայրկեաննիրու յանախանքին...
 Ա՛լ յանձնած եմ ժամանակի հողմերուն,
 Ինչ որ տուաւ քակատագիրն օր մը ինձի՝
 Իբրեւ դիպուած կորստարեր
 Եւ պատուհաս ահաւոր.
 Եւ մատնեց զիս՝



188-2019

Շիրմահամրոյր վիճակներու
 Ստուերաքարշ մտերմութեան...

Թող էութեանդ հնոցին մէջ բոցակէզ՝
 Հրահալին կնդրուկ-կնդրուկ,
 Հրախամրին շափրակ-շափրակ,
 Շիրմահանգոյց մտորումներն անցեալիս.
 Եւ կենսախոհ քու տարերով էափոխ՝
 Դառնան ծիծղուն եւ բնապաշտ տենչանքներու
 Անշրջափակ կախարդանք
 Եւ գոյապաշտ գիտակցութեան՝
 Զգողական գօրութիւն...

Թող հրախանդ շունչիդ տակ
 Անէանայ խոհ առ խոհ՝
 Անցելատոյզ ամէն մէկ պահ ցնորական.
 Կազմալուծուի հեւք առ հեւք,
 Դամբանային ցուրտ դալկութեամբ մեղկացած՝
 Ամէն վիճակ զգայական...

Թող հրախայտ լոյսիդ տակ,
 Հրահոսի երակներէն հաւատքիս
 Նոր պայքարի տե՛նդը գօրեղ,
 Եւ քու շունչով յառնէ կրկին
 Հողմանուագ երգը անդարձ՝
 Արեւապաշտ երազանքիս ոգիներուն,
 Դառնայ բամբիռ,
 Դառնայ ռազմերգ,
 Թող որ դառնայ կալանաւոր բաղձանքներու
 Վրիժախանձ ռազմակոչ...

Հոկտեմբեր 1994

ՃԱԿԱՏԱԳՐԻՆ

Կ'ուզեմ պահ մը ներփակել քեզ
 Վարդի մը նուրբ փերթերուն մէջ ցօղաթուրմ,
 Որ միշտ յառիս աչքերուս՝
 Այգաբացի լուսաժպիտ ողջոյնով...
 Կ'ուզեմ օժտել քու հոգիդ՝
 Վարդահամրոյր յատկութեամբ,

Որ վարդի պէս ըլլաս անբիծ՝
 Մեղսաբաւալ ընթացքն ի վար օրերու.
 Որ վարդի պէս դառնաս սիրտը ընկալուչ՝
 Տառապակոծ աշխարհին.
 Եւ ընկալես կեանքի ցաւոտ մեղեդին՝
 Զեղումներով յուզական.
 Որ վարդաշիթ արտասուքով
 Ցրուես թախիծն անմեկին,
 Դամբանային մութ խոհերով տուայտող՝
 Էականերու բիրաւոր...

Կ'ուզեմ մոռնալ պահ մը գէթ,
 Որ ներգործօն տարրն ես կեանքին բովանդակ,
 Որ բանաւոր ամէն էակ.
 Եւ շնչաւոր ամէն կերպար,
 Միլ ու ծաղիկ,
 Եւ համասփիւռ իրերն համայն բնութեան,
 Քեզմով կ'առնեն նախածնունդն անվերծան՝
 Իրենց կեանքի հոլովոյթին վաղանցուկ...

Կ'ուզեմ մոռնալ պահ մը գէթ,
 Որ դուն միայն գոյապատճառն ես ծածուկ՝
 Հագարակնեայ տառապանքին մարդկութեան.
 Որ դուն միայն խորհրդանիշն ես անյայտ՝
 Ժամանակի դիպուածներուն պատահական,
 Դրուագներուն չարաղէտ.
 Որ դուն ուժն ես բախտորոշ՝
 Նողկանքներու ժանտ ու ժահրոտ.
 Եւ ոգի՛ն ես ծնուցիչ՝
 Տոփանքներու գարշ ու գազիր.
 Կ'ուզեմ մոռնալ,
 Որ նախերգն ես՝
 Կեանքի տղմուտ յորձանուտին յօրինուող՝
 Ծածկախորհուրդ նուագներու մեղսական
 Եւ խաղերու դաւադիր.
 Որ քինախանձ ատելութեամբ շեփորուած՝
 Ստապատիր ահագանգն ես մահասոյլ՝
 Խղճմտանքի մունջ մեղեդին խաթարող.
 Որ հաւատքի գօրութիւնը խորաչափող՝
 Դուն ես պահը փորձութեան
 Եւ ժխտական անդրադարձն ես տարակոյսի՝
 Ճշմարտութեան գուլալ հոգին աղարտող...

Կ'ուզեմ մոռնալ պահ մը գէթ,
 Որ դուն միայն շարժառիթն ես սկզբնական՝
 Ապրումներուն մեր երկդիմի,
 Զգտումներուն անգիտակից.
 Եւ միևնչեւ իսկ շարժումներուն բնագրական
 Եւ տենդերուն խելայեղ...

Կ'ուզեմ պահ մը ներփակել ինձ
 Վարդի մը նուրբ փերթերուն մէջ ցողաթուրմ,
 Որ կարենամ էափոխուած տեսնել ինձ
 Եւ վերագրել անունիդ՝
 Ըմբռնումներ սրբախորհուրդ,
 Յատկանիշներ բարեհամբոյր.
 Որ կարենամ մոռնալ գէթ,
 Որ խոհերուս նամբաներուն թափառող՝
 Դարանակալ նոյն ստուերն ես նենգախոհ,
 Նոյն ժպիտը խաբէական,
 Եղեռնագործ նոյն դահնապետն անողոք,
 Որ ծաղկաշուրթ օր մը գարնան,
 Խոշտանգեցիր ողջ ժողովուրդ մը անմեղ՝
 Անգթութեամբ անբաւելի,
 Մեղութեան մէջ ոգերնակ՝
 Անապատի անվայրափակ ամայքներուն...

Կ'ուզեմ պահ մը ներփակել ինձ
 Վարդի մը նուրբ փերթերուն մէջ ցողաթուրմ,
 Որ վարդի պէս բացուիս կեանքին՝
 Բուրումնաւէտ քաղցրութեամբ.
 Համասփոքս սէր ու խայտանք աշխարհին՝
 Վարդաշղարշ Մայիսներու բուրմունքով.
 Եւ վարդային լուսաշափրակ վայելչութեամբ՝
 Դառնաս ամէն տան շեմին,
 Վարդապսակ դրասանգ,
 Որ տոգորես ամէն երդիք,
 Ոգեղինես տխրադալուկ ամէն տենչանք՝
 Հարսանեկան պսակադիր բերկրութեամբ...

Սեպտեմբեր 1994

ՈՂԵՇԱՒԻՂ ՏԵՍԻԼ ՔԻՆ

Ի՞նչ անուն տամ անխորագիր ինքնութեանդ
Եւ գոյութեանդ անդիմագիծ պատկերին,
Երբ կը ծաղկիս, կը ծաւալիս մտքիս մէջ,
Ժամանակի հարցերուն պէս հրատապ,
Նուանելով էութիւնն իմ՝
Խոստումներով սիրատարփ...

Խնկամորմոխ մեծաստանէն օրերուս՝
Ես կը լսեմ ձայնդ աղու,
Որ կը կանչէ գիս նորէն՝
Տարփայարոյց իդներուդ հին խնայքին...

Ինչպէ՞ս կըցար գալ կրկին
Ներաշխարհիս անայցելու սեմէն ներս,
Բանալ հոգիս կախարդանքին հեռայուշ՝
Տարփանուագ հին օրերուդ ցայգերգին...

Գիտե՞ս արդեօք,
Որ քու համբոյրը վերջին,
Ո՛չ կորստեան մատնեց գիս,
Ո՛չ ալ բացաւ դարպասները լուսաւոր՝
Նոր խնդութեան բարեյուսոյ հրուանդանին...
Համբոյրը քու
Յայտնագործեց ոչ մէկ կասկած մտքիս մէջ,
Ո՛չ ալ յայտնեց խորհուրդն անգիր՝
Նոր օրերու անխորագիր իմաստութեան...

Քեզ կը տեսնեմ վերստին
Հին երագիս որմերուն տակ փլատակ,
Ուր հին սիրոյ մեղեդիներն են անդարձ,
Որ ողբացեալ գարուններուդ
Գարնանամուտը կ'ողբան.
Ուր հոգեգրաւ հին ցանկութեան
Ջրահարսերն են նորէն,
Որ կը խլեն խինդ ու արցունք աչքերէս...

Ձուր կը փնտռեմ երանութիւնը կեանքին
Անցելայայտ թովչանքին մէջ աչքերուդ,
Որ չեմ գիտեր, թէ ինչո՞ւ
Փոխան գարնան կենսանորոգ հմայքին՝
Կը վարակեն պահ մը գիս

Յանախանքովն անստուեր՝
Հին թախծութեան մը անկէզ...

Այգաբաց է շուրջս արդէն,
Մինչ դուն, ժամեր դեռ կը յառիս նայուածքիս՝
Նոյն ժպիտով անքիթ,
Նոյն կարօտով տենչայոյզ...

Ժամն է արդէն
Առաւօտեան օրհնադօղանց ժամերգութեան,
Ժամն է խունկի եւ աղօթքի
Եւ խնկարոյր գեղումներու երկնաբարբառ.
Ժամն է լոյսի եւ արթնութեան
Եւ լուսեղէն սխրանքներու հոգեզուարն...

Պահն է արդէն
Հեռամատոյց բաղձանքներու ընկալչութեան,
Երբ ձիթեմին կը տարածէ մեղկօրէն՝
Գալար ոստերն իր բեղմնասուն՝
Արեգակի ցոփ գրգանքին վաւաշոտ.
Մինչ դուն կանգնած շողերուն տակ վաղորդեան
Լուսանաճանց արհիւի,
Անցելասոյզ տարփանք իմ,
Ջիս կ'առնիմքնս դեռ անթարթ՝
Լուսահանդերձ քու տեսքով,
Որ ես մնամ տառապազին ցանկութեամբ,
Քու գրգանքիդ ծարաւի՝
Անցելապաշտ նոյն տղան...

Նոյեմբեր 1994

ՅԼՊԱՂԱԾ ՄՏԵՐՄՈՒԹԻՒՆ

Մենք ուշ, շատ ուշ մտերմացանք,
Երբ ցաւ մը հին,
Հոգեդաշտին մէջ օրերուս
Վերադարձի իր քանապարհը կը փնտռէր...

Պահ մը առաջ,
Անծանօթներ էինք դեռ,
Գոյակցական ուղիներուն մէջ կեանքին,

Ուր չունէինք հանգիտութիւնն իսկ տարտամ՝
Մեր վիշտերուն ներշատուկ,
Ապրումներուն ներգոյակ...

Ո՞վ գուգորդեց իրարու
Կեանքի ներհակ բեւեռներուն մէջ անած՝
Մեր երազանքն ու հոգին.
Եւ լծորդեց մեր խորհուրդները խոտոր՝
Նոյն տարփանքին յանկուցիչ,
Ճակատագրի եղկ սաղրանքէն խուսափած՝
Ջերթ ըզանքներ գոյաւոր...

Երբ կը մայիմ աչքերուդ,
Ժամանակի հին հեւքերուն ունկնդիր՝
Նոր խնդութեամբ սիրատարփի,
Քեզ կ'ողջունեն իրրեւ ոգին մարմնաւոր՝
Իմ ըզակաթ պատրանքներու առասպելին,
Մերթ, մայուածքիդ մէջ ծիծղուն,
Կ'ապրիմ կսկիծը անկէզ,
Անցեղազեղ բաղանքներու հարսնացած.
Եւ բառերուդ մէջ հնչուն,
Կը զգամ զարթնումն այգաշունչ՝
Իմ ոսկեյուշ ցնորքներու ցնծերգին...

Պատահական հանդիպումով գոյացած
Պահն այս չքնադ,
Գուցէ օր մը թարշամի,
Ջերթ ողջակէզ ցանկութիւն.
Եւ գուցէ դուն,
Դառնաս կրկին ներաշխարհիդ ակունքին,
Հին երգերու կոտորանքին վրայ բարդացած՝
Տառապանքի նոր առասպել մը իրրեւ,
Բայց խոհերու գիշերին մէջ միգամած՝
Պիտի մնայ խայտանգանչ մայուածքէդ
Շող մը գրգանք,
Որ առընչէ երազանքն իմ ու հոգիս՝
Կենսահրաշ դիպուածի մը
Նոր երկունքին տարածամ...
Պիտի մնայ էութենէդ շողարձակ՝
Ճանանչ մը լոյս,
Որ գուգորդէ գիս նորէն
Տարփահանգոյց նոր պահերու
Մտերմութեան յապաղած...

Դուն, ուղեւոր անծանօթ,
Պիտի շրջիս հոգեղաշտին մէջ օրերուս,
Վերադարձի իր անապարհը որոնող՝
Անքուն ցաւի մը նման.
Կառչի՛ս կեանքիս՝
Յիշատակի հոգեհաղորդ քաղցրութեամբ.
Եւ տարագրես դո՛ւն ալ զիս,
Յիշողութեան ուղիներուն հեռաձգուած՝
Իրրեւ նոր լար զգայական,
Որուն հեծքէն ներմղուած՝
Վերակոչեմ ձայնանիշ առ ձայնանիշ,
Երկնեմ բարբառ առ բարբառ
Տուայտանքը ծնուցիչ՝
Իմ հովուական տենչանքներու յապաղած...

ՏԵՆՉԱՆՔԻ ՄԸ ՏԱՐԱՇԻՄՔԻ

Ձէի խորհեր,
Որ կրնայիր շրջափոխուիլ այսօրան շուտ՝
Երազի մը ոգեպատիր.
Եւ կրնայիր պարուրել զիս՝
Անդոհանքի նման խոր,
Երկիւղանքի նման եղկ.
Եւ խորանալ դահլիճներուն մէջ մտքիս՝
Անխորագիր տխրութեամբ...


Սակայն որքան մօտենամ
Ներգոյական վիճակներուն էութեանդ՝
Կարծես նոյնքան կը հեռանամ
Ժամանակի կանխագուշակ մայուածքէն.
Կը հեռանամ դիպուածներէն անցեղիս,
Ուր կան յոյզեր,
Ջգայական զեղումներով աւշայորդ,
Որ կ'առընչեն դեռ հոգիս՝
Ցնորքներուդ համբոյրին...
Ձէի խորհեր,
Որ կրնայիր էախառնել կարօտն իմ՝
Մեղկ թովչանքին յուշապարիկ գրգանքիդ.
Եւ կրնայիր մտալկել զիս կրկին՝
Իրրեւ սիրոյ խոհաբանդակ յիշատակ...

Կը ծաւալի ներքեւ հոգւոյս կամարներուն՝
 Համայնաստուեր թախծութիւն մը աղուալոյսի:
 Որ ո՛չ կեանք է եւ ոչ մահ,
 Ո՛չ պատրանք է եւ ոչ կերպար գոյաւոր,
 Ո՛չ անէծք է եւ ոչ օրհնանք բերկրարոյր,
 Այլ յարածուփ եւ յարալոյծ զգայնութեանց
 Անաշխարհիկ խոհակերպ...
 Գուն կը դառնաս քարանձաւէն իդներուս,
 Հոգեդարձի խնկազալար շաւիղով,
 Ուր տարփալուր ձայնիդ մէջ,
 Ես կ'իմանամ հեւք առ հեւք,
 Մոռացութեան յորձանուտին յանձնուած՝
 Ցաւիդ կրկներգը վերջին...

Ու կը յառիմ հիացումով անմեկին՝
 Լուսահանդերձ հմայքիդ,
 Առանց երբեք թափանցելու
 Ապաժաման քու յայտնութեան
 Խորհրդաստղ իմաստին.
 Առանց երբեք զգալու,
 Որ կրնայիր գիտակցութիւնը ըլլալ,
 Առհաւական մեր ցաւերուն սեւեռուն՝
 Զգտումներու յետադարձ.
 Գուցէ ըլլալ հանգիստութիւնը տխուր՝
 Մեղքի անգուն հալածախտին...

Ինչո՞ւ կու գաս եւ ինչո՞ւ
 Զիս կ'առնիմքս վերստին՝
 Զարմանայալ կերպարանքովն անցեալիս,
 Կատարելու հուսկ հաշուեփա՞կը արդեօք
 Խոռովներուն մեր յետնեալ,
 Թէ՛ մնալու խորհրդանիշն անբաժան,
 Տարաշխարհիկ ակունքներէդ ներմղուած՝
 Մշտամորմոք այն երգին,
 Որ կ'ոգորի, կը գալարի սրտիս մէջ,
 Անայգաբաց երգերուս բոքր տենդերով,
 Ինչպէս հողի արգանդին մէջ խլրտող՝
 Գարնան իդը սաղմնաւոր...

ՅԱԿՈՒ ՄԱՆՈՒԿԵԱՆ



ՀՐԱՆԴ ՄԱՐԳԱՐԵԱՆ

Տոքթոր Հրանդ Մարգարեան ծնած է Իրաքի Պասրա քաղաքը: Նախնական կրթութիւնը ստացած է տեղւոյն Հայոց Ազգային վարժարանին մէջ: Պետական երկրորդական վարժարան ասարտելէ ետք, անցած է Պաղտատ եւ յաճախած *Պաղտատի Համալսարանը* ու հետեւած Գիտութեանց բաժանմունքը, ուր տրամաբանութեան մէջ ստացած է Պի. Էս «յատուկ» վկայականը:

1962ին, Հրանդ Մարգարեան պետական կրթաթոշակով մեկնած է Միացեալ Նահանգներ եւ ստացած Մագիստրոսի եւ Փիլիսոփայական Տոքթորայի տիտղոսները Սթիվընս Ինստիտուտ Օֆ Թէքնոլոճիէն, Նիւ Ճըրզի, յաջորդաբար 1965ին եւ 1971ին:

Հետազօտութիւն կատարած է Նիւ Եորքի Քոլումպիա համալսարանին մէջ, ուր աւելի ետքը իբրեւ փրոֆեսէօր դասաւանդած է տարրաբանութիւն: Եղած է գիտաշխատող Ամերիկեան Պրիսթըլ դեղորայքի ընկերութեան մէջ՝ քսաներկու տարիներ: 1994ին ստացած է նաեւ Մագիստրոսի տիտղոսը Արիեստագիտութեան Ղեկավարութեան (ՄԷՆԷՃՄՆՐՁ աֆ Թէքնոլոճի) մէջ:

Գիտական կրթութեան զուգահեռ, տոքթ. Մարգարեան յաճախած է Նիւ Եորքի նշանաւոր թատերական դպրոցներէն Սըրքըլ ին տիը Սքուեր եւ Նիւ Եորք համալսարանը:

Եղած է հիմնադիրներէն Նիւ Եորքի Համազգայինի մասնաճիւղին, ինչպէս նաեւ «Համազգային»ի թատերախումբին, զոր կը գլխաւորէ 1967էն ի վեր:

Հ. Մարգարեան հեղինակած է հետեւեալ թատերգութիւնները. — «Ծրջանը» (1971), «Սողոմոն Թէհլիրեան» (1975), «Վարդանանք» (1979), «Աղօթքիս մի խառնուիր» (1981), «Հորիզոններէն հրկիզուած» (1983), «Ես աստղերը կ'ուզեմ գրկել» (1987), «Հայրիկ, լոյսի սուաքեալը» (1988), «Ողորդը» (1989), «Եւ երկնքէն երեք աթոռ ինկաւ» (1991), «Ա՛լ ժողովի չեմ երթար» (1992), «Հեթում արքայ» (1993):

Իսկ անգլերէնով՝ «Հայելիներ» (1994), «Վազեմ՝ չուշանամ» (1994), «Զրի տոմս տան, թատրոնի կ'երթամ» (1994):

Հրանդ Մարգարեան հեղինակած է նաեւ մէկ արարնոց հետեւեալ երկերը.—

«Վերծին», «Այդ անուշ լեզուդ ուտեմ», «Մեռնիլ չուզող անցեալը», «Կեանք մը հինգ վայրկեանի մէջ» եւ «Փոթորիկ գաւաթին մէջ»:

Ան բեմականացուցած է Մ. Մեծարեանի «Բանաստեղծութիւններ»ը, Յ. Թումանեանի «Սաքօ»ն, Պ. Սեւակի «Անյոյնի զանգակատուն»ը, Ռ. Սեւակի «Խենթը», Համաստեղի «Երնէկ այն օրերուն», Ն. Ընորհալիի «Լոյս»ը, Յ. Ծիրազի «Մայրը», Մ. Թէօլէօլեանի «Բանաստեղծութիւններ»ը, Ժագ Յակոբեանի «Բանաստեղծութիւններ»ը, Ա. Արփիկէի «Պատմուածքներ»ը, Դ. Վարուժանի «Բանաստեղծութիւններ»ը, Ռ. Յովհաննիսեանի «Հինգ օր մինչեւ անկախութիւն» եւ Հ. Մարգարեանի «Հարաբաղեան ղողանջներ»ը:

Թատերգութեան վերածած է Լեւոն Ծանթի «Դերասանուհին» վիպակը:

Թարգմանած եւ ղեկավարած է Ժան Անույի «Անթիկոն»էն հատուած մը:

Հրայր Թուխանեանի «Աստայնմընթ Պէրլին» անգլիախօս շարժանկարին մէջ՝ Հրանդ Մարգարեան ստանձնած է փրոֆեսէօր Լեւիսիսի դերը:

Մարգարեան առաջին անգամ բեմ բարձրացած է 18 տարեկանին, Պասրա, Յակոբ Պարոնեանի «Մեծապատի մուրացկաններ»ուն մէջ՝ բանաստեղծին դերով: Իր առաջին բեմադրութիւնը կատարած է 20 տարեկանին, Պաղտատ, յունական կեդրոնական բեմի ձեւին հետեւողութեամբ:

Մարգարեան ցարդ բեմադրած է 36 թատերգութիւններ եւ անձնաւորած է 40 տիպարներ:

Ան գրած է՝ ՀՕՄի 60ամեակի պատմութիւնը, որ շարժանկարի վերածուած է իր ասմունքով: Պատրաստած է լատենտողական յայտագիրներ, ինչպէս՝ «Խ. Հայրիկի մահուան 80ամեակը», «Անիի 1000ամեակը» եւ «Անթիլիասի դպրեւանքի 25ամեակը»:

1983ին հրատարակուած «Էթնիկ Թիլթըր ին տը Եունայթըթ ըՍթէյթս» գրքին մէջ, փրոֆեսէօր Նշան Փառլաբեան անդրադարձած է Մարգարեանի թատերական գործունէութեան:


1987ին՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. կաթողիկոսը Մարգարեանին շնորհած է Ս. Մեսրոպի շքանշանը:

1992ին, Հայաստանի մէջ կայացած Սիհուքահայ Թատրոնի Ա. Փառատօնին առթիւ, Սունդուկեանի անուան թատրոնին մէջ, Մարգարեան բեմադրած է իր հեղինակած՝ «Ծրջանը» երկը եւ արժանացած է Հայաստանի Գրողներու Միութեան՝ «Լաւագոյն թատերագիր» մրցանակին:

1993ին Հայաստանի Գրողներու Միութիւնը Հրանդ Մարգարեանը հաստատեց իբրեւ Հայաստանի Գրողներու Միութեան անդամ:

Հրանդ Մարգարեան առաջին անգամն է, որ կը տպագրուի «Բագին»ի մէջ:

Հ. ՄԱՐԳԱՐԵԱՆ



- ՎԱՅՐ՝ Որեւէ տեղ:
- ԺԱՄԱՆԱԿ՝ Մեր օրերը:
- ՏԻՊԱՐՆԵՐԸ ԽՕՍԳԻ ԿԱՄ ՄՈՒՏԳԻ ԿԱՐԳՈՎ՝
 - Ա. ՄԱՐԴ
 - Բ. ՄԱՐԴ
 - Գ. ՄԱՐԴ
 - Դ. ՄԱՐԴ
 - Ե. ՄԱՐԴ
 - Զ. ՄԱՐԴ
 - ՆԵՐՍԻ
 - Ա. ԿԻՆ
 - Բ. ԿԻՆ

Բաց է վարագոյրը: Բեմին վրայ կիսաւարտ կառոյց մը կայ՝ բաղկացած փայտեայ սնտուկներէ, զորս իբրեւ աթոռակներ ալ կարելի է գործածել:

ՎԵՑ ՏԻՊԱՐՆԵՐ (Առանձնապէս եւ տարբեր տեղերէ բեմ կու գան: Ամէն տիպար առանձին կեցած է եւ առանց ձայնի, խօսելու ձեւեր կ'ընէ:

Սրահին լոյսերը դանդաղօրէն կը մարին):

Ա. ՄԱՐԴ.— Ինչպէս կ'ըսէի, տարօրինակ արեւ մը կայ այսօր: Տարօրինակ խաղաղութիւն մը: Տարօրինակ բոյր մը: Ինծի այնպէս կը թուի, թէ մէկը մարդ արարածի ազատազրման տօնը կը տօնէ եւ այդ ծէսին համար, բուրուճնաւէտ բոյս կը ծխէ: Ճակատագրական հանգրուանի մը կեցած է մարդը եւ ինքզինքը կը տօնէ: Նախապաշարուճ չունիմ, բայց կը թուի, թէ մարդուն նախանձող աստուածները, ո՛ւր որ են՝ այցի պիտի գան, խորհրդաւոր արարողութիւն մը կատարեն, մեր քրտինքով ձեռք բերած ազատազրուճը կաշկանդեն ու մեր դիւրաբեկ խաղաղութիւնը խանգարեն: Մենք կը կարծենք, որ երջանիկները մենք ենք, որ մարդ արարածի կաշկանդումի սահմանները

նունակոխ ըրած ենք: Երբ կը մտածեմ, ինձի կը թուի, թէ երջանիկը այն մարդն է, որ չի գիտեր, թէ երջանկութեան աշխարհ մը կա՞յ, երջանկութիւն բառի սահմանումը չի փնտռեր եւ հոն հասնելու ճամբաներով չի մըտահոգուիր: Ահ, առէք մեր դրացին: Ամէն օր ժամը վեցին կ'արթննայ: Տասը վայրկեանէն կը սափրուի: Ութ վայրկեանէն կը հագուի: Դուռնէն դուրս կ'ելլէ ժամը վեցը տասնութ անցած: Գործի կը հասնի ժամը ութին: Մեքենաներու դիմաց կը կենայ: Կոճակներ կը դարձնէ: Կը քրտնի: Դադար կ'առնէ: Նորէն կոճակ կը սեղմէ: Մեր միւս դրացին իր սեղանին կը հակի, գիծեր կը քաշէ: Երբեմն իր գիծերէն եւ սեղանէն կ'անջատուի...: (Պահ մը, խորհրդաւոր): Ո՛ր կը դադարի մեքենան եւ կը սկսի մարդը: Կամ՝ ո՛ր կը դադարի մարդը եւ կը սկսի մեքենան: (Գո՛հ): Ինչ լաւ է սակայն մեր այս ծով խաղաղութիւնը: Լճացած եւ քարացած առօրեայէն դուրս, ահաւասիկ մարդը կրնայ մինչեւ անեղը հորիզոնները տարածուիլ, ապա ինքնիր մէջ ամփոփուիլ՝ երգել ու մտածել...:

- Բ. ՄԱՐԴ.—Երգել, մտածել, երազել եւ ստեղծել բան մը, որ հարազատ ըլլայ անձին, որ իրաւ պատկերը ըլլայ մարդուն:
- Գ. ՄԱՐԴ.—Պատկերը մարդուն: Ի՞նչ պատկերի մասին կը խօսիք: Մի՞թէ կարելի է մարդ արարածի առեղծուածային ամբողջութիւնը պատկերել:
- Բ. ՄԱՐԴ.—Ըսել կ'ուզեմ՝ մեր մէջի մարդուն:
- Դ. ՄԱՐԴ.—Կը ներէք՝ եթէ ընդհատեմ: Տարիներէ ի վեր կը ճանչնամ ձեզ: Ներողութիւն, կը խորհիմ, թէ կը ճանչնամ: Բայց հիմա երբ ձեզի կը նայիմ՝ հարցումներ կը ծագին մտքիս մէջ: Արդեօք ձեր այս արտաքինին տակ պահուրտած էակը կը տեսնե՞մ: Շփոթանք մը կայ մտքիս մէջ: Արդեօք ես ձեզ կը ճանչնամ:
- Գ. ՄԱՐԴ.—Ի՞նչը կ'ուզես ճանչնալ: Չէ՞ որ գիտես, որ ես պըսակուած եմ եւ չորս զաւակ ունիմ:
- Դ. ՄԱՐԴ.—Այդ չէ՛ ըսածս:
- Գ. ՄԱՐԴ.—Գործերս չե՞ն բաւեր, որ զիս ճանչնաս:
- Դ. ՄԱՐԴ.—Ճանչնալ գործերէն մարդը: Քիչ առաջ մէկը կ'ըսէր՝ «Բան մը տանք, որ հարազատ պատկերը ըլլայ մարդուն»: Բայց ո՞վ ըսաւ, որ դո՛ւն, ե՛ս, ա՛ն այն ենք՝ ինչ որ մեր գործերը ցոյց կու տան: Որքա՞ն հարազատ եղած ես դուն անձիդ հանդէպ, գործերովդ մէջ: Արդեօք վէպերուդ հերոսը դո՛ւն ես, թէ անձէդ անջատուած խաթարուած բան մը: Գործերդ չե՞ն արտացոլար այն, ինչ

որ շրջանակդ կը պահանջէ քեզմէ... կամ թերեւ՝ ընտանիքիդ խաղաղութիւնը, կամ՝ կեանքի ապահովութիւնը: Մենք բոլորս նաւակ մը նստած խաղաղ ջուրերու վրայ կը նաւարկենք, ո՞վ կ'ուզէ այնպիսի տեղեր երթալ: (Բ. ՄԱՐԴուն նայելով)՝ Ես մէկը կը ճանչնամ, որ երազուն աչքերով աղջկան մը համար երգ մը գրեց, բայց նուիրեց իր կնոջ: (Եռանդուն): Իրա՛ւ, մեզմէ քանի՛ հոգի բան մը ստեղծեր է, բայց եւ այնպէս պատուեր է, որովհետեւ մէկը... կինը, զաւակը, այսինչը կամ այնինչը պիտի վշտանար: Քանի՛ հոգի, քանի՛ անգամ սխալներ տեսած է, եւ լռա՛ծ, ոճիրնե՛ր տեսած է, բայց դէմքը հեռո՛ւ դարձուցած է: Քաղցր աչքեր ուզած է համբուրել, բայց իր տեսչը կապանքի տակ է դրած: Մթութիւն է, կը տեսնէ՞ք: Եւ այս ահաւոր մթութեան մէջ կը թելադրես ճանչնալ մա՛րդը:

- Ե. ՄԱՐԴ.—Բայց չէ՞ որ մութ է ամէն բան: Երեխան իր լացով, մարդուն աչքերը իրենց խորհուրդներով: Մութ է աշխարհն իսկ՝ իր զարգացումով: Եւ մարդը, դարեր շարունակ, ապրած է այս մութին մէջ: Հոն պրպտեր է, պեղեր է եւ փորձեր է գտնել մեծ առեղծուածը՝ ՄԱՐԴը: Բայց այդ մթութիւնն է այն անորոշ գեղեցկութիւնը, որուն մենք կը ձգտինք:
- Զ. ՄԱՐԴ.—Բայց գեղեցկութիւններ կան, որոնց ետին ամբողջ գազանութիւն մը կրնայ պահուրտիլ: Ահաւասիկ այդ մակերեսային գեղեցկութիւններէն է, որ պէտք չէ խաբուիլ եւ կուրծնալ: Պէտք է որոնել, գտնել այն ճամբան՝ պատուելու համար մթութիւնը:
- Բ. ՄԱՐԴ.—Պատուել մո՞ւթը, եւ ո՛ր երթալու համար:
- Գ. ՄԱՐԴ.—Դէպի մարդ արարածի հութիւնը: Անձին խորը: Դիմակին ետին պահուրտած Ե՛մին: Այո՛, այսինքն՝ մեզի՛:
- Ա. ՄԱՐԴ.—Քանի որ Գ. ՄԱՐԴը կ'ըսէ, որ մեզ չի ճանչնար, եւ... կ'ենթադրեմ ատոր համար ալ վշտացած է, եւ հաւանաբար մեզ կ'ուզէ ճանչնալ, եկէք մեզմէ ամէն մէկը թող ինքզինքը ներկայացնէ այնպէս՝ ինչպէս որ է:
- Բ. ՄԱՐԴ.—Բայց չէ՞ որ գիտենք արդէն, որ ան երգահան է, դուն՝ գրող, միւսը...
- Ա. ՄԱՐԴ.—Ո՛չ, ո՛չ, այդ չէ իմ ըսածը: Եկէք այսօր մենք իրաւ խօսինք մեր անձերուն մասին:
- Բ. ՄԱՐԴ.—Բայց չէ՞ որ տարիներու մեր գործը արդէն իսկ մեզ կը ներկայացնէ: Մեր ընկիւքը, պարզապէս ժամավաճառութիւն պիտի ըլլայ: Անկեղծօրէն, այս մեր հանդիպումը աւելի մեծ հարցերով պէտք է զբաղի եւ ոչ թէ մեր փոքր եսերով:

- Ա. ՄԱՐԳ.—Ես կը յիշեմ, երբ առաջին անգամ հանդիպեցանք եւ այս խմբակը հաստատեցինք, որոշեցինք եւ համաձայնեցանք, որ մեր հանդիպման հիմը հարազատութիւնը եւ անկեղծութիւնը պէտք է ըլլար: Ատոր համար էր, չէ՞, որ որոշեցինք տարբեր ըլլալ այդ դուրսի խուժանէն եւ, ի պատիւ մեզի, ստեղծեցինք մարդկային այս սեղմ, խիտ ընտրանի բջիջը. Եկէք, նոյն անկեղծութեամբ, խօսինք մենք մեր մասին: Եթէ դեռ կապանք մը կայ, կտրենք այդ կապանքը: Եթէ չըլթայ մը կայ, փշրենք այդ ալ:
 - Ե. ՄԱՐԳ.—Ես համաձայն եմ: Թող ամէն մարդ խօսի իր կեանքի լաւ դրուագներէն մէկուն մասին:
 - Զ. ՄԱՐԳ.—Նորէն ետ գացինք: Մեր ըրածը փախուստ է: Ի՞նչ պէտք ունինք լաւ դրուագ մը լսելու: Հանրութիւնը ծափահարեր է, թերթերով գովեր է, բեմերէն խօսեր է այդ մասին: (Դ. ՄԱՐԳ.ուն) Քեզի ալ յարգանքի երեկոյ մը կազմակերպեցին կարծեմ:
 - Դ. ՄԱՐԳ.—Ցոբելեան:
 - Զ. ՄԱՐԳ.—Ներողութիւն, յոբելեան: Եկէ՛ք նախ համաձայնինք (Ա. ՄԱՐԳ.ուն ցոյց տալով)՝ անո՛ր ըրած առաջարկի մասին:
 - Բ. ՄԱՐԳ.—Վարկեան մը: Ես կը կարծէի, որ մեր այս հաւաքոյթի հիմը նաեւ ազատութիւնն է: Ինչո՞ւ կը ստիպէք մարդոց ընելու կամ ըսելու բան մը, որ թերեւս չեն ուզեր ընել կամ ըսել:
 - Ա. ՄԱՐԳ. (Բ. ՄԱՐԳ.ուն).—Ինչէ՞ն կը վախնաս: Վայրկեանի մը համար ալ չես ուզեր դուրս ելլել պատմուճանէդ:
 - Բ. ՄԱՐԳ.—Ես վախ չունիմ: Իմ ըսածս այն է, որ ամէն մարդ, իր ազատ կամքով ըսէ իր մտածումը: Թող ամէն մարդ ինքը, եթէ կը կամենայ, փշրէ իր կապանքները:
 - Զ. ՄԱՐԳ.—Շատ լաւ: Հասկցուեցանք: Ո՞վ է առաջին անձը, որ կ'ուզէ խօսիլ:
- ԲՈՒՈՐԸ (Լուռ, ամէն մէկը մէկ կողմ կը նայի):
- Ե. ՄԱՐԳ.—Քանի որ կամաւոր չկայ...
 - Զ. ՄԱՐԳ. (Ե. ՄԱՐԳ.ուն).—Դո՛ւն սկսէ:
 - Ե. ՄԱՐԳ.—Քաւութեան նոխազը ե՞ս եմ:
 - Զ. ՄԱՐԳ.—Դուն կը պնդէիր:
 - Ե. ՄԱՐԳ.—Ես հետեւեալ մտածումը կը յայտնեմ: Եկէք ժամանակ մը սահմանենք: Օրինակ, ժամ մը, որ խնդիրը չճապողի: Համաձայն էք:
 - Ա. Գ. Դ. Ե. Զ. ՄԱՐԳ.եր (Զեռքերնին կը բարձրացնեն ի նշան համաձայնութեան):
 - Բ. ՄԱՐԳ. (Տատամսումէ ետք, իր ձեռքը կը բարձրացնէ):
 - Գ. ՄԱՐԳ.—Եղա՛ւ: Ուրեմն բոլորս համաձայն ենք:
 - ԲՈՒՈՐԸ.—Այո՛, այո՛:

- Գ. ՄԱՐԳ.—Հապա եթէ սո՛ւտ խօսեցանք:
 - Ա. ՄԱՐԳ.—Ի՞նչ տարօրինակ մարդ ես:
 - Բ. ՄԱՐԳ.—Վստահութի՞ւն անգամ չունիս:
 - Դ. ՄԱՐԳ.—Բանի՞ տարի է, որ մեզ կը ճանչնաս, օր մը սուտ խօսած ենք քեզի:
 - Գ. ՄԱՐԳ.—Ո՛չ, սուտ չէք խօսած եւ վստահութիւն ալ ունիմ: Բայց կանխելու համար որեւէ անախորժ կացութիւն, եկէք ամէն մէկս առանձին-առանձին երդում ընենք՝ ըսելով. «Ես՝ Գ. ՄԱՐԳ., կազմով, մտքով, զգացումով եւ արարքով գիտակից մարդ արարած, այս ժամուան ընթացքին, անկեղծութեամբ իմ կեանքէն դրուագ մը պիտի պատմեմ, որ երբեք չեմ պատմած»:
 - Դ. ՄԱՐԳ.—Ես համաձայն եմ իրեն:
 - Ա. ՄԱՐԳ.—Եթէ ամէն մէկս առանձին երդում ընէ, մեր սահմանած ժամը կը վերջանայ: Եւ յետոյ, հանդիսատեսը գործ չունի՝ միայն երդում պիտի լսէ:
 - Դ. ՄԱՐԳ.—Այդ պարագային, եկէք անուննիս վերցնենք եւ «մարդ» բառով բաւարարուինք եւ բոլորս ալ միաբերան երդուինք:
- ԲՈՒՈՐԸ.—Եղա՛ւ, եղա՛ւ:
- Սնտուկները սեղանի մը ձեւով կը շարեն: Կը մօտենան կիսաշրջան մը կ'ընեն: Զեռքերնին կ'երկարեն: Լոյսը կը կեդրոնանայ ՎԵՑԻՆ վրայ:
- (Միաբերան).—Ես, կազմով, մտքով եւ արարքով մարդ արարած, կ'երդնում, որ անկեղծօրէն, կեանքէս դրուագ մը պիտի պատմեմ, որ չեմ պատմած:
- ՆԵՐՍԻ (Սեւեր հագած՝ սրանին ետեւէն վազելով կու գայ բեմ):
- Ա. ՄԱՐԳ. (ՆԵՐՍԻ՛ն նկատելով).—Նայեցէ՛ք, նայեցէ՛ք, ո՞վ է այս մարդը:
 - Բ. ՄԱՐԳ.—Ես չեմ ճանչնար:
 - Դ. ՄԱՐԳ.—Ես ալ չեմ ճանչնար:
 - Դ. ՄԱՐԳ.—Թերեւս մեզի կ'ուզէ ձայնակցել:
 - Ե. ՄԱՐԳ.—Կամ ալ խանգարել մեզ:
 - Զ. ՄԱՐԳ.—Սպասեցէ՛ք, երբ մօտենայ՝ կը հարցնենք:
- ՆԵՐՍԻ (հասած է բեմ: ՎԵՑԻՆ վախը նկատելով).—Ինչո՞ւ կը վախնաք:
- Բ. ՄԱՐԳ.—Ինչպէ՞ս չվախնանք: Մութին մէջէն մէկէն դուրս ելար:
 - Զ. ՄԱՐԳ.—Հաճիս դու՛րս: Մեր առանձնութիւնը կը խանգարես:
 - Դ. ՄԱՐԳ.—Մեր կեդրոնացումը կը փճացնես:
 - Ե. ՄԱՐԳ.—Մեր համաձայնութիւնը կը խանգարես: Հիմա ալ քեզի համար պիտի փճինք:

ԳՐԱԳՐԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
 188-2019

ՆԵՐՍԻ.—Հանգիստ կեցէք, հանգիստ: Այս ժամը դուք ինծի նուիրեցիք:

Բ. ՄԱՐԴ.—Ի՞նչ կը խօսի այս մարդը:

ՆԵՐՍԻ.—Եկայ, որ ժամուկ վրայ իշխեմ:

Գ. ՄԱՐԴ.—Գործի՞դ գնա, մենք այստեղ լուրջ աշխատանք ունինք:

ՆԵՐՍԻ.—Դուք մթուփիւնը նշեցիք եւ անկէ դուրս ելլելու խարխափումը: Եկայ, որ ձեզի հետ պեղենք ձեր մթուփիւնը:

Դ. ՄԱՐԴ.—Այս չէր մեր հասկացողութիւնը, ես կը հրաժարիմ:

ՆԵՐՍԻ.—Առանց ինծի դուք նորէն պիտի ծածկէք, նորէն պիտի պատմէք ձեր ուզածը: Ես եկայ, որպէսզի կատարէք ձեր երդումը:

Ե. ՄԱՐԴ.—Տարօրինակ մարդ ես դուն: Ի՞նչ է անունդ: Ո՞ր կը բնակիս: Ուրկէ՞ կու գաս: Ըսէ՛, հասկնա՛նք:

ՆԵՐՍԻ.—Հասկնա՛նք: Ես գիտէի, որ երբ հանդիպինք, դուք զիս պիտի չճանչնաք: Ձեզմէ ամէն մէկուն հետ կեանք մաշեցուցած եմ: Հետեւած եմ ձեր ամէն մէկ քայլին, ձեր արարքներու ամէն մէկ մանրամասնութեան: Ես խմբը եմ ձեզմէ ամէն մէկուն հետ: Լացեր, արիւնոտեր, ջղայնացեր, բողոքեր ու սպաննուեր եմ: Այո՛, չմոռնամ, քիչ մըն ալ հրճուեր: Այս ժամը դուք ինծի նուիրեցիք: (Ա. ՄԱՐԴուն)՝ Խօսէ, ուրեմն նախ դուն:

Ա. ՄԱՐԴ.—Ինչո՞ւ ես: Թող ուրիշ մէկը սկսի: Ես անծանօթ տեղ չեմ երթար:

ՆԵՐՍԻ.—Ես քեզի գիտցած տեղերդ կը տանիմ:

Ա. ՄԱՐԴ (միւսներուն).—Ի՞նչ կը խօսի այս մարդը:

ՆԵՐՍԻ.—Ժամանակ չունինք: Դուն ամէն Նոր տարիի նուէրներ կը բաժնես աղքատաց թաղին մէջ, այնպէ՞ս է:

Ա. ՄԱՐԴ.—Դուն գաղտնի ոստիկան ես:

ՆԵՐՍԻ.—Ժամանակ չունիմ՝ այո՛ կամ ո՛չ:

Ա. ՄԱՐԴ.—Այո՛:

ՆԵՐՍԻ.—Քանի՞ տարի եղաւ, որ դուն այդ կ'ընես:

Ա. ՄԱՐԴ.—Օ՛, ութ, ինը, տասը, չեմ յիշեր:

ՆԵՐՍԻ.—Ճշգրիտ ըսէ տարիները:

Ա. ՄԱՐԴ (մտածելէ ետք).—Տասը տարի, այո, տասը տարի:

ՆԵՐՍԻ.—Այդ թուականէն տարի մը առաջ ո՞ր կ'էիր:

Ա. ՄԱՐԴ.—Չեմ յիշեր:

ՆԵՐՍԻ.—Չե՞ս յիշեր: Յիշողութիւնդ թարմացնեմ: Նոր տարի էր:

Ա. ՄԱՐԴ.—Ընկերներուդ այցելած էիր, եւ Նոր տարի շնորհաւորած:

Բ. Գ. Դ. Ե. Զ. ՄԱՐԴԵՐ (Մէկ կողմ հաւաքուած են):

Ա. ՄԱՐԴ (Կը մօտենայ եւ երեսակախական կենաց կը խմեն):

ՆԵՐՍԻ.—Կենացնուն խմեր էիր, բայց հարբած չէիր: Դուրս ելար ընկերոջդ՝ Վահանը այցելելու:

Բ. Գ. Դ. Ե. Զ. ՄԱՐԴԵՐ (Կ'անշարժանան):

Ա. ՄԱՐԴ (Կը հեռանայ խումբէն: Կ'ուղղրուի դէպի աջ շտուշամասը):

Ա. ԿԻՆ (Կեցած, գոզնոցով երեսակախական կերակուր կ'եփէ):

Ա ՄԱՐԴ (Դուռը կը գարնէ):

Ա. ԿԻՆ (Կը բանայ դուռը).—Ա... (դերասանին բուն անունը տալով) բարի եկար: Ներսը գնա՛ խմիչք մը առ մինչեւ գործս վերջացնեմ:

Ա. ՄԱՐԴ (Կը մօտենայ Ա. ԿԻՆ).—Ի՞նչ կ'ընես:

Ա. ԿԻՆ.—Այս երեկոյ ամուսնու՛մ Վահանին ծնողքը մեզի պիտի գան:

Ա. ՄԱՐԴ.—Վահանը ո՞ր է:

Ա. ԿԻՆ.—Կրնա՞ս երեւակայել, այս տօնական օրերուն, ամուսինս գործով քաղաքէն դուրս դրկեցին: Այնքան նեղուեցայ, այնքան նեղուեցայ:

Ա. ՄԱՐԴ (մօտեցած է եւ Ա. ԿԻՆ ռուէն վար կը նայի՝ եփածին).—Աս քեզի պէս համով-համով բաներ կ'եփես:

Ա. ԿԻՆ (յլսելու գալով).—Ես Վահանին ըսի, որ չերթայ: Իր ծնողքը պիտի գան: Տօնական օրեր են...

Ա. ՄԱՐԴ.—Մագերուդ այս ձեւը շատ վայլեր է քեզի: (Ձեռքը Ա. ԿԻՆ մագերուն կը քսէ) Այսպէս շատ աղուոր է...

Ա. ԿԻՆ.—Ա... Ի՞նչ է պատահեր քեզի, խմե՞ր ես:

Ա. ՄԱՐԴ (մագը նորէն կը շոյէ).—Եթէ այդպէս յարգարես, շա՛տ աղուոր կ'ըլլայ...

Ա. ԿԻՆ.—Ա...

Ա. ՄԱՐԴ (Կը շարունակէ շարժումը).—Նայէ՛, ճիշդ այսպէս... Ի՞նչ անուշ ես այսպէս...

Ա. ԿԻՆ (Կը փորձէ ազատի).—Ա...

Ա. ՄԱՐԴ (Կը փորձէ համբուրել: Ա. ԿԻՆ կ'ընդդիմանայ: Ա. ՄԱՐԴ կը յաջողի: Ա. ԿԻՆ ձեռքերէն բռնած կը ծնրադրէ):

Ա. ԿԻՆ.—Ո՛չ, ո՛չ, ո՛չ...

Լոյսերը կը մարին խաղին վրայ:

Ա. ԿԻՆ (մտթին մէջ, բարձրաձայն կը պոռայ).—Ո՛չ, ո՛չ, ո՛չ... (Դուրս):

ՆԵՐՍԻ (մտթին մէջ բարձրաձայն).—Ո՛չ, ո՛չ, ո՛չ:

Լոյսերը կը վատին:

ՆԵՐՍԻ (Ա. ՄԱՐԴուն).—Բռնաբարեցիր, դուն չուն...

Բ. Գ. Դ. Ե. Զ. ՄԱՐԴԵՐ (նախ ցած ապա՝ բարձր).—Բռնաբարեցիր, բռնաբարեցիր...

Ա. ՄԱՐԴ (Կը մօտենայ խումբին: Ձեռքերով ականջները գոցած է).—Կը բաւէ՛: Կը բաւէ՛, կը բաւէ՛...

ՆԵՐՍԻ.—Դուն մարդուն մէջ վստահութիւնը սպաննեցիր: Շղթայեցիր ու կապտեցիր զիս:

- Ա. ՄԱՐԴ (ընկճուած).—Կը բաւէ՛, խնդրեմ, կը բաւէ՛:
- ՆԵՐՍԻ.—Շարունակէ:
- Ա. ՄԱՐԴ (փչած).—Ան յղացաւ: Տղայ զաւակ մը ունեցաւ: Օր մըն ալ ամուսինը հեռացաւ ու ա՛լ չվերադարձաւ: Ես նուէրներ կը տանիմ այդ թաղը բոլորին եւ անո՛ր, անո՛ր՝ զաւակիս, որ ի՛մս է եւ իմս չէ: Ի՛մս է... եւ իմս չէ... (Կը հնկեկալ):
- Բ. ՄԱՐԴ.—Խեղճ մարդ: Իր զոհին զոհ է:
- ՆԵՐՍԻ (Բ. ՄԱՐԴուն).—Իսկ դո՞ւն:
- Բ. ՄԱՐԴ.—Ես պատմութիւն չունիմ: Ես նախօրօք ըսի, որ իմ գործերս զիս արիւ կը ներկայացնեն: Անո՛նց հարցուր եթէ չես հաւատար: Ես պատմութիւն չունիմ:
- ՆԵՐՍԻ.—Պատմութիւն չունի՞ս:
- Բ. ՄԱՐԴ.—Ո՛չ, չունիմ:
- ՆԵՐՍԻ.—Դեկտեմբեր 1, առաւօտ: Կը յիշե՞ս այս թուականը:
- Բ. ՄԱՐԴ.—Ո՛չ, չե՛մ յիշեր:
- ՆԵՐՍԻ.—Երաժշտանոցի մէջ, Ուրբաթ օրուան վերջին պահը:
- Բ. ՄԱՐԴ.—Ո՛չ, չե՛մ յիշեր:
- ՆԵՐՍԻ.—Չես յիշեր: Յիշեցնեմ: Շրջանաւարտ աշակերտներուն ըսած էիր, որ թեմա մը ընտրեն եւ երաժշտութիւն մը գրեն:
- Բ. ՄԱՐԴ.—Է՛, ատիկա միշտ կ'ընեմ:
- ՆԵՐՍԻ.—Անճրեւոտ օր մըն էր: Դուն նոր կարդացած էիր հրատարակած մէկ գործիդ քննադատականը:
- Բ. ՄԱՐԴ (ջղախնայած).—Օհ, այդ քննադատականը:
- ՆԵՐՍԻ.—Քննադատը ըսած էր, որ տաղանդ չունիս:
- Բ. ՄԱՐԴ.—Գիտեմ ինչ ըսած էր: Մի՛ յիշեցներ:
- ՆԵՐՍԻ.—Ըսած էր, որ աւելի լաւ է, որ չգրես:
- Բ. ՄԱՐԴ.—Ըսի, թէ կը յիշե՛մ ինչ ըսած էր: Յիմա՛ր քննադատ:
- ՆԵՐՍԻ.—Յիշեցի՞ր:
- Բ. ՄԱՐԴ.—Կրնա՞մ մոռնալ մարդուն ըսածը:
- ՆԵՐՍԻ.—Ի՞նչ եղաւ այդ օր:
- Բ. ՄԱՐԴ (մտածելով).—Ի՞նչ եղաւ...: Աշակերտները իրենց երաժշտութիւնները բերած էին եւ ինծի յանձնեցին:
- Ա. Գ. Դ. Ե. Զ. ՄԱՐԴեր (իրեն աշակերտներ երեսակաւալան թուղթեր կը լսանան Բ. ՄԱՐԴուն):
- Բ. ՄԱՐԴ.—Նայեցայ, քննեցի եւ թիւեր տուի, ինչպէս միշտ:
- ՆԵՐՍԻ.—Աերադարձուցի՞ր երաժշտութիւնները:
- Բ. ՄԱՐԴ.—Տարեվերջի քննութիւնները չեմ վերադարձներ:
- ՆԵՐՍԻ.—Ի՞նչ ըրիր:
- Բ. ՄԱՐԴ.—Ըստ սովորութեան, ժամանակ մը ետք պատուեցի:
- ՆԵՐՍԻ.—Պատուեցի՞ր, բոլո՞րը:
- Բ. ՄԱՐԴ.—Այո:

- ՆԵՐՍԻ.—Բոլո՞րը:
- Բ. ՄԱՐԴ (Ղուռ է):
- ՆԵՐՍԻ.—Քեզի է հարցումս: Բոլո՞րը պատուեցիր:
- Բ. ՄԱՐԴ.—Գիտեմ, գիտեմ, ինծի է հարցումդ: Կրնայ ըլլալ, որ բոլորը չպատուեցի:
- ՆԵՐՍԻ.—Կրնա՞յ ըլլալ:
- Բ. ՄԱՐԴ.—Լաւ, լաւ: Բոլորը չպատուեցի:
- ՆԵՐՍԻ.—Այո՞:
- Բ. ՄԱՐԴ (տատամտտ).—Կտոր մը պահեցի:
- ՆԵՐՍԻ.—Ո՞ր մէկը պահեցիր:
- Բ. ՄԱՐԴ.—Չեմ յիշեր:
- ՆԵՐՍԻ.—Յիշեցնե՛մ:
- Բ. ՄԱՐԴ.—Ո՛չ: «Երբ գիշերը իջնէ» անունով կտոր մը:
- ՆԵՐՍԻ.—Իսկ այդ կտորը գրողին ի՞նչ ըսիր:
- Բ. ՄԱՐԴ.—Ըսի... (Տիպարներէն մէկը կու գայ եւ Բ. ՄԱՐԴուն առջեւ կը կենայ: Բ. ՄԱՐԴը ձեռքը շատ հացաբար ուսին կը դնէ եւ բաներ մը կ'ըսէ: ՏԻՊԱՐը գլխիկոր կը հեռանայ): Ըսի... որ իր կտորը ձախող էր եւ գէրօ տուի:
- ՆԵՐՍԻ.—Յետո՞յ...
- Բ. ՄԱՐԴ.—Տասը տարի անցած է՝ ինչո՞ւ հիմա կը քրքրես:
- ՆԵՐՍԻ.—Յետո՞յ:
- Բ. ՄԱՐԴ.—Այդ կտորը ինծի հարազատ էր...: Կարծես անձիս արձագանգն էր: Կարծես թէ օր մը ես պիտի գրէի ատիկա:
- ՆԵՐՍԻ.—Ի՞նչ ըրիր:
- Բ. ՄԱՐԴ.—Քիչ մը մշակեցի եւ հրատարակեցի:
- ՆԵՐՍԻ.—Որո՞ւ անունով:
- Բ. ՄԱՐԴ.—Իմ անունով: Դուն ե՞րբ պիտի հասկնաս, որ ես մարդ եմ: Բոլորին պէս յարատեւելու եւ անմահանալու իղճը զիս ալ կլանած է:
- ՆԵՐՍԻ.—Ի գին ինչի՞: Ուրիշի՞ մը կեանքին: Դուն մարդ արարածի տեսչը սպաննեցիր:
- ՆԵՐՍԻ.—Ի՞նչ եղաւ այդ աշակերտը:
- Բ. ՄԱՐԴ.—Չեմ գիտեր: Գիտեմ, որ համալսարանը ձգեց. ատկէ անդին չեմ գիտեր:
- ՆԵՐՍԻ.—Հոգեկան ցնցում ունեցաւ: Հիմա աննպատակ կը թափառի քաղաքին մէջ:
- Բ. ՄԱՐԴ.—Աստուա՛ծ իմ:
- ՆԵՐՍԻ.—Քաղաքի փողոցներուն մէջ հանդիպողին կ'ըսէ. «Գիտէ՞ք երբ գիշերը իջնէ մարդոց հոգիներուն մէջ մարդիկ ի՞նչ կ'ըլլան...», յետոյ կը քրքրէլայ... կը քրքրէլայ մարդուն վրայ:
- Բ. ՄԱՐԴ (Սաստիկ ազդուած է):

- Գ. ՄԱՐԴ (խոսքի զատուած է անզգաւարար ու կ'արտասանէ).—Երբ գիշերը իջնէ եւ աստղեր ելլեն... (Կը լռէ, կը նկատէ, որ ամեն մարդ իրեն կը նայի):
- ՆԵՐՍԻ.—Այո՞: Երբ գիշերը իջնէ եւ դուն անանձին մնաս, ի՞նչ կը յիշես:
- Գ. ՄԱՐԴ.—Ինծի՞ է խօսքդ:
- ՆԵՐՍԻ (հանդարտ).—Պատմէ:
- Գ. ՄԱՐԴ.—Ի՞նչ իրաւունքով կը գրգռես զիս:
- ՆԵՐՍԻ.—Տառապողներու իրաւունքով:
- Գ. ՄԱՐԴ.—Ես իրատեսներու օրէնքով կ'ապրիմ: Ապրող, շնչող, սիրող ու ուտող մարգոց օրէնքով:
- ՆԵՐՍԻ.—Եթէ այդպէս համոզուած ես ու համակերպած, ինչո՞ւ կը բորբոքիս: Իրատեսներու օրէնքով ալ վայելէ:
- Գ. ՄԱՐԴ.—Ես հանդարտ էի մինչեւ քու գալդ:
- ՆԵՐՍԻ.—Հանդարտ էիր:
- Գ. ՄԱՐԴ.—Այո, բայց ոչ միշտ:
- ՆԵՐՍԻ.—Ինչպէ՞ս:
- Գ. ՄԱՐԴ (մէկէն բարձրաձայն).—Սիրեցի: Ա՞յս կ'ուզես լսել: Առաջին անգամն էր, որ սիրտս այդպէս կը բաբախէր: Սէրէն աւելին էր, սիրահարութիւն էր...: Անոր տեսքը, խօսքը, նայուածքը տարօրինակ զգացական աշխարհ մը կը բանար կուրծքիս տակ: Շուրջիներուն նայելով մե՞ղք է սիրել, ըսէք խնդրեմ:
- Ա. Բ. Գ. Ե. Զ. ՄԱՐԴեր (Լուռ կը նային):
- Գ. ՄԱՐԴ.—Բան մը ըսէք: Ինչո՞ւ այդպէս քարացած կը նայիք: Դուք ալ ձեր տարիներու բարեկամութիւնը մոռցած (ՆԵՐՍԻն ցոյց տալով)՝ անոր կողմը անցաք:
- ՆԵՐՍԻ.—Եւ...
- Գ. ՄԱՐԴ.—Գիտէի, որ ուրիշ մը կը սիրէր: Բայց հաւատացէք, որ ես շատ կը սիրէի զինք: Կարծէք բնութիւնը ինծի համար ստեղծած էր այդ էակը:
- ՆԵՐՍԻ.—Եւ...
- Գ. ՄԱՐԴ.—Իրենց ժամադրովայրը գիտէի: Զեմ գիտեր ինչո՞ւ որոշեցի հոն երթալ:
- Ա. Բ. Գ. Ե. Զ. ՄԱՐԴեր (Մէկ գիծի վրայ ներս ու դուրս ըրած կեցած են):
- Գ. ՄԱՐԴ (Անոնց մէջէն հիստուածքի ձեւով կը քալէ դէպի վեցերորդ տիպարը, որ գլխահակ կեցած է):
- ՆԵՐՍԻ (Գ. ՄԱՐԴուն ետեւէն կը քալէ եւ բարձրաձայն).—Մի՛ ընեք, մի՛ ընեք:
- Գ. ՄԱՐԴ (ետ հրեղով ՆԵՐՍԻն՝ կը շոտաջանայ).—Լռէ, մի խանգարե՛ր:

- ՆԵՐՍԻ.—Մարդկային չէ ըրածդ: Մարդկային չէ:
- Գ. ՄԱՐԴ.—Լռէ, չքայլի՛ր: Մարգը ես եմ, դուն ո՞վ ես: (Կը հասնի տիպարին եւ շեշտակի աչքերուն նայելով)՝ Պիտի չգայ:
- ՏԻՊԱՐԸ (Լուռ է):
- Գ. ՄԱՐԴ.—Քեզ չի սիրեր այլեւս: Երէկ գիշեր քովս էր: Ինծի յանձնուեցաւ:
- ՏԻՊԱՐԸ (Գլուխը կ'ստնէ ձեռքերուն մէջ, ընկճուած կը հետանայ):
- Բ. ԱՂԶԻԿ (Վազելով ներս կը մտնէ, կը մօտենայ ՏԻՊԱՐԻն, որ գլուխը կախ կեցած է: ՏԻՊԱՐԸ կը նայի Բ. ԱՂԶԻԿՆ ու կը հետանայ: Բ. ԱՂԶԻԿ յուզուած՝ դուրս):
- Գ. ՄԱՐԴ.—Կեցիր...
- ՆԵՐՍԻ.—Դուն սէրը թաղեցիր:
- Գ. ՄԱՐԴ.—Գիտեմ, գիտեմ:
- ԲՈՂՈՐԸ (միաբերան եւ ցած).—Թաղեցիր, թաղեցիր:
- Գ. ՄԱՐԴ.—Գիտեմ, գիտեմ: Տառապողներու իրաւունքով կը խնդրեմ, լռեցէ՛ք:
- ՆԵՐՍԻ.—Իսկ զոհերու իրաւունքով ի՞նչ կ'ըսես: (Բարձրախօսէն կը լսուի աղջկան մը խնդրքը):
- Գ. ՄԱՐԴ (Կ'անջատուի խոսքէն ու ձայնը կը փնտռէ):
- ՆԵՐՍԻ.—Ծանօթ է քեզի այդ խնդուքը:
- Գ. ՄԱՐԴ.—Ծանօթ աղջկան մը խնդուքն է: Բայց որո՞ւ, Աստուած իմ, որո՞ւ:
- ՆԵՐՍԻ.—Քսաներկու տարեկան ես:
- Գ. ՄԱՐԴ.—Քսաներկու տարեկա՞ն:
- ՆԵՐՍԻ.—Համալսարանիդ վերջին տարիդ է: (Տիպարները սնտուկները դասարանի շարքով կը շարեն):
- Գ. ԿԻՆ ԵՒ ՈՒՐԻԾ ԱՂԶԻԿՆԵՐ (Կը մտնեն եւ կը նստին իրեն դասարան: Գ. ԿԻՆը նստած է Գ. ՄԱՐԴուն կողքին):
- ՆԵՐՍԻ.—Կը յիշե՞ս կողքիդ աղջիկը:
- Գ. ՄԱՐԴ.—Ինչո՞ւ այս անուշ աչքերով աղջիկը կը յիշեցնես այսօր:
- ՆԵՐՍԻ.—Մոռցե՛ր ես, ժամադրութիւն ունէիր հետը: Ժամադրավայրը ձեր «վայրն» էր: Ի՞նչ եղաւ:
- Գ. ՄԱՐԴ.—Ես բոլոր ժամադրութիւններս յարգած եմ:
- ՆԵՐՍԻ (Խիստ).—Վերջինը, տարեվերջի վերջինը:
- ՏԻՊԱՐՆԵՐԸ (Իրրեւի թէ դասը աւարտած՝ գիրքերը կը գոցեն եւ դուրս: Գ. ԿԻՆը կը մօտենայ Գ. ՄԱՐԴուն մազերը կը շոյէ):
- Գ. ՄԱՐԴ (թուրթի կտորի մը վրայ բան մը կը գրէ ու կը շանձնէ Գ. ԿԻՆԸ).—«Մեր համակրանքը, սէրը, ինչպէս կ'ուզես որակէ, սկսած է խամրիլ...»:
- ՆԵՐՍԻ.—Ըսել կ'ուզես՝ քու սէրդ:
- Գ. ՄԱՐԴ.—Այո, իմ: Թող այդպէս ըլլայ:

ՆԵՐՍԻ.—Իրականութիւնն է:

Գ. ՄԱՐԳ.—(բարձր).—Այո: (Աւելի հանդարտ): Ուրիշ աղջիկ մը ուշադրութիւնս սկսած էր գրաւել: Ուրիշ մէկուն սկսած էի համակրել... սիրել...: Այնպէս պատահեցաւ, որ նոյն գիշերը նորեկին հետ ալ ժամագրուեցայ:

ՆԵՐՍԻ.—Պատահեցա՞ւ: Այդքան դիւրին: Ես երեսդ ի վեր չպոռացի՞, չիշեցուցի՞ Գ. ԿՆՈՋ հետ ունեցած պահերդ: Չիշեցուցի՞, որ հոգին բնութեան ամէնէն դիւրաբեկ ստեղծագործութիւնն է:

Գ. ՄԱՐԳ.—Շփոթած՝ չէի գիտեր ընելիքս: Երիտասարդ էի: Մէկ կողմէն հպարտութիւնս, եսս, միւս կողմէ՝ դուն եւ այս երկուքը: Այս հալածանքը շատ է: Պայման է, որ ըսեմ: (Կը մօտենայ ՆԵՐՍԻին): Խնդրեմ, ըսէ ոչ:

ՆԵՐՍԻ.—Շարունակէ:

Գ. ՄԱՐԳ.—Ինչ անողոք ես, ինչ անողոք: Արդէն այդպէս եղած ես միշտ: (Ընկճուած): Ընկերս զրկեցի Գ. ԿՆՈՋ:

ՆԵՐՍԻ.—Հոգի մը զոհեցիր հաճոյքիդ սեղանին: Գիտե՞ս անոր վերջը: (Բեմին ետեւը մշուշոտած կ'երևայ կիսամերկ աղջիկ մը՝ շոջապատուած տղամարդերով, որոնք խմիչք կը հրամցնեն աղջկան):

Գ. ՄԱՐԳ.—(նախ դէպի պատկերը կը թառաջանայ, ապա վազելով կուգայ դէպի ՆԵՐՍԻին).—Խնդրեմ, մարէ սա պատկերը: (Կը ծնրադրէ ՆԵՐՍԻին առջեւ):

ՆԵՐՍԻ.—Ոտքի ելիր: Մի դպիր ինծի, մի՛ դպիր...

Ե. ՄԱՐԳ.—(կը մօտենայ եւ Գ. ՄԱՐԳ.ուն, գոր ոտքի կը հանէ կը տանի մնացեալներուն քով: Կը դառնայ ՆԵՐՍԻին).—Մնացինք երկու հոգի: Ո՞ր մէկը կ'ուզես:

ՆԵՐՍԻ.—Պատրաստ ես, այո՞:

Ե. ՄԱՐԳ.—Ուշ կամ կանուխ պիտի խօսինք: Տարբերութիւն չ'ըներ:

ՆԵՐՍԻ.—Վերջապէս մէկը ինքնակամ պիտի խօսի: Ուրեմն, խօսէ՛, նախ դո՛ւն խօսէ:

Ե. ՄԱՐԳ.—Ի՞նչ խօսիմ:

ՆԵՐՍԻ.—Թանձր անցեալ մը ունիս եւ չես գիտեր ուրկէ՞ սկսիլ:

Ե. ՄԱՐԳ.—Չանոնք դուն հարցաքննեցիր, դիս ալ...

ՆԵՐՍԻ.—Չհարցաքննեցի՞, յիշեցուցի՞: Յիշեցնե՛մ, քեզի՛ ալ յիշեցընեմ:

Ե. ՄԱՐԳ.—(փախուտ տարւ նպատակով միւս ՏԻՊԱՐՆԵՐուն).—Դեռ որքա՞ն ժամանակ ունինք:

ՆԵՐՍԻ.—Չկարծես ինծի համար հաճոյք է այս պահերը վերապրիլ: Իմ նահատակութիւնն է, որ կը տօնուի հոս:

Ե. ՄԱՐԳ.—Վայրկեան առաջ վերջացնենք:

ՆԵՐՍԻ.—Ընտրութեան նախօրեակին էր, անցեալ տարի: Գործաւորներդ ճամբեցիր: Գրասենեակիդ մէջ կը սպասէիր, կարեւոր ժամագրութիւն մը ունէիր:

Ե. ՄԱՐԳ.—Անցեալ տարի՝ այո: Շատ կարեւոր ժամագրութիւն մըն էր:

ՆԵՐՍԻ.—Անոր նախորդող տարի՞ն, նոյն օրերո՞ւն:

Ե. ՄԱՐԳ.—Այո՛, նորէ՛ն կարեւոր ընտրութիւն էր:

ՆԵՐՍԻ.—Միշտ կարեւոր, միշտ կարեւոր: Որո՞ւ կանչեր էիր:

Ե. ՄԱՐԳ.—Բարեկամիս:

ՆԵՐՍԻ.—Բարեկամ, թէ ծուղակը ինկած որս:

Ե. ՄԱՐԳ.—Ինչպէս ամէն անգամ, այս անգամ ալ իր օգնութիւնը կը խնդրէի:

ՆԵՐՍԻ.—Կը խնդրէիր:

Ե. ՄԱՐԳ.—Լա՛ւ, կ'ակնկալէի:

ՆԵՐՍԻ.—Կ'ակնկալէիր:

Ե. ՄԱՐԳ.—Լաւ...: Կը պահանջէի: Գո՞հ ես: Ուզածդ ըսի՞: (Պահ մը): Ի՞նչ կ'ուզես ինձմէ: Կեանք ըսուած բանը դուն չե՞ս հասկնար: Խո՞ւլ ես, թէ խուլ կը ձեւանաս: Լսէ պահ մը զիրար հրմշտկող մարդկային ձայները: Այդ ձայներուն եթէ չմիանաս, կ'ոչնչանաս: Դուն ի՞նչ աշխարհի մէջ կ'ապրիս: Հո՞ս եկուր, հո՞ս: Մեզի հետ ապրէ, այն ատեն կը տեսնեմ ընելիքդ: Վեհագոյն աշխարհներու մէջ ամէն մարդ կրնայ ապրիլ: Հո՞ս է փորձաքարը: Հո՞ս է, որ ակռաներովդ, եղունգներովդ պիտի պոկես: Կօչիկներովդ պիտի կոխկրտես, որ այդ նոյն կօչիկներուն տակը չմնաս: Ժամը վերջացա՛ւ:

ՆԵՐՍԻ.—(հանդարտ).—Բարեկամիդ պաշտօնը ի՞նչ էր:

Ե. ՄԱՐԳ.—Վերակացու:

ՆԵՐՍԻ.—Ինչի՞ վերակացու:

Ե. ՄԱՐԳ.—Գործի: (Պահ մը): Ընտրութիւններու վերակացու...: (Պահ մը): Ընտրութեանց քուէներու խուզարկու...: (Պահ մը): Պատասխանատու...: (Ցած): Քուէները հաշուող եւ արձանագրող...

ՆԵՐՍԻ.—Ի՞նչ կը պահանջէիր իրմէ:

Ե. ՄԱՐԳ.—(խուսափողաբար).—Կարեւոր ընտրութիւն էր:

ՆԵՐՍԻ.—Կը բաւէ՛ այլեւս փախչիս դուն քեզմէ: Քիչ առաջ ժամը կը հարցնէիր: Ես ըսեմ քեզի, շատ ժամանակ չունիմ: Բայց եւ այնպէս, պիտի խօսիս: Ի սէր Մարդուն, ըսէ՛, ի՞նչ պահանջեցիր:

Ե. ՄԱՐԳ.—Որ քուէները խեղաթիւրէ...

ՆԵՐՍԻ.—Եւ...

Ե. ՄԱՐԳ.—Իմ ուզած մարդերը յայտարարէ իբրեւ շահողներ:

ՆԵՐՍԻ.—Եւ եթէ չընէ՞:

Ե. ՄԱՐԳ.-Գործէ պիտի արձակեմ:

ՆԵՐՍԻ.-Ինչպէ՞ս ընկալեց պահանջդ:

Ե. ՄԱՐԳ.-Դիմացս կեցած էր լուռ ու մտախոհ: Աչքերը յառած դէմքիս՝ անհասկնալի խորհուրդով մը: Խեղդուած ձայնով ըսաւ. «Լաւ, կ'ընեմ»: Չնկատեցի, որ դրասենեակիս դուռը բաց էր: Իր տասնհինգամեայ տղան դուրսն էր եւ լսեց մեր խօսակցութիւնը: Մտեցաւ դրան եւ ըսաւ. «Հայրիկ, ի՞նչ անունով կանչեմ քեզ... ի՞նչ անունով»: Եւ փախաւ: Հայրը քարացած կեցաւ եւ աչքերէն միայն արցունքի կաթիլներ հոսեցան:

ՆԵՐՍԻ.-Դուն ի՞նչ ըրիր:

Ե. ՄԱՐԳ.-Մտեցայ մարդուն, փորձեցի մխիթարել. «Կ'անցնի», ըսի: «Երեխայ է», ըսի: Նայեցաւ աչքերուս եւ ըսաւ. «Երեխայ է, բայց ե՛ս, ե՛ս ինչպէս վարժուիմ»:

ՆԵՐՍԻ.-Դուն մարդ արարածին մէջէն առիր ամէնէն առաքինի արժանիքը՝ հայր ըլլալու հպարտութիւնը:

Ա. Բ. Գ. Դ. Զ. ՏԻՊԱՐՆԵՐԸ (ցած եւ կշռոյթով).-Ինչո՞ւ ըրիր, ինչո՞ւ ըրիր (Նոյն կշռոյթով կը շարունակեն յաջորդ խօսակցութեան ընթացքին):

Ե. ՄԱՐԳ.-Այո՛... այո՛...: Այդ օրուրնէ այդ ձայնը կ'արձագանգէ դրասենեակիս մէջ, տանս մէջ...: Երբ առանձին ըլլամ, ականջներս կը լեցուին (ՏԻՊԱՐՆԵՐԸ ձայնը աւելի կը բարձրանայ) այդ անտանելի ձայնով: (ՏԻՊԱՐՆԵՐԸ ձայնը կը դադարի): (ՆԵՐՍԻՒՆ)՝ Դուն, կ'երեւի դուն ես պատճառը յաւերժական այս տառապանքին: Օ՛հ, այնպէս կ'ատեմ քեզ, կ'ատեմ քեզ...: (Կը մօտենայ, եւ երկու ձեռքերու վրա ՆԵՐՍԻՒՆԻ կուրծքը կը ծեծէ ու կը փշի):

ՆԵՐՍԻ (ստանց դիմադրելու կը թողու, որ իր կուրծքը ծեծէ).-Տարէ՛ք, տարէ՛ք թող հանգչի:

Ա. Բ. ՏԻՊԱՐՆԵՐ (Կը մօտենան եւ Ե. ՄԱՐԳԸ կը տանին մնացեալ-ներու քով):

Ա. ՄԱՐԳ (ՆԵՐՍԻՒՆ).-Այս վերջինն ալ կ'ուզե՞ս:

ՆԵՐՍԻ.-Ո՛չ: Ժամը կ'աւարտի արդէն:

Ա. ՄԱՐԳ (Զ. ՄԱՐԳ-ուն).-Բախտաւոր ես, աղատեցար:

Բ. ՄԱՐԳ (ՆԵՐՍԻՒՆ).-Ինչո՞ւ մեզ հարցաքննեցիր, զինքն ալ հարցաքննէ:

Գ. ՄԱՐԳ.-Ի՞նչ է, կը կարծես, որ ան նուա՞ղ մեղաւոր է, քան մենք:

Գ. ՄԱՐԳ.-Ա՞յս է արդարութիւնը:

Զ. ՄԱՐԳ (հպարտ).-Ինչո՞ւ կը նեղուիք: Այս մարդը բան մը դիտէ, որ չհարցաքննեց: Ես պատմելիք բան մըն ալ չուրիմ: Իմ անցեալը բաց ծովուն նման է, ամէն ինչ կը

տեսնուի: (Կը մօտենայ ՆԵՐՍԻՒՆ): Խնդրեմ, այս մարդոց ըսէ, որ ես բան մը չունիմ:

ՆԵՐՍԻ (Լուռ եւ շեշտակի կը նայի):

Զ. ՄԱՐԳ.-Ըսէ՛, ճարտասան մարդ ես, ինչո՞ւ պապանձեցար:

ՆԵՐՍԻ (Լուռ է):

Զ. ՄԱՐԳ.-Ի՞նչ կը մտածես: (Պահ մը): Դիտե՛մ, գիտե՛մ ինչ կը մտածես: Չկարծես որ քեզ չեմ ճանչնար: Քեզ ես բաց դրքի մը պէս կը կարդամ: Մտքէդ հիմա այդ պահը կ'անցնի...: Հա՛, հա՛, ատիկա՛ է՛ այդ երիտասարդը, որ կ'ուզէր արտասահման երթալ ուսումը շարունակելու...: Հա՛, ատիկա է: Ես իրեն ըսի, որ թուղթերը կատարեալ չէին, մինչդեռ ես պահեցի թուղթերը...: Ա՞յս է մտքինդ, հը՞...:

ՆԵՐՍԻ (Լուռ է):

Զ. ՄԱՐԳ.-Չե՞ս խօսիր... ո՛չ, ո՛չ, այդ չէ՛: Դուն ուրիշ բան մը կը մտածես: Գիտե՛մ, դիտե՛մ, այդ երիտասարդ բանաստեղծն էր, որ եկաւ իր գործերը հրատարակելու եւ իրեն յատկացուած թուղթերը պահեցի եւ ըսի, որ թուղթ չկայ եւ ուրիշի մը ծախեցի...: Ա՞յս էր մտքինդ: Խօսէ՛, մարդ Աստուծոյ, բա՛ն մը ըսէ:

ՆԵՐՍԻ (Լուռ է):

Զ. ՄԱՐԳ.-Խօսէ՛ կ'ըսեմ քեզի...: Ո՛չ, ո՛չ, այդ ալ չէ... մի՛ւսն է... այո՛, մի՛ւսը...: Բժշկական համալսարանի փայլուն թեկնածուն, որ ներս չառի, որովհետեւ դրամ չունէր վճարելու...: Ա՞յս է մտքինդ...: Ո՛չ, ո՛չ, ա՛յդ ալ չէ...: Այդ հիւանդ մարդը, որ գործողութեան պէտք ունէր, բայց դրամ չունէր. ան որ մահացաւ սպասելով...: Ա՞յս է մտքինդ...: Ո՛չ, ո՛չ, ա՛յդ ալ չէ... (Բարձր ինկնկալով) Խօսէ, ի սէր Մարդուն, խօսէ, կը բաւէ լռես...:

ՆԵՐՍԻ.-Մա՛րդ, դուն ե՞րբ պիտի մարդանաս:

Ա. Բ. Գ. Դ. Ե. Զ. ՏԻՊԱՐՆԵՐԸ (Կը խօսուին մէկ կողմ, մերթ ընդ-մերթ ՆԵՐՍԻՒՆ կը նային):

Բ. ՄԱՐԳ.-Հիմա ի՞նչ պիտի ընենք:

Գ. ՄԱՐԳ.-Այս մարդը ամէն ինչ գիտէ:

Դ. ՄԱՐԳ.-Իր գիտցածը միայն ինքը դիտէ:

Ե. ՄԱՐԳ.-Եւ մենք:

Զ. ՄԱՐԳ.-Եւ մենք:

Ա. Բ. Գ. Դ. Ե. Զ. ՏԻՊԱՐՆԵՐԸ (միաբերան).-Եւ մենք:

Զ. ՄԱՐԳ.-Թողո՞ւնք, որ ազատ-համարձակ երթայ:

Ա. ՄԱՐԳ.-Ինչո՞ւ ոչ, թող այլեւս հետերնիս ապրի:


Բ. ՄԱՐԳ.-Խե՞նթ ես: Այս մարդը եթէ հետերնիս ապրի, մենք մեր դիրքերուն վրայ չենք ըլլար:

Գ. ՄԱՐԳ.-Պիտի կործանինք:

- Դ. ՄԱՐԴ.—Պիտի կորչինք:
- Ե. ՄԱՐԴ.—Տարիներով ձեռք բերած վասակներս պիտի փոշի դառնայ:
- Ա. ՄԱՐԴ.—Բայց պիտի մարդանանք:
- Զ. ՄԱՐԴ (Ա. ՄԱՐԴուն).—Քեզ համոզե՞ց: Վա՛յ անմիա: Այս աշխարհին մէջ իր ըսած մա՛րդը կ'ուզես ըլլա՞ր:
- Բ. ՄԱՐԴ.—Ո՛չ, ո՛չ, ասիկա չ'ըլլար: Եկէ՛ք խորհրդակցինք:
- Ա. Բ. Դ. Ե. Զ. ՏԻՊԱՐՆԵՐ (Կը հաւաքուին ու անխօս, բայց շարժումներով վիճաբանութեան բնոյթ մը կու տան):
- ՆԵՐՍԻ.—Մա՛րդը, մա՛րդը, ո՞ւր է ՄԱ՛ՐԴԸ:
- Ա. ՄԱՐԴ (սարսափով կը բաժնուի խոսքէն).—Ո՛չ, ո՛չ, այդ անկարելի է, անկարելի: Ես համաձայն չե՛մ, ես համաձայն չե՛մ:
- Բ. Գ. ՏԻՊԱՐՆԵՐ (Կու գան եւ Ա. ՄԱՐԴը կը բռնեն: Ձեռքերով բերանը կը գոցեն եւ չեն թողուր, որ խօսի):
- Դ. Ե. Զ. ՏԻՊԱՐՆԵՐ (Կը մօտենան, ՆԵՐՍԻին ձեռքերը կը բռնեն մինչ ան կը փորձէ խօսի):
- ՆԵՐՍԻ.—Մա՛րդը... մա՛րդը...
- Դ. ՄԱՐԴ.—Լռէ՛, ժամդ վերջացաւ:
- Ա. ՄԱՐԴ.—Թողէ՛ք, աղա՛ս թողէ՛ք, կը խնդրեմ...
- Դ. Ե. Զ. ՏԻՊԱՐՆԵՐ (Իաշունահարերու պէս կը հարուածեն):
- ՆԵՐՍԻ (Կ'իջնայ):
- Բ. Գ. Դ. Ե. Զ. ՏԻՊԱՐՆԵՐ (Կը վերցնեն ՆԵՐՍԻի դիակը եւ սրնտուկներու վրայ կը նետեն, ճերմակ լաթով մըն ալ կը ծածկեն: Կը դառնան եւ դանդաղօրէն ամէն մէկը թատերախաղի սկսած ձեւով կը կենայ):
- Բ. ՄԱՐԴ.—Տարօրինակ արեւ մը կայ այսօր:
- Գ. ՄԱՐԴ.—Տարօրինակ բոյր մը կայ օդին մէջ:
- Դ. ՄԱՐԴ.—Տարօրինակ խաղաղութիւն մը:
- Ե. ՄԱՐԴ.—Մարդ այսպէս առանձնանայ, խորհէ, մտածէ...
- Ա. ՄԱՐԴ.—Ո՞ր մարդը:
- Բ. Գ. Դ. Ե. Զ. ՏԻՊԱՐՆԵՐ (Շեշտակի կը նային Ա. ՄԱՐԴուն):
- Զ. ՄԱՐԴ (հեզակական եւ կարճ խնդրով մը).—Ո՞ր մարդը...
- ԲՈՂՈՐԸ (միատեղ կը սկսին խնդալ եւ մէջ ընդ մէջ ըսել).—Ո՞ր մարդը... (Լոյսերը դանդաղօրէն կը տկարանան եւ կը մարին):

Գրուած՝ 1970ից
Վերամշակուած՝ 1991ից

ՀՐԱՆԴ ՄԱՐԳԱՐԵԱՆ



ՄՂՁԱՒԱՆՁ - 31

Ելուզակի նման եկար,
սեւ ու քաջալ ձիուն հեծած,
ցնցուեց մոայլ ամբոխը քար,
ալեկոծուեց սիրտը տկար՝
սուտ խոստումից հիպնոսացած:

Հասուն արտը ասպատակուեց,
հասուն այգին թալան արին,
յորդ աղբիւրի ակը փակուեց,
արեւացիը մազը թաղկուեց՝
ջուր չտեսաւ ամբողջ տարին:

Խաւար գլխից խաւարն անծիր
ելաւ-պատեց աշխարհն հայի.—
ագահութեան որդն անձանձիր
կերաւ սերմերը ցանուցիր,
դաշտը մնաց մերկ, ամայի:


Խաւարն ելաւ գլխիդ միջից
եւ տարածուեց երկրիս վրայ,
ցուրտը խուժեց սրտիդ միջից՝
սառոյց կապեց երկրիս վրայ,
սովը ելաւ հոգուդ միջից,
ելաւ-լափեց երկիրս ողջ.—
լափեց ամէն քար ու կիրճից
մաս ու պտուղ, ծիլ ու բողբոջ:

...Ո՞վ կ'արթնանայ ոգու կանչից,
ո՞վ կը քնի խաղաղ քնով.—
այդ ո՞վ պիտի իջնի խաչից,
որ մեզ փրկի մղձաւանջից
արդարութեան սիրոյ գնով:

Փետրուար, 93 թ.

ՌԱԶՄԻԿ ԴԱԻՈՅԵԱՆ

Գ. ԱԲԷԼԵԱՆ



Պ Է Յ Ի Ո Ւ Թ

Գ Ի Շ Ե Ր Օ Թ Ի Կ

Եղանք գիշերօթիկ. քոյր Հետուիկի գիշերօթիկ: Տակաւին պատիւ մըն ալ վերապահուած էր մեզի. եղանք քոյր Հետուիկի առաջին գիշերօթիկներէն:

Թիւով 15 հոգի էինք միայն: 10 տղայ եւ 5 աղջիկ՝ Պէյրութէն, Քեսապէն, Շթորայէն եւ Զահլէէն: Մա խորքին մէջ ընտանիք մըն էր: Երեք սենեակներու մէջ բաժնուած էինք: Սենեակները իրարմէ հեռու էին. իւրաքանչիւրը թաղի մը մէջ: Միատեղ կը ճաշէինք: Կէսօրին մեղի կը միանային կարգ մը ուսուցիչներ: Ո՞վ կրնայ մոռնալ պատուելի Մարտիրոսը, որ Ֆուլտացնելով կը դգաւէր ապուրը կամ կը խմէր թէյը՝ «պա՛հ-պա՛հ» գոչելով: Մեծ ընտանիք մըն էինք: Անշուշտ, միսիոնարուհի քոյրերը առանձինն կը ճաշէին: Անոնք առաւելաբար կ'ուտէին եւրոպական ճաշեր, գլխաւորաբար գետնախնձոր: Իբրեւ դերմանացի-ղուհիներին, այլ կերպ կարելի ալ չէր երեւակայել գիրենք:

Սենեակներուն մէջ լուացարան չուէինք. իրարու ձեռքերուն հերթով ջուր կը լեցնէինք՝ լուացուելու համար: Կը շտկէինք մեր անկողինները եւ կը փութայինք ճաշարան: Օրուան կլիմայական կացութեան համեմատ, ընդհանրապէս, կը ճշգուհէր մեր տրամադրութիւնը: Անշուշտ, տրամադրութիւնները կապուած կ'ըլլային նաեւ դպրոցական պարտաւորութեանց հետ: Գրաւորները կը դարձնէին մեզ լուռ եւ մտածկոտ: Թեթեւ կը զգայինք, երբ գրաւոր կամ ծանր պարտականութիւններ չուենայինք:

Կէսօրին, հաճոյքով կը փութայինք ճաշարան: Վերջին, Ծրդ պահը արդէն դժուար կ'անցնէր: Որքան անհամբերութեամբ կը սպասէինք կէսօրուայ զանգի հաճելի ու փրկարար ձայնին: Ընդհանրապէս մեծ ախորժակով կ'իյնայինք ճաշին վրայ, ուսուցիչ, աղջիկ թէ

տղայ: Անշուշտ, մանք կը դժգոհէին ճաշերէն, բայց ասոնց տուներուն ճաշերը դժուար թէ աւելի առատ կամ համեղ ըլլային: Սակայն ամէն մարդ, բնականաբար, կը փնտռէր իր տունը կամ իր մայրը:

Երեկոյեան եւս ախորժակով կը բոլորուէինք սեղանին շուրջ: Առաւելաբար թէյն էր, որ կը տիրապետէր հոն: Ասոր հետ պանիր, հրուշակ, ձիթապտուղ եւ կամ կէսօրուընէ աւելցած ճաշ: Ընթրիքին կը հետեւէր սերտարանի պահը: Սերտարանը, որ գետնափոր սրահի մը մէջ կը կատարուէր, խճողուած կ'ըլլար: Այնճարցի աշակերտներուն մեծամասնութիւնը, յատկապէս բարձր դասարաններուն, հոն կու գար սերտողութեան: Կային որոշ պատճառներ. հիմնական առաջին պատճառը լուսաւորումի հարցն էր: Արդարեւ, տուներուն մէջ գործածուած քարիւղէ լապտերները յարմար չէին սերտողութեան: Իսկ հոս, սերտարանին մէջ, քոյրերը կը կախէին քարիւղէ «լիւքս»եր, որոնք շատ լաւ լոյս կու տային: Այլ պատճառ մըն էր այն, որ հոս կային տրամադրելի ուսուցիչներ, որոնք կրնային օգտակար ըլլալ, հարցումներու պատասխանելով:

Օրինական աշակերտներէն զատ, կային թերաւարտ կարգ մը ուսումնաստեմէ տղաք, որոնք կու գային իրենց ինքնաշխատութիւնը հող կատարելու համար: Խորքին մէջ ամենալուրջ սերտողները այդ տղաքն էին:

Դպրոցէն ներս պահերը կ'անցնէին որոշ միօրինակութեամբ: Տարբեր ուսուցիչներ տարբեր ոճ ունէին: Ոմանք հաճելի, ոմանք անտանելի: Մեզ՝ քեսապցի երկու տղոցս համար, նորութիւնը այն էր, որ մեծ դժուարութիւն կը գտնէինք դասերուն կարենալ հետեւելու, ամոր հանձնար, որ կու գայինք դպրոցէ մը, ուր անգլերէնը այնքան տկար էր: Մա՛նաւանդ ես մեծ դժուարութիւն կը գտնէի, անոր համար, որ տակաւին քանի մը ամիս առաջ այնքան լայն կերպով փառաբանուած էի, այնքան պատիւներու արժանացած, իսկ հիմա, այնքան դժուարութիւն կ'ունենայի: Յատկապէս գլուխ կտրոց էին ուսողութեան նիւթերը, գրահաշիւն ու երկրաչափութիւնը: Ո՞վ ստեղծած էր այդ սատանայական նիւթերը: Տնօրէնուհիին կարգադրութեամբ, ընթացաւարտ դասարանէն աշակերտուհի մը՝ մեզի օրիորդ Լուսին, անձնական դաս կու տար մեզի: Ինք շատ լաւ կը բացատրէր ամէն բան. ի՞նչ ընէր սակայն աղջիկը, եթէ մենք ըմբռնելու ախորժակ չուենէինք:

Միւս կողմէ՝ քիմիաբանութիւն եւ կենսաբանութիւն ըստած նիւթերը այնքան մեծ նորութիւններ էին մեզի, որքան հաւանաբար Ամերիկեան եղած էր Գոլորմպոսին համար: Բայց որոշ համակրանք ունէի այդ նիւթերուն հանդէպ: Իսկ երբ աւելի փոքր դասարաններէն աղջիկներ պատմութեան դասին համար օգնութեանս դիմէին, ո՛չ միայն չէի մերժեր, այլեւ ընդհակառակն, մեծ սիրով կը փորձէի օգնել իրենց: Է՛հ, աղուորիկ եթէ ըլլային, եւ աղուորիկներ ալ փա՛ռք Աստուծոյ չէին պակսեր:

Շաբաթավերջին անհամբերութեամբ կը սպասէինք: Բնական բան էր այդ, բայց եւ այնպէս շատ չէինք ուրախանար, անոր համար, որ զահլէցիները տուն կ'երթային: Տուն, տո՛ւն, քաղցր իմ տուն...: Երանելի էին: Իսկ մենք դատապարտուած էինք միայն Ջատկէ Ջատիկ տուն երթալու: Տակաւին, գիշերօթիկ 5 աղջիկներն ալ, անպիտանները, զահլէցի էին: Ի՞նչ կ'ըլլար, եթէ անոնցմէ գէթ մէկը պէյրութցի ըլլար...: Երկուշաբթի առաւօտը եթէ դասարանին ճամբան ցոյց կու տար, սակայն, միւս կողմէ՝ զահլէցի աղջիկները կը միանային մեզի:

Ամէն անգամ, որ քոյրերը Պէյրութ իջնէին, ծնողներու պէս, իրենց հետ կը բերէին պէյրութեան աղուոր բաներ, պրիոշ, քախկէ, անուշեղէն, եւայլն...: Երբ առաւօտուն իմանայինք, որ քոյրերը Պէյրութ իջած են, անհամբեր կը սպասէինք երկոյեան: Հաճոյքով կը վազէինք Ապու Ֆառաքիին պասին մօտ, քոյրերուն օգտակար ըլլալու համար:

Տարին, ընդհանուր առմամբ, հաճելի անցաւ: Ճիշդ է, որ դրամ գրեթէ չունէինք, բայց եւ այնպէս ծախսելու կարելիութիւններ եւս չկային: Խանութները այնքան քիչ էին: Օրինակ, հաճոյքով կ'երթայիք Պօղիկեանին խանութը, որ միեւնոյն ատեն թէ՛ նամակատուն էր, թէ՛ նպարավաճառի կրպակ, թէ՛ սափրիչի խնութ եւ թէ՛ ալ դերձակի արհեստանոց: Տակաւին մագոթ ալ կը ծախէր: Մեր հաճոյքը շատ կը մեծնար, երբ նամակ ստանայինք այն տեղէն: Այլ հաճոյք մըն էր, երբ քոյրերը մեզ մագոթ բերելու ղրկէին: Պարապ տակառը գլորելով կը տանէինք: Դանդաղօրէն — ինչ լաւ — Պօղիկեան որդին կը լեցնէր տակառը: Ապա լեցուն տակառը, դարձեալ գլորելով, կը տանէինք տուն: Թէ՛ դողո՞ մը կատարած ըլլալու հաճոյքը կ'ապրէինք եւ թէ՛ ազատութիւն կը վայելէինք:

Առաջին տարիէն բաւական մեծ թիւով յուշեր կան: Սակայն երկու հատին միայն կ'արժէ անդրադառնալ:

Չափազանց կ'ատէի ատենամարզանքի պահերը: Ամէն Ուրբաթ, վերջին պահուն, կ'ունենայինք ատենամարզանքի պահ: Հերթով, ամէն աշակերտ, պարտաւոր էր արտասանել: Տակաւին հերթով, պէտք է արտասանել հայերէն, արաբերէն եւ անգլերէն: Իսկ ես չափազանց անհամակրելի կը գտնէի այդ պահերը: Երկչոտութիւն մը կը համակէր զիս. կը մոռնայի տողերը, բառերը: Տունները իրար կ'ացնէին: Առաջին արտասանութիւնս անգլերէն լեզուով պիտի ըլլար: Մինչեւ վերջին օրը բաւական լաւ սորված էի: Երեք համարնոց բան մըն էր: Սակայն չէի ախորժեր այդ կտորէն: Ա՛խ, սա անտանելի պահ:

Յուսահատութեանց մէջ ընկերներու յայտնեցի, որ ուրիշ բան պիտի արտասանեմ: Սա քանի մը բառնոց բան մըն էր, որ երկու տարի առաջ սորված էի: Միեւնոյն ատեն, սակայն, կը ջանայի ինծի համար նշանակուած կտորը սորվիլ: Մինչեւ վերջին պահը անորոշութեան մէջ էի. փոխե՞լ, թէ պահել նշանակուած արտասանութիւնը...

Աշակերտները սկսած էին արտասանել: Ես ձեռքս բռնած էի արտասանութիւնս. կը կրկնէի, կը կրկնէի, բայց անորոշութիւնս երթալով կը բազմապատկուէր: Տէ՛ր Աստուած, ինչպէ՞ս, արտասանէի այդքան մեծ թիւով աշակերտներու դիմաց: Եթէ սա պահը չըլլար՝ չէ՞ր ըլլար:

Լսեցի անունս: Երբուն քայլերով բեմ ելայ: Դատական մարմին մը կար, ուսուցիչ-ուսուցչուհիներէն բաղկացած:

Պահ մը նայեցայ դիմացս: Հարիւրաւոր աչքեր կը դիտէին զիս: Ձգացի դէմքիս եւ այտերու կարմրիլը: Արդէն այդ շնորհքը ունէի. ամէն առիթով, կը կարմրէի ճակնդեղի մը նման: Ի՞նչ ընել, Տէ՛ր Աստուած, դեռ չէի որոշած արտասանելիքս: Այն տղաքը, որոնց ըսած էի, թէ իմ գիտցածս պիտի արտասանեմ, ձեռքով-ոտքով կը քաջալերէին, որ կատարէի իրենց տուած խոստումս: Վերջապէս փրթան լեզուիս կապերը. կատարեցի խոստումս:

Դատականի անդամները, որոնք տակաւին նոր վերջացուցած էին նախորդ արտասանողին մասին իրենց դիտողութեանց արձանագրութիւնը, մինչեւ որ գլուխին բարձրացնէին, ես արդէն արտասանած էի:

Ի՞նչ է կեանքը առանց կնոջ,
 Նման է խոհանոցի մը՝ առանց դանակի,
 Նման է յիսուհի մը՝ առանց հիւնգի...

Աշակերտներուն որոտընդոստ ծափահարութիւնը թնդացուց եկեղեցին, որ նաեւ իբրեւ հանդիսասրահ կը գործածուէր: Փրկուած էի: Սակայն դէմքս կ'այրէր տակաւին. կարմրութիւնս ալ բան չէր զիջած իր սաստկութենէն: Երբ տեղս կ'ողողուէի, աչքս դպաւ պատասխանատու ուսուցչին, Բաբգէնի աչքերուն: Հոն գայրոյթ կար միայն: Բարեբախտաբար, ինք արաբերէնի ուսուցիչ էր. անգլերէն չէր գիտեր: Հակառակ ատոր, աչքերէն արիւն կը ժայթքէր...

Աշակերտներուն խնդուքը երկար տեւեց: Ընկերներս առանց դընահատանքի չձգեցին զիս:

—Ապրի՛ս...
 —Լա՛ւ էր...
 —Պրաւօ՛...

Սակայն ես խորապէս մտահոգ էի: Պէտք էր անհանգիստ շաբաթավերջ մը անցընել, եւ սպասել Երկուշաբթի օրուան: Բարեբախտաբար, այդքան ալ սպասելու պէտք չեղաւ: Հազիւ դուրս ելած, ընկերներու շնորհաւորութեանց առանց սպասելու, կծիկ դրի եւ իջայ դպրոցին կից գտնուող մեր սենեակը: Շունչ մըն էր, որ կ'առնէի: Պարոն Բաբգէնին գայրոյթը ահռելի էր: Իր երկար մատներով փոխանակ դաշնակ նուաղելու, յաճախ կ'ապտակէր մեզ: Ա՛խ, այդ ապտակները. կրակ ու կայծ կը թռցնէին մեր աչքերէն:

Լուր բերին, որ ուսուցչարան պէտք է երթալ: Տեսչարան չկար այդքան մեծ դպրոցի մէջ: Ուրքան դժուար բան էր լրիւ ուսուցչա-

կազմին առջեւ խայտառակուի կամ ապաակ ուտելը: Ի՞նչ կրնայի ընել սակայն. գլուխը քարին, ի՞նչ ըլլալու էր՝ թո՛ղ ըլլար: Ես կը քալէի, սակայն ոտքերս կը գամուէին գետնին: Վերջապէս հասայ ուսուցչարան: Դէմքիս կարմրութիւնը ճակնդեղէն, լոյլիկէն աւելի սասա- աիկ էր:

—Սա ի՞նչ խայտառակութիւն էր,— սաստեց պարոն Բաբդէն:

Խօսք չուէի:

—Չե՞ս պատասխաներ...

Ի՞նչ պատասխանէի:

—Մարդ Աստուծոյ, այդ որքա՞ն կարճ բան էր. մինչեւ որ գլուխնիս բարձրացնենք, դուն արդէն իսկ բեմէն վար իջար:

—Այդպէ՞ս ուրեմն: Ես ալ կը կարծէի, որ ամբողջ դար մը բեմին վրայ մնացած էի: Յետոյ, եթէ կտրճութեան համար էր, ի՞նչ ուզէր՝ ա՛յն թող տնօրինէր: Ատենամարդանքն ալ պակաս ըլլար:

—Յետոյ...,— քիչ մը դանդաղեցաւ պարոն Բաբդէն,— այդ ի՞նչ խայտառակ բան արտասաներ ես:

—.....

—Օրիորդները ըսին. փառք տուր Աստուծոյ, որ տեղույն վրայ ես բան չհասկցայ. այլապէս կը ճաշակէիր, հո՛ն, բեմին վրայ, սա օրհնեալ ապտակս...

Ի՞նչ... ուրեմն պիտի ճաշակէի ասոր ապաակը. օ՛խ:

—Շո՛ւտ, ներողութիւն խնդրէ օրիորդներէն:

Այդ ալ բա՞ն էր. եթէ ուզէր՝ նոյնիսկ կը համբուրէի: Ներողութիւն մը պճլտացի: Դուրս ելայ: Օրիորդներուն աչքերուն մէջ շատ ալ լաւ չկրցայ նայիլ, բայց կարծէք թէ ժպիտի պէս բան մը կը խաղար ատոնց մէջ:

Երբ դուրս ելայ, կարծէք ամբողջ լեռ մը ինկած էր ուսերէս: Ձղրուծս մեծ էր:

—Մօ՛, լակո՛տ,— կը յանդիմանէի ես զիս,— թող յիսուը առանց գերոյի ըլլայ, քու ինչո՞ւ է պէտք. եթէ խոհանոցն ալ առանց դանակի ըլլայ՝ ի՞նչ կը պակսի քեզի. յետոյ, այս տարիքիդ կնիկը ինչո՞ւ է պէտք...

Երեսիս կարմրութիւնը մնաց մինչեւ յաջորդ օրը: Ընկերներս կը շնորհաւորէին զիս, կը քաջալերէին, բայց ես ուտելիքս կերած էի: Ատկէ ետք, որքան ալ ատելի ըլլար ատենամարզանքի պահը, շնորհքով կտորներ պիտի արտասանէի...

Ատենամարզանքի հետ այլ յուշ մըն ալ կայ կապուած:

Բեմ ելած էր մեծ յաւակնութեամբ եւ ինքնավստահութեամբ, բաւական հսկայակազմ օրիորդ մը: Պիտի արտասանէր Վ. Թէքէեանի «Հաշուարդար»ը: Սկսաւ.

Հաշուարդար, ի՞նչ մնաց...

Խեղճ աղջկան մտքին մէջ բան չէր մնացած: Դարձեալ կրկնեց՝

Հաշուարդար, ի՞նչ մնաց...

Դարձեալ չեղաւ: Երրորդ անգամ սկսաւ.

Հաշուարդար, ի՞նչ մնաց...

Ճարահատ՝ պատասխանատու ուսուցիչը միջամտեց.

—Բեմ մնալու ի՞նչ մնաց...

Ընդհանուր ծիծաղի տարափին տակ, վար իջաւ աղջիկը...

*
* *

Ամէն Ուրբաթ երեկոյ, սերտարանին մէջ կը հաւաքուէինք՝ Ջանիցի պաշտամունքի: Շուրջ երեսուն հոգի էինք: Նախ տեղի կ'ունենար պաշտամունքը: Ապա կը սկսէր խաղի պահը: Բնականաբար, պաշտամունքէն աւելի կը սպասէինք խաղին: Որքա՞ն նորութիւններ կային հոս ինծի համար. տոմիւօ, միքստօ, մա՛նաւանգ՝ փինկ-փոնկ: Շուրջ երկու ժամ կ'անցընէինք ընդհանուր ուրախութեան մէջ: Երբեմն պահը հիւրասիրութեամբ կը ճոխացուէր, ինչ որ աւելի կ'ուրախացնէր մեզ: Երբեմն պաշտամունքները տուներու մէջ կը կայանային: Յաջողութիւնը, բնականաբար, կը պայմանաւորուէր հիւրասիրութեան ճոխութեամբ: Անշուշտ, տուները ընդհանրապէս տակաւին մէկական սենեակէ բաղկացած էին, բայց կային հարուստ եւ աղքատ, առատաձեռն եւ քիչ մը ազահ տուներ: Երբ նարինջ, պանան, կարկանդակ մէջտեղ դրուէին, աւելի մեծ ախորժակով կ'երգէինք եւ կը փառաբանէինք Յիսուսը: Եթէ պարզ շաքարով մը հիւրասիրուէինք, ատոր համեմատ կ'ըլլար փառաբանութեան ուժգնութիւնը:

Օր մը, պաշտամունքը առաջնորդողը առաջարկեց երգել, «Տու՛ն, տու՛ն, քաղցր իմ տու՛ն» երգը: Տունէն նամակներու ուշացումն էր պատճառը, թէ այլ բան՝ չեմ գիտեր. արցունքներս սկսան առատօրէն հոսիլ: Ուսերս, հակառակ կամքիս, սկսան ցնցուիլ եւ սկսայ բարձրաձայն լալ: Բոլոր ականարկերը վրաս կեդրոնացած էին, բայց ես ազատութիւն տուած էի արցունքներուս...: Կուշտ ու կուռ լացի այդ գիշեր...

Գիշեր մը Ջանիցի խաղերէն նոր վերադարձած՝ մեր սենեակին մէջ, վառարանին շուրջ նստած կը խօսակցէինք: Ադ օրուան նիւթն էր Թոստեն Յակոբին արարքը: Տախտակէ խոշոր սեղան մը խածնելով՝ վերցուցած ու քանի մը մեթր անդին տարած էր: Սա քաջութիւն մըն էր, մա՛նաւանգ նորութիւն մը, որուն մասին կ'արժէր խօսիլ եւ վերլուծում կատարել: Մեր ինքնամոռացութեան մէջ, յանկարծ տարուբերեցաւ այն անտուկը, որուն վրայ նստած էի: Կարծեցի, որ մէկը կը հրէր դիս, տգեղ կտակ մը ընելու համար: Քիչ մնաց որ վառարանին վրայ իյնայի: Սակայն ետիս մարդ չկար. միւս ընկերներս ալ նոյն ձեւի շարժում ըրին:

—Սա ի՞նչ է, տղա՛ք...

Բացատրութիւնն չկար. արդէն երկրորդ ցնցում մը տարուբերեց մեզ, այս անգամ աւելի մեծ ուժգնութեամբ: Վերջապէս մէկը բանաձեւեց.

—Տղաք, սա երկրաշարժ է, մի՛ վախնաք:

Մի վախնաքը ո՞րն է, մարդ Աստուծոյ. չորցած էինք: Ես փոքր տարիքիս երկրաշարժ ճաշակած էի. ցերեկով տակաւին՝ մայրս ալ քովս էր. շատ չէի վախցած: Հիմա սա պաղ գիշերով, երբ դուրսն ալ այնքան խաւար էր, սա ի՞նչ հրէշ էր:

Խաղաղսրահէն եկաւ այլ սենեկակից մը: Ան պատմեց, թէ ի՞նչ պատահած էր սրահին մէջ: Հագիւ իր բացատրութիւնը աւարտած՝ երբ մեզմէ մէկը զգացածը կը պատմէր, երրորդ եւ ահաւոր ցնցում մը մեզ վար նետեց մեր աթոռներէն: Մինչեւ առաւօտ չկրցանք քնանալ...: Սա Լիրանանի մեծ երկրաշարժն էր, որ պատճառ հանդիսացած էր կարգ մը տուններու քանդումին: Նոյնիսկ կարգ մը մարդիկ մեռած էին:

Յաջորդող շաբաթներուն բոլորս ալ ապրեցանք նոյն սարսափին տակ: Կարծես, սա եղաւ պատճառ մը, որ բոլորս ալ տուժեցնք մեր դասերուն մէջ:

*
* *

Այդ դարնան ունեցանք հաճոյքը երկու անգամ Պէյրուսթ երթալու: արդարեւ, գերմանական Պեյլի կրկէսը եկած էր: Խոշոր վրան մը լարած էին Թանգարանին դիմացը գտնուող բաց դաշտին մէջ: Ես առիւծի, վագրի, փիղի, նոյնիսկ կապիկի նկար տեսած էի մինչ այդ: Հիմա այս բոլորը, նաեւ զանազան խաղեր կը տեսնէի: Որքան մեծ նորութիւն էր սա: Հաճոյքս անբացատրելի էր: Որքան հրպարտ էի...: Մեր գիւղին մէջ կա՞ր ինծի պէս բախտաւոր մը, որ կրկէս տեսած ըլլար:

Այդ առաջին գարնան, Պօղիկեանները նորութիւն մը եւս մըտցուցին գիւղէն ներս: Բերին սառնարան մը, որ փոխան ելեկտրականութեան, քարիւղով կ'աշխատէր: Սկսան վարդի ջուրով եւ լեմոնի հիւթով պաղպաղակ շինել եւ ծախել: Խորքին մէջ պարզապէս սառեցուած բան մըն էր, որ շատ հեռու էր սառնանուչի համ ունենալէ: Հակառակ ատոր, որքան մեծ ախորժակով կը դնէինք եւ կ'ուտէինք այդ սառի կտորները: Սա՞կ՝ 5 դաեկան: Կարեւորը 5 դահեկան ճարելն էր: Սա գումար էր պարզապէս: Կը յիշեմ այդ ձմեռ, վերարկուիս ներքնադրպանին մէջ թուղթէ 10 դահեկաննոց մը գըտնելս. որքան ուրախութիւն պատճառած էր ինծի այդ համեստ թըղթադրամը...

Աւելի ուշ, միեւնոյն գարնան, Չահլէէն սկսան դալ վաճառորդներ, որոնք սառնանուչ կը ծախէին: Երբ մեր գրպաններուն մէջ 5 կամ 10 դահեկաննոց ունենայինք, անհամբերութեամբ կը սպա-

սէինք վաճառորդ լաճերուն: Ասոնք իրենց ուսն ի վար բաւական հսկայ սառնարան սնտուկ մը կախած՝ կը դիմէին մեզի: Մեզմէ լաւ դիտէին մեր արձակուելուն ժամանակը: Կը սպասէին: Իսկ մեզի համար, նոյնիսկ դասէն աւելի, հիմնական մտահոգութիւն էր սա վաճառորդներուն հետ յաջող առեւտուր կնքելը...

Այդ գարնան, մեր զահլէցի ընկերներուն հրաւերով գացինք Չահլէ եւ ամբողջ օր մը անցուցինք հոն: Մինչ այդ, քանի մը անդամ, Պէյրուսթ երթալու համար անցած էինք Չահլէ: Ապու Ասսաֆ ընկերութեան պասերը կանոնաւորութեամբ կ'երթեւեկէին Պէյրուսթի եւ Չահլէի միջեւ: Յաճախ պէտք կ'ըլլար Այնճարէն Չահլէ երթալ, Պէյրուսթ երթալու համար: Սակայն այս անգամ լրիւ օր մը ունէինք մեր առջեւ, Չահլէին ծանօթանալու համար: Եւ մա՛նաւնդ պիտի տեսնէինք Չահլէի նշանաւոր Ուսատին: Ասոր մասին երբ խօսէին մեր զահլէցի ընկերները, մեզմէ կը խլէին հիացական ու նոյնիսկ նախանձով լի ձայնարկութիւններ: Ըստ իրենց, սա դրախտի պատառ մըն էր: Եւ կը կարծէինք, որ իրենք այնտեղի կանոնաւոր յաճախորդներն են. ամէն վայելք մատչելի էր իրենց:

Գացինք: Չափեցինք կեդրոնական պողոտան երկու կամ երեք անգամ: Անցանք կօչիկներու շուկայէն, որ կը կոչուի Սուք էլ էլըմէն: Տեսանք նշանաւոր Սարրաֆ Անդրանիկին խանութը: Վերջապէս, տարին մեզ երկրային դրախտը՝ Ուսատի: Բաւական քալել պէտք էր հոն հասնելու համար: Դրախտին խոստումը ուժ կու տար մեր արդէն իսկ յոգնած ուղեւորուն: Վերջապէս հասանք: Օ՛, իսկապէ՛ս որ տղոց գովածէն իսկ աւելի գեղեցիկ էր: Գետ, ջրվէժ — հող չէ թէ շատ փոքր — ճաշարաններ, վայելքի այլազան խանութներ, վիճակահանութեան խաղերու բազմաթիւ տեսակներ եւ, մա՛նաւանդ՝ Չահլէին նշանաւոր սառնանուչ: Մեր ակնկալութեամբ պիտի վայելէինք նաեւ Ուսատիի նշանաւոր ճաշերէն՝ Չահլէի քալալէն: Սակայն պէտք չէր մռնալ, որ մեր ընկերներն ալ համեստ ընտանիքներէ կու գային:

—Գիտէ՞ք,— կը բացատրէր Շնորհքին Գոգոն,— հոս մէկ շիշ փեփսին, եթէ նստելով խմես, որքա՞ն կ'արժէ:

—Որքա՞ն:

—Կիրակի օրերը 100 դրուշ, իսկ շաբթուն մէջ՝ 60 դրուշ:

Սա արդէն իսկ համոզիչ փաստ էր, որ այդտեղէն, լաւագոյն պարագային, մէկական սառնանուչ կրնայինք ուտել, այն ալ... յոտընկայս: Այդպէս ալ ըրինք արդէն:

Սա սառնանուչը կարճ ատեն մը կտրեց մեր անօթութեան թափը, սակայն քիչ ետք դարձեալ անօթեցանք: Այս անգամ տարին մեզ Չահլէի նշանաւոր ճաշարան Ալպեռ: Օ՛, այնտեղի Ֆէլէֆիլը, իսկապէ՛ս որ պատմական նշանակութիւն ունէր: Համով էր: Երկուական հատ ուտելէ ետք, ամբողջ օրուան մը համար ուժ կրցանք ապահովել: Ասոնց հետ շիշ մըն ալ փեփսի. կատարելութեան հասաւ ամէն բան:

Կէսօրէ ետք բաւական զբօսնեցանք: Վարձեցինք մոթորսայքըլ: Զահլէցի տղաքը քչել գիտէին. մենք ալ ասոնց ետեւ նստելով թէ՛ կեդրոնի եւ թէ՛ ներքին թաղերը չափչփեցինք: Վախէս, վար իյնալու վախէս, պէտք է խոստովանիմ, շատ բան չէի տեսներ շուրջս: Միայն կը յիշեմ, որ երիտասարդներու խմբակի մը խնդուքի առատ նիւթ հայթայթեցի. «մոթորսայքըլին վրայ նստուածքս կ'արդարացնէր այդ աղոց...»

Զահլէի մէջ նաեւ ծանօթացանք խոտի մը՝ Ռպէյզ: Սա թթուաշ, համով բան մըն էր, որուն ցօղունը կ'ուտուէր: Շատ ալ չսիրեցի: Տղաքը բացատրեցին, որ սա մի միայն դարնան շուկայ կ'իջնէր, եւ զահլէցի օղի խմողներուն թիւ մէկ մէզէն էր...: Ես օղի չէի խմեր...

Ուրախ տրամադրութեամբ վերադարձանք տուն: Տուն դառնալէ առաջ, այցելեցինք մեր ուսուցիչներէն պարոն Աշոտին գրախանութի: Պարոն Աշոտ ըսելով անցնիլ չ'ըլլար: Սա մեր գիտութեան ուսուցիչն էր, որ գիտական բոլոր նիւթերը ինք կ'աւանգէր եւ ինք: Ինք շատ լաւ մարդ էր, բայց իր աւանդած նիւթերուն, յատկապէս ուսողութեան մէջ, չէի կրնար պատուով դուրս գալ: Սա նշանաւոր էր իր ծայր աստիճան պաղարիւնութեամբ: Առածի կարդ անցուցած էինք իր պաղարիւնութիւնը: Մեր կրտսեր մէկ սենեկակիցը մկրտած էինք իր անունով՝ Աշոտ, անոր համար, որ ան ալ պաղարիւն բան մըն էր:

Իրեն հետ բերած «Լ'Օրիան» թերթը յաճախ կը կարդար գրաւորներու ընթացքին: Սա մեզ համար կ'ունենար որոշ բարեբար արդիւնք. Յաճախ կը դիմէինք իրեն՝ օրուան նորութիւնները իմանալու համար: Նաեւ իրեն կ'ապսպրէինք մեր գրեթեական պիտոյքները: Եւ ան իր դրախանութէն կը բերէր կարկին, գրիչ, քանակ, մատիտ, ըստ մեր ապսպրաքին:

Իր գրախանութը կը գտնուէր Պուրլվարին վրայ: Երբ ներս մտանք, ուրախացաւ: Դիտեցինք մեր չորս դին: Հազիւ կրցաւ մէկ-երկու հարցում ընել: Այդ հարցումները հարցնելն ալ ինքնին մեծ բան էր իրեն պէս սակաւախօսի մը համար:

Վերջապէս տարին վերջացաւ: Կը պատրաստուէինք տունդարձի: Հիմա այլ ճար չկար: Պատուելի Հատիտեանը մոռցած էինք: Ինչ որ կը յիշէինք իրմէ, մեզ չարչարած ըլլալն էր, ամբողջ շաբաթ մը: Սա կը նշանակէր, որ յաջորդ տարուան համար եւս պիտի ըլլայինք քոյր Հետուիկի գիշերօթիկ:

Ամավերջի հանդէսը բացառիկ առիթ մըն էր: Առաջին անդամ ըլլալով դպրոցը, երկրորդական բաժնէն, ընթացաւարտ կու տար: 11րդ դասարանէն հինգ աղջիկ վկայական առին: Բացօթեայ բեմին վրայ, սանկ տարբեր հպարտութեամբ մը կանգնած էր տնօրէնուհին. վկայական պիտի բաժնէր. քիչ բան էր սա:

Այգ երեկոյ պրեռ թափուեցաւ աշակերտութեան: Պէյրութէն բերուած էր, յատկապէս այդ առիթով: Իսկ գիշերով չկրցանք քնա-

նալ: Առաւօտուն պիտի մեկնէինք Պէյրութ, անկէ տուն երթալու համար: Օ՛խ, վերջապէս:

Բոլորս ալ իրարու կ'ըսէինք, որ յաջորդ տարի եկող չենք: Սա ի՞նչ դպրոց էր, գիշերօթիկն ալ ապրուելիք տե՞ղ էր...

Յաջորդ վերամուտին բոլորս ալ փութացինք քոյր Հետուիկին: Սակայն հիմա շատ մեծ նորութիւն կար. մեր թիւը բազմապատկուած էր Յով կամ 7ով: Գիշերօթիկներուն թիւը կ'անցնէր 100ը: Բնականաբար, որոշ փոփոխութիւններ պիտի ըլլային: Չէր մնացած անցնող տարուան «ընտանիք»ը: Հիմա, երբ Պէյրութ իջնէին քոյրերը, չէին կրնար 100 հատ պրեռ գնել: Հասկնալի էր սա: Ճաշերը հսկայ կաթսաներու մէջ եփուելով, անցնող տարուան համը չէին ունենար, բնականաբար: Հիմա, քոյրերուն մայրական սէրը փոխան 1ձի պէտք էր բաժնուէր 100ով: Անշուշտ, որպէս նախկին սաներ, որոշ առաւելութիւններ ունէինք. դոնէ այդպէս կը կարծէինք:

Հիմա, դասարանները աւելի խճողուած էին: Մեր գիշերօթիկի պարտաւորութիւններն ալ շատցած էին: Հարկ էր պնակ լուալ: Խումբերու բաժնուած, շաբաթական հերթով, պնակ կը լուայինք: Ձմեռը որոշ չափով հաճելի էր. պաղ օդին տաք ջուրով խաղալը լաւ էր: Տակաւին՝ եթէ կարենայի՛ր գաղտագողի դպնալ հետդ լուացող աղջկան ձեռքին: Օ՛, որքան պատմելիքներ կ'ունենային տղաքը այս մարզին մէջ: Պէտք կ'ա՛յ ըսելու, որ պատմութիւններուն մեծ մասը երեւակայութեան արդիւնք էին յաճախ...

Ամսուան առաջին Կիրակին ճշդուեցաւ իբրեւ ծնողաց օր: Մընողներ իրենց զաւակներուն կրնային այցելութիւն տալ ամսուան առաջին Կիրակին միայն: Ընդհանրապէս պէյրութցի ծնողներն էին, որոնք իրենց զաւակները կ'ուրախացնէին: Ի՞նչ ընէին հալէպցի, դամասկոսցի, բայց մանաւանդ քեսապցի ծնողները: Ասոնք շատ պատահական առիթներով կրնային այցի դալ: Սակայն երբ դային, ենթականերուն զաւակները իսկական տօն կ'ապրէին:

Աշակերտութեան թիւին աճման հետ, սկսանք բաժնուել «կուսակցութեան»ը: Կային քեսապցիներու, հալէպցիներու, ճիպէլցիներու, պէյրութցիներու «կուսակցութիւն»ներ: Եւ առիթ չէր պակսեր, բնականաբար, բանավէճ ստեղծելու եւ, ինչու չէ, նաեւ մարտեր սարքելու:

Միւս կողմէ՝ ամենաբազմամարդ «կուսակցութիւն»ը Այնճարինն էր: Սակայն ասոնք ցերեկօթիկ ըլլալով, շատ բախում, ըսել կ'ուզեմ՝ գործնական բախում չէին ունենար մեզի հետ: Կը մնար մեր ընկերներուն վէճը մեզի՝ յատկապէս քեսապցիներու հետ: Իրենք կը գովէին իրենց Այնճարը, իսկ մենք՝ մեր Քեսապը: Այդ վէճերը կու գային նախորդ տարիէն: Իրենք պատճառներ ունէին, մենք ալ ունէինք: Իրենք կը յայտնէին, որ Այնճարը մօտ է քաղաքներու. պարտէղերը աւելի ընդարձակ էին. թրաքթոր ունին, սա ունին, նա ունին: Մենք ալ մէջտեղ կը բերէինք այն, որ տարիներէ ի վեր ելեկտրակա-

նույնիսկ ունէինք, մեր տուններուն պատերը աւելի լայնանիստ ըլլալով՝ աւելի տաքուկ կ'ընեն, մեր խնձորը աւելի փնտռուած է, եւայլն...

Ընկերներս, բոլորն ալ, այնճարցի ընկերներս, որոնք այնքան կիրքով կը գովէին իրենց Այնճարը, այսօր հեռու են իրենց սիրած եւ ջատագոված Այնճարէն: Իսկ ես, որ իմ կարգիս հազար ու մէկ փաստ կը ջանայի գտնել, իրենց գովասանքները ջրելու համար, մնացի իմ «չսիրած» Այնճարիս մէջ, մինչեւ օրս: Սա ալ կեանքի հեզանք է՞...

Երկրորդ տարին ալ անցաւ: Իմ մեծագոյն մխիթարութիւնս կ'ըլլար այն, որ յաճախ առիթ կը ստեղծուէր Պէյրութ իջնելու: Որքան կ'ատէի սա Այնճար ըսուած տեղը: Երբեմն ես զիս կը մեղադրէի ըսելով, ի՞նչ կ'ըլլար՝ եթէ երբեք պատուելի Հատիտեանին պընդումներուն տեղի տուած ըլլայինք:

Երրորդ տարուան ընթացքին, ինծի վիճակուեցաւ բնակիլ գիւղի ծայրամասը: Ճիշդ ու ճիշդ հիւսիս-արեւմուտքի անկիւնի տան մէջ: Այդ օրերուն առաւելաբար գիւղին կեդրոնական մասն էր, որ բնակուած էր: Հիւսիսային եւ հարաւային ծայրամասերը թափուր էին ներգաղթած այնճարցիներուն պատճառով: Հիմա հետզհետէ միւսները սկսած էին լքեալ տունները շէնցնել:

Մեր սենեակը ցանկապատուած էր, ինչ որ հազուադէպ երեւոյթ էր: Բակին մէջ դրացի մը հազար էր ցանած: Գարնան լաւագոյնս պիտի օգտուէինք այդ հազարէն: Աղջիկները, գիշերօթիկ, թապալուէ կը պատրաստէին եւ գիշերով, հազար ու մէկ պատրուակով՝ մենք կը հասնէինք այդ թապալուէին եւ դրացիին ցանած հազարով անուշ կ'ընէինք: Հաճելի էր այդ տունը:

Սակայն հաճելին շուտով մղձաւանջի վերածուեցաւ: 58ի քաղաքացիական պատերազմը պայթեցաւ մեր քովէն՝ Մասնաայէն: Գարնան օր մը, հսկայ հրդեհ մը լափեց քարիւղատար քանի մը սիթեռներ, մեզմէ քիչ անդին գտնուող Մասնաայի սահմանագլուխուն վրայ: Այդքան հզօր հրդեհ չէի տեսած կեանքիս մէջ: Ատոր յաջորդեց լիբանանեան բանակին մեր ետին գտնուող լեռներուն ռմբակոծումը: Ուղղակի սարսափած էինք: Անորոշութիւնը սոսկալի էր:

Այս անորոշութիւնը տեւեց մէկ-երկու օր: Շուտով գտանք մեր ինքնավստահութիւնը, երբ իմացանք, որ Այնճարի կոմիտէն սկսած էր պահակութեան դրութեան: Մեզի համար խորհրդաւոր բան մըն էր սա կոմիտէ ըսուածը: Գիտէինք, որ ան ամենազօր պատասխանատուն էր Այնճարի: Ի՞նչ վախ այլեւս: Սա՛նաւանդ՝ պահակութեան մէկ կէտը կը գտնուէր ուղղակի մեր պատուհանին տակ: Այլեւս հաճելի էր կացութիւնը: Մեր ժամանակին մեծ մասը կ'անցնէինք պահակներուն հետ: Եւ որքան կ'ուրախանայի, երբ առիթ տրուէր ինծի ատրճանակ մը կամ զէնք մը բռնել: Կը դառնայի հերոս մը...: Եւ որքան «դրամագլուխ» կը հաւաքէի, գիւղ տանելու համար...

Յաջորդ առաւօտ, Դամասկոսի վրայով գացինք Քեսապ: Ահ ու դողով կտրեցինք սահմանագլուխը: Դամասկոս-Պէյրութ մայրուղիին բաւական երկար մէկ հատուածը կը գտնուէր ապստամբներուն տիրապետութեան տակ...

Չորրորդ եւ վերջին տարուան սկիզբը անորոշութեան մէջ պիտի սկսէր: Լիբանանի քաղաքացիական կռիւները չէին վերջացած: Նոր նախադահ ընտրուած էր թէեւ, բայց տակաւին խառնակութիւններ կային: Ակնդէտ կը սպասէի Հոկտեմբերին: Վերջապէս մեկնումի ժամանակը հասաւ: Մնողներս հազար ու մէկ խրատ կը կարդային: «Պէյրութ չիջնես... (Դամասկոսի ճամբով պիտի երթայինք Այնճար).... Նահրի կողմերը չըլլայ, չըլլայ որ երթաս. այդ նահրի դայիմները կը մորթեն քեզ, տղա՛ս»:

Այնքան ալ անիմաստ չէին այդ պատուէրները: Դժբախտաբար, անմարդկային արարքներ կ'ալեկոծէին լիբանանահայութիւնը: Բաւական տաղտկալի ճամբորդութենէ մը ետք, վերջապէս հասանք Այնճար: Ամէն բան տեղն էր. հիմա վտանգ չկար այդ կողմերը: Բոլոր տուեայները ցոյց կու տային, որ բնականոն տարեշրջան մը պիտի բոլորէինք: Պէտք էր ուժերը լարել. յաջորդ տարուան համար բարձր նիշեր ունենալը անհրաժեշտ էր. աւելի բարձր ուսումնական կեդրոն մը փոխադրուիլ էր պէտք: Եւ այս, ինքնին, այսինքն՝ դպրոց փոխելը, որոշ չափով մը երկիւղով կը լեցնէր զիս: Վարժ էինք քոյր Հետուիկին: Թող գոլէճի բաժին մը եւս բանար, չէր ըլլա՞ր: Վստահաբար, մինչեւ աջորդ տարեշրջան, կը վերջանային լիբանանահայութիւնը ալեկոծող անիմաստ կռիւներն ու մարդասպանութիւնները:

Իսկ ի՞նչ ուսանիլ: Ահաւասիկ բան մը, որ ինքնին մեծ հարցական մըն էր: Մեր գերդաստանին մէջ շատ էին բժիշկներ, դեղագործներ, նաեւ՝ քանի մը երկրաչափեր: Ամերիկայի մէջ շատ էին ուսեալ անդամները մեր գերդաստանին: Ես սակայն չունէի այդ ձգտումը: Հայրս, կ'երագէր ըլլալ բժիշկի մը, գէթ առնուազն դեղագործի մը հայրը: Օ՛, քի՞չ պատիւ էր ըսել, որ Ճէմսին տղան բժիշկ է: Այդ պատիւը չէի կրնար տալ հօրս. շատ յուսախաբ ըրի զինք: Չեղաւ, չեղաւ, վերջապէս համոզուեցաւ: «Գնա՛, պատուելի եղիւր», թելադրեց: «Եթէ պատուելի մը ըլլաս, ապագադ ապահոված կ'ըլլաս. ուսումդ ալ դիւրին կ'ըլլայ»:

Այս պատուէրը տուող հայրս մարդ մըն էր, որ եկեղեցիին դուռը կոխկրտելը անյարմար կը գտնէր: Եկեղեցի կ'երթար, երբ նոր պատուելի մը գար.

—Երթամ, նայինք ասոր սէրէթը ինչպէ՞ս է:

Կ'ուզէր երթալ ու տեսնել, գիտնալու համար, թէ մարդը որքանով կտրող էր իբրեւ մարդ կամ պատուելի: Եթէ հաւնէր, կ'ըսէր.

—Ձէ, մարդուն սէրէթը խիտ է,— այսինքն՝ խելացի է: Հակառակ պարագային զայն կ'որակէր «սէրէթը սէյրաք», այսինքն՝ ցանցառ, ոչ շատ խելացի...

Հիմա, այս մարդը կ'ուզէր, որ պատուելի ըլլամ: Վերջապէս ա-
ւելի դիւրին պիտի ըլլար ուսանիլս:

Իմ կողմէս, այդ գաղափարը այնքան ալ օտար բան մը չէր:
Ծննդավայր գիւղս զուտ աւետարանական գիւղ մըն էր, նաեւ՝ զուտ
դաշնակցական: Աւետարանականութիւնը ու դաշնակցականութիւնը,
խմելիք ջուրի պէս բնական բաներ էին: Ինծի համար, անձնապէս,
անսովոր բան մը չէր հօրս առաջարկը: Պատուելի, պատուելի, ի՞նչ
կ'ըլլայ որ միւսները, որոնք պատուելի եղած էին, ինձմէ լա՞ւ էին:

Ապագան սակայն այլ բան պիտի դասաւորէր: Ո՛չ միայն բը-
ժիշկ կամ դեղագործ, այլ նոյնիսկ պատուելի պիտի չըլլայի:

Սկսաւ տարեշրջանը: Խանդավառ էի: Խանդավառութիւնս անոր
համար էր, որ դպրոցը պիտի աւարտէի. թէեւ երբեմն մտահոգու-
թիւնը կը կրծէր սիրտս: Փոփոխութիւնը որքան ալ հաճելի ըլլար,
անոր վերապահած անկնկալը մտահոգիչ էր: Ուրախութեանս մէկ այլ
պատճառը այն էր, որ հայրս Ամերիկա պիտի մեկնէր. ունէր ժա-
ռանգութեան հարց մը, գոր պէտք էր կարգադրել հոն, Ամերիկայի
մէջ: Երազներս վարդագոյն էին: Հայրս, յոյս ունէր, որ պիտի կա-
րենար Ամերիկա տանիլ մեզ: Նոյնիսկ հասցէն մեր ապագայի տան,
որ մեծ հօրս ունեցած փոքր շէնքն էր, գոց գիտէի: Ռ՛վ դիտէր. թե-
րեւս յաջորդ տարեշրջանին Լոնկ Այլէնտ կ'ըլլար մեր տունը...

Օրերը սահեցան. բնաւ չզգացիք, թէ ինչպէ՞ս իր աւարտին մօ-
տեցաւ տարեշրջանը: Հիմա առիթները շատ էին Պէյրուսթ երթալու:
Ամէն անգամ, որ ինքնաշարժը Պհամտունի եւ Ալէյի գառիվարէն իջ-
նէր, անբացատրելի ջերմութիւն մը կը համակէր զիս: Կ'ուրախանայի,
չա՛տ կ'ուրախանայի Պէյրուսթով: Եւ, ո՛վ դիտէր, թէ քանի մը ամիս
ետք անոր բնակիչներէն մին պիտի ըլլայի:

—Հա, թեւերդ պիտի բանաս եւ աղօթե՞ս,— դիտել կու տար
Լաթաքիոյ մեր բարեկամ ատամնաբոյժը:— Պիտի դամ տեսնեմ, թէ
ինչպէ՞ս պիտի բանաս թեւերդ, փակես աչքերդ եւ օրհնես մեզ:

Ամէն անգամ, որ այսպէս ըսէր մեր բարեկամը, կը կարմրէի:

—Աչքերդ շատ չսեղմես,— կ'աւելցնէր չարածիճիութեամբ մը:

Հիմա դիտական դասերս, մա՛նաւանդ քիմիաբանութիւնը բաւա-
կան բարելաւած էի: Սատանան ըրաւ ընելիքը.

—Ա՛յ տղայ, դուն Աբէլեան չե՞ս: Գնա՛ դեղագործութիւն ըրէ...:

Եթէ բժշկութիւնը դժուար է, դեղագործութիւնը այնքան ալ դժուար
բան չէ: Յետոյ, թերեւս հայրդ մեծ ժառանգի տիրանայ, նիւթական
գետնի վրայ հարց չես ունենար ուսանելու:

Կամաց-կամաց ապագայ պատուելիին վեր բարձրացած թեւերը
կը ծալուէին, յուսախաբութեան մատնելով նաեւ Լաթաքիոյ տղթ-
Սարաֆեանը:

Մինչեւ տարեվերջ արդէն որոշումս տուած էի: Պիտի իջնէի
Հայկազեան եւ մէկ-երկու տարի ետք անցնէի Ամերիկեան համալսա-
րան: Այսպէս պիտի ըլլար, բնականաբար, եթէ ընտանիքով Ամերիկա

չերթայինք: Այնտեղէն հօրս քաջալերական նամակները չէին կտրուեր:
Դատ բացած էր: Այստեղէն մեկնած էր առանց դրամի. հոն ալ մեծ
դժուարութիւններով կեցութիւն ապահոված էր. դատական ծախսերն
ալ կը կարգադրէր աջէն թէ ձախէն, բայց մեծ յոյս ունէր, որ քանի
մը տասնեակ հազար տոլար ձեռք պիտի անցընէր...: Աներեւակայելի
հարստութիւն մը, այդ օրերուն համար:

Օր մըն ալ արդէն զիս գտած էր բեմին ըստ: Երեք դասարան-
ներ տողանցած էին այդ բեմին վրայ: Հիմա կարգը մերն էր: Նորու-
թիւնը այն էր, որ մենք մեր վկայականները պիտի առնէինք ելեկ-
տրական լոյսով: Արդարեւ, դասընկերներէս մէկուն եղբայրը Պէյրու-
սթէն կարգադրած էր ելեկտրածին փոքր մեքենայ մը: Սա մեծ նորու-
թիւն էր ինքնին, ո՛չ միայն մեզի, այլեւ՝ ամբողջ գիւղին համար:
Ուրեմն, չորս տարի առաջ խեղճուկ լոյսերով տեսած Այնճարէս պի-
տի բաժնուէի պայծառ, ելեկտրական լոյսով: Սա ինքնին լաւ բան
չէ՞ր: Ապագային հանդէպ հաւատքս կ'աւելնար...

Հիմա՛ բեմին վրայ, որքան ուրախ, նոյնքան մըն ալ տխուր էի:
Վերջապէս վարժուած էի «գէշ տեղ մը, գէշ թուականի մը» հիմնը-
ւած սա Այնճարին: Չէ՛, քոյր Հետուիկին գիշերօթիկը, հակառակ իր
շատ մը թերութեանց, ջերմութիւն մը ունէր: Այդ վերջին տարին ին-
ծի համար եղած էր առաւելաբար մեծ յոյսերու տարի մը: Շատ աշ-
խատած էի: Նաեւ բաւական զբօսնած: Մեր զբօսանքի ժամանակին
մեծ մասը անցուցեր էինք պասքէթի դաշտի մը շինութեամբ: Մեր
ընկերներէն մէկը իրենց քով պահ դրուած հսկայ մեքենական լող
մը բերած էր դպրոց: Ժամերով կ'աշխատէինք զայն աշխատցնելու
համար: Ինք կը քէր այդ հսկայ լողը: Եւ դաշտը լողեց ու լողեց,
մինչեւ որ տարեվերջին կրցանք պարծենալ, որ մեր ետին բան մը
թողած կը բաժնուէինք դպրոցէն:

Բաւական ծափահարութիւն խլեցի այդ գիշեր. նաեւ ահագին
ծիծաղ: Արդարեւ, դասարանիս երկրորդն էի, բայց ոչ առանձինս:
Դասընկերուհիներէս մին եւս, հետս միասին, երկրորդ հանդիսացած
էր: Անակնկալ էր երկուքիս համար ալ: Իմ վկայականի զգեստս ետ
չէր մնար փեսացուի մը զգեստէն. սա ալ լազուարթ էր եւ պաշտօ-
նական. դասընկերուհիս ալ ճերմակ հագուած էր: Մէկ բան կը պակ-
սէր. երկուքս ալ իրարու մասին մտածած չունէինք բնաւ, այլա-
պէս՝ նշանտուքի պէս բան մը կ'ըլլար այդ երեկոն...: Բայց ժողո-
վուրդը շատ ծափահարեց եւ աւելի շատ ալ խնդաց...

Երկու կամ երեք օր ետք իջայ Պէյրուսթ: Արդէն իսկ դիմած
էի Հայկազեան Գոյէճ: Ո՛ւր որ էր՝ երեք ամիսէն պիտի դառնայի
պէյրուսթի: Հին երազ մը պիտի իրականանար...

ԳԷՈՐԳ ԱՔԷԼԵԱՆ

ԴՈՒ ԱՅՆ ՄԱՐԴՆ ԷԻՐ...

Դու այն մարդն էիր,
 որ պատանություն անպերից կախուած
 իմ երագները
 կեանքի կոչեցիր,
 որ մտքիս խորը ծալքերում պահուած
 բառերը իրենց գունաւորումով կեղանացըրիր,
 որ զգացական ներաշխարհիս մէջ
 ազատ քայլեցիր:

Դու այն մարդն էիր,
 որ բնագոյներիս շերտ առ շերտ դարսուած
 նուրբ ու աննկատ արթնացըրեցիր,
 ու քո կերպարով լուսաւորեցիր
 իմ իրաքանջիւր, ապրուող պահըս...

Դու ազատ գտար իմ սրտի ուղին,
 առանց արգելքի դու հասար այնտեղ՝
 ուր դեռ ոչ մի շող օտար ու կոպիտ դեռ չէր թափանցել:

Արագ կարդացիր ներքին աշխարհիս
 անընթեռնելի գրքերը բոլոր
 ու տիրակալի քո վարքով կոպիտ
 փորձեցիր պատնէշ դնել արգելքի
 իմ խոհերի ու ձգտումների,
 թռիչքների դէմ...

Դու վայրագաբար, չարամտօրէն կոխկրտեցիր
 նոյնիսկ ինձ անյայտ հոգուս ափերը,
 եւ տեսնելով, որ ոչինչ չմնաց
 էլ տիրանալու՝
 դու սոխրացըրիր քո պեղած բոլոր արահետները...

Տարիներ անցան
 ու դու չբացար իմ կեանքի բացած առաջին էջից:
 Տառապանքը իր հիմքերը դրեց իմ հոգու խորքում
 ու նոր կամուրջներ ձգեց
 զգացումներիս ու մտքերիս միջեւ ալիքուող:
 Միտքս ինձ յաղթեց...

Ու տարիների մշուշի միջից
 երբ փորձում եմ ես դիտել այն մարդուն,
 որի հայեացքից հալչում էի ես ձիւնից էլ արագ,
 որի մի խօսքը բաւ էր ինձ կեանքից զրկուելու,
 մտածում եմ միշտ՝
 ո՞վ էր այն մարդը...
 իրակա՞ն էր նա
 թէ՞... նրա մօտ
 ես էի այնքա՞ն, այնքա՞ն միամիտ...

8 Յուլիս 1993
 Սան Ֆրանսիսքօ

ՄԱՐԻ-ՌՈՋ ԱԲՈՒՍԷՖԵԱՆ

Վ. ԲԱԲԱՅԵԱՆ

ԲՆԱԿԱՆԱԲԱՐ, ԱՍԵՂԻՔՆԵՐՍ ՉԱՏ ԵՆ, ՄԱՆՊԱՆՈՂ ՏՈՒՆԱՄԵՅ ԸՆԴ- ՄԻՋՈՒՄԻՑ ԵՆՈՅ ՎԵՐԱՊԱՐԴԵԼ ԵՄ ԿԱՅՐԵՆԻՔ:

Բնականաբար, ասելիքներս շատ են, մա՛նաւանդ տասնամեայ ընդ-
 միջումից յետոյ վերադարձել եմ հայրենիք: Ուրախացուցիչ շատ ու շատ
 բաներ կան, կան նաեւ չէի ասի տխրեցուցիչ երեւոյթներ, սակայն արտա-
 ռոց որոշ բաներ նկատեցի. արտառոց այն իմաստով, որ հիմա արդէն
 փոքր-ինչ հանդարտ վիճակում փորձում եմ ծանրութեթեւ անել, տեսնելով,
 որ թերեւս դա էր աւելի օրինաչափը մերօրեայ հայոց աշխարհում: Արտա-
 ռոցն այն էր, որ վերադարձիս իրագել դարձայ, որ Անդրանիկ Յարու-
 թիւնեանը եւ շատ ու շատ ուրիշներ այսօր հայրենիքի ամենաթէժ կէտե-
 րում են, ամենամահաբոյր խորշերում: Արտառոցն այն էր, որ տուեալ
 պարագայում բանաստեղծական մի էութիւն՝ Անդրանիկ Յարութիւնեա-
 նը, որպէս իմ շքեղ սանը, լաւ բանաստեղծ եւ լաւ արձակագիր, այսօր
 հայոց պաշտպանութեան ամենաբարձր խորշերից մէկի հրամանատարն է:
 Տխուր չեմ, բայց տագնապած եմ: Տագնապած եմ, որովհետեւ շատ պիտի
 ուզենայի, որ հայոց պաշտպանութիւնը գտնուէր արիեստավարժ զինուո-
 րականների ձեռքերում, սակայն ինչ-ինչ պատճառներով յետաձգում է,
 ձգձգում է, չգիտեմ, բայց հայրողիների մի լուսեղ, աստուածատուր մի
 երակ կայ, որը սպասելու ժամանակը չունի, եւ հայրենիքի պաշտպանու-
 թեան պահանջով ինքն է նետուել այդ գործը իրականացնելու:

Կ'ուզենայի շատ հակիրճ ներկայացնել Անդրանիկին՝ ի՛մ Անդրանի-
 կին, որը այսօր գերզօնութեան վիճակ է ապրում եւ կարողանում է հա-
 մատեղել արուեստագէտն ու զինուորը: Սա բարդ կացութիւն է, թերեւս
 խիստ անհրաժեշտ մերօրեայ կացութեան համար: Ինչ վերաբերում է
 Անդրանիկին՝ մեր մտերմութիւնը սկսուեց 70ականների սկզբից, երբ Անդ-
 րանիկը գիշերային դպրոցում աշակերտ էր, եւ ես դասաւանդում էի հայոց
 լեզու եւ հայ գրականութիւն: Ամէն ինչ տարօրինակ էր ինձ համար. այդ
 օրերի որեւէ գիշերային դպրոց բնականութիւնից հեռու վիճակում էր:
 Չգիտեմ, Աստուծոյ կամեցողութեամբ ինձ յաջողուեց սերտ յարաբերութիւն
 հաստատել այդ դպրոցի բարձր դասարանների աշակերտների հետ, այն-
 քան յաջողուեց, որ օրերից մի օր կարողացայ Անդրանիկին, Արծրունուն,
 Աշոտին եւ Սամսոնին համոզել, որ պէտք է հոգետր ճեմարան գնալ եւ
 դառնալ հոգետրականներ: Ի հարկէ 50%-ով յաջողուեց այդ ծրագիրն ի-
 րականացնել՝ ու Աշոտը, Արծրունը ներկայումս Հայաստանեայց Առաքե-
 լական Ս. Եկեղեցոյ քահանաներ են, եւ դա ինձ անչափ ուրախացնում
 է: Անդրանիկը չդարձաւ հոգետրական, թերեւս դա էլ ճակատագրի բերու-
 մով, չեմ ուզում խորանալ պատմութեան մէջ եւ հրապարակել, թէ ինչու
 չդարձաւ. պարզապէս չցանկացաւ:

Յետոյ մենք ստերմացանք, եւ մեր միջից վերացաւ ուսուցիչ-աշակերտ յարաբերութիւնը եւ մենք դարձանք ընկերներ, վերացան տարիքային ինչ-ինչ տարբերութիւններ, եւ մենք այնքան ստերմացանք, որ անցանք ընդատակ:

Անդրանիկի եւ գիշերային դպրոցի մի շարք աշակերտների հետ անցանք ընդատակ, դեռեւս անելիքները խիստ սահմանափակ էին, բայց եւ այնպէս, փնտռուողը կար եւ անընդհատ ստածում էինք, թէ ինչ կարելի էր անել:

Հետագայում ես ստիպուած եղայ հեռանալ Հայաստանից, եւ անընդհատ հետեւում էի Հայաստանում կատարուող իրադարձութիւններին, ու տագնապով էի հետեւում, մանաւանդ Բերդաձորում կատարուող իրադարձութիւններին, որովհետեւ երբ առաջին լուրը հասաւ ինձ, որ Անդրանիկ Յարութիւնեանը Բերդաձորի ինքնապաշտպանութեան խորհրդի նախագահն է, եւ մի լուսանկար յայտնուեց սփիւռքահայ թերթերում՝ եւ սահմուկեցի... որովհետեւ իմ թողած սանը, իմ պատանին, իմ եղբայրը՝ Ճերմակած մօրուսով էր...: Վատ զգացի ճիշտն ասած, որովհետեւ ես իրեն թողել էի ընդամենը մեծարենցեան տարիքի. մի մաքուր հոգի: Ես յանկարծ զգացի, որ կռիւների մէջ ճերմակում է... ու հաշտուեցի իրողութեան հետ, որ ի վերջոյ Մեծարենցները պիտի նաեւ զենքով կռուեն... յետոյ լուրն առայ, որ վիրատրուել է ուսից, լուրն առայ, որ հինգ գիւղերում կարգուկանոն է հաստատում, որ փորձում է ամբողջ այդ պաշտպանական շարժումը բարձր հիմքերի վրայ դնել, եւ անընդհատ հետեւում էի:

Իսկ վերջին արդէն իրադարձութիւնների ժամանակ, երբ հարկադրեալ հեռացան գիւղերից՝ տագնապս հարիւրապատկուեց, որովհետեւ ոչ մի լուր չունէի, ի՞նչ եղաւ Անդրանիկը... գերուե՞ց, սպանուե՞ց... մինչեւ որ Աստծոյ կամօք յայտնուեցի Հայաստանում, տասնամեայ բացակայութիւնից յետոյ, եւ իւրայիններս տեղեակ պահեցին, որ Անդրանիկը դեռ կայ, այստեղ է:

Ուրախացուցիչը այն էր, որ հայ զինեալները, հայ ֆիդայիները՝ արիւն տալով հանդերձ շարունակում են յարատեւել. այդքան զոհեր տալուց յետոյ: Ուրախալին այն է, որ հայ ժողովուրդն երբեք չի լքում մաքառման հոգին, եւ գիտեմ, որ հայ ժողովրդի գոյատեւութիւնը պայմանաւորած է բոլոր նրանցով, ովքեր անկախ իրենց մասնագիտութիւնից, անկախ իրենց կոչումից՝ բանաստեղծ թէ արհեստաւոր՝ զէնքը ձեռքին պաշտպանում են հայրենիքի սահմանները:

Ես կ'ուզենայի խօսքս աւարտել մի հեթանոս, դիւային ծէս նկարագրել. այն, որ խմեցինք առ Անդրանիկի արիւնը: Արիւնը կաթեցրինք մեր գինու բաժակի մէջ եւ մենք ըմպեցինք, որպէս հեթանոս ծէս, այն՝ որ Անդրանիկը իրաւունքը չունի մեռնելու. այլեւ... մենք մահը խլեցինք նրանից:

Ա. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆ
ԱՇԽԱՐՀ...
...

Հայաստան աշխարհ, դու լեռների մէջ բազմած մի արքայ,
Եւ Մամիկոնեան գնդերով քաջաց պահապան անմեռ,
Վիրաւոր այնքան, այնքան բզկտուած, մաս-մաս բաժանուած,
Որ ձորերն հայոց հետքերն են վէրքի այդ սպիացած:

Դու լուռ ու խոնարհ իմաստունի պէս գլուխդ պահած աստղերին լուսէ,
Աղօթել ես լուռ կանթեղի առաջ արքայավայել ծերունու դէմքով,
Բռնկուել նաեւ, ժայթքել ես ինչպէս Նարեկայ «ողբը»,
Դու քառատուել ես, բաժանուել մաս-մաս,
Թունոտ հողմերի շաչից, շառաչից,
Բայց էլի նորից, որբորդդ անգամ մանկան ճիչով դու դոյատեւել ես:

Հայաստան աշխարհ, աշխարհ դու ողբի, որբացած երդի,
Քանի անգամ դու վերածնուել ես ու յառնել երկինք,
Եւ քանի անգամ վայրագ ցեղեր են քանդել քո տունը,
Քանդել սիւներդ,

Ինչքան կռունկ է ողբով գնացել Նարեկայ վանքի գմբէթը թողած,
Եւ ինչքան աւեր, աւար են տարել, ինչքան են ապրել ցեղերը վայրի,
Չես իջել սակայն դահից արքայի, վրէժ չես լուծել արիւնով պղծուած,
Այլ դոյատեւել, ապրել ես անվերջ, ապրելով յաղթել թշնամեաց անթիւ:

Հայաստան աշխարհ, դու կոմիտասեան հոգեթով երգի մայր ու արարիչ,
Դու ամենասուրբ բոլոր սրբերից, դու անմեկնելի մի աղօթագիրք,
Դու պէտք է ելնէիր մոխիր-կրակից,
Դու պէտք է ապրէիր ի ցոյց աշխարհի,
Ի ցոյց ազգերի, որոնք գուժեցին, որոնք խուժեցին եղեռն-թալանով:

Հայաստան աշխարհ, դու վերածնուած, դու վերակերտուած հայրենիք
Հայրց,

Դեռ չսպիացած վէրքեր կան որքան, որ պէտք է բուժուեն հաւատի
երգով,

Դեռ աստղերի պէս ցիրուցան որքան զաւակներ ունես քեզանից զատ,
հեռու,

Եւ մի օր կը գայ այնքան հաւատով, որ համատեղուած, հաւաքագրուած
Քո զաւակներով բերդ-պար կը բռնեն սփիւռքի համայնքով

Հայաստան աշխարհ, դու բոցավառուող,
դու հրաշք-մանուկ Երկիր Նայիրի...

24-04-1976

ԱՆԴՐԱՆԻԿ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

*
* *

Օրը ցուրտ է, մառախլապատ: Այսօր ձմրան առաջին օրն է, տխուր է: Պատշգամբում հաւաքուել են մի քանի մարդ ու տաք-տաք ինչ-որ բան են քննարկում, այդ մարդկանցից ոչ մէկի դէմքը չի համապատասխանում տանը տիրող սգին, նրանց համար գուցէ սովորական մի բան էր այս թաղումը, պարտքի հերթական կատարում:

Ես անելի եմ տխրում, արցունքները խեղդում են ինձ, չեմ կարող ինձ զսպել, յանկարծ զգում եմ, որ բոլորն ինձ են նայում մի քիչ զարմացած ու սթափուած...: Ես դուրս եմ գալիս...

Ինչքան սարսափելի է մահը, նոյնքան անելի մոռացութիւնը: Մարդը կար, շնչում էր... դեռ այսօր առաւօտ, երբ դագաղում պառկած էր, կարծես բոլորն էլ տխուր էին, յանկարծ չքացաւ մարդն ու ամէն ինչ իսկոյն փոխուեց՝ դարձաւ սովորական: Գուցէ ճիշտ է, կեանքն է այդպէս, ով գիտէ:

Յանկարծ աչքերս դեմ առան այս մի յարկանի անշուք տանը: Հեռուից նման է որբի: Խեղճ որբ, մի անգամ էլ որբացար...

Է, Եղիշ քեռի... դու, որ քո հեռաւոր պապերի երկրից եկար այստեղ եւ քո ճանապարհին այդքան տներ տեսար ու ապրեցիր, դու, որ այդքան կոնիւնքից ու պատերազմներից յոգնած մնացիր էլի նոյն որբը, այս տունը, որ վերջինն էր քո կեանքում, էլի որբի տեսք ունի: Սա, որ քարից է, ոչ թէ մսից, սա, որ պատերազմներ չի տեսել, արիւն չի տեսել, արցունք ու աներ չի տեսել, որ խուժանը թալանել ու աներել չի հասցրել — էլի որբ է, որբ ու հազար անգամ որբ...

Իսկ սրանք ինչ... այս ոռած ու տոգած, կերած-խմած մարդիկ, սրանք ի՞նչ գիտեն...: Ես սեղան չեմ նստի նրանց հետ:

Ննջասենեակում ցուրտ էր, գուցէ գերեզմանային սառնութիւն, բայց այդպէս անելի էր լաւ:

Եղիշ քեռու պէս մարդիկ շատ քիչ են, հագուագիտ, նրա նման մարդիկ ծնում են, որպէսզի գեղեցկացնեն կողքինների կեանքը, որպէսզի հարստացնեն աշխարհը, իսկ իրենք, իրենք-իրենցով հարստացած այս աշխարհից գնում են դատարկ, ամէն ինչ թողնելով մարդկանց ու աշխարհին: Ինձ մէկ-մէկ թում է, թէ աշխարհը կանգնած է հէ՛նց այդ մարդկանց ուտերին, ախր, այդքան բարի, այդքան տառապած, պատերազմի վերքերից բզկտուած մնալ այդքան երեխայ...

Նա երբեք չեղաւ վաթսուոն անց, ինչպէս երեխայ եղել էր, կարծես այդպէս էլ գնաց, եւ մինչեւ իր կեանքի վերջին օրը հաւատում էր իր սիրելի հերոսներին: Արտասանում էր Զիւանի: Եւ կարծես թէ աշխարհում էլ ոչ մի կարելոր բան չկար. աչքերը այդպէս էլ փակեց հանդարտ, վախեցնալով, թէ յանկարծ շխանգարի որեւէ մէկի հանգիստը...

Երբեմն նրա բարիութիւնը ինձ հաւասարակշռութիւնից հանում էր. վիճում էի հետը՝ նա ծիծաղում էր ու ասում. «Այ շան տղայ, հլա մի սպասի տղէս գայ... իսկ դու գիտե՞ս, ասա, շան տղէն լա՞ւ տղայ է, թե՞ վատ»:

— Զգիտեմ...

— Որ քեզ ասեն շան տղայ, կը նեղանա՞ս...

— Ի հարկէ...

— Իսկ ես՝ ոչ, որովհետեւ շան տղայ ասում են լաւերին:

Համոզեց, համոզեց, իսկ թէ ինչու նման խօսակցութիւն բացեց՝ չհասկացայ, գուցէ նեղացրել էին:

Նա հաւատում էր բոլորին, սիրում սիրում այս աշխարհը, զրուցում էր ծառերի հետ, խաղողի վազերի, սիրում էր հողը, քարը, մարդկանց, նա թշնամի երբեք չունեցաւ:

Մի անգամ ինձ ասաց.

— Մայրաքաղաքում ես ապրում, այնտեղ նորութիւնները շատ են, մարդիկ անելի կրթուած, տես, հա, Դաւիթիս մե՛նակ չթողնես, նա միայն քեզ է հաւատում:

— Եղիշ քեռի, այդ ինչի՞ համար ասիր:

Նայեց ինձ երկար ու ծպտաց.

— Մարդը մարդու կարիք է զգում ամենաշատը ծերութեան ժամանակ, դուք դեռ ջահել էք, գուցէ շատ անտեղի բաներից նեղանաք, բայց յիշէք, ծերութիւնը վաղ թէ ուշ կը գայ ու դուք շատ կը փոշմանէք ձեր կորցրածի համար, իրար պինդ պահէք, յիշէք՝ ոչինչ աշխարհում այնքան բաւականութիւն չի պատճառում, որքան ներողամտութիւնը:

Մե՛ռնելուց կանչել էր Դաւիթին ու ասել.

— Երբ ծնուեցի՝ աշխարհը խաւար էր ու սով, կոտորած, իսկ կոտորածը դու գիտե՞ս ինչ է, դա այն է, որ աշուն չի լինում, որ ամա-

որ մէկից փոխում է ձմեռուայ, իսկ չէ՞ որ ամառը հասունացնում է կեանքը, որ աշնանը հաւաքեն ու ամբարեն այն, իսկ աշուն չկայ, չի լինում, այլ ցուրտ է, ձմեռ, ցուրտ, սով, յետոյ էլ պատերազմ:

Ապրեցինք, այդ խաւարն էլ անցանք, սեւ ամպերը փոխուեցին կապոյտի, ինչ որ հասցրի թողնել՝ եղած-չեղածը սա է, իմ տղայ, ինձ չմեղադրէք յետոյ, որ ուրիշների պէս չկարողացայ մեքենայ, գեղեցիկ տուն ու ապրուստ թողնել, բայց մեռնում եմ հոգիս լիքը, խիղճս հանգիստ, աչքս կուշտ, ձեռքս բաց, այնպէս որ՝ ես իմ ասածով գոհ եմ:

Նա գնաց՝ ոչ մէկին չուզեցալով խանգարել: Սենեակը խաւար էր, օրը՝ մթնած: Ձիւնը հանդարտ ու խոշոր փաթիլներով իջնում էր պատուհանի գոգին: Ձմեռուայ առաջին օրը, առաջին ձիւնը եւ այս մը-թագնած ու յոգնածութիւնից կախուած առաստաղը: Գուցէ դու երջանիկ մարդ էիր, ինչպէս ինքդ էիր ասում. «Մարդ բախտաւոր է այն ժամանակ, երբ բաւարարում է իր ունեցածով»: Այդպիսին էիր դու:

Ուղիղ մէկ ամիս առաջ այս պատուհանի տակ արեւկող արած, նստել էիր դու, պատմում էիր հազար ու մի բաների մասին, քո պատերազմի: Դու, որ ամիսներ շարունակ հոսպիտալից-հոսպիտալ յաղթեցիր մահին: Յաղթեցիր, քանի որ սիրում էիր այն ամէնը, ինչով շրջապատուած էիր, դու, որ ապրեցիր, որ մի օր միամիտ-միամիտ հարցնէիր.

—Բալա, բա որ Գագարինը թուա տիեզերք, էնտեղ մի՞թէ Աստըծուն չտեսաւ...

Իսկ Դաւիթը ծիծաղեց ու ասաց.

—Տեսաւ, հետը խօսեց, պայմանաւորուեցին, որ Աստուած քաղցր կը նայի մեզ:

—Ծան տղայ, մեղ բան է, Աստծուն այդպիսի բան չեն ասի:

Խաղաղութիւն քեզ, Եղիշ քեռի, խաղաղութիւն քո շիրիմին, դու մեր մէջ կ'ապրես այնքան ջինջ ու զուլալ, ինչպէս սարերից ժայթքող աղբիւրը, այնքան ջերմ ու տաք, ինչպէս արեւը, այնքան բարի ու միամիտ, ինչպէս երեխան, դու կ'ապրես մեր մէջ, քանի որ առանց քեզ շատ կ'աղքատանանք, կ'ապրես, քանի որ քո բարիութիւնը շատ է պէտք մեզ, նաեւ մեր երեխաներին ու թոռներին: Դու մրջիւնների լեզուն անգամ գիտէիր:

Իսկ կողքի սենեակում մարդիկ նոյնիսկ ժպտում են...: Գուցէ մարդիկ յոգնե՞լ են տխրելուց: Նա չի նեղանայ, նա այդպէս էլ չհաւատաց, որ աշխարհում կարող են լինել չար կամ վատ մարդիկ...

Ձիւնը շարունակ թափում է, խոշոր փաթիլներն օդի մէջ նագանքով իջնում են, մի խելագար դիմակահանդէս է կարծես, խորհրդաւոր պարահանդէս, տխուր, անսահման տխուր, այնքան տխուր, որ ամէն ինչ կարծես դատարկուած է բանականութիւնից, իսկ ձիւնը իջնում է նոյն խաղաղութեամբ՝ սրբելով գուցէ օրերի ու օդի տխրութիւնը:

Այո, ճիշտ այնպէս, ինչպէս շատ տարիներ առաջ, երբ պատերազմ էր, ահաւոր պատերազմ, եւ մոլորվական եկեղեցում դու ֆաշիստ

վաշտի հրամանատարին գերի վերցրիր այն պահին, երբ նա ուզում էր սպանել քահանային, ու թալանել եկեղեցում եղած թանկարժէք իրերը եւ մէկ օր անտառում միայնակ — չսպաննեցիր դու այդ ֆաշիստին, թէ-եւ կարող էիր, եւ մերոնք գտան ձեզ, դու քո վերջին հացի կտորը կիսում էիր թշնամուդ հետ: Եւ տղաները կասկածեցին քեզ. մի՞թէ Եղիշը ծախուել է, իսկ ուտելուց յետոյ, երբ ճամբայ ընկաք, նոր համոզուեցին, որ գերի է նա, ճիշտ եւ ճիշտ դու այդ օրուանից դարձար «պալկովնիկ» Եղիշ, այդ օրուանից ոմանք զարմացան, եւ ոմանք էլ հասկացան: Եղան նաեւ այնպիսիք, որոնք ծաղրեցին, այո, ծաղրեցին, որ Եղիշը հացը, մի կտոր հացը, որ մի կեանքի արժէք ուներ՝ կիսեց թշնամու հետ, եւ ճիշտ այնպէս, ինչպէս այսօր, այն ժամանակ նոյնպէս տեղաց առաջին ձիւնը, առաջինը կոտորած ժամանակ: Ձմեռը՝ ձմեռ, բայց արդեօ՞ք շատ չէր մէկ կեանքի համար...

Գուցէ այդքան էլ շատ էր բարիութիւնը մէկ կեանքի համար, ով գիտէ: Երբ առաջին անգամ եկայ հարսնացուիս հետ՝ պարեցինք, ախ ոնց պարեցինք, այդպէս պարում են միայն լեռնցիք, թանք ու թուանք, ձեռք-ձեռքի, ուս-ուսի, ափսոս, հազա՛ր ափսոս, դա քո վերջին պարն էր, եւ հարսնացուն, որ հարս դարձաւ, եւ հարսը, որ երեխաներ ունեցաւ, հաստատ մի օր կը պատմի երեխաներին մեր այդ խելագար պարի պատմութիւնը, կը պատմի մի քիչ հեքիաթային, մի քիչ երեւակայական, ու դու նորից կ'ապրես...: Կ'ապրես նաեւ մէկ ուրիշ, բոլորովին անծանօթ հարսի պատմութիւններով, որին դու հինգ կիլոգրամ կարտոֆիլ տուիր «գողանալու», որի համար քիչ մնաց զրկուէիր կուսակցական տոմսից, բայց դու ճիշտ էիր, օրէնքը խախտելուց անգամ ճիշտ էիր. ճիշտ էիր, քանի որ հազարաւոր կիլոմետր կտրած Սիրիայից հայրենիք վերադարձած երեխաները քոնն էին, քոնը, քո մանկութեան վերադարձը, քո բոբկատտ եւ սոված մանկութեան ճիշտ եւ ճիշտ արձագանգը...

Յետոյ անցան քո ձմեռները, անցան, եկան ուրիշ ձմեռներ, եկան իրենց հունով, առանց ոտնակոխ անելու աշունները, եւ վառարանի մօտ փոռած կարպետի վրայ սկսեցինք «կոտել» ես ու դու, թէ ով պէտք է վառարանին մօտ պառկի: Յիշո՞ւմ ես, ասիր.

—Այսպէս չի լինում, տանը պէտք է վառարանի մէկ արքայ լինի, իսկ մենք ունենք երկուսը, հետեւաբար հարկաւոր է երկու կարպետ...

Իսկ երբ երկրորդ կարպետը փոռեց՝ էլի եկար կողքիս նստեցիր, դու այդպէս էլ չպառկեցիր վառարանին մօտիկ, եւ այդպէս էլ չեղար վառարանի միանձնեայ արքայ, զիջելով քո տեղը ինձ:

Տարիները նեղ են, աւելի նեղ, քան մեր դպրոցի միջանցքը, նըրանք կ'անցնեն, կ'անցնեն նաեւ մերը, եւ դու կը լինես ինձ հետ, այդ բոլոր տարիների ընթացքում, քո այդ հողեղէն կոշտ ձեռքերի փափկութիւնը միշտ կը մնայ ափերիս մէջ սեղմուած, քո յաղթանդամ ուսերի հպումը ես զգում եմ իմ բոլոր պարերի ժամանակ, դու, որ աշխարհում

ոչ մի ստուերի չհաստատացիր, քանի որ արեւը ստուեր չուներ, եւ ես ամէն անգամ արեւին նայելուց կը գգամ քո աչքերի տաքութիւնը:

Փառք քեզ, մայր բնութիւն, որ կարող ես ծնել նման մարդկանց, եւ պատուով նման մարդիկ ապրում եմ մեզ հետ կողք կողքի ու հարցասացնում իրենց գոյութեամբ:

Խաղաղութիւն քեզ եւ հանգստութիւն:

Զիւնը իջնում է հանդարտ եւ մանուկները ուրախութիւնից բղաւում եմ, ճշում: Թող այս գեղեցիկ ձիւնը նրանց համար պատկերուի որպէս թիթեռնիկ եւ իրենց կեանքի բոլոր ձիւները թող լինեն թիթեռնիկներ: Եւ ինչպէս դու կ'ասէիր. «Թող ձմեռը երբեք չգայ անժամանակ: Այն մարդը, որ երեխայ է սպանում, նա է ֆաշիստը: Մայրերը թող երբեք սեւ չհագնեն ու ոչ մի տուն չորբանայ, աշխարհում որբեր չլինեն...»:

ԱՆԴՐԱՆԻԿ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

Պ. ՄՆԱՊԵԱՆ

“A ROOM IN PARIS”

Առջի գիշեր կէսէն ետք, երէկ ամբողջ օրը եւ այսօր մինչեւ ժամադրութեան վերահաս այս պահը՝ մտքիս, երեւակայութեանս եւ արեանս բլիթներուն մէջ պարոն Արշամ Մալեանի տիկինը, եւ դուստրը՝ Զելան, հին յուշերու եւ նոր ապրումներու անդուխուժումով:

Ազնիւ մարդ էր պարոն Մալեան ու առանց արդարեւ չէր կրնար բառ արտասանել որքանոցի իր ընկերներուն ու ժամանակակից բար հօրս մասին: Իրենց սրտերուն իջած կաթիլներն մէջ անգամ եղբայրացած էին անոնք, ինչպէս կը շեշտէր ինք համոզուած. որ իրենց տառապանքներուն նոյնիսկ քարը չէր դիմանար, ո՛ր մտքը կաւէն աւելի փխրուն իրենց կոխկրտուած սիրտը: Ես լուռ մտիկ ըրի զինք, մտածելով նոյն ատեն, որ որբութիւնը ժառանգական բան մը եղած է մեզի համար, այն տարբերութեամբ, որ իմ դժբախտութիւնս պատահեցաւ ուսանողութեանս առաջին տարւոյն սեմին, մինչ հայրս ո՛չ իր ծնողքը կը յիշէր, ոչ ալ ծննդավայրին անունը, ինք՝ Անտոն Անյայտ, ես զաւակը՝ Պարոյր Անյայտ:

Որոշած էի Փարիզէն հեռանալու ստիպողական վճիռս չհաղորդել ոչ մէկուն եւ կրցայ այդ մասին բերան բանալու փորձութեան դիմանալ ամբողջ առջի գիշերուան ընթացքին եւ երէկ ամբողջ օրը, մինչեւ Պապիլոն թատրոնին դուռը ու անկէ ետք:

Կը յիշէի այդ ամէնը, պարոն Մալեանի թախծալի աչքերը, ազնուազարմ տիկինը, փոթորկայոյզ Զելան եւ երբեմն միտքս կը սաւառնէր Կոստոն բեմադրող թատրոնին ուղղութեամբ: Չորսս միասին ներկայ եղանք անոր: Պարոն Մալեան կը ջանար հետեւիլ գործողութեան, բայց ոգեւորուած չէր թուեր, տիկինը յայտնապէս աղջկան հաճոյք պատճառող արտայայտութիւններ կը փսփսար, իսկ Զելան բեմին թաւալող մէն մի շարժումի ու խօսքի առիթով կը դրսեւորէր աճող խանդավառութիւն մը, երբեմն հազիւ լսելի բառերով, երբեմն խուլ բացազանչութիւններով, ու ձեռքս ափերուն մէջ առած՝ ուշադրութիւնս լարուած պահող հպումներ կը շաւրէր ինծի: Երբեմն շունչին հետ կը զգայի նայուածքը վրաս ու կը դառնայի իր կողմը ու ինծի այնպէս կը թուէր, թէ կիսամութիւն մէջ բոցավառ աչքերը կախարդական ջահերու պէս կը լուսաւորէին մթնոլորտը: Խաղարկութենէն ստացած իր տպաւորութիւնները համառօտ գնահատականներով կը փոխանցէր ան ինծի, եւ երբ ինքզինքս փոխադրուած կը զգայի նախորդ գիշերուան բուրումնալից մթնոլորտին մէջ, ուսը ուսիս զարնելով կը վերադարձնէր

զիս վայրկեանի իրականութեան: Բայց կարճ ժամանակ մը ետք, դերակատարներուն բառերուն ի լուր՝ միտքս ետ կ'երթար նորէն եւ կարծես կը լսէի փարիզեան նրբանուրբ Փրանսերէնի մը թիւերով արիւնս խայտացնող ձայնը, երբ կը կարդար նշանաւոր իրլանտացիին հռչակաւոր գործը, զոր ինք ճանչցուցած էր ինծի նոյն օրը: Իմ ճակատադէս շատ արձագանգներ կային անոր մէջ, առօրեաս երբեմն կը պատկերանար գործող անձերուն անձկութիւններուն, սպասումներուն, լուսթիւններուն, թոթովանքներուն ու խոճապահար իրարանցումներուն մէջ, երբեմն էսթրակոնին մէջ կը տեսնէի ինքզինքս, երբեմն Վլատիմիրի, խորթ չէր ինծի նոյնիսկ Լաթին, բայց բեմադրութեան ամբողջ ընթացքին ինծի. կը թուէր, թէ իրլանտացիին ստեղծած տիպարները անձնաւորած արւեստադէտներէն աւելի ուժգին էին նախորդ դիշեր Զելայի բառերուն մէջ գործող աներեւոյթ տիպարները, ու աւելի կ'լանող:

Ոչինչ ըսի իրեն այդ մասին:

Իջաւ վարագոյրը:

—Ուրեմն մեղի պիտի չընկերանա՞ս այս դիշեր,— հարցուց Զելա:

—Դժբախտաբար՝ ոչ: Ուշ ատեն բարեկամի մը պիտի հանդիպիմ:

—Այն ատեն կը յուսամ չես մոռնար վաղուան մեր ժամադրութիւնը:

Երբ թաքսիի մը ձեռք ըրին ու դարձան անկիւնը, մինակութեան կսկիծ մը համակեց զիս:

Բեկուած հոգիով շտապեցի դէպի ուսանողական տաղաւար:

Սարոն հոն չէր:

Չկրցայ միւս ընկերներուս մօտ երկար մնալ:

Իջայ փապուղի ու ժամանակաւորապէս ինծի տրամադրուած Սիմոնֆի սենեակը հագիւ հասած՝ երկնցայ մահճակալին ու սկըսայ վերակազմել Շաբաթ յետմիջօրէէն սկսեալ մինչեւ կէս գիշերը մօտեցող կիրակնօրեայ այս պահը երկարող իրադարձութիւններուն շարժապատկերը, որ խճողուած էր յիշողութիւններու, խռովքներու ու վարկածներու անօրինակ թոհուրոհով մը: Կը մտածէի ու չէի կրնար տրամաբանական պարզութեան մը կապել բախտս: Ամէնքը ամէնուն պէս կեանք կը վարէին հոս՝ յախուռն, անկաշկանդ, սանձաբեկ՝ սպիտակամորթը, սեւամորթը, դեղինը, պրոնզափայլը, ամէնքը՝ ծերը, երիտասարդը, արուն, էգը, ես՝ ամէնուն մէջ, այլ ամէնքէն տարբեր, անոք, անգօր, վերապահ, անբուժելիօրէն երկչոտ, որ նախաձեռնարկ ըլլալու փոխարէն՝ խոցուած է մտերմութիւն խոստացող հոգիներէն անդամ խոյս տալու ճակատագրով:

Փիշերուան մէկ մասը ինքզինքս վերլուծելու գործին յատկացուցի, իսկ միւս մասը ամբողջութեամբ գրաւեց Զելան, թուխ ե-

րեսներուն վրայ ինկած սեւ մագերով տարօրինակ հրապոյր մը ձեւացուցած այն աղջիկը, որ առաջին հանդիպումիս փոթորկեց Անկախութեան տօնին մասնակից բազմութիւնը եւ նոյն պահուն մտքիս մէջ կրկնեց այն միւսը, որ իր ալեկոծ պատմութեամբ օրօրած էր փարիզեան իմ տառապակոծ օրերս:

Այս պատկերներով լուսցաւ գիշերը եւ նոյն տեսիլքները կրկնուեցան մինչեւ յետմիջօրէ:

Աճապարեցի:

Ու անշուշտ որոշուած ժամկէտէն առաջ տեղ հասայ եւ մըտայ «Քաֆէ տը լա Փէ», ուր անցնող իւրաքանչիւր վայրկեանի հետ կը սաստկանար անձկութիւնս:

Մերթ ընդ մերթ «Լը Սոնտ»ի մէջ կը հետեւէի օրուան անցուդարձերուն, բայց ոչ մէկ կէտի վրայ կը յաջողէի կեդրոնանալ: Կը կարդայի տող մը ու կը նայէի ուրիշ ուղղութեամբ, տող մը՝ եւ երկու ուղղութիւններով, տող մը՝ բոլոր ուղղութիւններով:

Նշանակուած վայրկեանին ելայ դուրս, կանգ առի տիեզերահռչակ Օփերային դիմացը, ապա՝ շրջանը ըրի անոր: Իբր թէ բուռն հետաքրքրութիւններով համակուած հոգի, սկսայ արձաններուն պատուանդանին կարգալ Պախի, Պեթհոպէնի, Շօփէնի անունները, ոմանց համանուագներէն խառնափնթոր ձայներ խաչաձեւուեցան ուղեղիս մէջ, բայց ինծի կը թուէր, թէ այդ պահուն Զելայի ոտնաձայնը աւելի կշիռ պիտի ունենար հոգիիս, քան այդ բացառիկ ծնունդներուն հանճարեղ դաշնաւորումները:

Հռչակաւոր չէնքին շրջանը երկրորդ անգամ ընելէ ետք՝ կանգ առի Պախի արձանին մօտիկ տեղ մը՝ մէկէն միւսը շարունակ պտտեցնելով ակնարկս: Կը կարդայի արձանագրութիւնները, յայտադիրները, բայց առաջընթաց մարդկութեան երազը դարձած ու սերունդներուն հիացումը իր քարերուն արձանագիր ունեցող այդ պերճաշուք պալատը, իր փառքը հռչակած մեծագործներուն պէս՝ ոչինչ կ'ըսէր ինծի:

—Պարո՛յր...

Դողս աւելի սաստկացաւ, ոտքերս կ'թոտեցան մէկէն: Սեւ փէշին վրայ ծածանող կարմիր պլուզը տարբեր կրակ մը կը հաղորդէր Զելայի թուխ դէմքին եւ աչքերէն ցայտող զուարթութիւնը զօրակոչի կ'ենթարկէր կարծես յիշողութեանս յետին բջիջներն անդամ:

—Ուշացա՞յ,— հարցուց նազանքով:

Ինք չէր ուշացած, բայց կրնա՞ր միթէ մէկը չափել իմ սպասումիս տեւողութիւնը: Ես նոյնիսկ չէի կրցած ստուգել, թէ ինչու ինքզինքս մատնած էի այս անձկութեան, երբ անորոշ ճակատագրիս մէջ միակ յստակ կէտը այս քաղաքէն արագ հեռանալու ստիպումս էր:

—Անցնինք «Տը լա Փէ» սուրճ մը առնե՞նք,— հարցուցի:

—Ոչ, քալենք,— ռսաւ Զելա,— սիրտս քալել կ'ուզէ այսօր:

«Մատչեն»ի ուղղութեամբ բաւական առաջանայէ ետք, Ջելա կէտի մը վրայ կանգ առաւ ու ձախ թեւս բռնելով յիշեցուց, որ կը գտնուինք Պօտլէրի յաճախած սրճարանին դիմաց: Անմիջապէս ուզեց իմանալ իմ կարծիքս Պօտլէրի մասին: Իմ հակումս գիտական է ըսի: Խնդաց: Շարունակեցինք նոյն պողոտայէն: Մէկէն կանգ առաւ «Ճիմնագ»ի առջեւ ու խօսք բացաւ այդ օրերուն նոյն բեմին վրայ Տրէօյտի յայտնագործած մէկ ուժը պատկերացնող «Le Fil Rouge»ը, որ, ըստ թատերական քրոնիկագիրներուն, բացառիկ բեմադրութիւն մըն է եւ արժանացած հանդիսականներու համընդհանուր գնահատանքին, յաճախ վայրկեաններ տեւող յոտնկայս ծափահարութիւններով:

— Կ'ուզէի՞ր տեսնել ներկայացումը, — հարցուց Ջելա աչքերը լայն բացած:

— Շատ հետաքրքրական կը թուի, բայց ոչ այսօր, — ըսի մեղմ:

— Երեւի թատրոնը քիչ կը հետաքրքրէ քեզ:

Գլխու շարժումով մը զգացուցի անտարբերութիւնս:

— Ի դէպ, գիշերը խուճապահար ձեռով մը բաժնուեցար մեզմէ եւ առիթ չունեցանք խօսելու Կոտոյի մասին: Ինչպէ՞ս գտար զայն:

— Առջի գիշեր աւելի ուժգին էր տպաւորութիւնս, — ըսի:

— Ե՞րբ:

— Առջի գիշեր:

— Ե՞րբ առջի գիշեր:

— Երբ դուն ճանչցուցիր զայն ինքդ:

— Իրապէ՞ս:

— Քու շունչիդ տակ աւելի կենդանի թուեցաւ ինծի ամբողջութիւնը:

— Ինչպէ՞ս թուեցաւ:

— Աւելի կենդանի, թրթռուն, համագրաւ:

Ջելա թեթեւ մը զարկաւ մարմինը մարմինիս, մինչ այդ խրոնըւած փողոցը կտրող մեր յամրնթաց քայլերուն հետ մէջս կը վերակազմուէր ներկայացման երեկոն: Թաւալած երկու ժամերու ընթացքին, կիսամութին ու կիսամութ աչքերով առաւելագոյն չափով մը ինք պատկերացած էր, առջի գիշերուան իր ողողուն կերպարանքին մէջ, նոյնը՝ յաջորդ օրուան ընթացքին, արթնութեանս բոլոր վայրկեաններուն, հրացայտ, թովիչ՝ ինքը, իր շարժումներուն, բառերուն ու աչքերէն արձակուած բոցերուն հմայքին մէջ շունչ առնող տիպարներուն կողքին, անոնցմէ առաջ, անոնց հետքերուն, անոնցմէ աւելի իրական, կենսախայտ: Ու՛ նոր մշուշներ մտքիս: Ա՞յս Ջելան տեսնելէ ետք կազմուեցաւ մտքիս «Պղտոր ջուրեր»ու երազային Ջելան, թէ անկէ բխած անմար ճառագայթներով հիւսւեցաւ վերջին երկու օրերս ու գիշերներս ալեկոծած այս Ջելան...

— Ի՞նչ կը մտածես:

Քանի մը բառով գծեցի իր եւ միւսին միջեւ այն զուգահեռը, զոր առջի գիշեր ուրուագրած էի հեղ մը: Այս անգամ քիչ մը դառնութիւն կուսեցի ժպիտին մէջ: Դանդաղեցաւ: Քայլ պահեցի հետը: Նորէն մարմինը զարկաւ մարմինիս: Տարբեր զգայնութիւն մը ծաւալեցաւ արեանս մէջ: Կանգ առաւ մէկէն, թեւս բռնելով կեցուց զիս դիմացը ու կնոջական գինաթափող պչրանքով մը հարցուց:

— Նորէն կը կրկնե՞ս:

— Ի՞նչը, Ջելա:

— Կոտոյին առիթով քիչ առաջուան ըսածներդ:

— Քու շունչիդ տակ աւելի կենդանի թուեցաւ ինծի ամբողջութիւնը:

— Ուրիշ ձեռով ալ ըսիր:

— Աւելի կենդանի, թրթռուն, համագրաւ:

Հիմա ուրախ է, շա՛տ, շարունակ կը խօսի իր մասին կազմած համակրալից կարծիքիս մասին: Չայնը քաղցրացած է աւելի ու դէմքին վրայ կը վառի կարծես անտեսանելի կրակ մը:

— Ծանօթ ես այս թաղերուն, — հարցուցի մեղմ:

— Քիչ մը: Դո՛ւն:

— Ես ալ, բայց հոս ապրած երկու հոգիներու կեանքին նուիրւած գիրք մը կարդացած եմ եւ կ'ուզէի օր մը անպայման թափառիլ այս փողոցներուն մէջ:

Իրապէս վիպական թաղամասերէն մէկն է այն թաղամասը, ուրկէ կ'անցնինք հիմա մենք, հին, նոր, խոռովիչ, վանողական, թշուառ մը հոս, քովը՝ պերճ ցուցափեղկէ մը անտարբեր նայող բարեկեցիկ երեւոյթով մէկը, անդին՝ մայթաղիճ մը, մեծակառոյց շէնքի մը կողքին՝ հին բնակարանի մը մեծարուած մնացորդը, մըշուշ, խոնաւութիւն, խառնիճաղանձ, քաոս:

Կտրած ենք բաւական ճամբայ ու չենք գիտեր ուր կը գտնուինք հիմա: Փողոցներու անկիւններուն արձանագրուած անունները անծանօթ են Ջելային, իսկ ես այս կողմերը ապրուած յուշ գրեթէ չունիմ: Երեւակայութեամբ կը ճշդենք Սէնի ուղղութիւնը ու կը շարունակենք քայլի: Վստահ չենք սակայն մեր ընտրութեան վրայ: Շատերուն կողմէ երգուած ամէնօրհնեալ գետին մերձակայ որեւէ ափին հասնելէ ետք, ինծի համար կը դիւրանայ ամէն ինչ, բոց գիտեմ այս մասերուն ձեւացած քաղաքակրթական ու մշակութային կոթողները, Նոթրը Տամէն մինչեւ Լուվր, մինչեւ Թրոքատերո: Կ'որոշենք դիմել մօտակայ քառուղիին վրայ կանգնած ոստիկանին:

— Երկու հարիւր մեթր կտրելէ ետք, — սկսաւ ոստիկանը զըլարթ, — ձեր առջեւ կը բացուի Սէնը:

— Շնորհակալութիւն:

— Բայց զգո՛ւ՛:

—Ինչո՞ւ զգոյշ: Ինչէ՞ն,— հարցուցի ետեւ դառնալով:

—Ձուրը չնետուիք: Ձերմաչափը շատ խիստ ցոյց կու տայ պաղը:

Տարբեր տրամադրութեամբ մը միացայ Ձեւային: Դարձանք մատնանշուած ուղղութեան կողմը:

—Ի դէպ,— լսեցի ետեւէս նոյն ոստիկանին ձայնը,— առիթ ունեցա՞ք տեսնելու մեր նախադահլ:

—Ոչ,— ըսի՝ անակնկալէն շքմած:

—Այն ատեն, ինչո՞ւ մինչեւ Ֆրանսա եկած էք, պարոն, կ'արժէ՞ր:

Ձեւան ինծի դարձած՝ բարձրաձայն կը խնդար:

—Ֆրանսական էսփրի ըսուածը այս է ահաւասիկ,— ըսաւ ան,— երբեք չեն կրնար սրամտութիւններ ընելու փորձութեան դիմանալ:

Հասանք կէտի մը, ուրկէ կ'երեւէր «Սառա Պերնար» թատրոնին մէկ անկիւնը:

—Տուած բացատրութեանդ համաձայն, այս կողմերն է քեզի տրամադրուած սենեակը:

—Քիչ մը անդին,— ըսի:

Ձեւա պնդեց ու պնդեց, որ պահ մը հոն հանդիպինք: Ընդդիմացայ իր բաղձանքին, յիշեցնելով, որ հիւր ընդունելու յարմարութիւններէ զուրկ է անիկա: Մերժեց հիւրի հանգամանք մը ընդունիլ: Նկարագրեցի փոշեթաթաւ իրերը, խոնաուութիւնը, պատերուն գորշութենէն խուժող կծու հոտերը: Չհամոզուեցաւ, տոգուեցաւ ա'յնպէս, որ կարծես մեծ զրկանքի մը կ'ենթարկուէր: Այն ատեն կտրեցինք «Սէն Սեբաստիան» պողոտան, մտանք հանդիպակաց նեղ փողոցը, դարձանք աջ ու բարձրացանք Լիոնի մէջ ելեկտրակա-նութեան ընկերութեան մը մէկ ճիւղին մէջ աշխատող Սիմոնֆի փարիզեան ապաստարանը, որ յատկացուած էր ինծի Յունիսի սկիզբներուն:

—Հո՞ւ կը բնակիս,— հարցուց Ձեւա:

—Հոս չեմ բնակիր:

—Հապա՞:

—Կը գիշերեմ միայն:

Սենեակը ունէր ներսէն բացուող կից անկիւն մը, ուր կիսափուլ սեղանի մը վրայ կ'երեւէին կողմերէն մաշած նաւթավառ մը, սուրճի սպասներ եւ քանի մը շիշ Պորտո: Տախտակամածին արեւելեան կողմը տարածուած էր դորդանման ստուարաթուղթ մը, մօտը՝ երկաթէ մահճակալը, ու անկիւնը՝ երկու պայուսակ, մեծին վրայ՝ թերթեր ու գիրքեր: Վերցուց մէկը, «Քսանհինգերորդ ժամը», թօթուեց փոշին, գրաւ տեղը, ձեռք առաւ քովինը, «Աղտոտ ձեռքեր», էջերը գարձնելով վերցուց աթոռը, մօտեցաւ մահճակալին,

որուն սնարին կողմը տեղ գրաւած կը հետեւէի իր հետաքրքրու-թիւններուն:

—Ձես կրնար երեւակայել, թէ որքա՛ն երջանիկ եմ այս պա-հուս:

—Այս պահո՞ւս,— զարմացայ ես:

—Այս խորհրդաւոր սենեակին մէջ:

Փորձեցի չզգացնել հետզհետէ աճող զարմանքս, բայց միտքս եղած տեղը չմնաց: Երեւակայութեամբ վերակազմեցի իրենց երկյար-կանի տունը, տիւփիչքս, հանգստաւէտ բոլոր պայմաններով օժտը-լած, Քլամարի օղակէտ բարձունքին, ծաղիկներով բեռնաւոր պա-տըշդամին վրայ բացուող իր սենեակը, հարուստ՝ ներսի մթնոլոր-տով, դոյներով, բոյրերով, նաշխերով, ու դուրսով հարուստ, փա-րիզեան՝ բոլոր կողմերով, ցերեկը՝ երկնասլաց շէնքերու համանուագ, դիշերը՝ լայնատարած լուսահանդէս, երազը աշխարհի բոլոր երիտա-սարդներուն, մանկամարդներուն:

Ձեւայի յայտնած երջանկութեան ի լուր՝ դարձեալ աչք մը պտտցուցի Սիմոնֆի սենեակին չորս անկիւնները ու կրկնեցի զարմանքս:

—Ինչո՞ւ:

—Ինչպէ՞ս թէ ինչու: Երջանկանալու որեւէ պատճառ չեմ տեսներ հոս:

—Բայց ես միշտ երազած եմ այս թաղերուն մէջ ունենալ այսպիսի սենեակ մը:

—Այսպիսի՞:

—Այո՞, — երկարեց ձայնը Ձեւա, — ճիշդ այսպիսի սենեակ մը, A Room in Paris, ուր նախախնամական ձեռք մը գուցէ ազատէր զիս իմ անձկութիւններէս եւ գոնէ պահ մը ընծայէր ինծի ապրե-լու քաղցրութիւնը, ինչպէս ըրած էր նման բախտի մը արժանացած անգլուհի Լին Պոյին:

Պարզուեցաւ, որ գիրքի մը խորագիրն է A Room in Paris, հեղինակը՝ նոյնինքն Լին Պօ, ու բովանդակութիւնը՝ իր կեանքին ժապաւէնը: Ձեւա առանց հարցնելու ունկնդրելու իմ տրամադրու-թիւնս՝ ամփոփեց հերոսուհիին կեանքի ելեւէջները, յուղումով, եր-բեմն աչքիս նայելով, երբեմն գետին սեւեռելով ակնարկը:

Գեղեցիկ աղջիկ էր Լին, բարեձեւ, հարուստ մարդու մը մէկ հատիկը, որ օգառած էր իրեն շուայուած բոլոր կարեւորութիւննե-րէն: Ճամբորդած էր ցամաքէ ցամաք, երկրէ երկիր, պատմականնե-րը, նորերը, Եգիպտոս, Հնդկաստան, գոյգ Ամերիկաները, Աւստրա-լիա: Բազմաթիւ ու բազմերանգ վայելքներ կը ճաշակէ, կը շնչէ ջնաշխարհիկ վայրերու մէջ, կողքին՝ սիրազեղ բարեկամներ, հետքե-րուն՝ դարպասողներ, որ սակայն ամէնուրեք կը մնայ ենթակայ անորոշ ցաւի մը, որուն հարուածներուն տակ ապերջանիկ կը հա-

մարէ ինքզինք եւ նոյն ցաւին դըրուամով նորէն ճամբայ կ'ելլէ, կը նետէ ինքզինք նոր քաղաք մը, յուսալով, որ կը գտնէ իրեն պակասող կենսանիւթը, բալասան մը, հոգիին լրացուցիչ տարրը, հոգի մը, եւ օր մը, յուսաբեկութեան ծայրագոյն բեւեռներուն գտնուած մէկ պահուն, Լիւքսէնպուրկի պարտէզին աւազանին առջեւ կը հանդիպի իր հիացումին մէջ քարացած երիտասարդի մը, ցեղակից, բայց տարբեր իրմէ, աղքատ, մաշած հագուստներով, աչքերուն մէջ տխուր հրապոյր մը: Աշխարհը ճանչցած ու համարձակ աղջիկ՝ Լին կը մօտենայ անոր, հարցումներ կ'ուղղէ, կը լսէ ձայնը, բառերը կ'արձագանգեն յանկարծ հոգիին, կ'ալեկոծի արիւնը, ազգակիցներ գտած ըլլալու փոխադարձ ուրախութիւններ կը ճշան, կը միանան իրարու եւ Փարիզի պերճաշուք կոթողներուն մօտէն անցնելով՝ կը հասնին նկարչութեան ուսանող տղուն անշուք սենեակը, ուր Լին կ'ապրի կեանքի իր առաջին ու վերջին հաճոյքը:

—Յետո՞յ,— հարցուցի:

Շարունակութիւնը լաւ չեմ յիշեր: Երեւի սովորական անցուդարձերու շղթայ մըն էր շարունակութիւնը: Լին անկրկնելի կը համարէ այդ աղքատ տղուն սենեակին մէջ ապրած պահը եւ կը գրէ իր գիրքը՝ A Room in Paris.

Իրապէ՞ս շարունակութիւնը լաւ չէր յիշեր Ձեւան, թէ չէր ուղեր վերապատմել: Ինծի համար ալ դադրեցաւ հետաքրքրական ըլլալէ:

—Քանի մը տարի առաջ էր,— ըսաւ Ձեւա,— քսանս նոր աւարտած էի, երբ կարդացի Լին Պոյի գիրքը եւ այն օրէն ի վեր նոյն յանկերգը կը կրկնուի մէջս. «Ըլլա՛ր, կ'ըսէի, այդպէս սենեակ մը, թէկուզ անարեւ, թէկուզ գորշ պատերով, փոշեթաթաւ, բայց ըլլար միայն քուկդ, անկախ, դուն՝ տիրուհին անոր, ու քեզմէ գատ միայն մէկ հոգի համարձակէր մտնել ներս: Միայն մէկ հոգի: Այս տեսիլքը միշտ յաճախած է ինծի, ցանկացած եմ ունենալ ամէնէն դիւրին բանը ու չեմ ունեցած՝ A Room in Paris.

—Բայց դուն...

—Հաճիս, մի շարունակեր, դիտեմ ինչ պիտի ըսես, հաւանաբար պիտի թուես մեր բարեկեցիկ պայմանները: Անոնք չեմ թերադնահատեր, բայց անոնցմով չեմ կրնար լեցնել այն պարապը, որ կայ հոգիիս մէջ ու անտանելի կը դարձնէ չըջապատիս մէջ ամէն բան, տաղտկալի՝ ամէն ինչ: Ապրածս ո՛չ այս եւ ո՛չ ալ այն կեանք մըն է: Ո՛չ ցամաքի վրայ եմ կարծէք, ոչ ալ ջուրին մէջ: Շնչահեղձ ցամաքի վրայ, ջրամոյն՝ ծովուն: Ֆրանսայի մէջ ծնած՝ Ֆրանսահայ դժբախտ մը՝ ես, Ֆրանսացիներուն հետ յոգնութիւն մը կը զգամ շուտով, հայերուն հետ՝ յոգնեցուցիչ կը դառնամ անմիջապէս: Կը տեսնե՞ս, ո՛չ այս եւ ո՛չ այն:

Իրեն դէմ մէջս դիզուող մշուշը հետզհետէ աւելի կը թանձրանար: Ես լուելեայն կը նախանձէի իրեն, իր առաւելութիւններուն,

մինչգեռ ինք երկսայրի ցաւերու հարուածներուն տակ հեծող հոգիի մը տուայտանքը կը յայտնէր: Հայր ունէր, որ բարեկեցիկ կեանք մը ապահոված էր իրեն, մայր՝ որ մարմնացեալ բարութիւն էր, եղբայր՝ որ կրնար շուտով վերադառնալ իր արկածախնդրութիւններէն, ու տուն՝ որ կրնար շատերուն երազին մաս կազմել: Այդ բոլորէն հեռու ու մինակ շնչող ամենազուրկ էակ մը՝ ես, դժուար կ'ըմբռնէի իր տանջանքը: Աշխարհի մէջ ամբողջ ունեցածս երկու գերեզմաններ էին, որոնցմէ մէկուն տակ պառկողը չէի ճանչցած նոյնիսկ, մա՛յրս, ու հօրս հողակոյտը, որուն վրայ դեռ մոմ չէի վառած:

—Պարոյր:

—Այո:

—Գիտե՞ս ինչ է դժուարը կեանքին մէջ:

—Այո՛:

—Ի՞նչը:

—Նոյնինքն կեանքը: Կեանքը առհասարակ:

—Առհասարակը չեմ հարցներ: Առհասարակը գիտեմ: Մասնաւոր:

Լուեցի:

Մասնաւոր պարագաներ չէին պակսեր ինծի: Մասնաւորներէն ո՞ր մէկը յիշէի սակայն, ինչո՞ւ յիշէի մանաւանդ:

—Ինչո՞ւ լուեցիր:

Հարցումին հետ՝ աչքերուս մէջ նայած ատեն, կարծես մտաւտանջութեան նոր մառախուղ մը դիզուեցաւ դէմքին:

—Առջի գիշեր,— ըսաւ տխրալիւր շեշտով,— դուն տեսար արդէն, որ ես ազատութեան սովէն չէի տառապեր: Հայրս որեւէ ճնշում չէ բանեցուցած վրաս, մօրս մնայուն գուրգուրանքին առարկան եմ, եղբայրս իր անկախութեան չափ կը յարգէ իմ անկախութիւնս, բայց առաւելութիւնները քիչ բան կ'ըսեն ինծի, տարբեր խմոր մը կը խլրտի արեանս մէջ, դժգոհ եմ ես ինձմէ, դժգոհ՝ ինծի եղած շոյլանքներէն: Այդ բոլորը բնական թուացած են միշտ, ժառանգական, մինչ ես պիտի ուզէի, որ պարագաներէն անկախ նժարի մը մէջ զգալ իմ կշիռս, ես ներքնապէս սովահար եմ, կը հասկնա՞ս, ներքնապէս:

Իրականութեան մէջ բան չէի հասկնար ու անցնող վայրկեաններուն հետ իր անձին նկատմամբ շփոթը աւելի՛ ու աւելի՛ կը կուտակուէր հոգիիս: Ես այն տպաւորութիւնը ունէի, որ բարդութիւններէ գերծ աղջիկ էր Ձեւան, ամէնուն հետ լեզու գտնող բնաւորութեան տէր, երջանկութեան մէջ լողացող հոգի մը:

Ձեւա ելաւ աթոռէն, ցնցեց մարմինը, թեթեւ հառաչ մը արձակեց, մահճակալին վրայ տեղ գրաւեց մօտս ու մտերմական ձայնով մը հարցուց.

—Պատահած է քեզի լսել բոլորովին անհասկնալի երգ մը, որ փափաքիս ընկերանալ անոր:

—Ոչ:

—Նորայայտ պարի մը հետ՝ պարելու մղովմ:

—Չեմ յիշեր:

—Տակնուվրայ գոյն ու գիծերով նկարի մը ձեւաւորման մասնակցելու կարօտ:

—Նման ապրումներ չեն պատահած ինձի:

—Ինձի պատահած են,— ըսաւ Ջելա գիրքերուն կողմը դարձնելով գլուխը,— պատահած են՝ թէ՛ երգի ատեն, թէ՛ պարի եւ թէ՛ նկարներու. նման պահերու այնպէս կը թնդան ջիղերս, որ կարծես պէտք է մասնակցիմ. անոնց լինելութեան, չեմ կրնար չէզոք մնալ, ուժ մը առաջ կը մղէ զիս ու երբ մասնակցութիւնս իր լրումին չի հասնիր, թախիժ մը կը սկսի կեղեքել հոլթիւնս:

Խօսքը աւարտած ատեն՝ նկատեց ապշահար վիճակս ու յարեց.

—Յիմար բանե՞ր կ'ըսեմ:

Արդէն լռակեաց իմ բնաւորութիւնս բոլորովին համրացաւ այդ պահուն ու զօրեղ դող մը սկսաւ տակնուվրայ ընել դժուար զսպուած խաղաղութիւնս:

—Գիտե՞ս ինչ կը փափաքիմ հիմա:

—Ի՞նչ:

—Կուուիլ:

—Կուուի՞լ:

—Մէկը ծեծել: Ծեծէի՛, ծեծէի՛, ծեծէի՛...

—Լաւ, ծեծէ,— ըսի՝ ուսս մօտեցնելով իրեն:

—Միասին:

—Երրորդ մը ներկայ չէ, գո՞վ պիտի ծեծենք միասին:

—Ձիրար:

—Դուն ազատ զգայ ինքզինքդ, բայց ես չեմ կրնար:

—Կը կարծե՞ս, որ ես կրնամ,— ըսաւ Ջելա ու նազանքով ու անսպասելի մտերմութեամբ մը գլուխը հանգչեցուց լանջիս: Այն ատեն ձեռքս տարի բռնկած այտերուն, ապա վեր առի ճակտին խենթացած մազերը ու կարծեցի, թէ արցունքի կաթիլներ կը մարգարտանային ակնակապիճներուն:

Իր շարժումներուն, գունափոխութիւններուն ու արտայայտութիւններուն դիմաց՝ տպաւորութիւններս յաճախ կը խաչաձեւութիւն մտքիս մէջ: Կը դժուարանայի հետեւիլ իրեն, ճշդել հոլթեան մայր գիծը: Հագիւ երջանիկ արտայայտութեան մը ականջալուր՝ տխրութիւն մը կը ծաւալէր աչքին, կաթիլ մը արցունքի պէս պարզ կը թուէր երբեմն եւ նոյն ակնթարթին կը պղտորէր բիբը: Պարզեցի իրեն միտքս:

—Ես բնութեան պէս եմ,— ըսաւ,— տարերքին բաղկացուցիչ երեւոյթները անձնաւորած հոգի:

—Ճի՛շդ,— ճշտցի:

—Մովն եմ:

Տաք հոսանք մը անցաւ սրտէս:

—Հովն եմ:

—Չեղա՛...

—Անդունդն եմ, խորաչափէ եթէ կրնաս:

Վար առի գլուխս: Հրակէրը ծանր էր ինձի, շա՛տ, որովհետեւ ես աղջիկներուն անդունդները չափելու կարողութեամբ եկած չէի աշխարհ, ոչ ալ անոնց հոգիին ծովը վերծանելու ուժով, ոչ ալ անոնց հովերը հասկնալու պայծառամտութեամբ, իմ ուժերս սեփական տազնապներս փարատելու չէին զօրեր, ես...

—Պարո՞յր:

—Հրամէ:

—Դուն բնաւ սիրա՞ծ ես:

—Պատահեցաւ անգամ մը:

—Յետո՞յ ինչ պատահեցաւ:

—Ա՛յն՝ որ յաճախ կը պատահի,— ըսի ու քանի մը բառով բացատրեցի իմ յուսահատական հոլթենէս բխող պատճառներով ինձմէ բաժնուած Լեյլին պատմութիւնը: Ես՝ անչնորհք, լռակեաց, խառնուածքով վատ հաղորդիչ, սիրելի ոչինչ ունէի, որ ան կապուած մնար ինձի:

—Իսկ ինչպէ՞ս էր Լեյլին:

—Ճիշդ իմ հակապատկերս:

Ջելա ձեռքը բերնին տարաւ, բայց չկրցաւ զսպել խնդուքը: Գլուխը սեղմեց կուրծքիս, շարունակեց հետապնդումը.

—Յետո՞յ:

—Յետոյ վերջ:

—Լեյլէն ետք բնա՞ւ ուրիշ մը չսիրեցիր:

—Ոչ:

—Կը վախնա՞ս սէրէն:

—Նոյնիսկ աւելին:

—Այսի՞նքն:

—Կը սարսափիմ:

Ջելան լռեց, մինչ իմ մէջ պայթեցաւ խուլ աղմուկ մը: Աղուոր աղջիկ էր Լեյլին, աղուորէն աւելի՛ բան մը, բարեձեւ, հերարձակ, կենսախայտ, որուն իրաւունք տուած էի բաժնուելու ինձմէ, բայց սիրտս բոլորովին չէր հաշտուած այդ վեհանձնութեանս հետ: Մինչեւ այսօր բան մը կը կոտտայ մէջս, երբ յուշի մը մը շուշներէն կը յառնէ անոր յանկուցիչ դէմքը:

—Ի՞նչ կը մտածես այս պահուն:

—Կը մտածեմ նոյն հարցումը քեզի ուղղել,— ըսի մէկէն:

—Մ'ը հարցումը:

—Դու ընաւ սիրած ես:

—Աղջիկներուն նման հարցումներ չեն ուղղեր, Պարո՛յր,— ըսաւ Զելա այնպիսի եղանակով մը, որ կիզիչ հոսանք մը անցաւ սրտէս: Սատանան տանի: Անհրաժեշտ էր նոր անտաշութիւն մը գումարել հիներուն վրայ: Ի՞նչ պէտք կար նման անխոհեմ հետաքրքրութեան մը: Մ'վ դրդեց զիս մանաւանդ, որ մտնեմ աղջկան մը մտերմութեան մէջ, երբ կարճ ժամանակ մը ետք պիտի հեռանամ իր միջավայրէն եւ գուցէ երկրորդ անգամ ընաւ չհանդիպիմ իրեն:

—Ընդմիջտ բաժնուեցաք դուն եւ Լելէն:

—Այո:

—Մ'ը է ան հիմա:

—Չեմ գիտեր:

—Չե՞ս ուզեր գիտնալ:

—Ոչ:

—Ուրեմն կ'ատե՞ս զինք:

—Ես չեմ կրնար աղջիկները ատել, Զելա՛, չէ պատահած, չեմ կրնար:

Չարածնի շող մը խաղաց աչքերուն եւ կարծես ձայնին մէջ քաղցրութեան նոր տարր մը գումարելով՝ ըսաւ.

—Բայց հակասական բաներ կ'ըսես:

—Ի՞նչ:

—Կ'ըսես, որ աղջիկները չես կրնար ատել:

—Այո:

—Իսկ քիչ առաջ կը պնդէիր, որ կը սարսափիս սէրէն:

—Չսիրուելէն չեմ սարսափիր, կը սարսափիմ շատ սիրելէն:

Զելա թարթիչները մօտեցուց իրարու, լայն շունչ մը առաւ, ապա յայտնեց, թէ այս պահը անփոխարինելի կը թուի իրեն, անկրկնելի պիտի մնայ իր կեանքին մէջ, հիմա կը շնչէ իր երազած միջավայրին մէջ, ունի տարիներով փայփայածը՝ A Room in Paris:

—Կ'ըսէին, բայց չէի հաւատար, սկսայ հիմա հաւատալ, թէ այսպիսի խորհրդաւոր անկիւններու մէջ է, որ մարդ կ'այցուի զգայնութիւններէ, կը հաղորդուի գերիվեր ուժերու հետ, Աստուծոյ, սատանային: Բախտս բերաւ:

—Բա՛խտդ,— զարմացայ նորէն:

—Դուն չե՞ս հաւատար բախտին:

—Չեմ գիտեր: Ես աւելի շատ դժբախտութեան հանդիպած եմ:

Վարի յարկէն բարձրացող դաշնակի մը քաղցր ելեւէջները կարծես քիչ մը փարատեցին անձկութիւնս ու լոյս նետեցին իրերուն վրայ: Միշտ այդ ժամուն կը թրթռար անիկա եւ անոր սիրոյն երբեմն կը յապաղէի սենեակին մէջ կամ կը շտապէի հոն՝ աշխարհէն անջատուելու համար:

—Նորէ՞ն...

—Ի՞նչ նորէն,— ցնցուեցայ մէկէն:

—Պարո՛յր, դուն միշտ այսպէ՞ս ապրած ես, թէ ինծի հետ եղած ժամերուդ այդ վիճակը կը մատնես:

—Ինչպէ՞ս:

—Տխո՛ւր: Բնագրս ինծի կ'ըսէ, թէ սրտիդ մէջ բան մը կայ, զոր ծածուկ կը պահես ինձմէ:

Բան մը կար անշուշտ, բայց իրմէ պահուելիք բան չէր, պարզապէս իրեն չէր վերաբերեր — մեկնելու ստիպումս ու անոր նախորդող անորոշութիւնը, որ ցաւագին անջրպետ մը ստեղծած էր իմ եւ ուրիշներու միջեւ:

—Նորէն ո՞ւր սաւառնեցաւ միտքդ:

Բան չկրցայ ըսել:

—Չելայի՞ մօտ:

Շրթներս նորէն կողպ պնացին, մինչ ինք վայրկեանօրէն մտաւ ուրիշ վիճակի մը մէջ, կորսուած մտածումի մը թելը որոնող հոգիի մը երեւոյթը պարզեց յանկարծ, ջղային շարժումով մը վեր առաւ մազերը, թօթուեց գլուխը, շնչակտուր քրքիջ մը արձակեց, տխրութեան հով մը անցաւ դէմքէն, նորէն փորձեց քրքրջալ ու ձեռքս ափերուն մէջ առած՝ ըսաւ.

—Ինծի կը թուի, թէ այս պահուս ո՛չ դուն՝ դուն ես, ոչ ալ ես՝ ես: Չե՞ս կարծեր:

—Լաւ չհասկցայ:

—Մեզի հետ ուղղակի կապ չունեցող յուշերու կապուած ենք եւ ուրիշներուն հետ ըլլալու կամ անոնց նմանելու իղձերուն անձնատուր՝ մենք մեզ կ'օրօրենք անիրական աշխարհներու մէջ:

—Չելա՛...

—Կը լսեմ:

—Աւելի պարզ լեզուով խօսէ հետս, հաճի՛ս:

—Պարզեմ միտքս: Ես գիրք մը ունիմ մտքիս մէջ ու անոր հերոսուհիին կեանքը դարձուցած եմ ինծի խոհալ, իսկ դուն կը կրես պատկերը դարձեալ գիրքէ մը եկած հերոսուհիի մը: Այսինքն՝ մեր կեանքը փոթորկալի գիրքերու վերածելու փոխարէն՝ գիրքերու ներշնչած կրաւորական կեանքով կը սնանինք մենք, խեղճ մենք:

Մեր կեանքը, մրմնջեցի իւրովի, մեր կեանքին իմ բաժինը, ի՞մ կեանքը: Իմ կեանքը ոչինչ, էջ մը չէր կրնար կենդանացնել իմ կեանքը, բայց բացառիկ ծնունդներուն կեանքի պատմութիւնը գուցէ անհրաժեշտ էր մարդոց մնացեալ մասին համար, անոնց ապրած բացառիկ պահերուն, անկիւնադարձներուն, անդունդներու եզրերուն, ինչպէս եղաւ իմ պարագայիս, երբ «Պղտոր ջուրեր»-ու յորձանքին մէջ ինծի տրուեցաւ ապրիլ յարաբերական խաղաղութիւն մը: Յայտնեցի տպաւորութիւնս Զելային: Հաշտութեամբ հաստատեց տպաւորութիւնս:

—ձիչդ է,— ըսաւ,— եթէ դիրք մը չմասնակցի կեանքին եւ իր կարգին կեանք չդառնայ՝ ինչ դիրք այլեւս, բայց ես կը կարծեմ, թէ դիրքերը մոռցնել տուող յախուռն կեանքը հազա՛ր անդամ նախընտրելի է ամէնէն հանճարեղ գիրքէն: Եւ եթէ իրականութիւնը այսպէս չըլլար, արդէն նոր դիրքեր չէին դրուեր:

Սկսող դիշերուտն շունչը թափանցած էր արդէն պատուհանէն ու մառախուղը հետզհետէ կը թանձրանար դիմացի շէնքին սեւաթոյր պատերուն:

—Օ՛, Պարոյր,— բացազանչեց Ջելա, ու թոքերը նոր շունչով մը լեցնելէ ետք՝ արձակեց աւելի խոր ճիչ մը: Փոխուեցաւ նաեւ գոյնը: Անթափանց մնաց ինծի ձայնային ու գունային այդ յանկարծական փոփոխութիւնը, ու երբ լանջիս վրայ աւելի լայն տեղ տուի իր դիրք ու բուրումնաւէտ մարմինին, զգացի, որ Լինը ջնջուած է մտքէն, չկա՛յ, Ջելան ջնջուած է մտքէս, չկա՛յ, կայ միայն ինքը, ու կայ ուրիշ ինք մը դարձած տղան՝ ես:

Ջելա յանկարծ անջատուեցաւ գորովալիբ բազուկներէս, դուրս նետեց ինքզինք մահճակալէն, մօտեցաւ պատուհանին, սեւեռեց աչքերը հեռուն, կիսադէմը դարձուց ու տախտակամածի անորոշ մէկ կէտին պահ մը յառեց ակնարկը, յետոյ դարձաւ ինծի, անսպասելի ձայներ առած հոգիի մը վախուորած ձեւեր պարզեց, քայլ մը առաւ մահճակալին կողմը ու աչքերուն մէջ շառագունած վայրագութիւն մը վառելով սկսաւ քակել պլուզին վերի կոճակը:

Նոյն ակնթարթին, վերակենդանացաւ մէջս միւսը եւ միւսին մերկանալու ծիսակատարութիւնը դիտող անձկայրեաց Ջարան...

—Ջելա՛...

Դէմքը ամբողջովին դարձուց անակնկալէն դողահար տղուն կողմը եւ ձգողական ամօթխածութիւն մը ձեւացնելով՝ երկու ասփերուն մէջ առաւ մերկացած ծիծերը, ապա՝ խուճապահար մօտեցաւ մահճակալին, քակեց գօտին, նոյն թափով նետեց փէշը գիրքերուն մօտ փռուած պլուզին վրայ եւ որեւէ առարկութիւն մերժող խրոխտ երեւոյթով մը մօտեցաւ ու երկարեցաւ հեռասպառ սպասող Ջարայի կողքին...

Այդ ցնորական պահուն կարծես շրջուեցաւ աշխարհը, երէկը աղօտեցաւ իսկոյն, առջի օրը ջնջուեցաւ բոլորովին, մերձաւորները մխրճուեցան անէութեան անդունդին մէջ, մշուշը պատեց ամէն ինչ, ամպրոպ մը պայթեցաւ, կայծակ մը խանձեց նուիրական կապերը, տղուն միտքը դադրեցաւ գործելէ, վէճ չմնաց մէջը, մէկէն դարձաւ իր բնագղներուն գերի անասուն մը,

անասունին նուազած մոնչիւններուն
յաջորդեց ուրիշ վարձատրութիւն մը,
զգաց երգի մը արբեցուցիչ մրմունջը:

Je voudrais tant que tu te souviennes
Les jours heureux où nous étions amis.
En ce temps-là la vie était plus belle
Et le soleil plus brûlant qu'aujourd'hui.

Ինք չէր կրնար ըլլալ այդքան յուզումով հնչած երգին մէջ պատկերող հերոսը, ինք յուշ չէր դեռ, իրականութիւն էր ինք, ո՞վ էր սակայն նախկին իրականութեան ոգին, երջանիկ օրերու բարեկամը, երբ կեանքը աւելի գեղեցիկ էր եւ արեւը աւելի կիզիչ, քան այսօր:

Երգին յաջորդ մասերը Ջելա մրմնջեց նոյն յուզումով ու աւարտէն առաջ, առանց առաստաղին սեւեռած աչքերը տղուն դարձնելու, տուաւ անոր անունը, յետոյ՝

—Կը ձանձրացնե՞մ քեզ:

Պատասխանի չսպասեց: Կը զգար, որ ան անձկութեամբ կը հետեւէր երգին բառերուն, անոնց վրայ դրած իր առինքնող շեշտերուն:

Et la vie sépare ceux qui s'aiment,
Tout doucement, sans faire de bruit.
Et la mer efface sur le sable,
Les pas des amants désunis.

Երգը անծանօթ չէր ինծի, ձայնասփիւռը յաճախ կը սփռէր զայն, հանրային վայրերու մէջ եւս կը հնչէր անիկա, նաեւ սրահներու մէջ, պաշտօնական բեմերէ, հռչակաւոր Իվ Մոնթանի թէ նոր երգիչներու կողմէ, բայց անկարելի, ցնորական, հեշտալիբ վայելքէն ետք, կոնակին վրայ երկարած Ջելայի անհրաւէր գեղումը տարբեր համ մը հաղորդած էր անոր, նկատումներէ բոլորովին ձերբազատ հոգիի մը անկրկնելի քաղցրութիւնը՝ ամէն օր ու ամէն տեղ սովորական փորձառութիւններ պատմող այդ երգին:

Պարզութեան մը կարօտէն տարուած՝ շտկուեցայ քիչ մը, կոնակս տուի մահճակալին երկաթներուն, նայեցայ առարկաներուն, լիաթոք շնչեցի խոնաուութիւնը, մտքիս հետ գացի հեռուն, վերադարձայ շուտով, տանջեցի տրամաբանութիւնս, բայց անկարելի եղաւ պատահածին իրականութեան եւ երազայինին սահմանները ստուգել: Այլ այդ ակնթարթին բոլորովին տարբեր կերպարանք մը առած էր Ջելա, աչքերը՝ գոհի մը աղաչական աչքերուն պէս էին արդէն, գոյնը՝ նահանջի մէջ, ու շրթները՝ կուղպ: Կը նայէի իրեն, բայց

չփոթը հետզհետէ աւելի կը թանձրանար մտքիս: Ո՞վ էր ի վերջոյ ինք, որ իր շունչին տակ ամէն ինչ, ամէն շարժում ու բոլոր բառերը տարբեր կշռոյթ մը կը ստանային, ու անգամ իր գունաթափուկները, անգամ իր լուսութիւնը, անգամ մրմունջները հրապուրիչ կը դառնային, եւ ի վերջոյ ո՞վ էի ես իրեն համար, ո՞վ, ո՞վ...

—Պիտի մաղթէի, որ բարդութիւնները չճնշեն վրադ,— ըսաւ խռով:

—Երջանկութիւնը համակէ բոլոր օրերդ,— բարձրացուց յօնքերը:

—Կեանքը տեւական խնճոյքի մը վերածուի մէջդ,— շարժեց գլուխը:

—Ու երբեք չխոժոռիս ճակատագրի բաժակներուն առջեւ,— կկոցեց աչքերը:

Ձեյա չսպասեց իմ հակազդեցութիւններուս:

Անմիջապէս վար իջաւ մահճակալէն:

Հետեւեցայ իրեն:

Հաւաքեց իրերը ու նայեցաւ պատուհանէն դուրս: Մութ էր: Առաջարկեց ընկերանալ իրեն մինչեւ գետափ: Իջանք վար ու թեւանցուկ խառնուեցանք լայն մայթին վրայ զիրար խաչաձեւող հեւասպառ ու խոնջ հոգիներով կազմուած ամբոխին: «Սառա Պերնար»-ի առջեւ Ձեյա ձեռք ըրաւ թաքսիի մը: Խուճապահար՝ վերստին հանդիպելու տարտամ խոստումներ տուինք իրար, ու երբ ինքնաշարժը ջնջուեցաւ տեսողութենէս, մեծ պարապ մը ձեւաւորուեցաւ սրտիս:

Կթոտ քայլերով անցայ դիմացը: Իջայ «Շաթրլէ»-ի մեթրոն:

Սարոն իմացուց, որ նամակատունէն ազդարարագիր մը եկած է իրեն եւ կը կարծէ, թէ հասած է Յակոբ Սեւեանէն սպասուած նամակը: Ապահովագրեալ ըլլալու անոր հանգամանքը ապահովութիւն մը ներշնչեց ինծի: Ժամադրուեցանք յաջորդ օրուան: Հասաւ անձկալի ժամը: Սովորական նամակ մըն էր, ներփակ՝ հազար ոսկիի փոխզիր մը: Սարօ լուսեց աչքս ու շտապեց համալսարան, իսկ ես անցայ կից սրճարանը, ուր նստեցայ ու երկտող մը գրեցի Սիմոնֆին, որ ժամանակ գտնէ ու շուտով վերադառնայ Փարիզ, որ յայտնեմ իրեն շնորհակալութիւններս ու յանձնեմ բանալին:

Ամէն ինչ կարգի մտաւ, բայց, զարմանալի բան, ուրախութեան փոխարէն՝ տխրութիւնը աւելի ու աւելի դիզուեցաւ սրտիս: Ձախողած երիտասարդի մը ներքին խորտակումը կը հաստատէր անիկա, թէ կը գուժէր նոր խորտակումի մը ազդանշանը: Չկրցայ ճշդել: Գուցէ երկուքը միասին: Կը կարծէի, որ պիտի ուրախանամ ինքզինքս Փարիզէն դուրս նետելով: Կը կարծէի, թէ գերագոյն երջանկութեան պիտի տիրանամ եթէ Անկախութեան օրուան Ձեյան ժպիտ մը շնորհէ ինծի: Ունեցայ երկուքն ալ, գրեթէ միասին, չը-

ուայորէն, բայց այս անգամ անծանօթ տխրութիւն մը սկսաւ իր մուրճերը զարնել սրտիս:

Յաջորդ օրը, յետմիջօրէին, երեւցաւ Սիմոնֆ: Անմիջապէս վար իջանք: Սենեակին եռամսեայ վարձքը վճարելու համար ան զարկաւ բարապանի դուռը: Տիկին ժազքին ներկայ չէր այդ պահուն: Շտապեցինք «Կար տը Լիոն» եւ Փարիզ-Մարսէյլ գիշերային շոգեկառքը առնելու եւ առտու Արեւելք մեկնող նաւ բարձրանալու համար ապահովեցինք զոյգ տոմսերը, ապա՝ հանդիպեցանք ուսանողական տաղաւար, ողջագուրուեցայ ընկերներուս հետ եւ կարճ ժամանակ մը ետք հասանք մեր նախասիրած վայրը, Սէն Միշէլի «Լիւթէս» սրճարանը: Սիմոնֆ զգաց մուսկուլութիւնս, բայց չխորացաւ պատճառին մէջ: Անպայման կը կարծէր, որ բժշկական ասպարէզիս վրայ քաշուած խաչը ոչնչացուցած է դէմքիս գոյնները: Վերահաս զրկանքներէն լուր չունէր ան: Ես ալ բան չըսի իրեն:

Մեկնումի ժամկէտէն ոչ-շատ առաջ հանդիպեցանք սենեակ՝ պայուսակս վերցնելու: Սիմոնֆ դարձեալ զարկաւ բարապանին դուռը, իսկ ես փութացի վեր: Աչքիս զարկաւ դրան արանքին ամրացուած պահարան մը, վրան՝ անդունս: Յետադարձ հասցէ չունէր անիկա: Գրեթէ յօշոտեցի զայն: Ներփակը նամակ չէր, ստուարաթուղթէ կազմուած չորս էջոց բարակ տետրակ մըն էր, որուն առաջին էջին գծագրուած նապաստակին վերեւ կարդացի-

J'étais
toute seule
au monde...

Բացի միւս երեսը եւ նապաստակի ուրիշ խումբի մը վրայ տեսայ գրութեան շարունակութիւնը՝

...et puis
un jour je vous
ai rencontré

Լուսանցքին վրայ արձանագրուած էր թուականը, եւ մէկ անկիւնը կար ստորագրութիւնը՝ Ձեյա:

Դողս կը շարունակուէր տակաւին եւ երեւի դէմքս գունատած էր, երբ Սիմոնֆ ներս մտաւ:

Չգաց այլայլուն վիճակս, զարմացաւ, հետաքրքրուեցաւ:

Տուի իրեն անցնող օրերուն ընթացքին ունեցած անակնկալ կապերուս մասին հարեւանցի տեղեկութիւններ, ու զարմացայ, երբ պայծառօրէն յիշեց Անկախութեան տօնին բանաստեղծական ասմունքով մը Ձեյայի ստեղծած փոթորկալի տպաւորութիւնը, եւ սրահին մուտքին ինծի փոխանցած հօրը հրաւէրը:

—Աստուծոյ շատ սիրած աղջիկներէն մէկը:

—Ջելաֆն,— ճչացի ապչահար:

—Ներքին շնորհը եւ ֆիզիքական հրապոյրը քիչ անգամ կը ժամագրուին նոյն աղջկան մէջ,— ըսաւ Սիմոնոֆ գրեթէ անտարբեր,— Ջելան բախտաւոր կ'երեւէր:

Ոչինչ ըսի:

Ելանք ճամբայ:

Փարիզ ապրելու մղձաւանջէն կ'ազատէի, բայց նոյն ատեն կը զգայի, որ Փարիզ չկարենալ ապրելու մղձաւանջը աւելի զօրաւոր թափով մը կը կոտտար սրտիս: Այնքա՛ն սպասած էի այս օրուան ու այնքան սարսափելի կը թուէր ինծի անիկա, երբ մէջն էի:

«Կար տը Լիոն»ի առջեւ ողջագուրուեցանք Սիմոնոֆի հետ:

—Յուզուածի պէտք չկայ,— ըսաւ ան,— ես յուզուիլ չեմ գիտեր արդէն, ես Սիպերիայէն կու գամ,— աւելցուց՝ կնճռոտելով գէմքը:


Ես չկրցայ սակայն զսպել յուզումս:

Մտայ կառատունէն ներս:

Ամբողջ ճամբուն ընթացքին՝ շոգեկառքին մէջ, նաւուն վրայ Ջելան էր, ու ամէնէն աւելի հոլովուող բառերը իր արտասանած օտար բառերն էին մտքիս, ամէն ըրպէ, անընդհատ, եւ երբեմն չյագենալով՝ անոնց հետ միաժամանակ կը կրկնէի թարգմանութիւնները, A Room in Paris, սենեակ մը Փարիզի մէջ, Je voudrais tant que tu te souviennes, այնքան պիտի ուզէի, որ յիշես, j'étais toute seule au monde..., ես բոլորովին մինակ էի աշխարհի մէջ, այնքան պիտի ուզէի, որ յիշես, սենեակ մը Փարիզի մէջ, բոլորովին մինակ...

ՊՕՂՈՍ ՍՆԱՊԵԱՆ

(Հատուած՝ անտիպ վիպակէ մը)



Իմապական
Շարժում

ՀՐԱՄԱՆԱԳՐՈՎ...

Դեկտեմբեր 28ի նախագահական ծանօթ հրամանագրով տրուած հարուածներէն զերծ չմնաց նաեւ մեր միտքը, որուն բեմերէն ոմանք իսկոյն դադրեցան եւ փակ կը մնան մինչեւ այսօր:

Նախագահին պատկերասփռուած ելոյթին մա՛նաւանդ այս բաժինը առաջացուց համընդհանուր ընդվզում մը, որ դրսեւորուեցաւ ոմանց բարձրաձայն ու արի յայտարարութիւններով եւ ուրիշներու լուռ դժգոհութեամբ:

Տարբեր վերաբերում մը սպասելի չէր արդէն, երբ ազատ մասով ունենալու համար այնքան մաղթանք եղած էր հայրենի ժողովուրդին եւ այնքան կիզիչ եղած էր մեր ստաւորականներուն ազատ արտայայտուելու կարօտը:

Եւ ահա, ազատ հանրապետութեան մը տիրացած ըլլալու պատրանքով հազիւ կարճ ժամանակ մը օրօրուած՝ հարուածը կ'ուղղուէր ազատութեան առաջին խորհրդանիշներէն մասնւոյ կարգ մը անդամներուն՝ համոզիչ տուեալներու լիակատար բացակայութեան պայմաններուն մէջ:

Այս հանդէսին մէջ եւ այլուր մենք յաճախ խօսք բացած ենք ազատ մասնուլի հրամայականին մասին եւ այս կամ այն պատճառով դադրած թերթերուն առիթով մարդոց ապրած ցաւերուն եղած ենք ցաւակից, մինչեւ անգամ ա՛յն ատեն, երբ մեր որդեգրած գաղափարական ուղղութիւններուն եւ զգացական նախասիրութիւններուն բոլորովին ներհակ դրօշակներու ծառայած են անոնք: Նման առիթներու բորբոքած նոյնիսկ օտարներու կսկիծներուն մասնակից դարձուցած ենք մօտ ու հեռու մեր ընթերցող-

ները, ընդգծելու համար պետականօրէն մեծ ու մշակոյթով հսկայ ժողովուրդներուն մասնույին ընծայած կարեւորութիւնը:

Անցնող երեսուն ու քիչ մը անցի տարիներուն երեսունէ անցի անգամ բորբոքեցաւ այս ցար:

Այդ ժամանակաշրջանին դադրած ֆրանսական ու հայկական թերթերէն յիշենք հինգական հատ, ֆրանսականէն՝ «*Լա Բըվիւ տիւ Փարի*», «*Քայէ տիւ Սիւտ*», «*Փարի Փրես*», «*Տիկարօ Լիթերէր*», «*Փարի ժուռնալ*», իսկ հայկականէն՝ «*Նոր գիր*», «*Հայրենիք*», «*Ակօս*», «*Անի*» եւ «*Նայիրի*»:

Ֆրանսացիներուն ու հայերուն յատուկ երեսոյթ մը չէ դադրող թերթերուն առիթով ապրուած վիշտը, ուրիշներ եւս խոցուած են նոյն տագնապով, ինչպէս, օրինակ, Միացեալ Նահանգներու մէջ բնակութիւն հաստատած երկու միլիոն յոյները, որոնք 70ական թուականներուն ողբացին 70ամեայ եւ 14 հազար տպաքանակ ունեցող «*Աթլանթիս*»-ի կորուստը, այն «*Աթլանթիս*»-ի, գոր յոյները, ինչպէս կ'ըսէ իրենց մտաւորականներէն մէկը՝ «Սուրբ գիրքի պէս կը պահէին իրենց բարձերուն տակ»:

Նման առիթով մը «*Հայրենիք*» օրաթերթը կը հաստատէր, թէ՛

«...Քանզուող ամէն մէկ տաճարի հետ, աւերուող ամէն մէկ դպրոցի հետ եւ առաթուր փճացող ամէն գիրքի ու թերթի հետ բան մը կը պակսի մեզմէ»:

Կրկնելով ըսենք, որ միայն գաղթական զանգուածներուն համար չէ, որ թերթը սրբազան թուրթերու համագոր արժէք մը ունեցած է եւ ունի, եւ անոնց պակասը բան մը կը պակսեցնէ միայն տարագիրներու հոգիներէն, այլ նոյնպէս կը մտածեն ու կ'ապրին նաեւ կայուն սահմաններու ու մշակութային վիթխարի ժառանգութիւններու տէր ժողովուրդներուն զաւակները, որոնց համար կենդանութեան նշան է թերթի մը ներկայութիւնը, ու բացակայութիւնը՝ խորացող կակիծ:

70ական թուականներուն, «*Փարի Փրես*»-ի դադրեցման առիթով, ֆրանսացի մտաւորական Ժան Շոճիէ կը գրէր.

«Վստահ ենք, որ այս գիշեր քանի մը հազար ընթերցողներ, որոնք, հակառակ բոլոր ելեւէջներուն, կապուած են «Փարի Փրէս»-ին, անիրաւուած պիտի զգան իրենք գիրքնք. իսկ պաշտօնակիցներուն համար «Փարի Փրէս»-ի անհետացումը պարզ դիպուած մը չէ: Ինչ որ կը կորսնցնեն անոնք՝ գիտական աշխատանոց մըն է, որ հրապարակագրական գետնի վրայ իրենց բերած էր բազմաթիւ գաղափարներ»:

Անշուշտ ճիշդ կ'ըսէ ֆրանսացի մտաւորականը, ու հարկ չկայ մանրելու անոր մտածումները այն մասին, որ թերթ մը գաղափարներու ծընուցիչ աղբիւր է, եւ խաւարող իրաքանչիւր թերթի հետ կը խաւարին նաեւ նոր յղացումներու կարելիութիւններ, խոհեր, սուզումներ, ճախարանքներ, պատկերներ ու ոճեր, պակսելով ընթերցողին, հետեւաբար մշակոյթին, հետեւաբար տուեալ ժողովուրդի իմացական զանձարանին:

Նետաքրքրական է կարդալ նոյնօրինակ ուրիշ վկայութիւն մը, դարձեալ ֆրանսական անդաստանէն, այս անգամ «*Փարի ժուռնալ*»-ի փակ-

ման առիթով, «*Թերթի մը մահը*» խորագրին տակ, աշխարհահռչակ ու աշխարհատարած «*Լը Մոնտ*»-ի սրտառուչ սա հաստատումը.

«Երբ թերթ մը կ'անհետանայ, ինչ ալ ըլլայ անոր տեսակը եւ ոճը, միշտ արտայայտութեան ազատութեան մասնիկ մըն է, որ կը մեռնի»:

Ինչպէս լռելեայն ըսել ուզուեցաւ, «արտայայտութեան ազատութեան» մեռնող մասնիկներուն ողբերգութիւնը անծանօթ չէր մեզի, հոն՝ հայրենի սահմաններուն մէջ բռնութեան, իսկ հոս՝ տնտեսական տագնապներու կամ մտաւորական ուժերու սովին հետեւանքներով, բայց ո՞վ կրնար մտքէն անցընել, որ հանրաքուէով իր երազած ազատութեան տիրացած ժողովուրդին առաջին նախագահը, առանց համոզիչ նախադրեալներու, յանկարծ դադրեցման հրամանագիրներ կը ստորագրէ ա՛նգամ մարզական թերթերու, ա՛նգամ կնոջական թերթերու, ա՛նգամ գրական հանդէսներու դէմ:

Եւ ահա այսպէս, հայ մասնույի 200ամեակի հանդիսութիւններ հազիւ ասարած՝ անոր անդամներէն մէկ խումբին վրայ կ'իջնէ հարուածը, այն ալ Լուսաւորչի աստղին տակ, Սուրբ Մեսրոպի կոխած վայրերուն մէջ, Եռագոյնի ծփանքներուն ներքեւ:

Երեսոյթը աննախընթաց է իրապէս:

Մեր թերթերը հրամանագրով դադրեցնող անձնաւորութիւնը, ինչպէս նաեւ նոյն օրգաններուն ի պաշտօնէ տիրութիւն ընելու կոչուած միւսները անծանօթ չեն մեր ժողովուրդին:

Մտաւորական անձ է հրամանագրող նախագահը ինք:

Արձակագիր է՝ նոյն թերթերը թալաններու համար ոստիկաններ ճամբայ հանող ներքին նախարարը:

Արձակագիր է նորէն՝ մամուլը ընդհանուր պատասխանատուութիւնը իր ուսերուն վերցուցած անձը:

Ու բանաստեղծ է լուսաւորութեան նախարարը:

Ասոնք լուսասփիտ այդ բեմերը պաշտպանելու ու ծաղկեցնելու դեր մը ունին, մինչդեռ ձեռք ձեռքի տուած՝ մտքի այդ ճրագներուն դէմ ահաւասիկ կը յղանան ու կը գործադրեն բռնութիւն մը, որ չի կրնար արձանագրուիլ պատմութեան լուսաւոր տոմարներուն մէջ:

Սփիւռքի մէջ մենք ապրած ենք փորձառութիւն մը, որ զարմանալի գուգահեռ մը կը կազմէ հատուածական այս վերաբերումին հետ, այն՝ որ եղած են ուսուցիչներ, որոնք իրենց ասպարէզին ամբողջ երկայնքին պայքար մղած են հոգաբարձուներու կամ հոգաբարձուներու պաշտօնով գործող խմբակցութիւններու նեղմտութեան, ժլատութեան, առտնին բանսարկութիւնները դրօշակի վերածած մտայնութիւններու դէմ, բայց երբ ասպարէզէն քաշուած են անոնք ու, ի չգոյէ քարտուղարներու, տեղ տըրուած է իրենց նոյն մարմիններուն կողքին, հոգաբարձուներու դէմ ընդվզման համբաւ ունեցող, այլ յաջող օրը իբրեւ հոգաբարձու հանդէս եկող նոյն անձերը դարձած են ուսուցիչներուն ամէնէն կատարի հալածիչները, չըսելու համար պատուհասները:

Գորբաչովեան հրապարակայնութենէն առաջ, գրող, արուեստագէտ, մշակութային գործիչ եւ ասոնց շաւիղներէն ընթացող միա բոլոր տարրերը, եւ անոնց շարքին անտարակոյս այսօր պետական պաշտօններ վարող վերոյիշեալ մտաւորականները, ազատ խօսքի կարօտ մը մրրկած, անպայման լուռ կամ բարձրաձայն պայքար մղած են բռնաւոր իշխանութիւններու դէմ եւ իրենց ազատ ճախրանքներուն ու սուզումներուն համար երազած են բարենպաստ օրեր, բայց այն պահուն, երբ իրենք անցած են իշխանութեան գլուխը, ուսուցիչներու թշնամի նախկին ուսուցիչներուն պէս դարձած են ահաւասիկ ազատ խօսքի առաջին թշնամիները:

Մենք խորապէս կը ցափնք, որ մամլոյ մեր պատմութեան մէջ դարաւոր ոսոխին արձակած խորշակներէն եւ արդէն անյայտ համայնավարներու գործած յայտնի չարիքներուն վաղորդայնին, հայրենի մտաւորական աշխարհին մէջ ծանօթ անունները հայ մասնուի այս կամ այն անդամը հարուածելու հերոսութեան կը ձեռնարկեն: Լռելեայն կը հասկցուի, որ մենք չենք հաւատար խնդրոյ առարկայ թերթերուն դէմ այնքան հապաճեալ խմբագրուած մեղադրանքներուն ճշմարտութեան: Արտասահմանեան աղբիւրներէ նպաստ ստանալու փաստը բաւարար երաշխիք մը չէ հաստատելու համար, որ մարդիկ այդ միջոցին դիմած են դաւեր նիւթելու համար Հայաստանի ու հայ ժողովուրդին դէմ: Չմանրամասնենք: Հաւաստի երաշխիք չէ:

Հրամանագրով դադրած թերթերը օր մը կրնան վերստին շունչ առնել, վաղը, գալ տարի, տարիներ ետք, իրենց փոխարէն կրնան ուրիշներ հրապարակ գալ, կու գա՞ն անպայման, նոյն պապակներով, նոյն խօսքով, հայրենիքին ու ժողովուրդին լաւագոյնը բաղձալու նոյն կիրքով, ու կը լեցնեն հրամանագրով ձգուած պարապը, պատմութեան մէջ, սրտերուն մէջ, բայց այն ատեն ի՞նչ պիտի ըլլայ արդեօք հանգամանքներու ժամանակաւոր ուժով անոնց դէմ գրոհած անձերուն վիճակը կամ վիճակը չէզոք մնացած ուրիշներու: Եղածը ջնջուելիք մեղք մը չէ ու մամլոյ մեր պատմութիւնը իր էջերուն ընդմիջտ արձանագրած պիտի պահէ աննախընթաց այս վերաբերումը ու պիտի արձանագրէ թրքական եաթաղանին ու բուլղարիկեան սանգաղին տակ դադրած թերթերու պատմութեան կողքին, անշուշտ քիչ մը աւելի սեւ գիրերով:

Հրամանագրով դադրած թերթերուն ընդհանուր կեցուածքին մէկ հասարակ յայտարարը արձանագրելու համար նաեւ «Բագին»ի մէջ, դիմացի էջին կ'արտագրենք Հայաստանի Գրողներու Միութեան պաշտօնական ամսագիր «Նորք»ի «Բողոքի գիր»ը:

ԲՈՂՈՔԻ ԳԻՐ

*Հայաստանի Հանրապետութեան ներքին գործերի նախարար
Պարոն Վանօ Միրադեղեանին,
Հայաստանի հանրապետութեան Ազգային Անվտանգութեան
Պետական վարչութեան պետի պաշտօնակատար
Պարոն Դաւիթ Շահնազարեանին,*

Սոյն թուականի Դեկտեմբերի 29ի լոյս 30ի գիշերը խուզարկութիւն է կատարուել Հայաստանի գրողների միութեան «Նորք» գրական հանդէսի խմբագրատանը: Առգրաւուել է խմբագրութեան ունեցուածքը. համակարգիչ, գրամեքենաներ, չիրկիզուող պահարաններ, ձեռագրեր: Կնքուել է առայսօր ոստիկանութեան կողմից հսկում է խմբագրութեան տարածքը:

Փաստօրէն, անորոշ ժամանակով խափանուել է հանրապետութեան միակ գրական հանդէսի բնականոն աշխատանքը: Հանդէս, որ մինչեւ այժմ իր էջերը տրամադրել է միայն գեղարուեստական գրականութեանը եւ գրականագիտական յօդուածներին, տպագրել հայ գրողների նոր ստեղծագործութիւնները, ընթերցողին վերադարձրել դասական գրականութեան յանիրաւի մոռացուած էջերը:

Հարց է ծագում. ինչո՞վ է հիմնաւորուած մեր գրական մշակոյթին հաւատարմօրէն ծառայող հանդէսի հանդէպ կիրառուած այդ յոյժ անարդարացի գործողութիւնը, որի ընթացքում խմբագրութեանը հասցուել է նիւթական զգալի վնաս: Ի՞նչ ճակատագիր է սպասում բազմաթիւ գրողների նոր ստեղծագործութիւններին, որոնք շարուած, խմբագրուած եւ սրբագրուած լինելով պէտք է լոյս տեսնէին «Նորք»ի երրորդ, չորրորդ, հինգերորդ եւ վեցերորդ համարներում: Մինչդեռ բոլոր այդ նիւթերը շարունակող համակարգչային տիպէթները այժմ գտնուում են կալանքի տակ:

Հայաստանի Գրողների Միութեան Վարչութիւնը խոր մտահոգութեամբ բողոք է արտայայտում այս տագնապալի իրողութեան կապակցութեամբ: Մենք ցանկանում ենք հաւատալ, որ Ազգային Անվտանգութեան Պետական Վարչութիւնը եւ ներքին գործերի նախարարութիւնը կարճ ժամանակում հնարաւորութիւն կը ստեղծեն վերականգնելու «Նորք»ի գործունէութիւնը՝ վերադարձնելով բոլոր առգրաւուած արժէքները, մասնաւորապէս համակարգիչը եւ գրական նիւթերը, ինչպէս նաեւ կը հատուցեն նիւթական այն վնասները, որոնք հասցուել են «Նորք»ի խմբագրութեանը (ջարդուած դրներ, եւայլն):

Հայաստանի Գրողների Միութեան Վարչութիւնը յոյս է յայտնում, որ համագրային շահերին որդեգրուած մեր գրական ընտանիքը զերծ կը պահուի այլևայլ շահարկումներից, իսկ գրական մամուլը կը շարունակի ազատօրէն ծառայել իր առաքելութեանը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐԻ
ՄԻՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ**

Նախապաշարներու հետքերով



Ժանն Տիվալ

Գրականութեան պատմութենէն ու բացատրական ընթերցումներէն գատ կայ երկու այդ եղանակներէն նրբերանգներով գանազանուող երրորդ կերպ մը, որ կը նպատակադրէ բանալ վարագոյրը ակնարկութիւններուն վրայէն եւ յայտնարեցել գործող անձերուն նախատիպարները:

Օտար գրականութիւններու շարքին՝ մեզի քիչ մը աւելի ծանօթ քրեանսական գրականութեան մէջ ամէնէն շատ մեկն հոսեցուցած նախատիպար-

ներէն ուշադրութեան յանձնելու համար միայն երկուքը, յիշեմք Շարլ Պօտլերի «Չարի ծաղիկներ»ուն բնարական հերոսուհիներէն առաջինը՝ Ժանն Տիվալ, եւ Ալեքսանդր Տիւմա Որդիի «Քամելիա-զարդ Տիկինը» խորագրեալ վէպին հերոսուհին, որ աւագանի անունով կը կոչուէր Մարի Տիվիւտի:

Ամբողջ աշխարհի գրասէրներուն քաջածանօթ Պօտլերի Ժանն Տիվալի ու Ալեքսանդր Տիւմա Որդիին Մարի Տիվիւտի կողքին՝ հետաքրքրական պիտի ըլլար թերեւս յիշել մեր գրականութենէն երկու եւ միայն հայ մարդուն ծանօթ հերոսուհիներ, - Մկրտիչ Պէշիկ-Քաշլեանի՝ «Յետին հառաչներ» բանաստեղծութեան Հրանոյշը եւ Ակսել Բակունցի «Ալպիական մանուշակ» պատմուածքին «բարակ մէջքով եւ քարճրահասակ» կինը, որոնց նախատիպարներէն առաջինը կը կոչուի Սրբուհի Տիւսար, եւ երկրորդը՝ Ժենիա Գիւզալեան:

Գրական անունով կնքուած հերոսներուն թիւը քիչ մը աւելի անեցնելու համար կարելի է նոյնպէս յիշել՝

Ահարոնեանի «Խալը» (նահատակ Նահապետ Եղիայեան):

Ե. Զարեանի «Երկիր Նայիրի»ի Մագուրի Համոն (Համագասպ Նուրհատեան):

Այլաբանական ոգով ու փոխանուններուն հիսուած այս առանձին գործերէն գատ, հայ գրականութիւնը կը հաշուէ նոյն սկզբունքներով սկսած ու աւարտած շարք մը ծաւալուն գործեր, որոնց հանրածանօթները կը կոչուին՝

«Կեղծ հանճարներ» (Տիկին Զապէլ Եսայեան):

«Անցորդը եւ իր ճամբան» (Կոստան Զարեան):

«Ծաղկած փշալարեր» (Գուրգէն Մահարի):

«Մահուան տեսիլ» (Եղիշէ Զարինց):



Մարի Տիվիւտի

Այս գործերուն «գաղտնիքներով» գրադած է հայ միտքը ու այսօր պարզ ընթերցողն անգամ կը ճանչնայ «Կեղծ հանճարներ»ուն Տիւմա Զարեանը (Տիւմա Զարեան):

«Անցորդ»ին ամերիկահայ գրողը (Վահան Թոթովեց):

«Ծաղկած փշալարեր»ու «ակնոցաւոր օճը» (Լարենտի Բերիա) եւ

«Մահուան տեսիլ»ի «բոնակալ Արֆայի արիւնից» բաժակ մը ըմպելու ուխտ ըրած մեծախոռով ուխտադիրը (Քրիստափոր Միքայէլեան):

Վերոյիշեալ չորս գործերուն սկզբունքներով կառուցուած մեզի ծանօթ հինգերորդ ստեղծագործութիւնը Յ. Օշականի «Մահակ Պարզեւեան» վէպն է, որ հիսուսեցաւ երեսնական թուականներուն, լոյս տեսաւ ուղիղ յիսուն տարի ետք, նախ՝ «Բագին» ամսագրի էջերուն (1982-



Սրբուհի Տիւսար



Ժենիա Գիւզալեան

1984) եւ ապա՝ առանձին հատորով (1985):

«Մահակ Պարգեւեան» վեպը, որ ըստ հեղինակին կը ձգտէր իմացական ու կենցաղային հանգոյցներու վրայ գործող տիպարներուն միջոցով տալ արեւմտահայուն քաղաքային կեանքը, մեծատաղանդ գրագէտին միւս գործերուն պէս ունեցաւ սակաւաթիւ ընթերցողներ միայն եւ մարդիկ բնաւ փոյթ չըրին առանձին հետաքրքրութեամբ մը հետեւելու գործող անձերուն յորդահոսան տագնապներուն, թռիչքներուն, անկումներուն, սէրներուն, ատելութիւններուն, յուսա-

րեկութիւններուն, խուսափումներուն ու մերձեցումներուն:

Հետագայ էջերուն «Բագին»ի լոյս ընծայած աշխատանքը ակնարկութիւնները պարզելով ու նախատիպարները յայտնաբերելու նիգով «Մահակ Պարգեւեան» վեպը ընթերցողին աւելի մատչելի դարձնելու փորձ մըն է, որ, անշուշտ, բնաւ յաւակնութիւն չունի բոլոր հարցերուն վրայ լոյս նետած եւ գործող բոլոր տիպարներուն աւագանի ինքնութիւնը ստուգած ըլլալու: Մեզի համար դժուար էր մասնաւորաբար ճշդել իրականութիւնը վեպին մէջ լայն տեղ գրաւած գործի մարդոց, որոնց վաւերականութիւնը բնաւ կասկածի տակ չէ, այն հաւաստիքով մանաւանդ, որ Օշականի «հանդերձած» բոլոր տիպարները օր մը ապրած են մեր մոլորակին վրայ:

«Մահակ Պարգեւեան» վեպին առիթով կատարուած այս աշխատանքէն ետք, մեր հնարաւորութեան սահմաններուն մէջ՝ մենք պիտի փորձենք վերծանել նաեւ այլաբանական սկզբունքներով հիւսւած վերոյիշեալ գործերը:

«Բագին»ի Յուլիսի համարին մէջ պատկերագարդ նոյն ոճով պիտի ներկայացուի Եղիշէ Զարեանի «Մահուան տեսիլ» պոեմը:

ՎԵՐԾԱՆՄԱՆ ՓՈՐՉԵՐ

3. ՕՇԱԿԱՆԻ «ՍԱՇԱԿ ՊԱՐԳԵՒԵԱՆ» ՎԷՊԻՆ ՄԷՋ

«ԱՐԵՒՍՏԱՀԱՅ ՄԵԾԱԳՈՅՆ ՊԱՐՍԱՒԱԳԻՐԸ»...

Արեւմտահայ մեծագոյն պարսաւագիրը, գրագէտ, հրապարակագիր, ազգային գործիչ, յեղափոխական, նորավիպագիր, ուղեւոր ու հին ու նոր աշխարհին մէջ մեր մամուլին ամէնէն պատկառելի ու արժանափառ աշխատողը՝ ամբողջ քառորդ դար: Դժբախտաբար այս վէպին համար անոր գրագէտի տուրքերը չեն առաջին գիծի, որպէսզի այդ լոյսին մէջ կարելի ըլլար զետեղել լիութիւնը սա մասնակարին: Այս վէպին համար անկեղծ իր ոչ-գրական տուրքերովը կը դառնայ ուշագրաւ, տուրքեր՝ որոնք հատորի ընթացքին պիտի իյնան վերլուծումի:

(էջ 50)

* * *

«Մահակ Պարգեւեան» վէպին գլխաւոր հերոսը՝ գրական անունով Սուրէն Պարթեւեան, վերջին անգամ Եգիպտոս եղած է Յ. Օշականէն երեք-չորս տարի առաջ, սիրային վերջին արկածախնդրութեան ժամանակ, թերեւս ալ նոյն շարժառիթով: Այդ տեղափոխութեան մասին կայ վկայութիւնը «Յուսարբեր» երկօրեային, ուր արձանագրուած է. «Աղէքսանդրիայէն մեզի կը տեղեկացնեն, թէ Պ. Պ. Սուրէն Պարթեւեան, նախկին խմբագրապետ, եւ Հայկազ Հապէշեան, վաղեմի աշխատակից «Յուսարբեր»ի, Ծարաթ օրը Աղէքսանդրիա ժամանած են Պոլսէն» (16 Նոյեմբեր 1920):



Սուրէն Պարթեւեան

ՍՈՒՐԷՆ ՊԱՐԹԵՒԵԱՆ

Խմբագիր, Հրապարակագիր, պարսաւագիր, վիպագիր ու թատերագիր: Աւագանի անունով՝ Սիսակ Պարաիզպանեան: Ծնած է 1876ին, Պոլիս:

Սուրէն Պարթեւեան կրթութիւնը կը ստանայ Պոլսոյ Պէրպէրեան եւ Կեզրոնական

վարժարաններուն մէջ: Համիտեան ջարդերու տարին (1896) խուսափելով բռնութիւններէն, կ'անցնի Եւրոպա: 1903ին՝ Միացեալ Նահանգներ, 1908ին՝ Թուրքիա, ապա՝ Եգիպտոս:

1898ին, Մանչեսթրի մէջ կը խմբագրէ «Վաղուայ ձայնը», Լոնտոնի մէջ՝ «Նոր կեանք»ը, Ամերիկայի մէջ՝ «Ձայն հայրենեաց» եւ «Ազգ» թերթերը, Եգիպտոսի մէջ՝ «Հոսանք» եւ «Յուսաբեր», Իզմիրի մէջ՝ «Դաշինք»: Խմբագրած է նաեւ «Անապատին յուշարձանը» անուն թերթ մը:

Սուրէն Պարթեւեան հատորով լոյս ընծայած է «Քայքայում» (1895), «Խարազան» (1901), «Հայուհին» (1909), «Կիլիկեան արհաւիրք» (1909), «Անմահ բոցը» (1917):

Սուրէն Պարթեւեանէն զատ օգտագործած է նաեւ Ս. Պարթեւ եւ Տէրունի գրական ծածկանունները:

Մեռած է Եգիպտոս, 1921ին:

«ՆԵՂՈՍԵԱՆ ՏԱՐԵՑՈՅՑ»ՆԵՐԸ...

...Իրմէն ատի ձանձրացուցած ըլլալու էր իր ազգակիցները, որոնք «յաւիտենական անասուններ», անկարող գնահատելու անոր մեծ տաղանդը, ա՛լ առջի դիրութեամբ չէին գներ Սահակ Պարգեւեանի «Նեղոսեան տարեցոյց»ները, լեցուն՝ այնքան գեղեցիկ, շինիչ յօդուածներով, գիտելիքներով, նկարներով ու վճարուած... դիմաստուերներով, վաճառական կամ պաշտօնեայ դասակարգէն, դրամին լուծոյթովը գոյնի բարձրացած:

(էջ 11)

Սահակ Պարգեւեանի «Նեղոսեան տարեցոյց»ը վիպական վերանուանումն է Սուրէն Պարթեւեանի «Եգիպտոսահայ տարեցոյց»ին, որուն առաջին հատորը լոյս տեսաւ 1914ին եւ շարունակուեցաւ յաջորդաբար հինգ տարի, միջին հաշուով 200 էջերու սահմաններու մէջ:

Annuaire des Arméniens d'Egypte

ԱՌԻՐԷՆ ՊԱՐԹԵՎԵԱՆԻ

ԵԳԻՊՏԱՀԱՅ

ՏԱՐԵՑՈՅՑԸ

Ա. ՅԱՐԻ

1916

ԳՅՄԻՐ ԲԱՐՔԱ Ն. ՊԻՐՊԵՐՍԻ ԳՅՄԻՐԷ

«ԱՌԱՋՆՈՐԴ»...

Անիկա «կուտ կ'ուտէր երկինք կ'ելլէր» ու կը խարանէր «գորս դու պատուիրեցեր» առաջնորդ ու անոր վրայով ամբողջ «փերեզակաշին», «սուտակասպաս» սա մտայնութիւնը, որ պաշտօնապէս կը նուիրագործէր արեւելահայ գերագահութիւնը մեր ժողովուրդին միտքին ալ վրայ, այն ոգիին, որուն դէմ իր փառաւոր պայքարը չուներ մեղմացում եւ զոր պատասխանատու կը ճանչնար հայութեան գերագոյն Աղէտին...

(էջ 13)

Գրագէտ, բանաստեղծ, խմբագիր եւ գործի սապարէզներուն մէջ աչքառու իր միւս հերոսներուն պէս՝ Օշական անձնապէս կը ճանչնար նաեւ իր եկեղեցական հերոսը, Թորգոմ Եպիսկոպոս Գուշակեան, որ, «Մահակ Պարգեւեան» վէպին ընդգրկած ժամանակին կը վարէր Եգիպտոսահայոց առաջնորդութիւնը:

Այդ ծանօթութիւնը, որ կը սկսի Արմաշէն, բարեկամութեան վերածուեցաւ Եգիպտոսի երկինքին ներքեւ եւ փոխադարձ հիացումներու մակարդակի մը բարձրացաւ Երուսաղէմի մէջ, երկարելով քառասուն տարիներու վրայ, Օշականի ուսանողութեան առաջին օրէն (1899) մինչեւ լուսահոգի պատրիարքին վախճանը (1939):

Թորգոմ պատրիարքին մահուան առիթով, պատրիարքարանի «Միոն» պաշտօնաթերթին մէջ, Օշական երկարաշունչ յօդուածով մը անդրադարձաւ անհետացող եկեղեցականին անձին ու վատականին, իսկ անկէ քանի մը տարի ետք գրի առաւ անոր նուիրում 70 էջոնց մեճագրութիւն մը, որ լոյս տեսաւ «Համապատկեր»ի եօթներորդ հատորին մէջ, 1979ին, Անթիլիաս:

ԹՈՐԳՈՄ ԱՐՔ. ԳՈՒՇԱԿԵԱՆ

Ուսուցիչ, քարոզիչ, թարգմանիչ, խմբագիր, հրապարակագիր, բանաստեղծ, գրագէտ եւ նշանաւոր եկեղեցական Թորգոմ արք. Գուշակեան ծնած է 1874ին, Պարտիզակ: Հինգ տարեկանին յաճախած է գիւղին Ներսէս-Շուշանեան ազգային նախակրթարանը, որուն ընթացքը աւարտելէ ետք, յաճախած է Արմաշի դպրեմանքը, ուր ուսուցիչ ունեցած է Մաղաքիա եպս. Օրմանեան եւ Եղիշ վարդապետ Դուրեան:



Թորգոմ արք. Գուշակեան

Կը հմտանայ հայերէն, թրքերէն, ֆրանսերէն եւ անգլերէն լեզուներուն եւ այդ լեզուներով դասախօսութիւններ կու տայ տարբեր երկիրներու մէջ:

1897ին կը ձեռնադրուի վարդապետ, հինգ տարի ետք՝ ծայրագոյն վարդապետ: Առաջնորդի պաշտօններ կը վարէ յաջորդաբար Սեբաստիոյ, Եօզղատի եւ Տիգրանակերտի թեմերուն: Երկու անգամ (1907 եւ 1911) կը մասնակցի Ամենայն Հայոց կաթողիկոսի ընտրութեան: Տեղապահի պաշտօնով կ'այցելէ Վան եւ Եգիպտոս:

1 Մայիս 1914ին կ'ընդունի Եգիպտոսի տեղապահութիւնը, իսկ նոյն տարւան Յունիս 28ին կ'ընտրուի Եգիպտոսի առաջնորդ, պաշտօն մը, զոր կը վարէ մըրող 17 տարի՝ մինչեւ 1931:

1916ին Ամենայն Հայոց կաթողիկոս Գէորգ Ե. զինք նուիրակ կը կարգէ եւ այդ պաշտօնով կ'այցելէ Հնդկաստան, Պիրմանիա, Ճապա, Մալայեան ցամաքակղզի, Սէլէպէսթ, Աուսթրալիա, Եթովպիա, Սուտան: Այդ բոլոր երկիրներուն ու քաղաքներուն մէջ կը կազմակերպէ ու կը կանոնաւորէ եկեղեցական ու ազգային կեանքը: 1931ին կ'ընտրուի Երուսաղէմի պատրիարք:

Հրատարակած է թարգմանական, ուսումնասիրական ու բանաստեղծական շարք մը գործեր:

Վախճանած է 10 Փետրուար 1939ին:



«ԱՐԵՒԵԼԱՆԱՅ ԱԶՆՈՒԱԿԱՆ ԹԱՏԵՐԱԳԷՏ-ՎԻՊԱԳԻՐԸ»...

«Կերպասեղիմաց» մեծ վաճառատունը իրաւունք չունէր օթեակով մասնակցելու «նոր» այդ ներկայացումին, քանի որ մօտաւոր անցեալին մէջ թիկնաթոռ միայն վարձեր էր Սահակ Պարգեւեանի հեղինակութեամբ, անցեալ տարի, յաջորդաբար բեմադրուած մէկ ողբերգութեան: Վաճառատունը մերժեր էր, որովհետեւ քաղաքին առաջնող սրբազանը «սքեմաձիգ» իր միջամտութիւնն էր գործադրեր փաթորման մօտ, քչելու համար տոմսակը այդ շաբթուն տեղի ունենալիք ուրիշ ներկայացման մը, «ի նպաստ» արեւելահայ անգուգական թատերագետ-վիպագիրի մը, որ «գալիս էր» պատմական Արարատին ողջունները բաշխելու իր «սիրելի զաւակներուն», յաղթական ու շոյուած, սկսելով Պոլիսէն, Իզմիր, Եգիպտոս...

(Էջ 13)

«Սահակ Պարգեւեան» վէպին մէջ յաճախ երեւցող արեւելահայ անգուգակն թատերագետ-վիպագիրը, որ յայտնապէս Շիրվանզադէն է, Գահիրէ եղած է «Սահակ Պարգեւեան» վէպի ժամանակին զուգահիւսող շրջանի մը: Այդ մասին ունինք նաեւ «Յուսաբեր» երկօրեային լոյսընծայած սա լուրը. «Այսօր ժամը 3:30ին կառախումբով քաղաքս»

ժամանեց Պ. Շիրվանզադէ, ընկերակցութեամբ իր շնորհալի դուտեր»- (29 Յունուար 1920):

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՇԻՐՎԱՆԶԱԴԷ



Ալ. Շիրվանզադէ

Վիպագիր, թատերագիր ու յօդուածագիր Ալեքսանդր Շիրվանզադէ ծնած է 7 Ապրիլ 1858ին, Շամախի: Յաճախած է տեղւոյն հայոց թեմական եւ ռուսական գաւառական դպրոցները: Ուսումը կիսատ ձգած՝ 1875ին մեկնած է Բաքու, ուր ութ տարի աշխատած է նահանգային վարչութեան ատեաններու, նախապէս գրասենեակներու եւ զանազան ընկերութիւններու մէջ իբրեւ գրագիր ու հաշուապահ: Այդ տարիներուն կը սկսի թղթակցել կովկասեան թերթերուն՝ ռուսերէն լեզուով: 1883ին «Մշակ»ի մէջ կը տպուի իր առաջին պատմուածքը՝ «Հրդեհ նախագործարանում», ապա՝ «Գործակալատարի յիշատակարանից» վիպակը:

1883ին կ'անցնի Թիֆլիս եւ բարեկամութիւն կը մշակէ հայ գրողներու եւ մտաւորականներու հետ: 1898ին իբրեւ հնչակեան կը ձերբակալուի ցարական կառավարութեան կողմէ եւ մէկ տարի կ'աքսորուի Օտեսա, ուր կը գրէ «Արտիստը» վիպակը:

1905ին Եւրոպա անցնելով՝ ընտանեօք կը հաստատուի Փարիզ եւ կը հետեւի Սորպոնի գրականութեան եւ պատմութեան դասընթացներուն՝ իբր ազատ ունկնդիր: Փարիզի մէջ կ'ապրի հինգ տարի եւ կը գրէ «Աւերակի վրայ» եւ «Շառլատանը» գործերը:

1917ին կը վերադառնայ Հայաստան, ուր կ'ապրի երկու տարի, իսկ 1919ին կրկին կը հեռանայ կովկասէն ու կը շրջի Ասիոյ, Եւրոպայի եւ Ամերիկայի քաղաքներուն մէջ: 1926ին կը վերադառնայ եւ վերջնականապէս կը հաստատուի Խորհրդային Հայաստան, ուր կը մնայ մինչեւ կեանքին վերջը:

Իր գլխաւոր գործերն են «Նամուս» (1885), «Արսէն Դիմաքսեան» (1893), «Բառս» (1898) եւ «Պատուի համար» (1905):

Մեռած է 7 Օգոստոս 1935ին, Կիսլովոդսկի մէջ ու թաղուած է Երեւան:



«ՊԱՐԳԵՒԵԱՆԸ՝ ՀՈՎԻԵԱՆԷՆ»...

Ու կ'ողբար իր ալ տաղանդը, որ առակին խոտին նման մանիշակներու փունջի մը պէս կը դատուէր ինկած: Օ՛, իր սրբազան գայրոյթը՝ ինքզինքը զատ, դուրս դնելու իր սերունդէն: Ու կը «խարազանէր» անլուր պերճութեամբ, անկարելի անգթութեամբ բոլոր յաջողածները: Օրե՛ր: Տարիներ:

—Դո՞ւմ ժողովուրդ...
Որ չէր կրցած սելը գատել ճերմակէն, տաղանդը՝ քաղաքավարութեան տուիքներէն, ոճը՝ բառակոյտէն, Պարգեւեանը՝ Հովիւեանէն — ոխերիմ հակառակորդ, այս վերջինը, ճարտար, յամառ, «փերեզակ», բայց ճամբան շինող ու «ազգային բանաստեղծ», «հոյակապ վարպետ» տիտղոսները իր շատ մատաղ ու մեծատարած ճակատին վրայ կրելով վայելչութեամբ:

* * *

(Էջ 15)


«...Ու կը խարազանէր»ուն խարազանը կը բացատրուի քիչ անդին, իսկ Պարգեւեանին «ոխերիմ հակառակորդ» Հովիւեան մականունը պարզապէս թարգմանութիւնն է թրքերէն *Չօպանեան*ին, որուն դէմ գրուած է «*խարազան*»ին մեծ մասը:

ԱՐՇԱԿ ՉՕՊԱՆԵԱՆ

Խմբագիր, հրապարակագիր, քննադատ, քրոնիկագիր, արձակագիր, թարգմանիչ ու ընթացող Արշակ Չօպանեան ծնած է 15 Յուլիս 1872ին, Պոլսոյ Պէշիկթաշ թաղը: Նախակրթութիւնը ծննդավայրի Մաքրուհեան վարժարանին մէջ ստանալէ ետք, կը յաճախէ Կեդրոնական վարժարան, ուր տեսուչ կ'ունենայ Մինաս Չերաղը, իսկ ուսուցիչ՝ Թովմաս Թէրզեանն ու Եղիա Տէմիրճիպաշեանը:

Ուսանողական տարիներուն կը սկսի գրական փորձեր կատարել եւ 17 տարեկանին «Արեւելք» թերթին մէջ լոյս կ'ընծայէ իր առաջին գրութիւնը: Կ'աշխատակցի «Բուրաստան մանկանց», «Արեւելք», «Մասիս» եւ «Հայրենիք» թերթերուն:

1893ին, Արշակ Չօպանեան կը մեկնի Փարիզ, ուր սերտ յարաբերութիւններ կը մշակէ իր սիրած Ֆրանսացի յայանի դէմքերուն հետ: Փարիզէն առ յաճախ թղթակցութիւններ կը ղրկէ «Հայրենիք»ին: Վերադառնալով Պոլիս 1894ին կը հիմնէ «Ծաղիկ» թերթը: Յաջորդ տարին, իրաւագէտութիւնը կառավարութեան հետապնդումներէն՝ կը հաստատուի Փարիզ:



Ա. Չօպանեան

Փարիզի մէջ, 1898ին կը սկսի հրատարակել «Անահիտ» գեղարուեստական հանգէսը, որ կ'ունենայ երկու շրջան: Առաջին շրջանը կը տեւէ 1898էն մինչեւ 1911, իսկ երկրորդ շրջանը՝ 1929էն մինչեւ իր մահը:

Արշակ Չօպանեան հատորով լոյս ընծայած է չուրջ տասնհինգ գործեր, որոնց գլխաւորներն են «Թուղթի փառք», «Տղու հոգիներ», «Թրթոմներ», «Դէմքեր», «Կեանք եւ երազ», «Արշալոյսի ձայներ», «Հայրեններու բուրաստան», եւ այլն:

Մեռած է 1954ին, Փարիզ, ինքնաշարժի արկածէ:

✍

«ՊՕՏԼԷՐԻ ՄԷԿ ՀՆՉԵԱԿԸ»...

Անոր մտքին մէջ փոխադրուեցաւ կրկին Պօտլէրի մէկ հնչեակը, գիրքին էջովն ու արցունքէն աղուած տողերովը: Գիտէր գոց: Բայց կը յիշէր միշտ էջով միասին: Կը սիրէր զայն շքեղ իր տրտմութեանը համար: Բայց որուն խոր, մարդկեղէն յուսահատութիւնը հասկնալէ աւելի ընդգգացած էր ասկէ առաջ:

(Էջ 18)

* * *

Պօտլէրի հնչեակը, զոր Սահակ Պարգեւեան կը սիրէր «շքեղ իր տրտմութեան համար», ամենայն հաւանականութեամբ *Semper Eadem* («Միշտ նոյնը»)ն է, անիծեալ բանաստեղծին ամէնէն տխրալիք ստեղծագործութիւններէն մէկը:

Մեր ուսանողութեան տարիներուն, չենք յիշեր որ թերթին մէջ կարդացած ենք «Միշտ նոյնը» քերթուածին թարգմանութիւնը, որուն առաջին եւ 12րդ տողերը այդ օրերէն մնացած են մեր յիշողութեան մէջ, եւ որուն ամբողջութիւնը կը կրէր յամենայնի տանելի թարգմանչական արւեստի մը կնիքը:

Առաջին տողը.

Ուրկէ՞ քեզի, կ'ըսէիր, տրտմութիւնն այս անսովոր,
Ու 12րդ տողը.

Թոյլ տուր ինձի, ո՛վ ազուր, քաղցր սուտով մ'արբենալ...

Պօտլէրի բանաստեղծական աշխարհին մէջ քանի մը թարգմանիչներ խիզախած են, բայց զարմանալի է, որ այս հնչեակը գրեթէ միշտ խուսափած է անոնց ուշադրութենէն: Նոյնիսկ մատի վրայ համբուող վարպետներէն մէկը, Վահան Թէքեան, որ շուրջ 40 կտոր թարգմանած է Պօտլէրէն, կը թուի ձեռնպահ մնացած ըլլալ պօտլէրեան այս գոհարին դիմաց:

«Միշտ նոյնը» հայերէնի վերածած են երկու-երեք հոգի միայն, բայց ստացուած արդիւնքներէն եւ ոչ մէկը կու տայ բնագիրին վայելչու-

թիւնը, ու ճիշդ ատոր համար որոշուեցաւ ուշադրութեան յանձնել բնագիրը:

SEMPER EADEM

**«D'ou vous vient, disiez-vous, cette tristesse étrange,
Montant comme la mer sur le roc noir et nu?»
—Quand notre cœur a fait une fois sa vengeance,
Vivre est un mal. C'est un secret de tous connu,**

**Une douleur très simple et non mystérieuse,
Et, comme votre joie, élatante pour tous.
Cessez donc de chercher, ô belle curieuse!
Et, bien que votre voix soit douce, taisez-vous!**

**Taisez-vous, ignorante! âme toujours ravie!
Bouche au rire enfantin! Plus encor que la Vie,
La mort nous tient souvent par des liens subtils.**

**Laissez, laissez mon cœur s'enivrer d'un mensonge,
Plonger dans vos beaux yeux comme dans un beau songe,
Et sommeiller longtemps à l'ombre de vos cils!**

ՇԱՐԼ ՊՕՏԼԷՐ

Ֆրանսացի հռչակաւոր բանաստեղծ Շարլ Պոտլէր ծնած է Փարիզ, 9 Ապրիլ 1821ին: 6 տարեկանին կը կորսընցնէ հայրը, իսկ վեց ամիս ետք մայրը կ'ամուսնանայ գնդապետի մը հետ: Հակառակ խորթ հօրը փայլուն դիրքին եւ բարեացակամ տրամադրութիւններուն, Պոտլէր բնաւ հաշտ կեանք մը չի վարեր անոր հետ:

1832ին ընտանիքը կը փոխադրուի Լիոն: Գնդապետը զինք կը դնէ գիշերօթիկ վարժարան մը, ուր յաճախ պատիժներու կ'ենթարկուի՝ իբրեւ ըմբոստ աշակերտ: Որոշ ժամանակ մը ետք կը փոխադրուին Փարիզ եւ Պոտլէր ուսումը կը շարունակէ Լուի լը Կրան գոլէճին



Շարլ Պոտլէր

մէջ, ուր քանի մը մրցանակներ կը շահի, բայց անկէ ալ կը վտարուի իբրեւ ըմբոստ եւ անկարգ աշակերտ: Ինքնաշխատութեամբ կը յաջողի Պաքալօրէայի քննութիւններուն:

Իր գրական շեշտուած հակումներուն պատճառով մայրն ու խորթ հայրը կ'ընդդիմանան իրեն: Տասնութ տարեկանին կը լքէ ընտանիքը եւ կը հաստատուի Փարիզի Լատինական թաղը, ուր կ'ապրի ազատ եւ զեխ կեանք մը ու կը վարակուի անբուժելի հիւանդութեան: Հօրենական ժառանգութիւնը մսխելով՝ պարտքերը կը դիզուի: Կը դիմէ անձնասպանութեան: Խորթ հայրը կը փակէ պարտքերը ու կ'ընդունի զինք իրենց յարկին տակ, ուր կը մնայ մինչեւ ապաքինում: 1848ի յեղափոխական մթնոլորտին մէջ կը յարի այդ շարժումին՝ հօրը դէմ պայքարելու մտքով:

Մինչեւ 1857 իր բանաստեղծութիւններուն մեծ մասը ցրուած կը մնան թերթերուն մէջ եւ առանձին անձերու մօտ: Կ'որոշէ լոյս ընծայել հատոր մը, որ կը կոչուի «Չարի ծաղիկներ» (1957): Թերթերուն մեծ մասը, մասնաւորաբար «Ֆիկարօ»ն բուռն յարձակումներու կ'ենթարկեն Պոտլէրի գործը: Իր շարք մը բանաստեղծութիւնները կրօնքին եւ հանրային բարոյականին դէմ համարուելով՝ նոյն տարուան Օգոստոսին կը կանչուի դատարան: Ինք եւ հրատարակիչը կ'ենթարկուին տուգանքի: Դատարանը կ'որոշէ վեց բանաստեղծութիւնները դուրս ձգել «Չարի ծաղիկներ»էն, մինչ հոն խուռուած երիտասարդները կ'աղաղակէին՝ «Կեցցէ՛ Պոտլէրը, կեցցէ՛ Պոտլէրը»:

1866ին, Մէն Լուի եկեղեցին այցելած պահուն, կաթուածահար կ'իյնայ գետին եւ վեց ամիս անկողնոյ ծառայելէ ետք, 31 Օգոստոս 1867ին կ'աւանդէ հոգին:

« ԼՈՐ ՈՐԵՐՈՒ ՊԱՅՐԸՆԸ »...

Սահակ Պարգեւեան երագ էր շինած, համեստուկ ու պարզ: Ունենա՞ր ետխի մը, իր հրամանին, րացուէր ցամաքէն: Ու այդ պուպիկ բանը ովկիանոսին վրայ պտտցներ ձանձրոյթը նոր օրերու Պայրընին:

(Էջ 41)

« ԿԱԼԳԻՏՕՐԷՆ »...

Երբ մէկ կողմէն Տիկին Գոհարեանը քիչ-քիչ կ'ընկրկեր անոր ըզգայարանքներէն, Սոնա Գոհարեանը իր լուսին կը հասներ, իբր դէմք ու իբր հրապոյր: Կա՞պը: Մա՛նաւանդ հիմա, կը հարցնէին ատիկա մարդիկ, հանգիտօրէն, երբ Գահիրէի մէջ տեսան արեւելահայ անգուգական վիպասան-թատերագիրը, որ իր աղջիկը գրեթէ գրկած կը պտտեր

ու «պաշտում» էր իր Ռիթան, նրբաւարտ Մարկըրիթը, իր իսկ հոգիէն բռնած թանկագին ծաղիկ: «Խորտուրորտ» կեղծիքով թատերագիրը ցոյցի՞ էր հանած իր աղջիկը, թէ կը սիրէր զայն: Մարդոց լեզուն ամէնէն անարգ բանն է աշխարհին, անշուշտ Եզրոսէն շատ ետքն ալ:



(էջ 159)

Մարգարիտ Շիրվանզադէ եւ հայրը

* * *

Իրականութենէն վերցուած հերոսներուն շարքին՝ «Սահակ Պարգեւեան» վէպին մէջ միւս ու ոսկորէ կազմուած իրականութիւն մը ունի նոյնպէս Ծիրվանզադէի «կապուտաչուի, նուրբ աղջիկը, Եղնիկ Ռիթան» (18), որ մօրը մահէն ետք՝ հօրը հետ ապրեցաւ անբաժան կեանք մը: 20ական թուականներուն, Ծիրվանզադէի արտասահմանեան շրջապատոյտներուն, Փոքր Ասիայէն մինչեւ Ամերիկա, Աերաւելալ Ափրիկէ, դարձեալ հօրը հետ էր աղջիկը, ինչպէս ցոյց կու տայ քիչ առաջ նշուած «Յուսաբեր»ի ծանուցումը (էջ 59):

* * *

Կան ո՛չ բողոքովին հաստատուած եւ ոչ ալ բողոքովին հերքուած այն տարածաշրջանները, որ Լորտ Պայրըն սիրային մեղաւոր կապեր ունեցած է իր խորթ քրոջ՝ Օկիւթայի հետ:

Տոհմապղծութեան վարկածին հեղինակը կը կարծուի ըլլալ Ռիլերմ Լեմպի կինը՝ Քարոյին, որ ծայրագոյն չափով մը տարուած ըլլալով բանաստեղծին տաղանդէն ու ...«հուրքէն», անկէ մոռցուած ըլլալու մոլուցքին յագորդ տալու համար կը սարքէ դար: Քարոյին Լեմպ բանաստեղծին կիսախելագար կնոջ՝ Լէյտի Պայրընի ականջին կը շնչայ բանաստեղծին ու խորթ քրոջ միջեւ սիրային կապի մը առկայութիւնը եւ այդ չարախօսութիւնը կայծակի արագութեամբ կը տարածուի ամբողջ Անգլիոյ մէջ եւ մինչեւ այսօր կը պահէ իր ուժը...: Կը թուի, թէ մարդոց լեզուն, իրապէս, «ամէնէն անարգ բանն է աշխարհին, Եզրոսէն շատ ետքն ալ»:

Ըստ իր կենսագիրներէն մէկուն՝ տուեալ տարածաշրջանէն վրդոյնուած՝ Լորտ Պայրըն՝ «օրեր շարունակ մտածեց, որ եթէ տարածուած օձային շշուկները իրականութեան հիմ ունին՝ ինքը անարժան է Անգլիոյ,

իսկ եթէ բացարձակապէս սուտ են՝ ուրեմն Անգլիա՛ն անարժան է իրեն»:

Այս խորհրդածութենէն ետքը բանաստեղծը կը հեռանայ Անգլիայէն:

ԼՈՐՏ ՊԱՅՐԸՆ

Բուն անունով ձորճ Նոէլ Կորտըն: Ծնած է 22 Յունուար 1788ին, Լոնտոն, ազնւական ընտանիքի մը յարկին տակ: Ուսումը ստացած է Քեմպրիճի համալսարանին մէջ: 1809էն սկսեալ մաս կազմած է Լորտերու պալատին: Այցելած է Սպանիա, Յունաստան, Իտալիա, Ալպանիա եւ նկարագրած է տեղական բարբերը, բնութիւնն ու պայմանները: Բանաստեղծութիւններով ու պոեմներով միշտ ծառայած է տիրող բռնակալական վարչաձեւերուն դէմ եւ ատոր համար կոչուած է «Համաշխարհային վշտի երգիչ»: 1816ին՝ Պայրըն վերջնականապէս կը հեռանայ Անգլիայէն եւ կը հաստատուի նախ Զուիցերիա, ապա՝ Իտալիա:



Լորտ Պայրըն

1817-1820 թուականներուն կ'ապրի Վենետիկ, յաջորդ տարին կը տեղափոխուի Ռավեննա, ուր մաս կը կազմէ իտալական Կալթոնաբներու կուսակցութեան:

1916ին՝ Պայրըն ապրած է Վենետիկի Ս. Ղազար կղզին եւ սորված է հայերէն: Հայր Աւգերեանի հետ կազմած է դասադիրքեր, ուր զետեղած է հին եւ միջնադարու հայ գրականութենէն նմոյշներ: Իր ստորագրած յառաջաբանին մէջ բարձրացուցած է հայ ժողովուրդի ազատագրութեան խնդիրը: Անգլերէնի թարգմանած է Լամբրոնացիի «Ճարտասանութիւն»ը, Խորենացիի «Հայոց պատմութիւն» գործէն մաս մը, իր «Կայէն» երկին համար օգտագործած է հայկական Աստուածաշունչը, որմէ բաժիններ վերածած է իր լեզուին: 1823ին՝ մեկնած է Յունաստան, մասնակցած է թուրքերուն դէմ խմորուող ապստամբութեան եւ ստանձնած ապստամբ գունդերէն մէկուն հրամանատարութիւնը:

Պայրընի գլխաւոր գործերն են «Մովսիսէն», «Կեսուր», «Ծիլիոնի կալանատորը», «Տասուոյի գանգատը», «Կայէն» եւ «Տոն Ժուան»:

1824 Ապրիլին՝ տենդախտէ կը վարակուի եւ կը մեռնի:

Ճ

«ԸՆԹԱՅԻԿ ՏԱՐԱՋԸ»...

Գրագէտը, փողոցէն դարձին, հանուէր պիտի առանձին, թեթեւաբար՝ փողոցէն, «ժամանակէն ու միջոցէն» ու անցնէր բազմոց, աչքերը փակ՝ անդամելու համար մեծ իր գոյութեան մեծ սա «վրիպումը», նե-

րող ու անկեղծ, ինքն իր դէմ: Այս «վրիպանքը» անոր գրականութեան մէջ ընթացիկ տարագ մըն էր, որով «դասաւորեց» տասը տարի առաջ իր սերունդը, տարածելով իր կործանումը ամբողջ իր ընկերներուն, «հերոսական ու յիմար», ինչպէս կը պատկերէր իր հօօր, համադրող ոճը, երբ յեղափոխութեան խանդավառութեան մէջ հասակ առած միամիտ, մեծ սերունդ մը կը ջախջախուէր իր երագին իսկ մեծութենէն ու ցրի կու գար երոպական մայրաքաղաքները, հոնկէ շարունակելու համար ազատել այս ժողովուրդը:

(Էջ 23)

Ակնարկութիւնը կը վերաբերի «Վրիպած սերունդ մը» անուն գրութեան: Մեծադիր երեք էջոնց յօդուած մըն է անիկա, որ լոյս տեսաւ Մերութեան Պարսամեանի Պոլսոյ «Շանթ» կիսամեայ հանդէսի 1 Նոյեմբեր 1911 թուակիր համարին մէջ:

Համիտեան 96ի ջարդերուն յաջորդող տասնամեակի բերքը, մասնաւորաբար արտասահման ապաստանած մտաւորականներուն ճիգերը խտրազոյն դատաստանի մը ենթարկելէ ետք, «Վրիպած սերունդ»ը կը հասնի Օսմանեան Սահմանադրութեան շրջանը, ուր՝

«Այսպէս, Օսմանեան Սահմանադրութենէն գրեթէ չորս տարի վերջը, թրքահայ մտաւորականութիւնը դեռ չի կրնար ինքզինքը գտնել ու համասեռ, ներդաշնակ ու տեւական դործունէութեամբ մը իր կենդանութիւնն ապացուցել: ... : Իսկ անդին, հանրային մեր առօրեայ կեանքին մէջ, միսիթարական ոչինչ, բացարձակապէս ոչինչ կը հանդիպի մեր տեսութեան՝ որ մեզ արգիլէր թրքահայ մտաւորական ներկայ սերունդին տալէ տապանադրի պէս տրտում սա անունը:

«Վրիպած սերունդ մը»...

✍

«ՏԻՐԱՆ ՏԻՐԱՆԵԱՆ. ԲԱՆԱՍԵՂՄ»...

- Տիրանը կու գայ կոր:
- Տիրանը ո՞վ է:
- Տիրան Տիրանեան. բանաստեղծ:

Տիկին Գոհարեան յիշեց ազնուական երիտասարդը, գաղափարի ընկեր երբեմնի, զոր լքած էր Պարգեւեան իրեն յատուկ վեհափառութեամբ, լքելով նոյն ատեն կուսակցութիւնը, որուն կը ծառայէին առջի երիտասարդութեան օրերէն: Պոլիս տեսնուած էին՝ անոր վարած թերթին խմբագրատան մէջ:

(Էջ 34)

«Սահակ Պարգեւեան» վէպին գործող անձերուն շարքին յատկանշական կողմերով երեւնալու իրողութեան հետ, տարբեր էջերուն վրայ իբրեւ Տիրան Տիրանեան գործող բանաստեղծը Վահան Թէքէեանն է, որ ձեռով մը ինք պատճառ դարձած է Օշականի սոյն վէպի ծննդոցին, հեղինակին իսկ վկայութեամբ, «Համապատկեր» 10րդ հատորին մէջ արձանագրուած հետեւեալ փաստով.

«1933ին «Հայրենիք» հանդէսին խմբագրութիւնը... Վէժմունիին միջնորդութեամբ ուզած էր Օշականէն սանկ՝ չորս-հինգ ֆորմանոց պատմուածք մը: «Մնացորդաց»ի երկունքին տարօրինակ շրջանն էր ատիկա: Օշական ունէր այդ պատմուածքը մտքին մէջ, Վահան Թէքէեանէ պատմուած դրուագ մը, մեր գրողներէն մէկուն կեանքէն: Եւրոպայի մեծահամբաւ ըսուելու մօտ արուեստագէտ մը — դաւակը հայ գրագէտի մը եւ անկէ լքուած ուսանողուհիի մը — եկած էր Գահիրէ իր հայրը ճանչնալու: Վահան Թէքէեան, որքան հաւատարիմ ինծի իմ յիմար յիշողութիւնը, կարգադրած էր հանդիպումը: Ահա դրուագը» (Էջ 144), եւայլն:

ՎԱՀԱՆ ԹԵՔԷԱՆ

Բանաստեղծ, թարգմանիչ, խմբագիր, հրապարակագիր, արձակագիր եւ ուսուցիչ Վահան Թէքէեան ծնած է 21 Յունուար 1878ին, Պոլսոյ Օրթագիւղի մէջ: Նախակրթութիւնը ստացած է Պոլսոյ Ներսէսեան, Պէրպէրեան եւ Կեգրոնական վարժարաններուն մէջ: Ուսումը չկարենալով աւարտել, գրագիրի պաշտօն վարած է առեւտրական հաստատութիւններու մէջ:

1896ին, առեւտրական ընկերութեան մը իբրեւ պաշտօնեայ՝ այցելած է Անգլիա, Ֆրանսա, Գերմանիա, ապա անցած է Եգիպտոս, ուր մնացած է մինչեւ 1908 թուականը:

1905ին, Եգիպտոսի մէջ, Մելքոն Կիւրճեանի հետ հիմնած է «Օիրակ» հանդէսը:

1908ին, Օսմանեան Սահմանադրութեան ատեն, ուրիշ մտաւորականներու հետ կը վերագառնայ Պոլիս, իսկ 1910ին՝ իբրեւ եգիպտահայերու պատգամաւոր՝ կ'երթայ էջմիածին եւ կը մասնակցի կաթողիկոսական ընտրութեան: 1914ին, Պոլսոյ երեսփոխանական ժողովին կողմէ կը ղրկուի Երուսաղէմ՝ պատրիարքա-



Վահան Թէքէեան

րանի հաշիւները քննելու պաշտօնով: Երուսաղէմէն կ'անցնի Եգիպտոս եւ շնորհիւ այդ անդափոխութիւններուն կը փրկուի թրջական եաթաղանէն:

Վահան Թէքէեան խմբագիրի պաշտօններ վարած է «Արեւ», «Ժողովուրդի ձայն» եւ «Զարթօնք» թերթերուն մէջ: Մաս կազմած է նաեւ «Բարձրավանք»ի խմբագրութեան:

Աշխատակցած է «Հայրենիք», «Ծաղիկ», «Մեհեան», «Զուարթնոց» թերթերուն եւ Թէոդիկի «Ամէնուն տարեցոյցը» տարեդիրքերու շարքին:

Վարած է նոյնպէս ազգային պատասխանատու պաշտօններ:

Հատորով լոյս ընծայած է «Հոգիներ» (1901), «Հրաշալի յարութիւն» (1914), «Կէս գիշերէն մինչեւ արշալոյս» (1919), «Սէր» (1933), «Հայերգութիւն» (1943), «Տաղարան» (1945):

Մեռած է 1945ին, Գահիրէ:



«ԳԵՐՄԱՆ ԱԵԾ ՈՒՐԱՅՈՂԸ»...

Անիկա կը պատժուէր զգացումներուն առատութեանը համար, ինչպէս կը յիշէր լսած ըլլալ գրագետին բառերէն, որոնք գերման մեծ ուրացողի մը գիրքէն թատած էին անոր շրթներուն:

(Էջ 37)

Մեծ ուրացողը, առանց այլեւայլի, գերմանացի փիլիսոփայ Ֆրիտրիք Նիցչէն է, որ ծնած է 1844ին, Բէօքլին: Հեղինակը «Այսպէս խօսեցաւ Զարատուստրա» անուն նշանաւոր գործին, որուն գաղափարաբանութիւնը կը յենու մարդը գերմարդու մակարդակին բարձրացնելու միտող հէնքի մը:

Նիցչէ մեծ ազդեցութիւն ունեցած է գերման ազգայնականութիւնը գերիվեր հասարող տեսարաններուն վրայ:

Մեռած է 1909ին:



«ԻՐ ՔՈՅՐԵՐԸ»...

Օր մը, իր քոյրերուն ողբերգութիւնը պատմելու սրտառուչ առաջադրութեամբ ճամբայ ինկած իր գրիչը շկոցաւ երկու էջ պարզ բան դնել մեր աչքին ու արատաորեց դժբախտութիւնը սուրի ու բռնութեան տակ տախտապարուած մեր կիներուն:

(Էջ 55)



Ֆ. Նիցչէ

«ԱՅՈՒՂԻՆ»...

Չուրացաւ հայուհին: Բայց անոր սրբազան, անպաշտպան դրժբախտութիւնը նիւթ ըրաւ զահանդագին, կեղծ, գայթակղութեամբ միայն տպաւորիչ պատմումներու ու երգել կարծած այնքան սրտառուչ մեր սուգը կորակոր լղրճեց ու ըրաւ զագրելի:

(Էջ 81)



«ԱՅ ՕՐԻՈՐԴԸ»...

Անիկա իր տաղանդին սա դժնդակ անհաւատարմութիւնը պատժել էր փորձեր, զայն ստիպելով, բռնի, գրեթէ ծեծի տակ, գրելու պատմութիւններու շարք մը, վերցուած 96ի աղէտէն, բացառաբար կին հերոսներով: Որոնց մէջ կը պատմէր իր շքեղ, ոմմանթիկ ու կեղծ ոճովը — ուրիշ ամէն տեղ, մա'նաւանդ պարսաւ ու յուշագրութեան մէջ անըստըգիտ, կենդանի այդ ոճը Պարգեւեանի ֆեթիշն էր, գիտէք ատիկա — մտացածիւն էակներու գլխուն շատ իրական, քստմնելի պատահարներ, որոնք նոյն այդ ոճին հրաշքովը կ'այլասերէին ու կ'ըլլային անտանելի: «Հայ օրիորդը» իր գրքոյկը փաստ մըն է այս վրիպանքին:

(Էջ 218)

Վերջին տողին մէջ յիշատակուած «Հայ օրիորդը» գրքոյկը անշուշտ վիպականացած անունն է Սուրէն Պարթեւեանի «Հայուհին» խորագրեալ հատորին, որ լոյս տեսաւ 1911ին, Պոլիս: Անիկա կը բաղկանայ 7 պատմութիւններէ ու կը հաշուէ 147 էջ:

Վերի յաջորդական երեք մէջքերումներուն մէջ արձանագրուած տպաւորութիւնները Օշական կըրկանած է նաեւ այլուր ու «Համապատկեր»ի 7րդ հատորին (Էջ 317) մէջ, անողորք վճիռով մը, թէ՛ — Հայուհին մեր մէջ կը սպաննէ հայը:

ՀՐԱՏԱՐԱՎՈՒԹԻՒՆ Պ. ՊԱՒԵՆՅ ԳՐԱՏԱՆ

ՍՈՒՐԵՆ ՊԱՐԹԵՎԵԱՆԻ

ՀԱՅՈՒՂԻՆ

Կ. ՊՈԼԻՍ
ԳՐԱՏԱՐԱՎՈՒԹԻՒՆ Պ. ՊԱՒԵՆՅ
1911

«ԳԱՂԱՓԱՐԻ ԸՆԿԵՐԸ»...

Ան էր, որ դիակը շահագործեց գաղափարի ընկերոջ մը, զոր ուզեր էր իրեն վայելող կանանց ատելութեամբ, ամէն տեղ յարձակելով անոր ստորագրութեան, ինչպէս կուսակցական, յեղափոխական գործին ու դատապարտելով անոր գրական անուրանալի տաղանդը իրեն ընտանի, անողոք, կործանարար գլանակը, չվարանելով երկրորդել անոր թշնամիներէն շրջաբերուած ամբաստանութիւնները, «թուրքին ծախւած» յայտարարելով զայն ու... անոր դիակին վրայ հիւսելով ամէնէն շքեղ ապաթէոզը:

(էջ 62)

Մեր մտքին եղկելի խլեակները, կտրուած իրենց կեդրոնէն, ու նետուած սա անապատը, արգասաւորելու անոր աւագաստանը քարոզութեամբը Բանին: Մէկը անոնցմէ, մեծագոյններէն, որ մեր մեծ գրազէտներէն մէկն ալ է նոյն ատեն, եղերաբախտ իր մահուան ատեն, արիւնոտ իր գրպանէն պատառ մը չոր հաց միայն կտակէր պիտի մեր փաշաներուն միլիոններուն դէմ, մեր ժողովուրդին: Պարգեւեան կ'ոգեկոչէր զայն, կ'արտասուէր անոր արժանիքները...

(էջ 147)

* * *

Իրարու լրացուցիչ վերի երկու հատուածներէն առաջինին մէջ ուր-ւագծուած «թուրքին ծախուած» մարդը եւ երկրորդին մէջ նկարագրուած գրազէտը նոյն անձնատրոսիւնն է, Արփիար Արփիարեան: «Եղերաբախտ իր մահուան ատեն, արիւնոտ իր գրպանէն պատառ մը հաց միայն» գտնուած ըլլալու հեքիաթը բացատրութեան կարիք չունի, իսկ առաջին ակնարկութիւնը կը վերաբերի հետեւեալ փաստին.

1891ին, յեղափոխական արարքներու իբրեւ հեղինակ, ուրիշներու կարգին՝ Արփիար Արփիարեան ինք եւս կը ձեռքակալուի ու կը նետուի բանտ: Խթման գիշերը, Սուլթան Համիտ ներս կը շնորհէ այդ բանտարկեալներուն, եւ Արփիար Արփիարեան ներման վաղորդայնին, «Արեւելք» օրաթերթի 12 Յունուար 1892 թուակիր համարին մէջ կը տեղաւորէ խմբագրական մը՝ «Երախտադիտական արտայայտութիւն առ Վեհափառ Սուլթանն» խորագրով, ուր ի միջի այլոց կ'ըսուի.

«Վեհափառ Սուլթան Համիտի գահակալութեան բարեբաստիկ օրէն ի վեր նոր դարագլուխ մը բացուած է Օսմանեան կայսրութեան համար, որու ժողովուրդներն երբ կը յիշատակեն Վեհափառ Սուլթան Համիտի անունը, կը բաւականանան ըսելով.

«ՄԵՐ ՀԱՅՐԸ»...: Կեանքս Վեհափառ Սուլթանին պարտական եմ, եւ որքան ապրիմ իմ բոլոր աշխատութիւններս պիտի կայանայ միշտ հանդիսանալ մեր առատագուծ կայսեր վեհանձն զգացումներուն ու խորին իմաստութեան քարոզիչը ամէն դասակարգերուն մէջ»:

ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ

Խմբագիր, հրատարակագիր եւ վիպագիր Արփիար Արփիարեան ծնած է 21 Դեկտեմբեր 1851ին, Սամսուն (Թուրքիա): Յաճախած է Պոլսոյ Օրթոգիւղի Թարգմանչաց եւ Վենետիկի Մուրատ Ռափայէլեան վարժարաններ: Մուրատ Ռափայէլեանի մէջ ուսուցիչ ունեցած է Ղեւոնդ Ալիշանը: 1876ին՝ խուճար մը երիտասարդներու հետ կը հիմնէ Արարատեան Ընկերութիւն Հայոց միութիւնը:



Արփիար Արփիարեան

Պոլիս վերադարձին՝ պատրիարքարանի մէջ կը ստանձնէ քարտուղարի պաշտօնը: Աւելի ուշ, լուծալափոխի մը մօտ հաշուակալութեամբ կը պարապի:

1878ին կը թղթակցի «Մշակ»ին՝ Հայկակ ծածկանունով, զոր կը գործածէ ամբողջ երեսուն տարի: Իբրեւ գրչանուն կը գործածէ նաեւ Հրազդան, Սկեպտիկ եւ Հրպետ ստորագրութիւնները:

1884ին կը հիմնէ «Արեւելք» թերթը, կը խմբագրէ «Մասիս»ը եւ 1891 Յուլիսէն սկսեալ «Հայրենիք»ը: 1889ին կը ձեռքակալուի՝ իբրեւ Գում Գափուի ցոյցին մասնակից եւ երկու ամիս կը բանտարկուի:

1896ին կ'անցնի Լոնտոն, ուր կը հրատարակէ «Նոր կեանք» թերթը: Հինգ տարի ետք կ'անցնի Վենետիկ: Հոն կը գրէ «Կարմիր ժամուց» վէպը եւ կը հրատարակէ «Հայ հանդէս»ը՝ 1902ին:

1905ին կ'անցնի Գահիրէ եւ կը խմբագրէ «Թիրակ» ամսագիրը: Արփիարեանի գլխաւոր գործերն են «Երազի մը գինը» (1884), «Կատակ մը» (1884), «Դատապարտեալը» (1885), «Ապուշը» (1886), «Կարմիր ժամուց» (1902), «Ոսկի ապարանջան» (1906) եւ «Մինչեւ ե'րբ» (1907):

12 փետրուար 1908ին՝ իր նախկին ընկերներուն կողմէ Արփիար Արփիարեան Գահիրէի մէջ կ'ենթարկուի ահաբեկումի:

«ԱԻՋՆԱՐԱՐԻՆ»...

Միջնարարին, անկիա հագի-հագ գրադէցուց իր քաղաքացիները, մշտապէս ծերունի գրազէտ մը — այսպէս կը կոչուէին ու դեռ կը կոչուին բոլոր անոնք, որոնք թարգմանած, լրագրի մէջ յօդուած սրբագրած կամ որեւէ դասագիրք հրատարակած են — հեղինակա՞ծ են «յօգուտ ազգային մանկաւոյն ոյր ուսմամբ կուսակց ապաքէն մեծագոյն տեսլականն է զարդիս հանուրց գրագիտաց» — առնելով չի յիշուիր լաւ ի՞նչ է դասը, բայց հաւանաբար գաղիերէն, քանի որ մագիստրոս մը կը նկատուէր կարճահասակ գրազէտ Լա Ֆոնթէնի լեզուին մէջ: Փոքրամարմին, հիւանդկախ, մեծաշունչ ու

տաղանդաւոր գրագէտ-կապալառուն հանրահռչակ մականունի մը, որ մեր նոր պատմութեան ընծայած է զօրեղ դէմքեր — փախա Եգիպտոս «կազդորուելու»: Իրողութի՞ւն: Ո՞վ գիտէ: Մարդկային հնարողութիւնը կանգ չ'առնէր անհեթեթին, որքան անկարելիին առջեւ: Խօսեցան Տիկինին խաթարուած զգայարանքներուն վրայ, երբ նոյն այդ կարճ այրիութեան շրջանին անհկա իր տունը բացաւ եօթանասնամեայ եպիսկոպոսի մը, կաթողիկոսոցո՞ւ, բայց վրիպած, տարօրէն գրաւիչ, լիք ու կանաչ: ... : Ո՛չ գրագէտը, ո՛չ եպիսկոպոսը դիմացան բաւարար չափով, որպէսզի լեցուէր անջրպետը այրիութեան:

(Էջ 86, 87)

Ու մինչ կը պատմէր շնորհաշատ Մինաս Մարանը, ինչո՞ւ մեծատաղանդ արձակագիրը մասնակի յամառութեամբ մը այցուեցաւ, զգետնը տեցաւ պանպուական ներշնչմունք քերթուած է մը, զոր ստորագրած էր յարգուած եգիպտահայ քերթող մը, խոր ծերութեան մէջ, դիմանալով շքեղ իր մագերովը, կիսադարեան իր ոտմանթիզմին պատնէշներուն ետին, հանդէսէ հանդէս պտտցնելով վառ իր ձայնը ու ոգեկոչելով Պետրոս Դուրեանի, Մկրտիչ Պէշիկթաշլեանի օրերը, երբ գրաբար ուղերձներ, տաղաշափական անթերի յօրինուածքով զիրար կը խաչաձեւէին ու «Առ կոյսն», «Առ թիթեռնիկն», «Առ զեփիւռն» ոտաւաւորներ մրցումի նիւթ էին ուսանողներու միջեւ:

(Էջ 197)

* * *

«Միջնարարը՝ վէպին գլխաւոր հերոսուհիներէն Տիկին Արտեմիս Գոհարեանի առաջին եւ երկրորդ ամուսնութեան միջեւ ինկող ժամանակն է, երբ ան, Տիկինը, յաջորդաբար ինքզինք կը փորձէ միտքարել նախ գրագէտի մը եւ ապա եպիսկոպոսի մը ներկայութեան: «Մշտապէս ծերունի գրագէտը» յայտնապէս Յովհաննէս Սէթեանն է, որ Եգիպտոս ապաստանեցաւ կազդորուելու, եւ որ միշտ գործեց «կիսադարեան իր ռոմանթիզմին պատնէշներուն ետին, հանդէսէ հանդէս պտտցնելով վառ իր ձայնը ու ոգեկոչելով Պետրոս Դուրեանի, Մկրտիչ Պէշիկթաշլեանի օրերը» (Էջ 197):



Մ. ԵԱՍ. ԻՆՃԷԿԱՆ

Իսկ եպիսկոպոսը կը թուի ըլլալ Մարթէոս եպիսկոպոս Ինճէեան, որ «Եպիսկոպոս ձեռնադրուեցաւ Զմիւռնիոյ վիճակին եւ պաշտօնավարեց 1910-1919»: Նկատելի է, որ Ինճէեան առաջնորդին պաշտօնավարութիւնը կ'աւարտի գրեթէ այն շրջանին, երբ Տի-

կին Գոհարեան կը ձգէ իր երկրորդ ամուսինը ու Սահակ Պարգեւեանի հետ խոյս կու տայ Եգիպտոս:

Հանրահռչակ մականունի (Սէթեան) մը տէր եղող գրագէտին ու եպիսկոպոսին կապուած քիչ մը մեղաւոր պատմութեան մէջ թէ ի՞նչ է իրականութեան բաժինը, կարելի չէ ճշդել: Հարցը անորոշ մնացած է նոյնպէս վիպասանին մտքին, որովհետեւ, ինչպէս կը պնդէ ինք՝ «մարդկային հնարողութիւնը կանդ չ'առնէր անհեթեթին, որքան անկարելիին առջեւ»:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍԷԹԵԱՆ

Արեւմտահայ կրտսեր ռոմանթիզներէն. բանաստեղծ, արձակագիր եւ ուսուցիչ Յովհաննէս Սէթեան ծնած է Պոլիս, 1853ին: Կրթութիւնը ստացած է Կեդրոնական վարժարանը:

1896ի հայկական ջարդերէն ետք մշտապէս կը հաստատուի Գահիրէ:

Իր բանաստեղծութիւնները ամփոփուած են «Գրական զրօսանք» (1882), «Յուզման ժամեր» (1888), «Բըլտորն ի վեր» (1896), «Տարագրին քնարը» (1912) անուն հատորներուն մէջ:

Յիշեալ գործերը, ինչպէս նաեւ արձակ երկ մը ամփոփուած են՝ «Արշալոյսէն վերջալոյս» հատորին (1912) մէջ:

Մեռած է 1930ին, Գահիրէ:



ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍԷԹԵԱՆ

«ԽԵՆԹԱՆԱԼՈՒ ՄՕՏԸ ԵՒ ԻԶՄԻՐԻ ՄԷԿ ՕՐԱԹԵՐԹԸ»...

Մօտ էր խենթանալու, երբ ճանչցաւ փարթամ, պարթեւ, անձնեայ ու խորխտ արձակագիրը, որ այդ օրերուն կը խմբագրէր Իզմիրի մէկ օրաթերթը ու կը խօսէր, կործանարար ջերմութեամբ, ակումբներու մէջ, ամէն բանի վրայ, սրահներու մէջ փափուկ ու մոայլ հարցերու շուրջ...

(Էջ 90)

* * *

Խենթացողը երկրորդ ամուսնութեան ատեն ընտանեկան դժոխք մը ապրող Տիկին Արտեմիս Գոհարեանն է, ու անոր նոր ճանչցած արձա-

կագիրը՝ Սուրեն Պարթևեանը, իսկ Պարթևեանի կողմէ այդ օրերուն խմբագրուող Իզմիրի մէկ օրաթերթը՝ «Դաշինք»ը, որ լոյս տեսաւ 1919ին:



«ՎԷՊԵՐՈՒՆ ԱՅՍ ԵՌԵԱԿԸ»...

Վէպերու այս եռեակը, «Եռանկարը», կը ձգտի այդ սկսած քայքայումը արձանագրել, արուեստի քանի մը ճամբաներու վրայով: Այդ ճամբաներէն ամէնէն տխուրը, եղբականը, յատկանշականն ու բազմակողմանին Սահակ Պարզեանն է, խօսքի ու բառի կայսրութեան ինքնակալ, տարիներով Փարիզ ըրած, այսինքն՝ արուեստագէտներու մայրաքաղաքին մէջ ջիղ-ջիղ սատափուած, բիրեղացած գրագէտը:

(Էջ 92)

Յ. Օշականի «Համապատկեր»ի 10րդ հատորին մէջ այս մասին արձանագրուած է հետեւեալ ծանօթագրութիւնը.

«Օշական ունի համադրական ուրիշ ձեռնարկ մը, «Եռանկար» ընդհանուր խորագրով: Գործը կը ձգտի նուաճել արեւմտահայ քաղաքը, անոր ընտրանին, որմէ զատուած են երեք յատկանշական անձնաւորութիւններ, երեքն ալ արուեստի կալուածէն.— Գրագէտ մը, երաժիշտ մեծ արուեստագէտ մը, դերասան մը, իւրաքանչիւրին մէջ վերլուծելու առաջադրութեամբ միտքին եւ մարմինին, մտածումին եւ սեռին, երազին եւ կիրքին փոխյարաբերութիւնները:

...«Եռանկար»ին Ա. հատորը դրուած է եւ իբր հերոս ունի գրագէտ մը — Սահակ Պարզեան: Բ. հատորը իբր հերոս պիտի ունենար Կոմիտաս Վարդապետը: Գ.ը՝ արեւելահայ դերասան մը, դարձեալ տաղանդաւոր, որ 1920-22ին Պոլսոյ մէջ ստեղծեց լուրջ խռովքներ» (Էջ 105- 106):

Դերասանը, որուն անունը չէ տրուած հոս, Ծահխաթունին էր:

«Եռանկար»ին երկու հատորները, ցաւօք, մնացին ծրագրային ծիրի մէջ:



«ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՔԵՐԹՈՂ ՄԸ»...

Անիկա պատեհութիւնը օգտագործեց, «Հայկ դիւցազն»ի «կանոցման մեծարուեստ աշտարակումին» ներքեւ ճգնելու, չիք ընելու

ժամանակակից քերթող մը, իրեն ընկեր ու թշնամի, որ իր «ոսին մուրցքին» մէջ արդի մեր հերոսները դիւցազներգելու, իր տաղանդին «անսրբագրելի» կմախքը կը ջանար հագուեցնել՝ ոգի եւ բառ առնելով փոխ մեծ վարպետէն, վարդապետէն:

(Էջ 109)

Ժամանակակից քերթողը, առանց այլեւայլի, Սիամանթոն է, որուն ընկեր եղած է Սուրեն Պարթևեան, բայց թշնամի՝ դժուար է ըսել: Ռոքան ալ չարութեամբ ու նախանձով տոգորուած ըլլար Պարթևեան, դժուար թէ յանդգնէր Բագրատունիի շուքին տակ ճգնելու Սիամանթոն: Օշականի պնդումը հաւանաբար շօշափելի իրականութենէ մը ատելի՝ ունի վիպական խորք մը: Այս կասկածը կ'այցելէ մեզ անո՛ր համար մանաւանդ, որ Սիամանթոն գնահատող առաջիններէն մէկը, եթէ ոչ առաջինը եղած է Սուրեն Պարթևեան, որ մանչեսթրեան իր «Վաղուան ձայն»ին մէջ լոյս ընծայեց որոտընդոտ քնարահարին առաջին ստեղծումը, «Կոտորած»ը, երբ հեղինակը հազիւ 20 տարեկան էր (1898):

Մենք կ'անգիտանանք Սիամանթոն «չիք» ընելու Պարթևեանի մուրցքը, բայց չենք մոռնար անոր մէկ բնորոշումը, ըստ որում՝ «Ատոմ Եարճանեան (Սիամանթո), որ մեզի կը ղրկէր՝ վեհերոս անձկութեան նամակով մը՝ Անահիտէն մերժուած իր առաջին քերթուածը»:

Կոտորա՛ծ, կոտորա՛ծ, կոտորա՛ծ...»:

ՍԻԱՄԱՆԹՈ

Աւագանի անունով Ստոմ Եարճանեան: Ծնած է 1878ին, Ակն: Նախակրթութիւնը կը ստանայ ծննդավայրի Ներսէսեան վարժարանը, Գարեգին եպիսկոպոս Սրուանձտեանցի տեսչութեան օրով: 1891ին՝ հայրը, որ կը զբաղէր լուծայափոխութեամբ, կը սնանկանայ եւ ընտանեօք կը փոխադրուին Պոլիս:

Պոլսոյ մէջ, Սիամանթո կը յաճախէ Սկիւտարի Պէրպէրեան վարժարանը: Համիտեան ջարդերու տարին (1896) կը մեկնի Եգիպտոս, իսկ յաջորդ տարին կ'անցնի Փարիզ ու կը հետեւի Սորպոնի գրականութեան դասընթացքներուն: Սիամանթոն



Սիամանթո

բարեկամութիւն կը հաստատէ Փարիզի հայ նշանաւոր գործիչներուն եւ Եւրոպայի Հայ Ուսանողական Միութեան հետ:

Սիւմանթո Փարիզէն կ'անցնի Զուլիցերիա եւ կ'աշխատակցի ժընեւի մէջ լոյս տեսնող «Դրօշակ»ին: Սիւմանթոյի առաջին բանաստեղծութիւնները՝ «Դիցազնօրէն» եւ քառասուն տուն հաշուող «Ասպետին երգը» լոյս կը տեսնեն «Դրօշակ»ի մէջ: «Դրօշակ»ի շուրջ խմբուած գործիչներուն ազգեցութեան տակ կը տարուի ազատագրական գաղափարներով:

Զուլիցերիա ապրած միջոցին կը վարակուի թոքախտով եւ ատեն մը կը մնայ ընկճարան: Կը ծանօթանայ Լօզանի համալսարանի բժշկական ուսանող Ռուբէն Սեւակին, որուն աջակցութեամբ եւ իր սեփական կամքին շնորհիւ կ'ապաքինի:

Տասներկու տարի Եւրոպա ապրելէ ետք, 1908ին Սիւմանթո կը վերադառնայ Պոլիս:

1902էն մինչեւ 1908՝ կը գրէ երեք շարքերէ բաղկացող «Հայորդիներ»ը: 1904էն 1907՝ «Հոգեվարքի եւ յոյսի ջահեր»ը, որուն միացնելով «Ասպետին երգը» լոյս կ'ընծայէ առանձին հատորով, իսկ Ատանայի ջարդերուն ազգեցութեան տակ կը գրէ «Կարմիր լուրեր բարեկամէս» հատորը:

1909ին կ'երթայ Ամերիկա, ուր կը մնայ մէկ տարի, աշխատակցելով «Հայրենիք»ին: Այդ մէկ տարուան ընթացքին կը գրէ «Հայրենի հրաւեր» քերթուածներու շարքը: Իր ներկայութեան, «Հայրենիք»ի տպարանը լոյս կ'ընծայէ իր ամբողջական գործերուն առաջին չքեղ հատորը:

1913ին, Սիւմանթոյի Զաւարեանի դագաղին ընկերանալով՝ կը ճամբորդէ Թիֆլիս, ուրկէ կ'անցնի Հայաստան ու կ'այցելէ Էջմիածին, Զուարթնոց, Օշական եւ Արարատ: Նոյն տարին Գիրբերու գիւտի 1500ամեակի առիթով կը գրէ «Ս. Մեսրոպ»ը:

Սիւմանթո կը նահատակուի 1915ին:



«ԿԱՂ ՊՈՌՆԿԱԳԻՐԸ»...

Տիկին Գոհարեան այս փորձառութիւնը հաստատած էր նաեւ կաղ պոռնկագիրին վրայ, որ սրահներու մէջ բաց բառերու իր երփնեւրանգ վրձիններովը սիւնակ-սիւնակ կը լիզէր կիները, բայց անոնց առանձնութեան կը դառնար «մամածակ», պապանձուն ու քիթը կախ:

(էջ 111)

* * *

Իր զմիտնեան կենսագրութենէն ու երգիծական գրութիւնները «զարդարելու» ոճային առանձնաշատկութիւններէն կարելի է համարձակօրէն հետեւեցնել, որ վերի պարբերութեան մէջ ուրուագծուած «իզմիրնեան պոռնկագիրը» Յարութիւն Ալիփարն է, որ ատեն մը գոեհկութիւն-

ներու ճամբով ուշադրութեան արժանացաւ, ու կարճ ժամանակ մը ետք ընդմիջտ անհետացաւ հորիզոնէն ինչպէս կ'անհետանան գայթակղութիւնները արժէքի հետ շփոթող բոլոր ստուերները:

«Սահակ Պարգեւեան» վէպին հեղինակը քանի մը առիթներով ակնարկութիւններ կ'ընէ անոր՝ չմոռնալով վրան նետել պոռնկագիրի նոյն քուրջը, մեկնելով հաւանաբար այն մերկապարանոց նկարագրութիւններէն, որոնք առատօրէն ցանուած են անոր էջերուն մէջ:

Նմոյշ մը, ըստ որուն՝

«Էլպիս բրենսէսներու յատուկ քալուած մը ունէր որու միջոցին իր ազդրերուն ներդաշնակ գիծերը՝ մէջքին վերջաւորութեան հետ խառնուած, յայրատ, խենէշ վէտվէտումներ կ'ունենային որոնց ի տես, մանկլաւիկը ըլլայ պիտի ուզէիր այդ աղջկան, կեանքդ ամբողջ իր փէշերը վեր վերցնելու համար»:

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱԼՓԻԱՐ

Յարութիւն Ալիփար ծնած է Զմիւռնիա, 1864ին: Յաճախած է Պոլսոյ Արամեան եւ Շահնազարեան վարժարանները: Ապրած է Իտալիա, Ֆրանսա, Անգլիա եւ Եգիպտոս: 1896էն 1898 եւ 1901էն 1902 Գահրէի մէջ լոյս ընծայած է «Փարոս» երգիծաթերթը: Աշխատակցած է Զմիւռնիոյ եւ Պոլսոյ թերթերուն՝ «Արեւելեան մամուլ», «Մասիս», «Սուրհանդակ», եւ այլն: Գրած է երգիծական քրոնիկներ եւ պատմըւածքներ՝ առօրեայ կեանքէն ներշնչուած: 1913ին լոյս տեսած է անոր Երկերու ժողովածուն՝ «Ճանթագիօ» վերնագրով: Յարութիւն Ալիփար գործածած է Ռատմեա եւ Քրիզանթէմ ծածկանունները: Մեռած է 1919ին, Իզմիր:



Յարութիւն Ալիփար

«ՔԻՉ-ՇԱՏ ԳՐՈՑ-ԲՐՈՑ ՏԻԿԻՆ ՄԸ»...

—«Ափ մը ուղեղով, ո՛չ, պտղունց մը ուղեղով» եղկելի «թութակ» մըն էր, ինչպէս պատկերած էր զայն, հանդիպման առաջին գիշերն իսկ, երբ քիչ-շատ գրոց-բրոց տիկին մը, որ կանանց հանդէսի մը յօդուածներ կը ստորագէր ու իրեն հո՛վ կու տար ֆրանսերէն ոտանաւորներ թխելու վաճառականական օրաթերթի մը պարսպ, այսինքն՝ ծանուցումի համար անվարձ սիւնակներուն մէջ, հարցուցեր էր իրեն,



աւելի ճիշդ՝ հարցաքնններ էր մեծատաղանդ, հոգեբան արձակագիրը իր՝ «Գոհարեան» տպարարութեանը վրայ: Կատաղի կապոյտ գուլպան սիրաբանած էր ատեն մը Տիկիհին ամուսինին հետ, գրաբարին, այո՛, դժբախտ գրաբարին արահետներէն...

(էջ 125)

* * *

900ական թուականներուն ֆրանսերէն ոտանաւորներ թխող տիկիհները թիով քանի մը հատ էին ու դժուար պիտի ըլլար գուշակել Օշականի մտապատկերին մէջ ուրուացող գրոց-բրոցը, եթէ հոյ գոյականին ընդգծուած, ըսել է՝ կիրարկուած «մատնիչ» ոճին ապահովութիւնը ընծայուած չըլլար ընթերցողին:

Ուրիշ խօսքով՝ ակնարկութիւնը կը վերաբերի ուղղակի Հերմիճէ Հովեանին, որ ֆրանսերէն ոտանաւորներ գրեց ու հայ գրականութեան երկնականարէն անցաւ ասուպի պէս, ինչպէս անցաւ օտարագիրներու ջախջախիչ տոկոսը...

Մեր տրամադրութեան տակ գտնուող թերթերուն, գրական պատմութիւններուն, դասագիրքերուն, անձնանուններու բառարաններուն թէ հանրագիտարաններուն մէջ անկարելի եղաւ հանդիպիլ Հերմիճէ Հովեանի կենսագրութեան, նոյնիսկ անունին յիշատակութեան:

ԳԱՐՆԱՆ ԺԱՄԵՐ

Եթերին մէջ նորատեսակ քաղցր բոյրեր կ'օրօրուին. վարդերուն վրայ փայլակցացու կը շողայ լոյս մ'ոսկեմած: Կը թափին բաց երկինքն ի վար ճառագայթներ բոցային. Կենդանութեան ըզզլխանքով մ'է ամէ՛ն ինչ գերարբած:

Ամէ՛ն տեղ,— քովն առուակներուն, ծոցը կանանչ ծառերուն, Մարմանդին վրայ լուսեղ՝ ծաղկած ծաղիկներով ձիւնաթոյր՝ Երգ մը, խանդոտ, կը թըրթըռո՛յ,— եւ ի լուր այդ շէշտերուն Կը թօթափէ Անհունութիւնը իր երագները տըխուր:

Հըպարտութիւն մը անսահման կը տիրանայ իմ սըրտին. Ու կը լեցուիմ առուգութեամբ, խոյացումով ու խանդով Սա կապուտակ առտուան մէջ՝ զոր կ'ողողէ մեծ Արփին.

Ես այս բոլոր հրապոյրներն ըմպե՛լ, քամե՛լ քաղձալով Կ'ուզեմ ապրիլ բուրումներու, պայծառութեան, խինդի մէջ, Եւ նուիրել բոլոր երգերըս Գարունին բողբոջէ:

Թարգմ. Գ. ՎԱՐՈՒԺԱՆ ՀԵՐՄԻՅԷ ՀՈՎԵԱՆ

« ՀԱՅՐԵՆԱԿԻՑ ԱՂՋԻԿ ՄԸ »...

Բայց շատ լաւ գիտէր, թէ դէպի ուր կը տանէր, երբ մտաւ ճամբան, հայրենակից աղջիկ մը, Պոլսոյ թերթերուն մէջ գրական իր մուտքը ըրած, ապացոյցը տալով մեծ ընդունակութիւններու, հանրային հանգանակութեամբ ինկած Փարիզ՝ հետեւելու Սորպոնի գրականութեան դասերուն: Տաք էր ու պարզ այդ աղջիկը, քիչ մը շատ զգայուն, պոլսական փափկութեամբ ու հայու գորովով: ... : Գրագէտը, այն ժամանակ երիտասարդ վիպող, ձգելով քառասուննոց կիներու անկողինը, անոնց ներկուած միսերուն կծու, քիչ մըն ալ աշխած միսերն իսկ լուալու, անհետելու անփոյթ՝ իր մարմինէն, կու գար «լուացուելու» անոր աշուկներուն ոսկի լճակին մէջ, իրական ջուրի զովութեամբ: Անու անոր կուսութիւնը քիչ մը խղճահար, քիչի՛կ մը, հարուստի մը պէս, որուն իր մէկ աշխատատեղը իր պարտեզին երախայրիքը կը մատուցանէ ու կը հրճուի ատոր համար:

(էջ 135-136)

* * *

«Պոլսոյ թերթերուն մէջ գրական իր մուտքը ըրած» եւ առաջին օրէն մեծ ընդունակութիւններու ապացոյցը տուած «հայրենակից աղջիկը» Զապէլ Յովհաննէսեանն էր, հետագային՝ Զապէլ Եսայեան, որ Օշականի «Մահակ Պարգեւեան» վէպին մէջ վերամկրտուած է նախ Օրիորդ Երամեան եւ ապա դարձած-եղած է Տիկիհ Յովհաննէան:

Վէպին գլխաւոր հերոս Սահակ Պարգեւեանի եւ Օրիորդ Երամեանի միջեւ տեղի ունեցած «պատահարը», բնական է, իրականութեան նժարներուն մէջ ոչ մէկ կշիռ ունի եւ կրնայ ունենալ որեւէ ժամանակ...

ԶԱՊԷԼ ԵՍԱՅԵԱՆ

Աւագանի անունով Զապէլ Յովհաննիսեան: Ծընած է 1888ին, Սկիւտար: Նախակրթութիւնը կը ստանայ Ս. Խաչ վարժարանին մէջ:

1895ին կը մեկնի Փարիզ եւ կը հետեւի Սորպոնի գրականութեան դասընթացքներուն: Հոն կ'ամուսնանայ նկարիչ Տիգրան Եսայեանի հետ եւ այնուհետեւ կը գործածէ ամուսնոյն մականունը:

Փարիզի մէջ կ'աշխատակցի ֆրանսական հանդէսներու, առաւելաբար «Մերքիւր տը ֆրանս»ի:

Հայերէնով կատարած գրական իր առաջին փորձը կ'ըլլայ արձակ բանաստեղծութիւն մը՝ «Երգ



Զապէլ Եսայեան

առ գիշեր», որ լոյս կը տեսնէ Արշակ Զօպանեանի «Ծաղիկ» թերթին մէջ: Անկէ ետք կ'աշխատակցի նոյն թերթին եւ «Անահիտ»ին:

1903ին լոյս կ'ընծայէ «Սպասման սրահին մէջ» վիպակը: Երկու տարի ետք՝ «Ծնորդքով մարդիկ» ստեղծագործութիւնը:

1909ին, Փարիզի մէջ կը հրատարակէ «Կեղծ հանճարներ» երգիծական վիպակը:

1910ին յաջորդող տասնամեակին լոյս կը տեսնեն յաջորդաբար իր «Անբակներու մէջ», «Անձկութեան ժամեր», «Վերջին բաժակը», «Հոգիս աքսորեալ», «Երբ այլեւս չեն սիրեր» անուն վիպակներն ու պատմուածքները:

Զապէլ Եսայեան գրած է նաեւ ազգային հերոս Մուրատի մասին յուշագրութիւն մը՝ «Մուրատի ճամբորդութիւնը» (1915):

1915ի Եղեռնէն ան կ'ազատի՝ Պուլկարիա ապաստանելով, ուրկէ կ'անցնի Կովկաս: 1920ին կրկին կ'անցնի Եւրոպա եւ կը գործակցի Ա. Ահարոնեանի գլխավորած Հայաստանի պատուիրակութեան:

1927ին կ'այցելէ Խորհրդային Հայաստան եւ Փարիզ վերադառնալէ ետք կը հրատարակէ իր ուղեգրութիւնը՝ «Պրոմէթէոս ազատագրուած» խորագրով:

Հայաստանի կառավարութեան հրահրով՝ 1935ին վերջնականապէս կը տեղափոխուի Երեւան ու իբրեւ դասախօս պաշտօն կը ստանձնէ Պետական համալսարանի մէջ:

Երեւանի մէջ կը գրէ եւ լոյս կ'ընծայէ «Սիլիհտարի պարտէզները», «Կրակէ շապիկ» եւ «Պարպա Խաչիկ»:

Ստալինեան մաքրագործումներուն՝ Զապէլ Եսայեան ինք եւս կը ձերբակալուի, կ'աքսորուի Սիպերիա եւ կը մեռնի 1943ին:



«ԱՆՈՐ ԸՆԿԵՐՆԵՐԷՆ ՄԷԿԸ»...

Անոր ընկերներէն մէկը, որ թերթ ունէր ազգային դատ հետապնդող ու հետապնդող նոյն ատեն թարմ պոլսուիին, շահագործեց «պատահարը» սրամիտ ու բամբասուն քրոնիկի մը մէջ, լուծելով զոյգ հաշիւներ, Պարզեւեանէն՝ զայն ներկայացնելով «անստգիտ» հրէշ, որ չէր վարաներ իրեն մօտեցող ամէն աղջիկ հեքիաթի դեւերուն նման հում-հում պատառել, օրիորդէն՝ որ Սկիւտարի մէջ լաթ լուացող, բայց միշտ բարձրագահ իր մօրը պատիւը հոս, հեշտութեան բազմաներուն վրայ կու տար կրակի ու ազգին դրամովը փոխանակ միտքը զարգացնելու, զգայարանքները կը հաճեցնէր ու հտպիտ սիրահարներ կը պարէնաւորէր:

(Էջ 136)



Ակնարկութիւնը կը վերաբերի Արշակ Զօպանեանէն ստորագրուած քրոնիկի մը, որուն գոյութիւնը անորոշ կը մնայ մեզի համար: Մեկնակէտը, սակայն, շատ կը յարմարի քրոնիկագիրին նկարագիրին ու մատնած

ազգային նախանձախնդրութեան: Պարագան կարելի է կապել հաւանական ուրիշ վարկածի մը, Օրիորդ Երամեանի առիթով Պարզեւեանի «Ժպտուն» բախտին եւ Զօպանեանի «ժժբախտութեան» զոյգ պատճառներուն, որոնք դէր մը կրնան ունեցած ըլլալ ակնարկուած քրոնիկին գրառաման մէջ: Աւելի անդին կ'ըսուի տակաւին, որ Պարզեւեան յօդուածով մը, որ դարձեալ խնդրական կը մնայ մեզի, կը դիմէ փոխլրէժի, «փոխադրելով պատահարին ծանրութիւնը տեսարանի մը վրայ, որուն մէջ «կոնակահար» այդ սողունը կը դրուէր դուրս Օրիորդ Երամեանի սենեակէն, գրեթէ աքացի» (էջ 136):



«Թարմ պոլսուիին» հետապնդած եւ անոր սենեակէն դուրս դրուած ըլլալու Ամօթին կապուած ակնարկութիւն մը կայ նոյնպէս Սուրէն Պարթեւեանի «Խարազան»ին մէջ, ուր Զօպանեանին համար կ'ըսուի:

«Չէ, չեմ ատեր զինքը... Ինչպէ՞ս կրնամ ատել այդ խեղճ անիրաւուած էակը, զոր այնչափ խորապէս կը ճանչնամ: Ինչպէ՞ս կ'ուզէ, որ ատեմ զինքը... ես որ իր գաղտուկ կեանքի լուկող ու սարսափահար Ամօթը ու իր էն անկեղծ հպումին զրգըրած պժգանքը գիտեմ» (էջ 17):



«ԱՆԿԵ ՍՏՈՐԱԳՐՈՒԱԾ ՎԻՊԱԿ ՄԸ»...

Օրիորդ Երամեան մինչեւ ինքզինքը գտնելը, «սպիացումը», իրմէն աւելի անոր սպասող ճակատագրին անդոհովը տառապեցաւ: ... : Անհկա պիտի ապշէր անոր ընդունակութեանց անորակելի բազմազանութենէն, կարդալով անկէ ստորագրուած վիպակ մը, որուն մէջ իրենց «պատահարը» խորք կը ծառայէր գոեհիկ պատումի, բայց կը տրուէր անկարելի անգթութեամբ, լոյսին հանելով շատ աւելի տրտում բան, քան ինչ որ համարձակած էր կասկածիլ ինքը, անոր հոգիէն: Վիպակին հերոսուհին կը կրէր արտաքին յարդարանքը, հարազատ հոգեգիծերը Օրիորդ Երամեանին, բայց այն գիծերը, որոնք դուրսէն տեսանելի, տեսակ մը լաթը կը կազմեն մեր հոգիին, բայց չեն զայն: ... : Այդ շարաշուք վիպակին մէջ անհկա տուած էր իր արուի հոգին, «երկայն մազ ու շրջագգեստ» հագցնելով անոր: Ինքզինքը այդպէս «մորթաշրջելէ» ետքը, անհկա խորտակումը զարգացուցեր էր, հերոսուհին մէջ «արուեստի կորովի ու փարթամ» զգայարանք մը մատնանշելով, որպէսզի այդ իսկ տուրքով, վերածուէր անհկա «վատառողջ» հետաքրքրութեանց կողմնացոյցի մը, «հիւանդ», «սպակաւանած», «մութ ու խոնաւ», ընդմիջմարել տալով անորակելի ուրիշ ալ զգայութիւններ, քանի որ ակնարկովի ու տառացի ալ զայն մօտեցուցեր էր Սաֆոյին: (էջ 138-139)

* * *

«Անկէ ստորագրուած վիպակը», որուն մէջ նիւթ դարձած է Օրիորդ Երամեանին եւ Սահակ Պարգեւեանին միջեւ տեղի ունեցած «պատահարը», յայտնապէս Պարթեւեանի «Քայքայում» հատորին վերջին պատմուածքն է, խորագիրը՝ «Զապէլ», որ կը տարածուի 11 էջերու փայլ: Վիպակին մէջ հերոսուհին՝ Զապէլ, ինք կը պատմէ «պատահարը», որ ուրուագրուած է յետոյ «Սահակ Պարգեւեան» վէպէն արտագրուած վերի հատուածին մէջ:

Ահա, «Զապէլ» պատմուածքին մէջ «պատահար»ին հիմնական բաժինը բացայայտող հատուածը.

«Մեր յարաբերութիւններուն անխոստովանելի մասը ծածկեր էի իմիններէս, որոնք անպատեհութիւն մը չէին տեսներ՝ պտոյտի կամ թատրոնի պատրուակի տակ՝ Արմէնին հետ երկար ժամեր, երբեմն ամբողջ օրեր ու մինչեւ կէս գիշերներ տեւող իմ բացակայութիւններուս մէջ... Ասիկա մեր երջանկութեան շրջանն էր... Թաւալգլոր անկումը չուշացաւ: Օր մը, ամէն բան գիտցան իմիններս երբ տեսան, որ յղի մնացեր էի... Արմէն զիս մայրութեան ճամբուն մէջ դնելուն պէս՝ աղտոտ կերպով լքեց ինձի...» (էջ 110):

Ճ

«ՏԻԿԻՆ ՅՈՎԱՆԵԱՆ»...

Անշուշտ մեղքցուելիք աղջիկ մըն էր ան: Տարիներով անհկա սուգը պիտի կրէր «անդրանիկ այդ հերկումին», զոր պիտի չմոռնար նոյնիսկ գլուխը ուրիշի մը կապելէն ետքը, որ այս անգամ հակադիր մարզէն, չհասկցաւ զինքը, բայց թողուց ազատ: Իր ապագայ վէպերուն մէջ, Տիկին Յովնանեան աշխարհը, մարդերը պիտի տար այս երկու հակադրութեանց կամարէն: Անոր արունները այլայլուն եղան Պարգեւեանին մեծ, բայց անզգամ շուքէն, այնքան անհկա ազդուեր էր փարթամ, ոսկեճամուկ, էգ, աւագի պէս անյարիր այդ ցեխաստանէն: Անհկա վիպեց պատահարը Անգա Կէօրկէօվնային, որ զուակովը քաշուած էր Ռիսիս: Ու դրա իր ողբերգութիւնը պատկերին տակ խաբուած աղջկան:

(էջ 140)

* * *

Սուրէն Պարթեւեանի տմարին մէջ իրարու բախտակից Օրիորդ Երամեան եւ Անգա Կէօրկէօվնան, «Սահակ Պարգեւեան» վէպին երկայնքին երթելէն առաջ տեղ մը հանդիպած են իրարու, հետագային Տիկին Յովնանեան դարձած գրագիտուհին (Եսայեան) մէկ վիպակին մէջ, իմա՝ «Կեղծ հանճարներ»ուն: Արդարեա, Օշականի վէպին մէջ գործող

կին տիպարներէն Անգա Կէօրկէօվնան, որ «անհարսնացեալ» մայր եղած էր Սահակ Պարգեւեանի ապօրինի որդուն, կը թախ, թէ ունէր իրական նախատիպար մը, Զապէլ Եսայեանի յիշեալ վիպակին մէջ տեղ գրուած. Սոֆի Կաժեսկայան, որ յաճախ կ'երեւի գլխաւոր հերոսներէն Սուրէն Սահակեանի (Պարթեւեան) կողքին, իր բարեմասնութեանց շնորհիւ անջատուելով աղմկարար միւս կիներէն՝

«...Միայն Սուրէն Սահակեանին քով նստած սքանչելի գեղեցկութեամբ կին մը լուռ կը կենար եւ կը ժպտէր հանդարտօրէն, իր պարզուկ արդուզարդը, մազերուն շտկուածքը եւ մանաւանդ վճիտ լուսաւոր կապոյտ աչքերուն հանդարտութիւնը ցոյց կու տային, թէ ինքը իր դրացի կիներուն դասակարգին չէր պատկաներ. թէեւ առանց իսկ անդրադառնալու այդ տարբերութեան՝ արմուկ արմուկի կը խօսէր եւ մտիկ կ'ընէր զիրենք, երբեմն միայն իր կաթնային մաքուր մորթը թեթեւ կը վարդագունէր եւ աչքերը կը մթննային իբր թէ ամպ մը անցած լլյար առնոց կապոյտին վրայէն» (էջ 59):

«Կեղծ հանճարներ»ուն մէջ այս մասին կան ուրիշ ակնարկութիւններ եւս, իսկ 190 եւ 121 էջերուն նշուած մանրամասնութիւնները առաւել չափով մը ճշմարտութեան կը մօտեցնեն մեր ենթատրոյթիւնը:

Ճ

«ՎԻՊԱԿԻ ՄԸ ՄԷՋ»...


Օրիորդ Երամեան, շատոնց մեծ գրագիտուհի, վիպակի մը մէջ գծած էր անոր «գառամ» արուեստը, ու աւելի գէշ՝ անոր մշտագառամ հոգին, որ ծնած էր ծե՛ր, ատելութեամբ միայն գոյն առնող, ու փակ՝ ուրիշ ամէն յուզումէ:

(էջ 155)

* * *

«Վիպակ»ի մը եղած ակնարկը հաւանաբար կը վերաբերի «շատոնց մեծ գրագիտուհի» դարձած Զապէլ Եսայեանի «Կեղծ հանճարներ» խորագրեալ հատորին, որ լոյս տեսաւ 1909ին, Պոլիս:

Հատորը կը հաշուէ 178 էջ, միջավայրը Փարիզն է, հերոսները՝ ընդհանրապէս Համիտեան ջարդերուն լուսոյ քաղաքը ապաստանած ուսանողներ, որոնց գլխաւորները կը հանդիսանան Տաճար Չարքեան (Տիրան Չարքեան), Սուրէն Սահակեան (Սուրէն Պար-



թեւեան), Անտոն Եարսնեան (Ատոմ Եարճանեան), Հրանդ Մարտիկեան (Արշակ Զօպանեան) եւ ուրիշներ:

Ըստ էջերէն մէկուն՝

«Սուրէն ճշմարիտ արուեստագէտ մըն էր, բայց իր պարարտ ու խնամուած մարմինը չէր կրնար տոկալ չքաւորութեան, ծայրայեղ կերպով զգայնասէր, իր բոլոր զգայարանքներուն զրկանքներովը հաւասարապէս կը տանջուէր. իր տաղանդը խառնուող մըն էր շատ նուրբ քնարերգական (lyrique) կարողութեան մը, եւ անողոք գրեթէ դիւային cynisme-ի մը գողտր միամտութիւններու քով, առեղծուածային եւ կախարդիչ բան մը ունէր, որ բոլորովին կը յատկանշէին ոչ միայն իր տաղանդը, այլ նաեւ իր նկարագիրը, եւ նոյնիսկ դէմքը» (էջ 55):

Ճ

«ՄԷԿԸ ԻՐ ՀՈՅԱԿԱՊ ԱՏԵՆԱԲԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԷՆ»...

Միամիտ, խանդավառ, բայց սեռային մարզէն քիչ մը վեհերոտ՝ անհկա խօսած էր առաջին անգամ Սոնային հետ, այս օրէն տարիներ առաջ, յիշատակի ու սուգի հանդէսի մը մէջ, կատարուած ընդարձակ զոհաւորումով, սուգի եւ բողոքի իբրեւ ցոյց, ապրիլեան մեր մեծ զոհերուն տարեդարձին առիթով: Որուն մէջ, Սահակ Պարգեւեան, գլխաւոր ատենախօսը, ըրեր էր մէկը իր խորունկ ու հոյակապ ատենաբանութիւններէն, յուզեր՝ հազարաւոր բազմութիւնը, իսկակա՛ն խոռվքը անկեղծ զգացումին: Անոր բառերուն համատարած կրակին մէջ մարմին կ'առնէին ինկող գրագէտներուն, մտաւոր մշակներուն ու յեղափոխական գործիչներուն սրբազան նկարները, բոլորն ալ տրուած հոյակապ կարկառով, անձնական աղերսին անփոխարինելի իրականութեամբը: Ու անոր բառերուն մոլիսին մէջ կը թանձրանար 915ի ամբողջ ողբերգութիւնը, խոր ու սրտառուչ պատկերներու դրուագի մը վրայ, արագ, ուժգին, հեւասպառ ու անհաս, մարդը մինչեւ ընդերք գալարող: Պերճախօսութիւն չէր ատիկա, այլ անոր անձին հրթիռ դառնա՛լը, ա՛յնքան՝ որ հասարակութիւնը կը դադրէր ինքն իրմէ, թախծահար իր բեկումէն, քաշուած անոր ետեւէն, յոյսի, երջանկութեան, ազատութեան գերագոյն համապատկեր մը մինչեւ: Ու կը սիւնէր անհկա մեր հերոսներուն հոգիները իբր հէնքը մեր նոր երագին: Ու կը գմբէթէր անհկա անոնց զոհողութիւնը կառոյցին վրայ մեր նոր արքայութեան: Ու կը բուրվառէր իր ծիրանի սուգը դէպի անոնց յիշատակը ու անըմբռնելի մահը, մա՛հը մեծերուն ու փոքրերուն, անուններով եւ անձնական կային ջերմութեամբը բաբախուն, ոգեկոչելով մեծ ստուերները բոլորին, անմորատ՝ այս աշխարհին վրայ, խողխողուած այն ճամբուն իսկ վերայ, որուն գործաւորներն էին եղած: Ու կը սրբացնէր բոլորը, բոլորը, նոյնիսկ անո՛նք, որոնք երագի կատաղութեան մէջ դանակ էին շար-



Սուրէն Պարթեւեան

ծած իր վրայ, հալածած զինքը կիսագունդէ կիսագունդ, անմահ ապաշափ արցունքներով ւալելով մեր տկարութիւններն ու մեր քէները, մեզ հրաւիրելով պայծառ պատկերին ահաւոր, ցնորեցուցիչ հմայքին,— հայ ազատութեան: Խօսքին զարհուրելի ուժը, կորուստին անպարագիծ ընդարձակութիւնը, հեռուներէն գմբէթուող արշալոյսին ակնախտիղ առքը, մթնոլորտը ու արդէն աւելի լսելի յաղթանակին առաջին ղողանջները, մեր Եռագոյն ու մեր նոր Հարստութիւնը խելայեղ բանի մը վերածեր էին այդ սգահանդէսը:

(էջ 236)

Յակոբ Օշականի օրով, իբրև պերճախօս համբաւուած դէմքերէն մէկը անտարակոյս եղած է Սուրէն Պարթևեան եւ մարդիկ ըստ երեսոյթին յաճախ անդրադարձած են անոր այդ ձիրքին եւ մամուլը անտարբեր չէ գտնուած նոյն հմայքին հանդէպ: Ըսել կ'ուզենք՝ գրագէտի իրաւասութեամբ չէ հիւսուած «Սահակ Պարգեւեան» վէպէն արտագրուած վերի ջատագովականը, այլ ունի իրական խորք մը, որուն մօտաւոր տպատրութիւնները ընթերցողը կարդացած է նաեւ այլուր, մեր պարագային՝ «Հայաստանի կոչնակ»ին մէջ, Յովսէփ Թրգըրեանի ստորագրութեամբ, Գահիրէի «Հայ ազգային սրահ»ին մէջ խօսած ճատին առիթով.

«Եւ ահա՛ բեմ կը բարձրանայ ան: Բայց հոգեկան խռովք մը կը նշմարուի անոր դէմքին վրայ: Լո՛ւռ են երկսեռ ունկընդիրները: Մեղմ ձայնով մը կը սկսի ան նախ՝ ու հետզհետէ որոտացող ամպի մը պէս կը գոռացնէ ու կը թնդացնէ սրահը: Հայերէն բառերը թեւ ու թռիչք կ'առնեն եւ կը յուզեն սրտերը: Ոչ մէկ հայ գրագէտ Պարթեւեանին պէս կրցած է հայերէն գեղեցիկ ու բարդ բառերը գործածել տեղին ու ուժգնութիւն տալ, այլ մանաւանդ նոր բառեր ստեղծել եւ զանոնք հրապուրիչ ընել ընթերցողներուն: Հռետորական արուեստին տիրացած էր ան» (1958, թիւ 32):

Ձ

«ԲԱՆԱՍԵՂԾ-ՎԱՃԱՌԱԿԱՆ ՍԸ»...

Դժուար է մտապատկերել, թէ ինչ սրտառուչ, տխրութեամբ օժուն, խոնարհ հոգիով, անհկա երեսցալ Գահիրէ, Աղեքսանդրիա, խմբագրատունէ՛րն երկօրեայ, եռօրեայ, շաբաթաւոր հայ մամուլին: Առած էր այդ համեստ կերպարանքը, «անձին օրինակովը», անգամ մըն ալ ջախջախելու համար բանաստեղծ-վաճառական մը, որ մուսաներու հետ երկերես քաղաքականութիւն մը վարելով, ափրիկեան հե-

նաւոր ծովափնեայ ոստանի մը մէջ ոսկի էր դիզեր ու եղջերուաքաղ կը կարդար իր գրչեղբայրներուն գլխուն, իր փափաքները իբր իրողութիւններ ներկայելով ու հիմնելով հայ գրողներու տուն, ընկերակցութիւն, հաստատելով ընդարձակ ֆոնտեր, որոնց տոկոսը պիտի ազատէր հայ վաստակաւոր գրագէտները հացին հարցէն, բայց չմոռնալով ասաղել միջակամ իր անկարողութիւնը, գնչուի մը պէս ապրելով, իր միլիոնները Եւրոպա փոխադրելէ ետքը: Պարգեւեան շանթախարիչ երկու սիւնակ հայհոյանքով դիմակը վար էր առեր այդ աճապարարին, որ Ափրիկէ «ծուարած» իր գեղը կ'երգէր, անոր ճամբաները ու տնակները ոգեկոչելով սրտառուչ կեղծիքով:

(էջ 146)

Ինչպէս շարք մը այլ ակնարկութիւններու, դժուար եղաւ մեզի հանդիպիլ նոյնպէս Պարթեւեանի «շանթախարիչ երկու սիւնակ «հայհոյանք»ին: Հարստութիւն կուտակած ու յափտեճապէս աղքատ հայ գրականութեան մշակները յոյսերով օրօրելով ինքզինք շարունակ ցոյցի հանած դիմակագերծեալ «աճապարար»ը ուրիշ մէկը չէ Պարթեւեանի լեզուին մէջ, եթէ ոչ Ռուբէն Որբերեան, որ «Ափրիկէ «ծուարած» իր գեղը կ'երգէր, անոր ճամբաները ու տնակները ոգեկոչելով սրտառուչ կեղծիքով»:

Ստորեւ՝ ակնարկուած երգը.

ԳԻԻՂԻՍ ԾԱՄԲԱՆ

Կեանքի նաւակն հետք չի թողուց իր ետին.
Մոռացումը առաւ ինձ՞՞տ ամէն բան,
Հին երազներս ամպերու պէս կ'անհետին,
Յիշատակն ալ կ'անցնի երգի մը նման:

Հոգիս սակայն կը լիշէ՛ քեզ,
Դո՛ւն, ծաղկաւետ գիղիս ճամբան,
Որ քալէիք գառնուկս ու ես,
Դեպի պուրակն ու բուրաստան,
Անմեղութեան երազին պէս:

Ու բովիկէդ՝ դողդողագին
Սահէր աղուոր, վճիտ առուն.
Մերթ կամուրջին ու մերթ մարգին
Տակ պահուելով՝ կ'երթար հեռո՛ւն,
Ամայութեան իբրև ոգին:

Բարակ, նիհար քանի մը ճիւղ
Կը գատուէին վտիտ բունէդ,
Մին կը դիմէր դէպ' անշուք գիւղ,
Կը տարածուէր, կ'ըլլար անհետ,
Քոյորելով խրճիթն ու հիւղ:

Մին մագըլցէր բլուրն ի վեր,
Միւսը կ'իջնէր ձորակէն վար,
Ուր ուռնցիկ կու տար ստուեր,
Ու սրինգն իր երգը կու լար,
Զոր կրկնէին գարնան հովեր:

Զմբան ալ երբ ձիւնն սպիտակ
Կը գտնէր մեզ շուրջ թոնիրին,
Անհետ կ'ընէր իր ծալքին տակ,
Մեր հին գիւղին վտիտ ուղին,
Ինչպէս մարգերն ու մանիշակ:

* * *

Տաշուած քարէ ուղիղ ճամբան
Կը տանի զիս արդ ի ծովափ,
Կը ճմլուի հոգիս սակայն,
Մտածումով մը հրատապ,
Ու կը թռչիմ հին մանկութեան:

Հոն՝ փակ թէեւ՝ սակայն աղուո՞ր
Ու երփնագե՞ղ էր հորիզոն,
Հմայքներով ի բիրաւոր՝
Անմեղութի՞նը խայտար հոն,
Մամբուն վրայ ոլոր մոլոր:

* * *

Կեանքը նաւակն հետք չթողուց իր ետին.
Մոռացումը առաւ ինձմէ՛ ամէն բան,
Հին երազներս ամպերու պէս կ'անհետին,
Յիշատակն ալ կ'անցնի երգի՞ մը նման:

ՌՈՒՔԷՆ ՈՐԲԵՐԵԱՆ

Բանաստեղծ, թարգմանիչ եւ վիպագիր Ռուբէն Որբերեան ծնած է 1874ին, Մալաթիա: Նախնական կրթութիւնը կը ստանայ ծննդավայրին մէջ: 1892ին կ'աւարտէ Խարբերդի Եփրատ վարժարանը:

1893էն 1900՝ ուսուցչութեամբ կը պարապի, նախ Պոլսոյ եւ ապա Զմիւռնիոյ մէջ: Յաջորդ տարի կը մեկնի արտասահման: 1903էն մինչեւ 1920՝ կ'ապրի Մոմալի ձիպուլթի քաղաքը, իսկ 1920ին վերջնականապէս կը հաստատուի Փարիզ:

Իր առաջին ժողովածուն՝ «Յիշատակաց ծաղիկներ», լոյս կը տեսնէ Պոլսոյ մէջ, 1893ին: 1906ին Գահիրէի մէջ Ռուբէն Ալիքեան ծածկանունով կը հրատարակէ «Ծփանքներ» անուն պոեմը: 1920ին՝ «Ովասիս» հատընտիրը, Փարիզ:

Ռուբէն Որբերեան աշխատակցած է «Մասիս», «Արեւելեան մամուլ» պարբերականներուն:

1895ին, «Ծաղիկ» թերթին մէջ «Ելելէջներ» խորագրով լոյս կը տեսնէ Ռուբէն Որբերեանի ինքնակենսագրականը, իսկ 1898ին «Բիւրակն» թերթին մէջ լոյս կ'ընծայէ «Ֆանիկ եւ ես» վէպը:

Ռուբէն Որբերեան Լորտ Պայրընէն թարգմանած է երեք հատոր: Կը մեռնի 3 Յունուար 1931ին, Փարիզ: Մահէն տարի մը ետք, «Բազմավէպ»ի մէջ լոյս կը տեսնէ «Լորտ Պայրըն» անուն ընդարձակ ուսումնասիրութիւնը:



Ռ. Որբերեան

«ՌՈՒՐԻՇ ԲԱՆԱՍՏԵՂԾ ՄԸ ԵՒ ՓԱՌԱԿԱԶՍ ՀԱՏՈՐԸ»...


Խոստումի մարզին վրայ Իշխանը վար կը մնար միայն արեւմտահայ ուրիշ բանաստեղծէ մը, որ դարձեալ հնդկական «ափերու մերձ», «վաճառականութեան եւ մուսայից» ծառայելով հաւասար «եռանդամբ» դիզած էր պատկանելի հարստութիւն ու գործը հաշուեյարդարի ենթարկելէ յետոյ, կ'ուսումնասիրէր Եգիպտոսը, անցողակի, հաստատուելու համար յԵրոսպա, վերջնականապէս, «իր ձմեռը սպասելու» լուսոյ մեծ ուստաններէն միոյն մէջ: Մինչ այդ, կը բանաստեղծէր ո՛ր որ ըլլար իրեն հրաւեր. գրողներու ֆոնտ կը հաստատէր օդին մէջ, մեր գրականութեան բոլոր գործերը վերստին կը հրատարակէր ծրագիրներու վրայ ու ազգային մշակոյթին իր բոլորանուէր պաշտամունքին, սպասին իբր նախախայրիք, փառակազմ հատորի մը մէջ կը հրատարակէր ե-

րեսուն ու անյի տարիներու «ճգանց երկունք» իր ոտանատրները, իր գեղին փառքն ու տնակին տխուր գեղեցկութիւնը երգող, իր նամակները՝ առ վեհապետս ու քաղաքական նշանատր անձնատրութիւններ, մեր դատին շուրջը, հնդկական ջուրերուն վրայ ծովակալներու եւ մարաջախտներու իր ըրած ընդունելութիւնները, ազգային հարցին իր մատուցած ծառայութիւնները, զանազան խորհրդարաններու, զօրավարներու, նախագահներու, արքաներու իր ուղերձած հեռագիրները, միշտ իր քսակէն ու անոնցմէ ստացողական պատասխանները, — բոլորը մէկ խմբուած **Անապատական** վերնագրով հաւաքածոյի մը մէջ:

(էջ 201)

Ծարունակ աջ ու ձախ շրնալ խոստումներ շաղ տուած այդ «ուրիշ բանաստեղծը», որ երեսուն ու անյի տարիներու «Ծրգանց երկունք» իր ոտանատրները լոյս ընծայեց փառակազմ հատորի մը մէջ, Ռուբէն Ռրբերեանն է նորէն ու խնդրոյ առարկայ հատորը կը կոչուի «Ովասիս», որ, ինչպէս կ'երեւի, «Սահակ Պարգեւեան» վէպին մէջ փոխանակուած է ու կոչուած **Անապատական**:

«Ովասիս»ը լոյս տեսաւ 1920ին, Փարիզ: Անիկա կը հաշուէ 281 էջ, տպուած է ընտիր թուղթի վրայ եւ ունի շքեղ կազմ մը, որուն ներքեւ բանաստեղծը խմբած է համարեա՛ իր բոլոր գործերը:



«ՌՈՍԱՆՔԻՔ ԽԱՂԵՐ»...

Դուք գիտէք անոր տառապանքը ի խնդիր իրապաշտ խաղերու: Չէք գիտեր անոր ինքնախաբութիւնը, երբ պերճ իր բարբառին ապատանած՝ ողմանթիք խաղեր բեմադրեց, առնուած մեր վերջին աղէտէն, խաղեր, ուր կը կրկնուէին Ռուբեանի եւ Պէշկիթաշլեանի միամիտ ու

նամարտակ պարապութիւնները, ու տակալին շատ թարմ, թրթռուն վերքի մը ցաւը կը շահագործուէր ապշեցուցիչ միամտութեամբ մը՝ «արցունք կորզելու» հանդիսականներէն:

(էջ 155)

«Ռոմանթիք խաղեր» բնորոշումը պարզօրէն կը վերաբերի Սուրէն Պարթեւեանի երկու թատերախաղերուն՝ «Անմահ բոցը» եւ «Չայնը հնչեց», որոնք նոյն կողքին տակ լոյս տեսան 1917ին, Ադեքսանդրիա:

«Տեղահան հայութեան ճրգնածամէն» վերցուած նիթին վրայ կառուցուած երեք արարնոց «Անմար բոցը» կը հաշուէ 60 էջ, իսկ «1915ի կովկասեան ռազմախոով կեանքէն» անջատուած 4 արարնոց «Չայնը հնչեց»ը՝ 70 էջ:

Ճ

«ՍԻՐՈՒ ՏԷՐ ՄԵԾԱԳՈՅՆ ԱՇՈՒՂ»...

Գրագէտին թեւին յանձնած լիպիր այն շքեղութիւնը, որ աղջիկն է սերէն ամպհովանուած, անկէ շոգեւոր, անոր համար հասուն, խուզարկու, չգալով, թէ ինչ «ծիրանի ծուխ» կը թաւալէր իր ձեւին ետեւէն, գործածելու համար մէկ պատկերը մեր մեծագոյն աշուղին, երբ «սիրու տէր»ը հողերուն մէջն իսկ կ'այրի կարմիրով ու չի խաղաղիր:

(էջ 169)

«Սիրու տէր» բնորոշումէն յայտնի կը դառնայ, որ եկեղեցական Նահապետ Քուչակն է, որուն ո՛չ ծննդեան թուականը յայտնի է եւ ոչ ալ ծրնրնդարվայրը: Որոշ տուեալներ ցոյց կու տան սակայն, որ ան առաւելաբար ստեղծագործած է Ակնայ մէջ ու անկէ անցած Վանայ Խառակոսնի գիղը, ուր եւ մեռած է խոր ծերութեան մէջ, 1592ին:

Իբրեւ արտայայտչաձեւ՝ Նահապետ Քուչակ որդեգրած է հայրէնը եւ երգած է սէրը, պանդխտութիւնը եւ ընկերային հարցեր:

1957ին, հայրենի մտաւորական Աւ. Ղուկասեան մէկտեղեց յիշեալ հայրէններու ամբողջութիւնը, կատարեց ծաւարուն ուսումնասիրութիւն մը, ծանօթագրեց կնճռոտ մասերը, կազմեց քառարանը եւ տարուած աշխատանքը լոյս ընծայեց «Նահապետ Քուչակ» անունին տակ, 15 հազար տպաքանակով:

Աւելի ուշ, մօրենական կողմէ հայ Վահէ Կոտէլ՝ Բուչակի «Սիրոյ հայրէն» ներէն ֆրանսերէնի վերածեց 61 միատր եւ լոյս ընծայեց առանձին գրքայով մը (1974, Փարիզ):

Ստորեւ «սիրու տէր» թովանդակող քառեակը.

Ով սիրու տէր լինի՝ և իր սիրոյն ճարակ չի լինի,
Թող երթայ փորէ տապան եւ մտնու մէջ կենդանի.
Սրտին դէմն բաց թողու, որ ելնէ բոց ծիրանի.
Ով անցնի նա զայն ասէ՝ «Սիրու տէր մարդն կու վառի»:

ՆԱՀԱՊԵՏ ՔՈՒՉԱԿ

«ԹՈՂԹԻՆ ՀԱՄԱՐ ԱՊՐՈՂ»...

Սա վայրկեանին, Սոնան մարմնացումն էր անոր երեսակայութեան: Այս յայտնութիւնը խոր լքումով մը դառնացուց ինքնաթափանց գրագէտը, որ չէր վարանած իր սիրտին անհունապէս սիրելի այս պատկերն իսկ շահագործել, ի հաշիւ թուղթին, ի՛նք՝ որ ուրիշները ծաղրելու ատեն կ'ուրանար անոնց մէջ զգայնութիւնը ու իր մէկ քանի յաջողած ընկերները «թուղթէ սիրտով», «թուղթին համար ապրող», «իրականութիւնը թղթագործող ճարտարապետ-փերեզակներ կը յորջորչէր»:

(էջ 219)

Ի դէմս պարբերութեան մէջ հոլովում «թուղթ»երուն, ընթերցողը անպայման մտաբերեց Արշակ Զօպանեանի «Թուղթին փառքը» անուն գրքովը, եւ «իր յաջողած ընկերները ծաղրելու» ակնարկութեան

հետ հարկաւ յիշեց Սուրէն Պարթեւեանի «Խարազան»ը, որուն շարժա- ութը Արշակ Զօպանեանն է, եւ գլխաւոր թիրախը՝ Զօպանեանի անձը, գրականութիւնը, հրատարակագրութիւնն ու հանրային դերը:

Վերադառնալով Օշական-վիպասանին վերի ծածկագրութեան, թերեւս անլորդ չըլլայ յիշեցնել, որ Պարթեւեանի «Խարազան»ը կը սկսի ուղղակիօրէն եւ առաջին հերթին կը յարձակի «Թուղթին փառք»ին վրայ, հետեւեալ պարբերութիւններով.

«Անահիտի մեծանուն խմբագրապետը, երկու տարուան սգաւոր լռութենէ մը ետք, ժամանակը եկած համարեր է, վերջապէ՛ս, ձեռքրովս սպաննուած իր գրականութեան դիակը ողջնցնել փորձելու:

«Որչա՛փ կը հասկնամ զինքը, որչա՛փ բնական ու մարդկային կը գտնեմ իր յուսահատ ու ոգեսպառ գալարումները՝ իր անդառնալիօրէն ընկղմած «Թուղթին փառք»ը փրկելու ու վերստին տիրանալու մեր գրասէր հասարակութեան — համոզուած տիրացուներու մեր խանդավառ ամբողխին — ատենէ մը ի վեր ա՛յլ վարանոտ հաճութեանը ու խախտած, կասկածոտ հիացումին» (էջ 3):

Ճ


«ԹՈՒԻ ԲԱՆԱՍԵՂՄԸ»...

Թուի քանաստեղծը եղերգութիւն մը յղացաւ, ուր ողբալու էր մեր աղջիկներուն օտարամոլութիւնը: Եւ ցեղին ոգին հանդէպ անոնց անսրբագրելի մեղքը:

(էջ 280)

50ական թուականներու կէսերուն լոյս տեսած մեր թերթերուն մօտէն հետեւած ընթերցողները հաւանաբար «Յուսաբեր» օրաթերթին մէջ կարդացած են Արսէն Երկաթի ստորագրութեամբ «Յուշեր՝ Սուրէն Պարթեւեանէն» անուն գրութիւնը, ուր կը պատմուին արդէն հրոշակուած գրագէտին եւ սկսնակ քանաստեղծին սերտ կապերը:

Այս տուեալները, ինչպէս նաեւ իրական ու գրական այլ հանգամանքներ մտածել կու տան, որ Օշականի ուրուագրած «Թուի քանաստեղծը» Արսէն Երկաթն է:



Այդ ենթադրութեան հիմք կու տայ նաև «Անապատի յուշարձան»-ին մէջ ստորագրած Արսէն Երկաթի «Մագթադինէ» խորագրուած պատմուածքը, ուր ճիշդ Օշականին կատարած հաստատումին պէս՝ հերոսը լացաւ «Իր ցեղին աղջիկներուն համար, որոնցմէ շատերը կը մեռնէին շուշաններու անբժութեամբն ինկած ճամբաներուն ցեխին մէջ, եւ ուրիշներ հոս՝ օտարութեան ասաղերուն տակ՝ իրենց պատիւը կը ծախէին» (Հատոր 6, էջ 138-139):

ԱՐԱԷՆ ԵՐԿԱԹ

Ծնած է Ամասիա, 1893ին: Նախնական կրթութիւնը տեղւոյն ազգային վարժարանին մէջ ստանալէ ետք, 1907ին կը հաստատուի Եգիպտոս, ու կը յաճախէ նախ Գալուստեան եւ ապա Ֆրանսական երկրորդական վարժարան մը:

1919-1921 թուականներուն Արսէն Երկաթ կը հետեւի Ատրպոնի գրականութեան դասընթացներուն, նոյն ատեն բերելով իր աշխատակցութիւնը համարեա՛ մեր բոլոր թերթերուն:

Արսէն Երկաթ հատորով լոյս ընծայած է «Արեւի եւ մահուան երգեր», «Աստուածներու վերջալոյսը», «Սոնաթներ», «Եգիպտականք» եւ «Քերթուածներ» խորագիրներով բանաստեղծական հինգ հատոր եւ ունի հատորներէ դուրս մնացած արձակ եւ չափածոյ գրութիւններու հսկայ մթերք մը:

Մեռած է 19 Մայիս 1969ին, Մոնրէալ:

✍

«ԱՂՈՒՈՐՆԵՐՆ ՈՒ ՉԱՂՈՒՈՐՆԵՐԸ»

Սոնային շրթներուն ուրուացաւ Տիրանեանի մէկ քերթուածը, ուր, «պատրանքէ զերծ» բանաստեղծը հիմնանիւթն էր ըրեր զգացական այս ողբերգութիւնը, վերցնելով անոր մէջէն գոեհիկ, անմեկնելի գրականութիւնը «միսին ճաշակէն» ու տարածելով զգացումը աւելի հեռուն, քան փոքր պատահարը երկու մեծ բջիջներու, արուին եւ էգին ընդմէջ թաւալող: Անկէ կ'առնէր ներս աղուորներն ու չաղուորները, որոնք օր մը անցնին պիտի բջիջին պարունակէն, նային թոպէ մը միսին, գծեն զինքը ու ա՛լ չդառնան պիտի:

(էջ 314)



Արսէն Երկաթ

* * *

Վահան Թէքէեանի առիթով «աղուորներու եւ չաղուորներու» մասին խօսք բացուած ատեն, մեր բանաստեղծական վաստակի ուշագրաւ ստեղծումներուն հետուէն ծանօթ ընթերցո՛ղն անգամ կը յիշէ նշանաւոր բանաստեղծին նշանաւոր «Աղուորները», ա՛յնքան՝ որ գրեթէ հարկ չկայ Օշականի ակնարկութիւնը շօշափելի փաստով մը հաստատել:

Այսուհանդերձ, «Աղուորները»ուն աղուորութիւնը անգամ մը եւս ուշադրութեան յանձնելու համար աւելորդ չենք նկատեր արտագրել քերթուածը հոս.

ԱՂՈՒՈՐՆԵՐԸ

Աղուորն ա՛ն է յաւիտեան, որ անցաւ օր մը քովէդ
Եւ աչուրնե՛րդ օճեց, — աստուածային այցելո՛ւ, —
Գեղեցկութեամբ մը, որուն ա՛լ չդարձար նայելու,
Եւ չուզեցիր հանդիպիլ անոր անգամ մըն ալ գէթ...

Աղուորն ա՛ն է տակաւին, — յաւիտեանէ յաւիտեան, —
Որ նայուածքիդ արեւին տակ կը մեծնար յամբօրէն,
Որ գէթ ծաղիկ մ'օրօթուող գարնան անուշ հովերէն,
Երբ մեկնեցար՝ մտքիդ մէջ մնաց միշտ թարմ,
Մի՛շտ բուրնան...

Եւ աղուո՛րը, — դուն գիտե՞ս օրհնեալ անունը անոր, —
Անիկա՛ է, որ կարծես պիտի կրնար քեզ սիրել,
Որ սէրդ անշուշտ գուշակեց եւ սպասե՛ց ակընկոր,

Որուն սակայն լաւ է, որ չուզեցիր սիրտը խոտմել...
Աղուորն անոնք են միայն, որ տենչանքիդ ընդմէջէն
Անցան, գացի՞ն ու հիմա քեզ հեռուէն կը կանչեն...

✍

«ԲԱՆԱՍՏԵՂԾԻՆ ԿԱՐԾԻՔՈՎ»...

Բանաստեղծն ու արձակագիրը, հասկնալի յոգնութեամբ մը կը պտտէին գրական երեսոյթներու շուրջը, մեր ու օտար ուղղութիւնները վերլուծել ջանալով ու արագ, ուրուագիծ սեւեռումներ կատարելով Պատերազմէն ասդին յայտնուած գրողներու դէմքերէն: Արուեստ: Հայկական ողբերգութիւն: Համայնավար վարչաձեւ: Մեր վերջին խաւարու-

մը: Գրագետը կը խօսէր, առածակի ու ցցուն: Բայց առանց շեշտի ուժին: Անհկա տկար էր մարմինին չափ հոգիէն: Իր ժողովուրդին պարտադրուած յուսախաբութիւնը վերջին տարիներու գերագոյն մտալկանքն էր անոր. ու անհուն զոհողութիւններու հակադարձ արդիւնքը՝ մեր անկանգնելի տխրահորան: Լեղի այս իմաստութիւնը կը վայլէր անոր կործանած առնութեան: Բանաստեղծը կ'երկրորդէր անոր մտածումները, բաժնուելով Այրարատեան Հայաստանին վրայ անոր հաւատքէն: Մեր ժողովուրդը կանգուն պահող գերագոյն ազդակը, մեր ազգայնականութիւնը արմատէն կը սողոցուէր. բանաստեղծին կարծիքովը, Խորհրդային Հայաստանին մէջ: Ու կը գտնէր համրուած օրերը իր ցեղին: Հայրենիքի գաղափարին բռնադրուած այս քայքայումը, մեզ շրջապատող ազգայնականութեանց թթու ու անզիջող ջուրերուն մէջ, coup de grâce-ն էր, որ կը տրուէր սեպհական ձեռքերէ:

(Էջ 330)

* * *

Թէ ինչ էր 1921ին մեռած Սուրէն Պարթեւեանի կեցուածքը հազիւ սկսած Խորհրդային Հայաստանի հանդէպ՝ քիչ մը դժուար է ճշդել, բայց թերեւս անհրաժեշտ է յիշեցում մը ընել Վահան Թէքեանի անունին դիմաց արձանագրուած այն հաստատումին մասին, ըստ որում՝ «Մեր ժողովուրդը կանգուն պահող գերագոյն ազդակը, ազգայնականութիւնը արմատէն կը սողոցուէր բանաստեղծին կարծիքով, Խորհրդային Հայաստանի մէջ: Ու կը գտնէր համրուած օրերը մեր ժողովուրդին», եւ այլն: Վահան Թէքեանի կեանքի հետագայ փոփոխումն ու կեցուածքներուն ծանօթ ընթերցողը քիչ մը դժուար կ'ըմբռնէ անոր անունին արձանագրած Օջականի պնդումը, բայց պիտի չմոռնանք, որ կը գտնուիք քսանական թուականներու սկիզբներուն, վէպին ընդգրկած ժամանակներուն մէջ, այսինքն այն տարիներուն, երբ Վահան Թէքեան՝ «քիչ մը քէն ըրած էր» Խորհրդային Հայաստանին հետ: Յակոբ Օջական եւ Վահան Թէքեան մտերիմներ էին եւ «հրա՛ւր»՝ Օջական, չէր կրնար շինծու համոզումներ սարքել Թէքեանի հաշուոյն, այն օրերուն անպայման այդպէս կը մտածէր Թէքեան, յաջորդող տարիներու բարեփոխեց իր կարծիքը, ու գրեց՝

ՆԵՐԿԱՅ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

Ներէ՛, որ քէն ըրի քեզի քիչ մը ատեն
 —Մինչեւ երէկ — ու դեռ տար չեմ բոլորովին,—
 Բայց կը խէ շունչդ ինձմէ կայծեր արդէն՝
 Զփայլած հին փայլելիք բոցին հաշուին...
 Սրտէս առաջ միտքս յարեցաւ, փարեցաւ քեզ...
 Միտքը ունի իշողութիւնը մ'անելի խոք

Եւ չէր կրնար ան չիշել Սուրբն ողջակէզ
 Խարոյկին վրայ, ուրկէ Փիւնիկ՝ ծնար դուն նոր...
 Ու գոհացաւ միտքս քեզմով, սփոփուեցա՛ւ,
 Ուրախացաւ մինչեւ անգամ, քեզի դիմեց
 Ու կը դիմէ հիմա՛ ինչպէս գանձի մը մեծ...
 Տարբե՛ր ես դուն մեր երագէն,— անելի՛ լաւ...
 Աւելի լա՛ւ կ'ըսես, այո՛, անզիջ, անգութ,
 Զի դատակնիքն է «չեղածին» փաստն «ըլլալուդ»...

Ճ

«ԶԱԻԿԻ ՀԱՃՈՅՔԻՆ ՀԱՄԸ»...

Տղու չափ ու պէս միշտ անհամբեր, Սահակ Պարթեւեան չըրաւ խաչելութիւնը իր խղճմտանքին, ինչպէս կ'որակէր իր ամէնագոյն ախորժակներուն, բնազդներուն իրմէ կամ դուրսէն պարտադրուած ամէն գրկանք: Ի՛նչ հեշտութեամբ անհկա ընդունեց տղուն անապարագին հեռացումը, փախուստը գրեթէ, երբ պահ մը մտադրած էր վար դնել զայն, իր չուսեցած յարկին տակ, իրեն համար իմաստէ զուրկ, բայց մարդոց գերագոյն զանգումներուն մօտ ամէնէն սրտառուչ հաճոյքը, զակի հաճոյքին համն ալ կուշտ ապրած ըլլալու: Բանաստեղծը թելադրեր է ասիկա, ան ալ այդ զակի վայելքին վրայ խոր իր յուզումին փաստը տուած, անմահ քերթուածի մը մէջ ու իր գրկանքը այդպէս բիրեղացուցած:

(Էջ 406)

* * *

Վահան Թէքեան զարակին նուիրուած ուրիշ քերթուածներ ալ ունի, բայց կը կարծենք, որ Օջական, իր գնահատանքը բանաձեւած ատեն՝ մտքին մէջ ունեցած է «Զաւակս» անուն հետեւեալ բանաստեղծութիւնը:
 Ուրիշ վերլուծողներ, ընդհանուր տպաւորութիւններ արձանագրելու արարքին առընթեր՝ փորձած են վերցնել վարագոյրը Թէքեանի «խոստովանութեան» վրայէն ու դպած են անոր այդ «գրկանքին» ողբերգական պատճառին, իրողութիւն մը, որ սակայն երբեք չի հարուածեր քերթուածին մարդկային յուզումը:

ՋԱԽԱԿՍ

Ջալիի մը շնորհն անգամ, ո՛վ Տէր, գլացար
Ինձի ընդմիջտ, եւ այդ մասունքը սիրոյս
Արգիլեցիր փականքներու տակ անոյս,
Եւ զիս իմ մէջս սպաննեցի՛ր չարաչար...

Երբ ես ծոխս՝ ան բարձրանար քովս ի վեր,
Իմ սպառած կեանքիս հիւթովն առլըցուկ.
Ե՛ս հովանի անոր եւ ա՛ն ինձ նեցուկ,
Ու նո՛ր արեւ՝ աչքին մէջ աչքըս գոցուե՛ր...

Մինչդեռ հիմա դուռնէ ի դուռ, մինչեւ վերջ,
Քիչ մը գորով պաղատելով՝ պիտի գամ
Օտար տղոց քով թափառիլ յարածամ...

Օտար տղոց աշուրներուն, հոգւոյն մէջ
Դողդողագին պիտի տղա՛ս որոնեմ,
Եւ անծանօթ՝ պիտի մեռնի՛մ անոնց դէմ...

«ՍԱՀԱԿ ՊԱՐԳԵՒԵԱՆԻՆ ՄԷԿ ՊԱՏՄՈՒԱԾՔԸ»...

Անիկա կը չարչարուէր երկրորդ յաճախանքէ մըն ալ, Սահակ Պարգեւեանի մէկ պատմուածքէն առնող իր սկիզբը: Սոնան ամէն օր, այս կէս գիշերէն ասոյին, կը կարդար պատմուածքը, որուն մէջ կինը իր արգանդին պտուղը կը սպաննէր, զայն աշխարհ բերելէ ետք, յագեցնելու համար այդ մանուկին հեղինակին դէմ իր անքաւելի վրէժը...

(Էջ 462)

* * *

Ակնարկը կը վերաբերի «Հայուհին» հատորին առաջին կտորը հանդիսացող «Սայթօ» պատմուածքին:

Սայթոն, նոյնանուն պատմուածքի հերոսուհին, գեղեցիկ ու հրապուրիչ աղջիկ, օր մը, կուժը ուսին, աղբիւր գացած ատեն, ուշադրութիւնը կը գրաւէ ձիաորներու խումբի մը գլուխը անցած քիւրտ Հասանին: Վերջինս կը տենչայ ունենալ «հայուն աղջիկը» ու կիրարկուած խորամանկ միջոցներուն վրիպանքէն մոլեգնած՝ իր զինակիցներով գիշեր մը կը պաշարէ գիւղը եւ ինք՝ Սայթոն, եւ միւսները մէկական աղջիկ առեւանգելով խոյս կու տան: Երկու ամիս շարունակ ափափուելէ ետք, ազատ

կ'արձակուին «կուսազրկուած» աղջիկները, որոնց տէր կը կանգնին գիւղին երիտասարդները եւ եկեղեցական պատկով ջնջել կու տան ակամայ գործած անոնց մեղքերը:

Առեւանգեալներուն ամէնէն գեղեցիկը եւ պատուախնդիրը՝ Սայթօ, ատեն մը կը մերժէ գլուխը կապել ուսի տղուն հետ, բայց ի վերջոյ ինքն ալ կ'ընդունի պատկը, պահելով նոյնպէս «իր որովայնին մէջ բունի բնակիչ» սերմը, բայց չի կրնար հաշտուիլ քիւրտի մը ծնունդ տալու գաղափարին հետ: Ու երբ երկուքը կը սկսի, կ'առանձնանայ գետեզերք ու շունչ տալէ ետք իր արգանդին պտուղին, վրէժխնդրօրէն կը կոխկրնտ զայն՝ «Սատկէ՛, սատկէ՛, շա՛ն գաւակ» բացագանչելով:

«Ամէն օր» նոյն պատմուածքը կ'արդացող Սոնա Գոհարեանի մղումէն կը պարզուի, որ ինք ճակատագրակից է Սայթոյին, ա՛յն տարբերութեամբ, որ իր որովայնին մէջ ինկած «անկրելի» փորձանքը քիւրտի մը հեղինակութիւնը չէ, այլ իր խորթ հօրը (Պարգեւեան) ապօրինի զակին պտուղը...

* * *

Ինչպէս ըստեցաւ առաջին էջերուն, այս գրութիւնը երբեք չէր կրնար ու բնաւ չփորձեց մօտենալ առօրեայէն բարձրացած ու «Սահակ Պարգեւեան» վէպէն ներս առնուած գործող կարգ մը անձերու նախատիպարներուն, ինչպէս՝ նշանաւոր պանդոկապետ Մինաս Մարանին, հնդկահայ մեծահարուստ Իշխան Պօղոս Արծրունիին, շլանդուզն, գործօն» երիտասարդ Արտակ Գասպարեանին, Սուրէն Պարթեւեանի առեւանգած կնոջ, խորթ աղջկան, ապօրինի զակին, եւայլն, եւայլն:

Յիշեցնել պէտք է միայն, որ առաջին ակնարկով թափանցելի ուրիշ ակնարկութիւններ եւս կան «Սահակ Պարգեւեան» վէպին մէջ, ակնարկութիւններ՝ պատմական աղբիւրներու (Աւետարան), երկերու (Ծանօթ պատմուածքներ), դէմքերու (Պետրոս Դուրեան) եւ այլ երեւոյթներու ու շարժումներու, բայց արդէն չափազանց երկարած այս աշխատանքին վերջ մը պէտք է դրուի այլեւս...

ՆՈՐ ՎԿԱՅՈՒԹԻՒՆ ՄԸ...

Տասնամեակներ առաջ, մեր ձեռքը պատահաբար անցած էր Զարեհ Որբունիի եւ Պետրոս Զարոյեանի խմբագրութեամբ Փարիզի մէջ 1938ին լոյս տեսած «*Լուսաբաց*» անուն ամսաթերթին երկրորդ համարը, որուն առաջին էջին վրայ կարդացած էինք Սիմոն Վրացեանի մէկ գրութեան առիթով՝ անոր դէմ ստորագրուած բաց նամակ մը:

Կարդացած ու մէկ կողմ դրած էինք ամսաթերթը, որուն գոյութիւնը երկրորդ անգամ զգացուց մեզի Վազգէն Շուշանեանի ձեռագիր-լուսապատճէններուն մէջ գտնուող մէկ անտիպ էջը:

Շուշանեանի գրութեան լոյսին տակ վերաթարմացնելու համար մեր տըպատրութիւնները եւ ի հարկին ընթերցողին սեփականութիւնը դարձնելու համար անոր բովանդակութիւնը, լիբանանեան պատերազմին տեղէ տեղ փոխադրուած մեր թուղթերուն մէջ սկսանք փնտռել «*Լուսաբաց*»ի տուեալ թիւը, բայց անկարելի եղաւ գտնել անոր հետքը:

Փնտռեցինք գրասէր բարեկամներու մօտ - տեղեակ չէին նման ամսագիրի մը գոյութեան:

Դիմեցինք ձեմարանի մատենադարանին - չկար:

Նայկազեան - ի գուր:

Անթիլիաս - նորոգութեան մէջ էր մատենադարանին բաժինը:

Նոյն նպատակով՝

Ճաքս մը յղուեցաւ Վիեննայի Մխիթարեան հայրերու «Կեդրոնական» մատենադարանին: -Պատասխանուեցաւ, որ այդ համարը կը պակսի իրենց հաւաքածոներուն մէջ:

Երկրորդ ֆաքս մը՝ Վենետիկի Մխիթարեան Մայրավանքի մատենադարանին: -Մտացանք Վիեննայի Մխիթարեան «Կեդրոնական» մատենադարանէն եկած պատասխանին յար եւ նման պատասխան մը:

Երրորդ ֆաքս մը՝ Փարիզի «Նուպարեան» մատենադարանին:

Պատասխանը՝ -դրական, ֆաքսով, որուն կցուած էր ձեռագիր սա երկտողը. «*Ինչպէս պիտի նկատէք, սոսկալի վիճակի մէջ են թերթերը*»:

Իրապէս սոսկալի էր «Նուպարեան» մատենադարանէն հասած ֆաքսին պատկերը, մշուշապատ, սեւաթոյր, պարբերութիւններուն մեծ մասը անընթեռնելի:

Նազի կը կռահուէր այն՝ որ ի լուր Ամենայն Վայոց կաթողիկոս Խորէն Ա.ի վախճանման բօթին, «*Կեանք եւ գիր*» ամսագիրին մէջ Սիմոն Վրացեան ստորագրած էր «*Էջմիածնի շուրջ եւ Էջմիածնի առթիւ*» խորագրեալ յօդուած մը, ընդգծելով այն կասկածը, որ կաթողիկոսը բնական մահով չէ վախճանած:

Ահա Սիմոն Վրացեանի յօդուածէն «*Լուսաբաց*»ի մէջ արտագրուած անադարտ պարբերութիւն մը, որ մօտաւոր գաղափար մը կու տայ ամբողջին մասին.

«...Մի բան սակայն ամէնքի համար տարակոյսից դուրս է: Էջմիածնի մէջ եւ Էջմիածնի շուրջ արտակարգ բաներ են տեղի ունենում: Կասկած չի վերցնում եւ այն փաստը, որ Էջմիածնի ողբերգութիւնը մի մասնիկն է այն մեծ ողբերգութեան, որ խաղաղութեամբ է այսօր խորհրդը»:



դային Միութեան սահմաններում, հետեւաբար եւ մեր Հայաստան աշխարհում: Ոչ ոքի համար այլեւս վիճելի չէ, որ մեր հայրենիքը ենթարկուած է մեծագոյն աղէտի: Աղէտ, որ շատ կողմերով յիշեցնում է 1915ի սև օրերը»:

Սիմոն Վրացեանի, գաղափարական իր ընկերներուն եւ ազատ աշխարհի մէջ կամաւոր ստրկամտութիւնը մերժող հայրենասէր մարդոց կռահած այս եւ նման ճշմարտութիւններուն՝ ընդդիմանալով ընդդիմացան որոշ հատուածներ եւ առանձին անձեր, այդպէսով շոյալելով հաւատարմութեան իրենց տուրքը կարմիր բռնակալութեան: Յաւալի է անշուշտ, որ օժտուած կարգ մը գրողներ, եւ անոնց շարքին նաեւ Զարեհ Որբունի՝ զիջեցան ձայն բռնել ստրկահաճներու այդ հաշուական խմբերգին:

Այսօր դիւրին է հարկաւ այն օրերու անցուղարձերուն ճշգրիտ գնահատանքը ընել, բայց այն օրերուն ալ շատ դժուար չէր թափանցել երեսյոթներուն խորքը, եթէ անշուշտ ողջմտութիւնը ըլլար մեր ղեկավար ուժը ու հաշիւներէն աւելի՝ ճշմարիտ հայրենասիրութիւնը դարձուցած ըլլայինք մեր վերաբերումներուն լծակները:

Անդիմագիծ ամբոյններու հետ չփոթուելու համար, բարեբախտաբար մեր մէջ եղած են Սիմոն Վրացեաններ ու Սիմոն Վրացեաններու ճշմարտութիւնը աննախապաշար մտքով ընկալող անարատ հոգիով Շուշանեաններ, որոնք գիտէին, կրնային իրենց համոզումներուն լոյսին տակ խզել իրենց կապերը անգամ երկրի վրայ մնացած սակաւաթիւ բարեկամներուն հետ:

Նոր վկայութիւն մը Շուշանեանի իրաւութեան մասին՝ դիմացի էջը, որ գրուած է խորախոր ապրումի մը հրամայականին տակ եւ իր անձին հետ հաշտ մնալու երդում տուած հոգիի մը օրինակելի սկզբունքով...

Վ. ՇՈՒՇԱՆԵԱՆ

ՕՐԱԳԻՐ

Նետելեալ գրութիւնը բաց նամակ մըն է, ուղղուած Պետրոս Զարոյեանին ու Զարեհ Որբունիին իրենց լոյս ընծայած «*Հուսաբաց*» թերթին երկրորդ թիւին մէջ երեւցած յօդուածներուն առթիւ: Թերն ու դէմը կշռելէ յետոյ նախընտրեցի չհրատարակել: Զուգեցի նաեւ դրկել իրենց: Փոխարէն որոշեցի կապերս խզել իրենց հետ, սպասելով որ կեանքը ազատէ գիրենք այդ վատ ատելութիւններէն:

Այժմ պարզ է ինձ համար, թէ բարեկամութիւնն իսկ, մարդկային տարրական, նուազագոյն յարաբերութիւնը ընկերէ ընկեր անկարելի դառնալ սկսած է հայկական Արտասահմանին մէջ:



ՆՈՅՏԱՐԵՐ ԵՕԹԸ

Ո՛վ որ քիչ մը տրտում պատեհութիւնը ունի հեռու ապրելու հայկական միջավայրէն, կը զգայ ըսածս: Ո՛չ մէկ տարագրութիւն, ինձ կը թուի, թէ այսքան կիրք, այսքան թունաւոր ատելութիւն, այսքան շիւ աշտութիւն կրցած է կուտակել իր երանքներուն մէջ, որքան հայ գաղթական ու մտաւորական յորջորջուած միջավայրը: Ու դուք գէթ, որոնց քիչ մը մոլար ու քիչ մը հմայաթափ բարեկամութիւն մը զիս կը կապէր, դուք՝ որ յեղափոխական ու նաեւ հետեւաբար ազատական տրամադրութիւններ ունենալ կը կարծէք, դուք՝ որ քանի մը կուսակցական գաիթներու եւ կամ այդ նոյն կազմակերպութեանց շուրջ գոյացած մտաւորական մթնոլորտին մէջ քանի մը մկրտութիւն ստացած էք, — դուք գէթ պիտի զգայիք, թէ աստանդական, աշխարհի ապալիր ճամբաներուն վրայ իր ներբանները մաշող այս աշխատաւոր ժողովրդին կեանքին մէջ, այսուհանդերձ կարգ մը լուսաւոր տարրեր, կարգ մը ազնիւ ճիգեր, կարգ մը արժէքներ կան, որ գոնէ արժանի են *լուրջ* վերաբերումի, եթէ ոչ յարգանքի:

Այլեւս տարիք մը կայ, ուրկէ անդին մարդ պարտաւոր է գիտնալ գործածած բառերուն իմաստը: Տարիք մը կայ, երբ գրիչ շարժելը պատասխանատուութիւն մը կ'ենթադրէ:

Դուք եւ ես կը մօտենանք քառասունի բարձունքին: Ժողովուրդներ կան, որոնց առաջնորդող տարրերը, ղեկավար շարքերը մեր տարիքն իսկ չունին:

...Մեր կամբքընկէջ լեզուն, որ այժմ դուք կը գործածէք միայն անարգելու համար անոնք, որ այս դաժան ժամերուն, դեռ հաւատք ունին այս ժողովրդին հոգւոյն վրայ, անոնք, որ իրական ճարտարապետներն են մեր նոր հպարտութեանց:

Անկարելի՞ է միթէ սպասել՝ շուրջ տասնութ տարիներէ ի վեր, արեւմտեան մտքին ու քաղաքակրթութեան հետ ուղղակի յարաբերութեան մէջ եղող անձերէ՝ գրիչ շարժելէ առաջ չմոռնալ դէպքերուն կարեւորութիւնը: Զատորոշել ժողովրդի մը կեանքին պզտիկ մանրամասնութիւնները անոր հիմնական հոգերէն, անոր պատմութեան առաջնակարգ խնդիրներէն:

Ու այս ճգնաժամային տարիներուն, երբ ողջ ժողովուրդներու, ազգերու եւ պետութիւններու, երբ միջազգային աշխատաւորութեան խաղաղութիւնն ու կեանքը վտանգի տակ են, երբ նոր փլուզումներ կը սպառնան կործանել առաթուր մեր պանդուխտ, խոնարհ տուններն ու որքա՞ն խախտւտ մտքի շէնքերը, երբ Աննիբալը հասած է մեր դրան առջեւ, երբ խորին ցաւով մը ամէնուրեք կը փնտռենք մեր հոգւոյն հաւատարմութիւնը իր էութեան՝ ապերախտ ու հիւրընկալ ափերու վրայ, երբ ոչինչ ապահով է ու ամէն ինչ վտանգաւոր, — անըմբռնելի յանդգնութիւնը ունիք, դո՛ւք՝ որոնց վաստակը այնքան չնչին է, որոնց հազիւ թափած քրտիկըրը այնքա՞ն ամուլ պատմութեան ակօսներուն մէջ, պզտիկ պարոններու պէս, որ կ'ուզէի որ չըլլաք, — ատելութեան խեղճ դրօշակներ շարժել կարճ կայմերու վրայ, լուտանքներ արձակել յետին բեմէ մը, որ ձեր դուզնաքեայ թերթն է:

Ա՛յս է միթէ մեր սերունդին ուսերուն վրայ պատմութեան դրած մեծ պատասխանատուութիւնը, — այս հէք ու ողբալի կոհիւր, որ կը մատնէ լոկ անբուժելի ախտ մը, Հ. Յ. Դաշնակցութեան դէմ ձեր մոլի քէնը, որ ժառանգած էք ձեզ նախորդող սերունդներէն եւ որ կը խնամէք գէշ գործով մը, Հայ Յեղափոխութեան հարազատ կրողներուն դէմ, — հարազատ նաեւ, որովհետեւ անոնց անձերուն մէջէն յեղափոխութեան դէմ իսկ է, որ իրապէս կը կոռիք, կը ջանաք կոռիլ:

Ու չշփոթիք, — հոս Ս. Վրացեանի անձը չէ խնդրոյ առարկան, թէեւ տեսակ մը հպարտութեամբ ու խորին հաճոյքով է, որ կը գրեմ այս քանի մը տողերը, որ պիտի յաջորդեն, — Վրացեանի կեանքը, որ կ'անգիտանաք, — վասնզի ի՞նչ գիտէք, որ ձեր ատելութիւններէն դուրս ու տարողութեամբ ու կարեւորութեամբ այնքան անդին է ձեր առտնին յարձակումներէն, որ պէտք չունի պաշտպանութեան ու երբ մա՛նաւանդ այնքան զանցառելի ու նսեմ է կոհիւր, որ իբր թէ կը մղէք, անկիւնի մանուկներու պէս, որ պատերազմ կը խաղան. խե՛ղճ սիրելի տղաք, որոնց *Հուսաբացը* լոյս կը ձգէ միայն քէներու նեղ փողոցի մը վրայ:

Արդարեւ կ'ուզէի, առնուազն հինգ տարիներէ ի վեր, որ իմ գրչովս գրուած ըլլային այս տողերը: Զի ուրիշ է քաղաքական նոյնիսկ բուն, նոյնիսկ չափազանց պայքարը, տեսական ընդդիմութիւնները, որ ինձ նման մարդիկ կրնան ունենալ, իրենց երէկի ընկերներուն հետ, եւ ուրիշ՝ արդա-

Անկարեկիր պատմութեան դիմաց, հեզնել կարենալու համար մեծ գործաւորներու հասակը, հարկ է գէթ գաճած չըլլալ հոգւով:

րութիւնը, որ մտաւորական մը պարտաւոր է իր բիբերուն լոյսին պէս սիրել:

Այս տասնվեց տարիներու ընթացքին թող ձեզմէ մէկը պարզ քաջութիւնն ու պարզ աշխատասիրութիւնը ունենար կուտակելու հայ կեանքին վաւերաթղթերը, քննելու դէպքերը՝ գէթ նուազագոյն անաչառութեամբ ու պատշաճ, ծանրաբարոյ լեզուով մը, որ լոկ կը յարմարի կարեւոր դէպքերուն, քննական ոգով, անողոք տրամաբանութեամբ, քանի որ բնութիւնը ձեզի նման մեծափայլ իմացականութիւններ պարգեւած է ու դատէր գանոնք, Ս. Վրացեանն ու միւսները: Ասիկա ձեր իրաւունքն էր, ձեր իրաւունքն ու պարտականութիւնն էր, դո՛ւք՝ որ վստահաբար չէք գիտեր, թէ ի՛նչ կը սիրէք, ինչպէս ձեր մեծաշոհն ու փքուողոյց լուսեղբայրը, որ Թահան Թահնուր կը կոչուի — այլ որ միակ ատելութիւն մը ունիք ու միակ թշնամի մը — Հայոց Յեղափոխական Դաշնակցութիւնը: Դուք՝ որ ամէն ինչ ներել ու ամէ՛ն ինչ ընդունիլ գիտէք, պայմանաւ որ ձեր արարքները յաջողին վնասել հայոց միակ լուրջ կազմակերպութեան:

Չնչի՛ն, ատելավա՛ն պարոններ:

Մարդը՝ որուն զարմանալի, յարգելի աշխատասիրութեան առջեւ կրնան գլխարկ հանել մեզմէ ու ձեզմէ շատերը, որ *Նկարագիր* մը ու *անհատականութիւն* մըն է, որ խորին գորով մը տաճած է միշտ, առանց կուսակցական խտրութեան, բոլոր այն երիտասարդներուն հանդէպ, որ տաղանդին աստուածային ճառագայթը ունին իրենց ճակտին վրայ, որ յոյժ դժուար ու վտանգաւոր ժամերու ցոյց տուած է *բարոյական* ու *մարմնական քաջութիւն* մը՝ որուն, հաւատացէ՛ք ինձ, կրնայ պէտք ունենալ այս ժողովուրդը, որ ցայժմ կը շարունակէ ուսանիլ ու կեանքի բոլո՛ր կաւածներուն մէջ, անշուշտ վեր չէ ու չ՛ուզեր իսկ ըլլալ պատմութեան, այսինքն՝ բարձրացող սերունդներուն դատաստանէն: Այլ դատ չէր ի՛նչ որ ձեր երէցները առջի օր վարեցին, ի՛նչ որ վերոյիշեալ եղկելի կղկղանքի պատմութիւններու հեղինակը — որուն բարոյական անձը այնքան գարշահոտիլ սկսած է, որ մարդ չ՛ուզեր հպելով իսկ անցնիլ քովէն — երէկ վարեց ու դատ չէ ի՛նչ որ դուք այսօր կը վարէք: Դատ չէ, այլ բանասրկութիւն: Դուք եւ ձեր նմանները ուղղամտութեամբ աշխատիլ չէք գիտցած բնաւ ու չէք ուզած աշխատիլ: Ցայսօր իսկ պատմութիւնը կը սպասէ ձեզմէ, փոխանակ աղտեղի բանասրկութեան.—

Որ, ըստ ձեր հայեցողութեան, քննէք հայոց նախայեղափոխական շարժումները, ճշդէք տնտեսական, ընկերային, քաղաքական ու մշակութային պայմանները, որ Հ. Յ. Դաշնակցութեան կազմութենէն առաջ իսկ, հայ ժողովուրդը դրած էին հաւանական ընդդիմադիրի վիճակին մէջ, տիրող զոյգ կայսրութեանց դէմ:

Չկայ գեղեցիկ երեւոյթ մը հայ կեանքին մէջ, որուն իր թարմ, իր արու շունչովը հպած չըլլայ Հայ Յեղափոխութիւնը:

Որ աչալըջութեամբ ի վեր հանէք հայ եկեղեցիին, հայ ունետր դասին, հայ գիւղացիութեան ու հայ արհեստաւորութեան յարաբերութիւնները ներքին իշխանութեանց հետ ու այս խաւերուն իւրաքանչիւրին դիրքը հանդէպ տիրող պետութեանց:

Որ ո՛չ թէ դիպակաւ ու պարագայական յօդուածներով, այլ կարեւոր ուսումնասիրութեամբ մը, ուր դէպքերը կը գերադասուին անձնական հակումներէն, գէթ հակիրճ պատմութիւնը գրէք հայ յեղափոխական կազմակերպութեանց — ձե՛ր գիտցածին, ձե՛ր հասկցածին պէս, ձե՛ր պարկեշտութեամբը, քանի որ պարկեշտ կը դասանիք դուք ձեզ, այլ յարգելով իրողութիւններն ու զգալով ժողովրդին հոգւոյն ակեկոծումները ու ապա միայն ձեր հէք ուսերուն նետէք դատաւորի ծիրանին, անարգելու համար մարդիկ,—

Որ հայկական լեռներուն վրայ առաջին յեղափոխական երգերը հնչեցուցին, երբ մեր հայրերը համրիչ կը դարձնէին ու երկուքի կը ծալլէին քսու իշխանաւորներու առջեւ — թէն այս ալ զբաղում մը ըլլայ, հաճոյ *Թրիթի* հիօթեղ պատմութեանց շաղակրատ հեղինակին:

Որ վեց դարերէ ի վեր զէնքի գործածութիւնը մոռցած ժողովուրդի մը չարքաշ ափերուն մէջ դրին առաջին հրացանները, որպէսզի ան կարենայ պաշտպանել իր հոգւոյն գեղեցկութիւնը:

Որ նորոգեցին հայոց հոգին, որ զայն վերստին մկրտեցին՝ իր արեան նորոգ շերտութեամբը, որուն շրթներուն երգ ու հոգւոյն սնունդ տուին, որ յետին ասաններուն ու շէներուն մէջ՝ խորին, աղուոր, յուզիչ յամառութեամբ մը վերստին ու վերստին սկսան հեզել տալ մեր մանուկներուն հայոց քաղցրը լեզուն, նորոգ արութեամբ մը, մեր կամրջընկէց լեզուն, որ այժմ դուք կը գործածէք միայն անարգելու համար անոնք, որ այս դաժան ժամերուն, դէռ հաւատք ունին այս ժողովուրդին հոգւոյն վրայ, անոնք, որ իրական ճարտարապետներն են մեր նոր հպարտութեանց:

Ի՛նչ կ'ուզէիք դէռ, ո՛վ դուք՝ որ խաղաղութիւն չունիք, որովհետեւ ո՛չ մէկ իրապէս ազնի ու ստեղծագործ աշխատանքի կապած էք ձեր անունը, ո՛վ դուք՝ որ վեհանձնութիւն չէք գիտեր, որովհետեւ իրական մեծութիւնը իր հրաշէկ հովերով չէ դպած ձեր մարմիններուն — ի՛նչ կ'ուզէիք դէռ, որ այս մարդիկը տուած ըլլային ձեր շիւ արդարութեան արժանի ըլլալու համար:

Կ'ուզէիք գուցէ, որ ձեզ հանգիստ ձգէին՝ ձեր հոգւոյն գերութեան ու ձեր ատելութիւններուն աղբին մէջ, թոյլ տային, որ շարունակէիք գովել ձեր բոլո՛ր բերաններով բոլո՛ր բռնաւորները: Ո՛չ, ատիկա կարելի չէ, այդ իրաւունքը չունիք դուք:

Իմացէ՛ք, ո՛չ մէկ Վարք-Սրբոց կը հաւասարի հայ խոնարհ զինուորներու, գրչի աշխատաւորներու, յեղափոխականներու մեծագործութեանց

Քառասուն եւ ութ տարիներէ ի վեր այս ժողովրդի մէջքին դօտի էր Հ. Յ. Դաշնակցութիւնը, անոր հորիզոններուն դէմ արդարութեան շեփոր ու շէնէ շէն բանաստեղծութեան շարական:

մատենանին: Ու հակառակ ձեր անզգայ տգիտութեան՝ արդար մարդկութիւնը գիտէ, թէ փառաւոր գործեր կատարուած են նաեւ մեր բարձրաւանդակին վրայ: Իսկ դուք, որ յանդուգն ըլլալ գիտէք միայն վերջին երկիրներէն մէկուն մէջ, որ դեռ կը ներէ գերիներուն իրենց ողբալի երգը թոթովել — տխուր համարձակութիւնը ունիք չափուելու մարդոց հետ, որ արեան մկրտութիւն ունին:

Անշուշտ կարելի է յայտարարել, յայտարարել ու ջանալ հաստատել, թէ պատմութեան այս ժամուն՝ հին կազմակերպական ձեւերը այլեւս չեն կրնար պատասխան տալ նոր անհրաժեշտութեանց: Կարելի է ասիկա:

Կարելի է վերջին քառասուն տարիներու ընթացքին մեր մղած պայքարին հաշուեկշիռը հանել ու բարձրաձայն գոռալ, թէ արիւնը, որ թափեցինք շատ թանկագին էր, մեռելները, որ թողուցինք նուաստութեան դաշտերուն վրայ շատ սիրելի էին ու ի՛նչ որ շահեցանք, չարաշո՛ւք շահ, չըւառութիւն էր ու աղէտ: Կարելի է ասիկա:

Կարելի է մարդիկը, քանիօ՞ն յուզիչ իրենց ճիգովն ու պարտութեամբը, դէմ դիմաց դնել պատմական պեղծութեանց հետ ու գտնել, թէ պզտիկ էր իրենց հասակը, թէ ուժեղ չէր իրենց կրակը, թէ տկար էր իրենց գրոհը — թէ եւ ո՞վ է, որ իրաւունք ունի ազնիւ մեռելները կշռել պատմութեան նժարին մէջ, ա՛յն՝ որ պատրաստ է իր արիւնը թափելու: Անկարելի էր պատմութեան դիմաց, հեզմել կարենալու համար մեծ գործատրներու հասակը, հարկ է գէթ զանաճ չըլլալ հոգով: Այլ կը կրկնեմ, դեռ կարելի է ասիկա:

Կարելի է դատի քաշել յեղափոխութեան սկզբունքն իսկ, թէ եւ ի՛նչ էր մեր յեղափոխութիւնը, եթէ ոչ պարզ պաշտպանութեան փորձ մը՝ ընդդէմ ոճիրին, հարստահարութեան, քաղաքական ստրկութեան. կարելի է հեռաւոր գորով մը ունենալ դէպի ինչ որ կորուսեալ է, ինչ որ անօգուտ կերպով կը յապաղի, դէպի յետադիմութիւնը՝ որ կը կրէ մեր արիւնը դարերէ ի վեր: Կարելի է ասիկա:

Կարելի էր երէկ ու կարելի է դեռ այսօր ասիկա: Այլ գէթ հարկ է դասախօսի ակնոցներ դնել ու Լեոյի նման գէշ հոգի մը ու համբերութիւնը ունենալ հին թերթեր ու հին գրքեր թղթատելու: Զրպարտութիւնն իսկ՝ ճիգ մը կ'ենթադրէ, միւսդեռ դուք, առակին արջին պէս, մէկ հատ հին երգ գիտէք, որ զագրելի վայնասուն մըն է լոկ՝ ժողովրդին ազնիւ զաւակներուն մէկ կարեւոր մասին դէմ:

Այս աղտելի երգն է՝ ձեր մարտակոչը:

Սեւ լաթի կտոր մըն է՝ ձեր դրօշակը:

Անկարող ծերերու ատելութիւն մըն է՝ ձեր հաւատամբը:

Չկայ գեղեցիկ երեսոյթ մը հայ կեանքին մէջ, որուն իր թարմ, իր առու շունչովը հպած չըլլայ Հայ Յեղափոխութիւնը:

Եթէ Արտաւազդի պէս շղթայակապ ու դերեալ չէ, մեր լեռներու ընդերքներուն մէջ, հայ աշխատաւոր ժողովրդի հողին, ինչո՞ւ ծածուկ ու որքան յուզիչ բանաստեղծական բառերու մէջ մեզ հաւատարմութեան կը կանչէ Եղիշէ Զարենց:

Հայու արուագեղ ու գեղանի տիպարներու ողնայարը՝ մեր յեղափոխութեան զէնքերուն պողպատէն է:

Հայոց նոր հոգիին իրապէս մեծ ճարտարապետները զաւակներն են այդ յեղափոխութեան: Կոմիտասի երգը ծործորէ ծործոր ու պարէ պար թաւալած է, որովհետեւ հայ յեղափոխական հոգին ձայն տուած է անդերէն ու սարերէն: Վարուժանի ոտագեալ ու պերճ հայերէնը՝ հայերէնն է յեղափոխութեան, որ իր ոսկեայ կամուրջը նետած է անցելոյն ու ապագային միջեւ: Զեր Թէքէեանն իսկ իր ազատութեանց գորովները սկսած է հեզել փոխ առնելով յեղափոխութեան վանկերը:

Իմացէ՛ք ասիկա, ձեր վարդապետներէն ու պատրիարքներէն անոնք են, որ պիտի վառին սրբազան լոյսով մը, պատմութեան պատատոհն վրայ, որ զգացած են յեղափոխութեան շունչը:

Հայ Յեղափոխութիւնը եղած է հաւատարմութիւն — հաւատարմութիւն դէպի ի՛նչ որ բարբախուն էր ու դեռ կենդանի ստրուկ ժողովրդի մը կեանքին մէջ: Հաւատարմութիւն նոյնիսկ դէպի եկեղեցին, երբ ան հաւատարիմ էր իր էութեան: Իսկ դուք լոկ անհաւատարմութիւն էք ու կը սիրէք ի՛նչ որ դրուժան է ու ի՛նչ որ կը ժխտէ ու կ'անարգէ:

Հայ Յեղափոխութիւնը գորով էր ու զգայասիրութիւն: Հայոց լեռները անգամ սկսած էին հնչել, այնքան գոռ ու քաղցր էր միաժամանակ անոր ոսկեղրուագ շեփորին ձայնը: Այլ դուք ոչ ի՛նչ կը սիրէք, վասնզի կ'ամչնաք ձեր էութեան: Ծճմարտութեամբ կ'ըսեմ ձեզի, լոկ կիները կը սիրեն բռնաւորին հարուածը: Հիւսիսի անոպայ ու անկիրթ բռնաւորին դիմակին վրայ՝ յեղափոխութիւնը լոյսի յետին կտոր մ'իսկ, ոսկեայ փոշի մ'իսկ չէ ձգած: Թաւալող կառափներու աղմուկը, բանտի սալայատակներու վրայ, եթէ դուք չէք լսեր՝ որովհետեւ կոյր է ձեր հոգին, որովհետեւ խուլ է ձեր հաւատարմութիւնը:

Բարտիներու պէս թրթուն տղաք էին մեր եղբայրները: Այդպէս էին արդարեւ: Ու այո՛, պզտիկ պարոնայք, իրաւունք ունէինք համաձայն չըլլալու իրենց հետ, իրաւունք ունէինք պայքար մղելու իրենց դէմ: Ապացոյցը, որ իրաւունք ունէինք՝ իրենց դաժան լոռութիւնն իսկ է: Այլ իրական յեղափոխական մը չի կրնար չսիրել ուրիշ յեղափոխական մը: Մեր երգն էր, որ կը շարունակէին երգել՝ ուրիշ չափով, ուրիշ նուագով, ուրիշ ամանակով մը: Այլ Բակունցներու ու Մահարիներու շրթունքներուն վրայ՝ յեղափոխութեան ու բանաստեղծութեան առաջին վանկերը եւ մեր շրթունքներուն վրայ՝ հաւատարմութեան այս քաղցր բառերը, ճճմարտութեամբ կ'ըսեմ ձեզի, կը հոսէին նո՛յն աղբիւրէն, կը կարկաչէին նո՛յն ծածուկ երաժշտութեամբ:

Հտպիտներու, հացկատակներու եւ արքունի սպասեակներու ոչ մէկ փաղանգ կրնայ ընդմիջտ լռեցնել ժողովրդի մը երգը:

Այս պատճառաւ է, որ ինձ նման մէկու մը գրչէն ելած քանի մը հազար էջերուն մէջ տող մը չէք կրնար գտնել, ձեր երիցս ողբալի ասելութեան մանրադիտակներով իսկ, որ իրական արհամարհանքի, իրական անարգանքի, իրական ասելութեան շեշտ մը պարունակէ դէպի անոնք, որ իրաւունք իսկ չունին այժմ, այդ մեռելներու երկրին մէջ, մեր բոսոր դրօշակին ծալքերուն մէջ փաթթելու իրենց կանաչ ընկերներուն տրտում դիակները, որ իրաւունք իսկ չունին քաղցր խօսք մը ըսելու, յետ մահու, անոնց վաղ բացուած փոսերուն առջեւ:

Երիտասարդներ, դուք եւ ձեր Ծահնուրները: Յեղափոխականներ, ըմբոստներ, դուք եւ ձեր Ծահնուրները: Ի՞նչ հեզնութիւն:

Ահա՛ իրական դէմքը յետադիմութեան — գրչի յելուզակի, մտքի դաւադրութեան, աղտեղի կրքի, իրապէս փողոցային ու դեղին ստահակի դէմքը սա Ծահնուրին: Զգո՛ւ՛յ՛, Հ. Յ. Դաշնակցութեան գաղութներու մէջ աղարտեալ դէմքին ետեւ՝ ես կը զգամ դեռ շքեղ պայծառութիւնը մեր հոգիին: Զգո՛ւ՛յ՛, մեր սխալներուն, մեր զայրոյթներուն, մեր յուսահատ քէններուն ետին՝ ես դեռ կը զգամ ազնիւ ու բորբ կրակը մեր արեան: Զգո՛ւ՛յ՛, դուք կը մոռնաք թէ ո՛ր է արդարութիւնը, ո՛ր է երգը, ո՛ր է բանաստեղծութիւնը, ո՛ր է հայրենիքը:

Եթէ վաղը Ամանոսեան լեռներու փէշերէն մինչեւ Միսիսիսիի եզերքները, Պուէնոս-Այրէսէն մինչեւ Մարիճայի ասիերը լռէ մեր այսուհանդերձ երիտասարդ ձայնը — ի՞նչ պիտի մնայ գօտեպնդելու համար ձեր աղքատութիւնը, ի՞նչ պիտի մնայ պրկելու համար ձեր թոյլ հոգիները: Քանասուն եւ ութ տարիներէ ի վեր այս ժողովրդի մէջքին գօտի էր Հ. Յ. Դաշնակցութիւնը, անոր հորիզոններուն դէմ՝ արդարութեան շեփոր ու շէնէ շէն՝ բանաստեղծութեան շարական: Զգո՛ւ՛յ՛ մեռելներու սարսափելի լռութենէն: Ծշմարտութեամբ կ'ըսեմ ձեզի, ի՞նչ պիտի մնայ գուրգուրալու համար ձեր յապաղող, ձեր ուրացող երիտասարդութիւնը: Ո՛վ պիտի մնայ, կանգուն ու զօրեղ, որպէսզի փորձէք ձեր ուժը:

Ձեր Վահան Թէքէեան բանաստեղծը վաթսուն տարեկան եղած է միշտ, իմացէք ասիկա:

Ձեր Թորգոմ Գուշակեան պատրիարքը կը պատկանի անցելոյն՝ ինչպէս մաշած մագաղաթ մը:

Ձեր Ծահնուրը պալար մըն է միայն եւ ուրիշ ոչինչ:

Ու ո՛վ ձեզի իրաւունք կու տայ ենթադրելու, թէ տապանաբարերու զարհուրելի լռութիւնը հաւանութիւն է ու հանութիւն՝ դէպի բռնութիւնը:

Այլ դուք ընկերվարութեան այբուբենն իսկ չէք գիտեր: Այլապէս պիտի երկնչէիք իրողութիւններէն: Երբեմն անոնք ահարկու են ինչպէս մեր մեծ լեռը ու մերթ մեղմ՝ ինչպէս մեր ցարասիներուն սօսափիւնը: Ու հէքեր

Ծշմարտութեամբ կ'ըսեմ ձեզի, չկայ արդար ու մեծ արարք մը, չկայ գեղեցիկ ստեղծագործութիւն մը հայ կեանքին մէջ, որուն վրայ իր գորովայի շուքը ձգած չլլայ հայ Յեղափոխութիւնը:

են անոնք, որ չեն կրնար տեսնել լեռներն ու չեն գիտեր լսել սօսափիւնը տերեւներուն: Բռնութիւնը երկու երես ունի՝ մէկը կեղծ հաւատարմութիւնն է, ու միւսը՝ սեւ ուժը: Անապատի աւազներուն խորը տարտղնուած մեր ուկորներն ալ խաղաղութիւն յայտարարած են աշխարհին ու իբր թէ ներած բռնութեան: Այլ այս խաղաղութիւնը գիտենք, թէ ի՞նչ կը նշանակէ: Բռնութեան խուլ հեւքը կը շփոթէք խաղաղութեան հետ: Բռնութեան զագիր մականը՝ յեղափոխութեան արդար իշխանութեան հետ: Գերի ու վարձկան բանակներու զէնքերուն շկահիւնը՝ ազատ ժողովուրդներու յարուցած զրւարթ աղմուկին հետ: Ու խառնիճադանը, որ կիսակիրթ մարդիկ հայերէն կ'անուանեն Արագածի փէշերուն տակ՝ կը շփոթէք մեր ոսկեհունչ լեզուին հետ, որ երգ է ու ազատութիւն, որ օր մը վերստին պիտի կարկաջէ մեր կամբքընկէց գետերուն հետ՝ հայոց ձորերն ի վար:

Եթէ ազատ են մեր Երկրքին Մասիսները, ինչո՞ւ ուրեմն լուռ է Արագածի շիրին երգիչը, ինչո՞ւ կը կակազէ մեր շէն Թիրակացին,— Աւետիք Իսահակեանը:

Եթէ Արտաւազդի պէս շղթայակապ ու գերեալ չէ, մեր լեռներու ընդերքներուն մէջ, հայ աշխատատր ժողովրդի հոգին, ինչո՞ւ ծածուկ ու որքան յուզիչ բանաստեղծական խաղերու մէջ մեզ հաւատարմութեան կը կանչէ Եղիշէ Զարեան:

Եթէ յեղափոխութեան դէմքը դեռ մաքուր է երկրի ճամբաներուն վըրայ, ինչո՞ւ Զապէլ Եսայեան մեծ արձակագիրը չի շարունակեր իր գովքը:

Հտպիտներու, հացկատակներու եւ արքունի սպասեակներու ո՛չ մէկ փաղանգ կրնայ ընդմիջտ լռեցնել ժողովրդի մը երգը:

Ծշմարտութեամբ կ'ըսեմ ձեզի, այլեւս ժամը հնչած է արդարութեան: Այլեւս ժամը հնչած է մեծ հաշտութիւններուն: Հաշտութիւն՝ մահուան հետ, եթէ հարկ ըլլայ: Հաշտութիւն՝ անոնց հետ, բոլոր՝ *անոնց հետ*, որ հաւատարիմ են կարգ մը անատարկելի արժէքներու:

Յեղափոխութիւնը բառ մը չէ միայն, այլ իրողութեանց ու պայքարներու, հաւատարմութեանց ու արժէքներու խորին հանգիստութիւն մը:

Ու հարցուցէ՛ք վայրկեան մը, թէ ո՛վ է իրապէս յեղափոխականը:

—Ան, որ հաւատարիմ է հայ աշխատատր ժողովրդի մշակութային արժէքներուն: Ան, որուն շրթներուն վրայ դեռ քաղցր կը հնչեն հայոց լեզուին բառերը: Վասնզի անվթար պահել քաղաքակրթական այս չքնաղ հարրատութիւնը, որ մեր իրաւագուրկ ժողովրդին լեզուն է, յեղափոխական ծառայութիւն մըն է: Նաեւ ան, որ կ'երգէ գեղեցկութիւնն ու մեծ տառապանքը մեր պատիկ ժողովրդին, որ մեծ ազգ մըն է այսուհանդերձ, իր լաւագոյն զաւակներուն խորին հաւատարմութեան առընչութեամբ ու պատճառաւ:

Կարճ է ձեր յիշողութիւնը, ինչպէս կարճ է ձեր ծայրը: Ինչպէս կարճ է ձեր շունչը հագագելու համար երգը Յեղափոխութեան:

—Ան, որ իրապէս երիտասարդ է դեռ, որուն արարչագործ ասիերէն մեր ժողովրդին հոգին կ'ելլէ պաղպաջուն մարմարներու պէս: Ան, որ կ'ընդունի վտանգը, ի խնդիր ծառայութեան, կ'ընդունի մահը՝ պահելու համար ի՛նչ որ իրական պերճանքն ու էութիւնն է միաժամանակ ժողովրդին — անոր ինքնատարութիւնն ու իւրապատուկ շնորհը:

—Ան, որ չ'ընդունիր բռնութիւնը, որ կը ջանայ շտկել իր մէջքը՝ պատմութեան է՛ն դաժան ժամերուն, իր ընդերքներուն խորէն մարտի կոչելով մարդուն է՛ն մեծ արժանատրութիւնը — տենչը ազատութեան: Ան, որ իր արիւնով կը կերակրէ իր զաւակը:

—Ան, որ քառասունութ տարիներէ ի վեր կը կոռի իր ներքին յետաշրջութեան դէմ՝ հերոսական խիզախութեամբ մը, որ զայն կը հալածէ իր յետին թաքստոցներուն մէջ: Որ ո՛չ ուրեք կրնայ հանդուրժել անոր սեւ դէմքին:

—Ան, որ կրցած է, անցելոյն մէջ որոշ չափով ու կ'ուզէ դեռ սանձել դրամին ահարկու ուժը, որ կուսակից է անհատին արդար, այլ աստիճանական ու կարգապահ ձերբազատման, ան, որ իր դրօշակին փառաւոր ալիքներուն մէջ կը պահէ անհինը ազատութեան ու յեղափոխութեան զինւորեալներուն:

Ճշմարտութեամբ կ'ըսես ձեզի, չկայ արդար ու մեծ արարք մը, չկայ գեղեցիկ ստեղծագործութիւն մը հայ կեանքին մէջ, որուն վրայ իր գործովալի շուքը ձգած չըլլայ հայ յեղափոխութիւնը:

Ի՛նչ վաստակ կ'ուզէք, որով յոգնած չըլլան մարդիկը, որոնց վրայ կը յանդգնի իր գործ լորձունքը հեղուլ ձեր իբր թէ մեծատաղանդ ու շողմոքալից միմոսը (Շ. Ծահնուր):

Վասնզի երբ այսուհանդերձ յուզիչ Մըմբեանները *Ալէլուիա* կը մըրմընջէին Պոլսոյ գոհիներուն մէջ, ո՛վ էր, որ հայ շինականին ճակատները կը թաթխէր ազատութեան միտոնով:

Երբ տանիկ միթէսարըֆներու եւ վալիներու առջեւ ողնաշար կը ծընէին մեր հայրերը, ո՛վ էր, որ առաջինը հրացան կը ձգէր մեր լեռներուն մէջ:

Երբ մեր եկեղեցիներուն խորունկ գաւիթներու բազմոցներուն վրայ ծածկ կը մաշեցնէին մեր մայրերը, ո՛վ էր, որ վերստին նորոգ հայ լեզուին արու բառերը կը հեզէր մեր կիրճերուն մէջ:

Երբ ոռու ցարականութիւնը զայրոյթէն կը հոնդար կովկասի մէջ, ո՛վ էր, որ զէն ի ձեռին կը պաշտպանէր մեր ծխական դպրոցները:

Կարճ է ձեր յիշողութիւնը, ինչպէս կարճ է ձեր ծայրը: Ինչպէս կարճ է ձեր շունչը՝ հագագելու համար երգը յեղափոխութեան: Որեւէ լուրջ ու խոհուն ատենանի առջեւ ու հրապարակաւ, ի լուր հայ մտաւորականու-

Լուսաբաց, — այս է ձեր լուսաբացի երգը: Ագռաւի յետին կոհնչը աւելի արու է, քան ձեր այս հին ու զգուելի հակայեղափոխական մոլտուքը:

թեան, ճշմարտութեամբ կ'ըսես ձեզի, թէ կրնար սպացուցանել,—

Որ յեղափոխութեան առաջին թոթովանքները երբեմն կարելի է գտնել ձեր է՛ն յետադիմական կարծած գրողներու շրթներուն վրայ:

Թէ խորին, անքակտելի համերաշխութիւն մը մեզ կը կապէ Գրիգոր Օտեաններուն, Նահապետ Ռուսիներաններուն, Ստեփանոս Նազարեանցներուն:

Դո՛ւք էք, որ չէք գիտեր, թէ ճգնաժամային վայրկեաններուն՝ հարկ է քաջութիւնը ունենալ անցնելու առաջ, անցնելու անդին գձուձ ատելութիւններէն, խոնարհելու համար ձեր ականջները ժողովրդին ընդերքներէն բխող մեծ ձայնին առջեւ:

Լուսաբաց, — ա՛յս է ձեր լուսաբացի երգը:

Ագռաւի յետին կոհնչը աւելի արու է, քան ձեր այս հին ու զգուելի հակայեղափոխական մոլտուքը:

1939, ՅՈՒՆԻՈՒՐ ԶՍԱՆ

Ալեկոծ աշխարհի առջեւ, երբ վտանգը հարաւի մէջ է, երբ վտանգը հիւսիսի մէջ է, երբ վտանգը իր մագիլներուն մէջ կը խեղդէ մեր հոգին,— ահա՛ ձեր օրակարգի միակ խնդիրը: Խա՛չը հանեցէք Սիմոն Վրացեանը, անկցի՛ ու ցկատարած աշխարհի Հ. Յ. Դաշնակցութիւնը: Ուրի՛շ խոյանք, ուրի՛շ արդարութիւն, ուրի՛շ երգ, ուրի՛շ բանաստեղծութիւն չկա՛յ ձեր հոգիներուն խորը: Ա՛յս է ձեր *ալֆան* ու *օմեղան*: Չէ՛ք զգար, որ միջազգային աշխատատրութեան միակ փրկութեան լաստը՝ այլեւս իր վերջնական, վճռական միութեան մէջ է: Ու միութեան նախապայմանը բարձումն է զագիր բռնութեան, անարդար մեռելներուն, եղբայրադաւ ոճիրին: Եթէ իրապէս յեղափոխական արեան կաթիլ մը կայ ձեր երակներուն մէջ, պէտք է որ ըսէք, թէ ո՛վ են ձեր զէնքի, ձեր ճամբու, ձեր արդարութեան ընկերները:

Պզտի՛կ պարոններ, որ մեծ փառասիրութիւններ ունիք, պզտիկ գրիչներ, որ կը կարծէք մեծ աղմուկներ ու մեծ շաշիւներ յարուցանել, խե՛ղճ սիրելի տղաք, երբ վերստին փոթորիկը պայթի՛ պէտք է որ ընտրէք վերջապէս բոլո՛ր անարին ու վատթար յետաշրջականներուն ու մեր միջեւ: Կը սխալիք: Ճշմարտութեամբ կ'ըսես ձեզի, իրական պայքարը բռնութեան ու մեր միջեւ է, յետադիմութեան ու ասոր սպասարկուներու, բոլո՛ր աղտեղի կլափով Ծահնուրներուն ու մեր միջեւ է:

Ու այս գիրը, թող ըլլայ, ինչպէս ըսի, իմ քիչ մը մոլար ու քիչ մը հրմայաթափ բարեկամութեան վերջին ապացոյցը: Բարե՛ւ:

ՎԱԶԳԷՆ ԾՈՒԾԱՆԵԱՆ

Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ


ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ ՆԱԽԱՔԱՅԼ ՄԸ

(Մարուշի «Հուժ քառերն իմ...»-ին առիթով)

Ընթերցողին դատաստանին յանձնուած առաջին հատորները առհասարակ կը ներկայացնեն հետաքրքրական հանդիպումներու առիթներ: Հաճելի, բայց միեւնոյն ատեն փորձանատր այս հանդիպումը կ'աւարտի կա՛մ գեղեցիկ անակնկալի սը յուսադրող տրամադրութեամբ եւ կա՛մ ալ՝ յուսախաբութեան բնական վերջակէտով: Քիչերն են, որ այս լուրջ քննութենէն դուրս կու գան յաջող կամ առնուազն գոհացուցիչ արդիւնքով:

«Հուժ քառերս կը բերեմ դիմակներու հանդէսին» բարացուցական խորագրով ընթերցողին ներկայացած Մարուշի երախայրիքը հետաքրքրական հրատարակութիւն մըն է այս առումով: 88 էջերէ կազմուած վերոնշեալ քերթողագիրքը, որ կ'ամփոփէ անհասար էջաթիւերով հինգ քերթուածաշարեր, կը պարզէ ընդգծելի բազմազանութիւն մը, որ բնական արդիւնքն է իր աշխարհն ու բանաստեղծական ինքնուրոյն ձայնը յայտնագործելու եւ զայն մշակելու նպատակով Մարուշի կատարած բանաստեղծական փնտռատուքներուն, որ զինք առաջնորդած է պարզ ու՛ անպաճոյճ լեզուով մը կենցաղային եւ մարդկային հարցեր արծարծող բանաստեղծութեան ծանօթ ուրտներուն:

Քերթողագիրքին առաջին էջը բացող «Դիմակահանդէս» խորագրեալ առաջնորդող բանաստեղծութենէն մինչեւ հատորին վերջին բանաստեղծութիւնը՝ «Հուժ քառերդ հրէ՛ դուրս», Մարուշ կ'ընթանայ յստակ ուղիով մը, որ իր



եսէն կը բացուի անմիջական առօրեայ լին բխած եւ զինք տագնապեցուցած ընկերային, հայկական եւ մարդկային հրատապ խնդիրներու, կը փորձէ պատասխաններ գտնել նախամարդէն սկսեալ մարդկութիւնը յուզող շարք մը անպատասխան հարցերու, որպէսզի վերջ գտնէ ամէն օր կրկնուող «կաս ու չկաս»ի անհեթեթ խաղը եւ իր «հում բառերը» յաջողին յաղթահարել իրենց ճակատագիրը՝ ազատագրուելով դիմակներ դառնալու ամէնօրեայ սպառնալիքէն:

Բանաստեղծական խօսքի ինքնուրոյնութեան, աւելի ճիշդ պիտի ըլլար ըսել՝ *անպղծելիութեան տազնապը*, որ իր կիսաձայն ներկայութիւնը կը յուշէ

քերթողագիրքի մէկէ աւելի էջերուն («Այսպէս անդէմք կամ անդիմակ / Ո՛ւր երթալ»), հատորը եզրափակող բանաստեղծութեան մէջ կը վերածուի բարձրաձայն ըմբոստութեան: «Ժամանակակից հեքիաթ» ենթախորագրուած այս ազատ բանաստեղծութեան մէջ, բանաստեղծուին կ'անդրադառնայ արեւմտեան քաղաքակրթութեան ախտերէն խոցուած իր անդիմագիծ գոյութեան բարդ իրավիճակին. «պէտք է ըլլայ ելք մը» հաստատումը կատարելէ ետք, իր ներքին ձայնը կը հրահանգէ բանաստեղծուին դուրս հրել բառերը - իմա՛՛ նաեւ սերը - իր ողջ էութենէն, որպէսզի հոգին դադրի ամէն օր անկողնին մէջ նեխելէ («չէի դիտեր որ հողին ալ կրնայ նեխիլ. AIDS կամ CANCER»), զինք մտալլկող ուղեղատապը, սիրատապը, կարօտախտը եւ ժամանակի միա ախտերը դադրին գոյութիւն ունենալէ, ձերբազատուի վերջնականապէս, «չկաս»ը նահանջէ եւ «կաս»ը գրաւէ իր գիտակցութիւնն ու ապրումներուն պատարը: Այլ խօսքով՝ սկսի նոր ժամանակ մը՝ ժամանակը իր «հում բառեր»ուն (որոնց վրայ «ակռայի հետքեր կային» եւ որոնք մարդոց յարձակումներէն արիւնած էին անօգնական), եւ կեանքը վերածուի հեղինակն ու իր խօսքը ազատագրող գեղարուեստական հեշտանքի:

*
* *

Հինգ քերթողաշարէ կազմուած «Հուժ քառերն իմ...» հատորը ընթերցողին կը ներկայանայ իր դիմագիծի յայտնագործման լծուած մէն մի նոր գրողի բնական խարխափումներով եւ ոստումներով: Նոր խօսքի արկածախնդրութեան հետ նոյնացած այս նախապայմանը Մարուշի քերթողական ճիգը նաեւ կ'առաջնորդէ տարբեր աշխարհներու եւ քերթողական հակադիր հասկացողութիւններու: Օրինակ, եթէ քերթողագիրքին առաջին շարքը մեզի կը պարզէ իր անձնական կենսափորձէն ծնունդ առած զգացական-քնարական բանաստեղծութեան մը դիմագիծը, «Անթուակիր տարեգրութիւն»

(երկու բանաստեղծութիւն) եւ «Ոսպնեակէն հողիս» (տասը բանաստեղծութիւն) անուն անհամաչափ շարքերուն մէջ (եթէ կարելի է առաջինը շարք կոչել), ընկերվարական իրապատութեան ժամանակավրէպ սահմանումներուն յենած՝ Մարուշ իր կարկինը կը փորձէ լայն բանալ զանազան վայրերու եւ ժամանակներու վրայ, որովհետեւ՝

«Ամէն երկրի մէջ
նոյն է ցաւը մեր-
մին արեւին տակ երբ քաղցէն
կու լայ,
ուրիշ մը մուծին արեւ կ'երագէ
եւ հաց կը բաշխէ:
Կաթիլ մը ջուրով մին կը խեղդուի,
միւսը ծովուն մէջ պապակով
կ'այրի»:

(«Մենք», էջ 58)

Արձակունակ եւ բանաստեղծական խօսքի կախարդանքին ու խորհուրդներուն հետ ոչ մէկ առընչութիւն ունեցող այս ծանծաղ շարադրանքը կը յանգի այն վախճանական մտածումին, որ իրերայաջորդ բանաստեղծութիւններով ամբողջանալու կոչուած «Մենք»ը, այսինքն՝ Մարունը, Արմանը, Մէլիին, Սիւզնը, Մահմուտը, Ուանկ Տանը, Սանշէտը, Վրէժը, կարճ խօսքով՝ ընչազուրկ, պայքարող, գաղափարապաշտ եւ արեւմտեան քաղաքակրթութեան զոհերը հանդիսացող իր այլազգի քնարական հերոսները նոյն էութիւնը ունեցող տեսլահարներ են, որոնց հարուածած է միեւնոյն թշնամին, որոնք իրարու կապուած են համամարդկային սիրոյ պորտակապով եւ անսասան կիրքով լծուած սիրոյ փնտռութիւն՝

«Հատերն ձիաւոր,
մեծ մասն հետիտն,
բայց նոյն ուղիով, նոյն վտանգներով
եւ նոյն ձգտումով»:

Դժբախտաբար, Մարուշի այս բնոյթի փորձերը առաւելագոյն տարողութեամբ ծանրաբերնուած են վերոնշեալ

ուղղութեան ծանօթ թերութիւններով եւ նուազագոյն չափով օգտուած՝ բանաստեղծութիւնը կենցաղային կենսափորձի մը վրայ խարսխելու այն վարակիչ աշխարհահայեացքէն, որուն շնորհիւ միայն ընդհանուր խոտանէն կ'անջատւին այս ուղղութեան հաւատարիմ բանաստեղծներուն այն քերթուածները, որոնք *ընդհանրական նիւթերը* յաջողած են վերածել սեփական կենսափորձով շիկացած բարբախուն, թախծաշունչ ու տարօրէն *անձնականացուած թեւադրական բանաստեղծութիւններու*։

Կ'արձանագրենք այս պարագան եւ կ'անցնինք, որովհետեւ Մարուշի երախայրիքին մէջ, որ մեզի կը ներկայանայ գեղարուեստականօրէն անհասմամտելի երկու մակարդակներով, մեզ խանդավառողը իր ներանձնական բանաստեղծութիւններն են, ապրումի, հոգեվիճակի, պատկերատու մտածողութեան, խիտ ու թելադրական պարզ խօսքի այն գեղեցիկ խոստումները, որոնք կը կոչուին «Մէր», «Ետ դարձ», «Հեռագիրներ՝ խենթ փափաքներու», «Պատարագ», «Հրաշք», «Նուիրում» եւ որ կամ կը սկսի «Կրնայ ըլլալ, որ ծովերը օր մը յոգնին ծովանայէն...» տողով։

Վերջ ի վերջոյ, ի՞նչ աղերս կարելի է գտնել տեղեկատուական ցամաք ու անհրապոյր լեզուով ներկայացող «Արման», «Մէյրի», «Սիւզըն», «Սանչէս» խորագրուած նկարագրողական պատմողական «հում բառեր»ու էջերուն ու բան-աստեղծութեան (օրինակ՝ «Ետ դարձ», «Նուիրում») ձգողական ոճին միջեւ։ Մինչ առաջինի պարագային պատմողական միապաղաղ շարադրանքը խօսքի ածան սպառումի կը վերածուի՝ միաժամանակ սպառելով նաեւ Մարուշի քերթողական կարելիութիւններն ու առանձնայատկութիւնները, երկրորդ որակը լայն կը բանայ ինքնուրոյն ու ջերմիկ աշխարհի մը ներքին պատուհանները եւ ընթերցողը կը վերածէ բանաստեղծուիին հոգւոյն խորերը խուզարկող հաղորդութեան մը, երբ իր պայծառ թելադրականութեամբ, քնարական ջերմութեամբ, պատկերատու խոսքեամբ բանաստեղծութիւնը կը շարունակէ արձագանգել

ընթերցողին ներաշխարհին խորը՝ զայն առնելով վերջին բառին հետ ծաւալող հոգեվիճակին կախարդական ալիքներուն ազդեցութեան ոլորտներուն մէջ։

Այսպէս, Համայն մարդկութեան առօրեային մաս կազմող քաղաքական-քաղաքակրթական տագնապները իրենց էութեամբ եւ տարողութեամբ որքան ալ ըլլան մարդկութիւնը տագնապեցնող դարուն հիմնահարցերը, այնուամենայնիւ, անոնք հեռու կը մնան բանաստեղծութեան ոլորտներէն, եթէ մեզի չներկայանան վերոնշեալ տագնապները անձնականացուցած արուեստագէտի մը հոգեբարոյական կենսափորձին մաքրագտող պրիսմակէն՝ իբրեւ գերիական հոլովոյթի մը վկայութիւնը հանդիսացող գեղարուեստական ինքնադրոշմ լուծումներ։

*
* *

Յատուկ բծախնդրութեամբ եւ դիտումնաւոր կերպով ծանրացանք Մարուշի երախայրիքին խոցելի հիմնական կէտին վրայ, որովհետեւ, իր բանաստեղծական յաջողութիւններով՝ ան յոյսեր ներշնչող նոր անուն մըն է։ Ճիշդ է, որ վերնոշեալ վրիպանքները քերթողագիրքին մէկ երրորդ համեմատութիւնը կը կազմեն, այնուամենայնիւ, գրեթէ նոյնքան էջեր հաշուող իր ներանձնական եւ ներանձնականացուած բանաստեղծութիւններով հեղինակուիին կրնանք նկատել սփիւռքահայ գրական անդաստանէն ներս վերջին տասնամեակին մուտք գործած ամենէն ուշագրաւ անուններէն մէկը։

Փաստօրէն, երբ Մարուշի ստեղծումները ծնունդ կ'առնեն իր մարմինին զգացական եւ բնախօսական լարերուն ապրուած կենսափորձէն, ան կը բացուի սիրային եւ սեռային այնպիսի՝ վառ հոգեվիճակներու, որոնք իրենց լինելութիւնը սպիտակ թուղթին վրայ կը վերապրին արարչութեան հրաշքին հետ պտղող մայրական «ցափն դաշնաւորումով», «զիստերուն մէջ, կուրծքերուն մէջտեղ» կոտտացող «լեզ-

փն համ»ով, հեշտանքի եւ վերացման թեւատր «հմայք»ներով ու «ցաւ»երով, որոնցմէ տեսիլք ու նայուացք դառնալու ճակատագրուած «աստղեր կը ծնին» եւ «իդէեր»ը, որոնց «ալիքները կողերուդ մէջ կը շաչէին», կը վերածուին «խենթ փափաքներ»ու մարմնեղէն եւ հոգեղէն տարրերուն ներդաշնակ միահիւսումով ամբողջացած «պատարագ»ի,

*«Եւ մարմինս
կը թփրտայ քու մարմինիդ
վանդակին մէջ
դուրսի լոյսը
կեանքի ցուրը կամաց-կամաց
կը դալկանայ
ու կը վառի
իմ պատրուգով քու հոգիիդ
հին կանթեղը
եւ մեր միջեւ
կիսամութը կը թրթռայ
կ'ազնուանայ ու երկուքով
մենք կը դառնանք հին խնկարկման
նոր խորան մը»։*

(«Պատարագ», էջ 28)

Ուշագրաւ այս յատկանիշը յաւելեալ փայլք եւ տարողութիւն կը ստանայ, երբ զգացական-բնախօսական զուգերգին վրայ գումարուելու ւ կու գայ երրորդ ձայն մը՝ միջավայրն ու իր անդրադարձները ամփոփող առարկան։ Սուրճի բաժակը, սովորական գիրքը, նամակներու խուրճը կամ նոյնիսկ այնքան հոլովուած մայրամուտն ու աշունը վերոնշեալ քերթուածներուն մէջ այնքան մը կ'անձնականանան, որ զգացական-բնախօսական զուգերգը կը վերածուի առարկային կամ բնութեան յաւելումով հարստացած եռաձայն ստեղծումի մը, որ կենսագրական տարրերով զարգացող բանաստեղծութեան ընկալեալ սահմաններէն անդին կ'անցնի եւ կը գծագրէ նուրբ, բայց ինքնուրոյն եւ թափանցիկ երանգներով բնորոշող իր բանաստեղծութիւնը։ Այլ խօսքով՝ մեղմ գրաչութիւն մը, ուր նկատուած ոճային թէ աշխարհահայեացքային անդրադարձները կը հնչեն իբրեւ շնչաւորող պատ-

աստներ, բանաստեղծուիին ներքին կլիմային հետ նոյնացած տարրեր, որոնց իսկ բերումով ընթերցողը, իր կարգին, կ'ուզէ դառնալ հեղինակի սիրած էակին ափերուն «հանգչող գիրքերէն մէկը» կամ՝ «սուրճի բաժակը», այն հասարակ բաժակը՝

*«Որուն, օրուն մէջ քանի
մը անգամ,
Դուն կը շուայես ձեռքիդ գգուանքը,
Այնքան բնական եւ սովորական,
Կարծես չես զգար գգուանքիդ
տապը»։*

Այնքան սովորական, բայց եւ այնքան մարդկային այս փոքրիկ կարծուած ցանկութիւնն է, այս պարագային՝ զայն այնքան բնական եւ վարակիչ պարզութեամբ արտայայտելու բիւրեղութիւնն է, փաստօրէն, որ անբանաստեղծական առարկաները կամ սպառած թուացող տարրերը (մայրամուտ, աշուն, կարօտ, բախտ...) կը յաջողի հարստացնել բանաստեղծական ինքնադրոշմ գրաչութեամբ եւ հոգեվիճակով։ Ընդգծելի արժանիք մը՝ որուն շնորհիւ «աստեղծուած», «հարցադրում», «լուծում», «կարօտ», «միխթարանք», «տուայտանք» դառնալու յարաճուն ցանկութիւնը կը վերածուի *մշտանորոգ վերադարձի*, անդադար հարստացող հոգեվիճակի մը, որ ապրում-երանութեան զուարթ ալիքներով կը փոխէ «քիչ մը հոսանքը կեանքիդ» եւ բանաստեղծութիւնը կը բարձրացնէ իր հոգեվիճակային գագաթնակէտին։ Այս այն պահն է, երբ բանաստեղծական խօսքը կը շրջանցէ նոյնիկ զինք արարողը, երբ տեղի կ'ունենայ եռակողմանի *հետք*ու ամբողջական միացում եւ բանաստեղծ, քնարական հերոս ու ընթերցող կը դառնան նոյն թիրախին ճակատագրուած մէկ եւ եւ, «մեծագոյն երագին կառչած» կը թռչին հեռու, որպէսզի ապրին բոլոր եսերը ջնջող հարստացնող մեծագոյն եսին՝ խօսքին անհունին մէջ։

Բանաստեղծական խօսքին հանդէպ ցուցաբերուած այս բծախնդիր գիտակցութեան եւ մօտեցումին ձգողա-

կանութիւնը կ'երկարի Մարուշի գրեթէ բոլոր ներանձնական բանաստեղծութիւններուն վրայ՝ նուազ կամ առաւել զօրութեամբ: Նոյնիսկ պարագայական բնոյթ կրող «Դեկտեմբեր 7էն հոգ» բանաստեղծութիւնը կը յաջողի շրջանցել զայն կանխած «Դեկտեմբեր 7» կըտորին ընդհանրական խօսքերու սովորական սթեյնդարը, երբ երկրորդի առիթով՝ կենսագրական-կենցաղային տարրերէն բանաստեղծուիին կը բացփ ընդհանրական աղէտին, այսինքն՝ երբ սակառը ձեռքին ծայտուն եւ զրւարթ դպրոց շտապող իր զաւկին պատկերին դիմաց՝ կը տխրի իրեն անծանօթ, բայց եւ նոյնքան սրտամօտ «*ա՛յն զաւկիս համար, / Որ մուժ անկիւն մը լոյսեր կ'երագէ*»:

Եւ ճակատագիր կոչուած հրէշին դիմաց ապշահար աչքերով կանգնած հեռաւոր զաւակը, եղբայր, մայր, տատ ու հարազատ կորսնցուցած միմուռար անտէրը («*...ի՛նչ ըրիր, Աստուած, / Ամպերը նոյնիսկ զիրենք պարփակող / Երկինք մը ունին...*»), իրաւամբ, ո՛չ միայն կը նոյնանայ բանաստեղծուիին հարազատ զաւկին հետ, այլեւ կը դառնայ առանցքը իր (իմա՝ ազգին) շանթահար գալիքով տուայտող հայ մօր անշրջանցելի ամէնօրեայ տագնապին, որովհետեւ՝

Դուն ինչպէ՞ս մեծնաս, երբ որ սէրը գայ,

Առանց բարտիի, առանց այգիի, Դուն ինչպէ՞ս սիրես, դուն ո՞ւր համբուրես:

Երբ որ պսակուիս, քու պատկերիդ մէջ

Ո՞վ պիտի կենայ մեծ-հայրդ ալ չկայ Վանքերը չկան, սուրբերը մեռան...

Բայց ձեռքերդ կան, բայց քու սիրտդ կայ

Եւ կան աչքերդ՝ թունդ կայծակներով,

Եւ աւերակը, որ քեզ կը սպասէ, կերտող ափերուդ, տրոփներ ջամբող Թու հզօր սրտիդ, հրդեհներ վառող

Աչքերուդ կայծին: Եւ շատ չի տեւեր,

Ամէն բան կրկին կը դառնայ նոյնը, Բայց չի լեցուիր քու դալար մանկութեան

Պարտէզին բացուած պարապ անկիւնը...


Քերականական վրիպանքը՝ մէջբերած առաջին տան «ուր»ը եթէ փոխարինենք «զով»ով եւ թեթեւ սահինք կայծակը կանխած անելորդ «թունդ» ածականին (ինչու *մեղմ* կայծա՞կ ալ կայ) վրայէն, պահ մը կ'ապրինք այն գեղեցիկ խաբկանքը, որ «դալար մանկութեան պարտէզին մէջ բացուած պարապ անկիւնը» կը լեցուի լաւատեսութեան ու հաւատքի այն քաղցր զգացումներով, որոնք պարզագոյն բառերով տրամը կենսունակ ստեղծագործութեան մը վերածելու հմտութենէն կը բխին:

Փաստօրէն, իր վերոնշեալ մակարդակի գործերուն մէջ, Մարուշ նաեւ կ'ապրի ոճային հասունացում մը, երբ քաղաքա-ընկերային բանաստեղծութիւններուն առօրեայ թերխաշ լեզուին դիմաց ան կը բանայ զարգացման մէկէ անլի հորիզոններ: Գեղարուեստական իր արտայայտչամիջոցները նուաճելու նպատակաուղղուածութեամբ՝ լեզուական յիշողութենէն եկող գրքունակ լեզուին ու ոճին առաջին իսկ ակնթարթէն հակադրուած Մարուշի պարզ ու կենսունակ լեզուն, խօսակցական լեզուին նախնական մակարդակէն վեր բարձրանալով՝ իր «հում բառեր»ը կը յաջողի օժտել քնարական ջերմութեամբ եւ բնածին թելադրականութեամբ, որոնք քերթուած առ քերթուած բիւրեղացող հոգեվիճակային պատկերամտածողութեան հետ, բանաստեղծական հասունացման մը լաւագոյն յոյսերը կը ներշնչեն:

Այս առումով՝ Մարուշի «*Հում բառերն իմ...*» հատորը, իր յաջողած է ջերով, կը հանդիսանայ գեղեցիկ խոստում մը եւ հետաքրքրական վաղուան հաստատ նախաքայլը:

ՍԱՐԳԻՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆ,
ԵՐԿԻՐ
ԴՐԱՆՏԱՎԱՅՐ**

(Հեղինակ՝ Արմէն Յովհաննիսեան)

«Հայ հրապարակախօս Արմէն Յովհաննիսեանը յայտնի է ընթերցողների լայն շրջանակներին: Վերջին տարիների նրա յօդուածները մեր իրականութեան արտացոլումն են՝ ցայտուն արտայայտուած անհատականութեամբ, տագնապի եւ տառապանքի խորքով, նաեւ լուսաւոր հաւատի շեշտով»:

Հայրենի «Առագաստ» շաբաթաթերթը այս սեղմ բնութագրումով կը ներկայացնէ Հայաստանի ընթերցող շրջանակներուն ծանօթ հրապարակագիր Արմէն Յովհաննիսեանի վերջին հինգ տարիներու (1988-93) յատկանշական յօդուածներու ժողովածուն, որ լոյս տեսաւ 1993ին, «Հայաստան, երկիր դրախտավայր» խորագրով: «Յօդուածներ» (էջ 5-236) եւ «Հարցազրոյցներ» (էջ 237-263) անհամաչափ զոյգ բաժիններէ բաղկացած եւ հեղինակին վաղամեծիկ եղբօր՝ «Վահէ Յովհաննիսեանի լուսաւոր յիշատակին» նուիրուած այս հատորը խորքին մէջ կ'ամփոփէ Հայաստանի եւ հայ մարդու ճակատագրով, ճգնաժամային բազմաբնոյթ հարցերով, բայց նաեւ պայծառ ապագայի անհրաժեշտ ընդգծումներով տագնապող «աշխարհիկ եւ պաշտօնական բամբասանքների «սիրուած» հերոս» Արմէն Յովհաննիսեանի ծաւալուն ու կարճ յօդուածները եւ այդ էջերուն բարձրացած «Մարդկային Զայն»ին վրայ յաւելեալ լոյսեր սփռող չորս գրոյցներ:

Ժամանակագրական կարգով եւ «ոճական աննշան միջամտութիւններ»ով ընթերցողին վերահրամցուած վերոնշեալ յօդուածները, որոնք

լոյս տեսած են «Երեկոյեան Երեւան», «Առագաստ», «Մունետիկ», «Գարուն», «Էպոխա», «Ազատամարտ», «Երկիր», «Ազգ», «Առագաստ», «Զերկալօ» եւ «Ծրջապատ» անուն թերթերուն մէջ, իրենց ճշգրիտ ախտաճանաչումներով, անկետաձգելի հարցադրումներով եւ մա՛նաւանդ ցանկալի ապագան ուղեւշող եզրակացութիւններով, իրաւա՛մբ, կը հանդիսանան տնտեսական, ընկերային, քաղաքական եւ բարոյական վերիվայրումներով բնորոշուած 1988-93 հնգամեակին ամբողջական համապատկերը, իրողութիւն մը՝ որ հատորի հրատարակիչ Ալվարդ Պետրոսեանին իրաւունք կու տայ իր «Վերջաբանի փոխարէն» կարճ նոթը սկսելու հետեւեալ նախադասութիւններով. «Սա տխուր կանխատեսումների գիրք է՝ վկայութիւն աշխարհասասան իրադարձութիւնների՝ յեղափոխութեան, երկրաշարժի, յետյեղափոխական դասական փլուզումների եւ աւերումների, պատերազմի, տնտեսական, քաղաքական, բարոյական շրջափակումների, նոթօրեայ եղեռնի, քաղաքական ստահակութիւնների, խարդաւանաւանքների, կարճամըտութիւնների մասին: Միաժամանակ, ազգային ու մարդկային կայուն արժէքների նկատմամբ անբեկանելի հաւատի վկայութիւն: Մի խօսքով՝ մեր կեանքի վերջին հնգամեակն ամփոփող միկրոմեզաս՝ հետախուզուած ու քննուած ներսից՝ գտարիւն մտաւորականի անկաշառ մտքով ու սրտով»:

Հայրենի մամուլի, ձայնասփիւռի, պատկերասփիւռի եւ գրահրատարակչութեան բնագաւառներուն մէջ երկար տարիներ աշխատած, ռուս արդի գրականութեան ուշագրաւ նուաճումներէն տասնէ աւելի հատորներ հայացուցած Արմէն Յովհաննիսեան այն մտաւորական հրապարակագիրներէն է, որոնց նոյնիսկ պոթելումով գրուած հրապարակագրական էջերը կը յատկանշուին իրենց կուռ տրամաբանութեամբ, իմացական զսպուածութեամբ, հարցերուն խորքը թափանցող սուր դատողութեամբ, ազգային-գաղափարական հիմնաւորեալ բովանդակութեամբ եւ, մա՛նաւանդ՝ ճշմարիտ խօսքը ամենայն ճշմարտացիութեամբ ըսելու հրապարակագրական բարձրորակ արուեստով:

ՊԵՏՈՆ

(«Էլիինակ՝ Համլետ Գեորգեան»)

Պետրոն



Հ. Յ. Դաշնակցութեան նախաձեռնութեամբ, վերջերս, Երեւանի մէջ լոյս տեսաւ «Ազատութեան մարտիկներ» շարքի նորագոյն հրատարակութիւնը՝ Համլետ Գեորգեանի «Պետոն» խորագրեալ գիրքը, 3500 տպաքանակով:

136 էջերէ բաղկացած այս հատորը կը բաղկանայ հինգ գլուխներէ, որոնք 18 լուսանկարներու եւ 3 բացատրողական քարտէսներու օժանդակ մասնակցութեամբ՝ ընթերցող լայն զանգուածներուն կը պատմեն «Հայոց Ազատամարտի նուիրուեալների՝ ԼՂՀ բանակի մայր Պետոյի եւ նրա մարտական զինակիցների մասին», ինչպէս կը տեղեկագրէ հատորին երկրորդ էջին վրայ տեղ գրուած կարճ ծանօթագրութիւնը:

Մատչելի լեզուով եւ հեզասահ նկարագրութիւններով զարգացող հինգ գլուխները կը ներկայացնեն դաշնակցական այս ազատամարտիկին մղած մարտերուն ժամանակագրական ժապաւէնը, որ, իր կարգին, նաեւ ներկայացումն է Արցախեան ազատագրական պայքարին՝ իր առաջին փուլէն մինչեւ հայդուկային կոիւներ եւ բանակի կազմաւորումէն մինչեւ Օսմարի լեռնանցքի ազատագրում եւ փոխ հրամանատար Պետոյի նահատակութիւնը:

Պետոյի եւ իր զինակիցներու գրառումներուն եւ վկայութեանց հարուստ փաստաթուղթերուն վրայ հիմնուելով՝ Համլետ Գեորգեան ամենայն հարազատութեամբ, ժամ առ ժամ, կը ներկայացնէ Պետոյի եւ իր զինակիցներուն մղած սխրալի մարտերը: Աւելի՛ն. շնորհիւ գիրքը վաւերագրական արժէքով հարստացնող յատկանշական վկայութիւններուն՝ Հ. Գեորգեան կը քանդակէ նաեւ ամբողջական տիպարը գաղափարախօս Պետոյին, որ իր զինակիցներուն գաղափարական գիտակցութիւնը պողպատելու նախանձախնդրութեամբ՝ նաեւ «դարձել էր մի կատարեալ քարոզիչ: Զինուորական պարապմունքներին զուգընթաց նա մեծ ուշադրութիւն էր դարձնում բնակչութեան շրջանում եւ յատկապէս մարտական խմբերի հետ տարուող գաղափարական աշխատանքներին»:

Գետաշէնի ինքնապաշտպանութեան դժնդակ օրերուն, Պետոն լաւագոյնս կը դրսեւորէ իր մարտական կարողութիւններն ու անսխալ պահարինութիւնը: Հետագային, Ծահուսեանի ու Մարտակերտի նահանջի օրերուն, կը կազմակերպէ եւ կը ղեկավարէ գաղթականներուն ապահով նահանջը դէպի հայկական հակակշոր տակ գտնուող շրջաններ: «Նա փաստօրէն կարողացաւ ապահովել բազմահազար շահումեանցիների անվտանգ անցումը Մուսի լեռներով դէպի Մարտակերտի շրջան»:


Ժամանակագրական զարգացումով՝ կը յաջորդեն Չլդրան, Դրմբոն եւ Սարսանգի ջրամբարի օրհասական մարտերը, որոնց ընթացքին Պետոյի եւ իր զինակիցներուն անմնացորդ նուիրումը ներկայացնելով՝ Հ. Գեորգեան կը յաջողի պատկերացնել մանրամասնութիւնները առասպելական մարտերուն եւ բոլոր մը ազատամարտիկներու արձանագրած անհաւատալի քաջագործութիւններուն: Այս բաժինին մէջ, ան յատուկ ուշադրութեամբ կը նկարագրէ զէնքին տիրապետելու Պետոյի արտակարգ կարողութիւնը եւ ընկերասիրութիւնը, երբ «ՄԻԳ 25 կործանիչը խփելու համար ԼՂՀ բանակի հրամանատարութեան սահմանած դրա-

մական պարգևը նա յանձնում է իր զոհուած ընկերների ծնողներին»:

Այնուհետև, միշտ ինքզինք գերազանցող Պետոն կը տեսնենք Ֆիզուլիի ու Ճեպրայիի գործողութիւններուն, Մարտակերտի ազատագրման կռիւներուն եւ Ղարաբաղի զանազան ճակատներու վրայ մղուող գոյակռիւներու ընթացքին՝ իբրեւ եզակի ծրագրող եւ կատարի մարտիկ:

Հ. Գեորգեանի «Պետոն» հատորը կը փակուի այս բացառիկ հայդուկապետին նահատակութեան նուիրուած էջերով, երբ իր ծրագրումով ու կազմակերպումով իրականացած Օմարի լեռնանցքի ազատագրումէն ետք, ականապատուած տարածքէ մը հայ մարտիկ մը դուրս բերելու ընթացքին, Պետոն կը զոհուի ականի մը պայթումին հետեւանքով:

Հայ պատմագրութեան համար լաւ ատաղձ հանդիսացող Հ. Գեորգեանի այս հատորը միայն Պետոյի մարտական գործունէութեան նուիրուած գիրք մը չէ, այլեւ՝ կենդանագիրը բոլոր այն ազատամարտիկներուն, որոնք իրենց կարմիր արեամբ Արցախի թանկ հողը ոռոգեցին եւ արժանի եղան փառաց պսակին:



ՄԱՐԴԿԱՅԻՆ ԻՐԱՒԱՆՑ ՀԱՐՑԵՐ

(Հեղինակ Պէպօ Սիմոնեան)

Բանաստեղծ Պէպօ Սիմոնեանի «Մարդկային իրաւանց հարցեր» խորագրեալ հատորը իր նախորդ գործերէն կը զանազանուի այն յատկանիշով, որ անիկա ստեղծագործական երկ մը չէ, այլ՝ համամարդկային հարցերը յանձնառու ընկերաբանի մօտեցումով քննարկող հետեւողական ճիգի մը համադրական արդիւնքը: Մարդն է առանցքը 288 էջերէ կազմուած այս հատորին՝ Մարդկային իրաւանց միջազգային ուխտերով եւ որոշումներով եւ նոյնիսկ ամէնէն քաղաքակրթուած երկիրներու մէջ արձանագրուած մարդկային արժանապատուութեան ոտնակոխումներով, ազատութեանց բռնաբարումներով, իրաւունքներու չարաշահումներով, խտրականութեան անմարդկային արարքներով, ռազմապաշտ քաղաքականութեանց կործանարար հետեւանքներով, ցեղասպանական ոճիրներով, եւայլն, եւայլն...


Հատորը կազմած 29 խորագիր կարճ եւ ծաւալուն բոլոր գրութիւններն ալ — յօդուածներ եւ փորձագրութիւններ — կը պարզեն նոյն նկարագիրը: Իմաստասէրներու, գրողներու, մտաւորականներու եւ նոյնիսկ քաղաքական գործիչներու համամարդկային մտածումներ իբրեւ ուղեւոր օգտագործող գործ մըն է Պէպօ Սիմոնեանի այս աշխատութիւնը:

Մարդուն արժանաւորութեան եւ արժանապատուութեամբ ապրելու իրաւունքը պաշտպանող այս հատորին առաջնորդող յօդուածին մէջ, ընդգծելէ ետք, թէ աշխարհի ստեղծումէն ի վեր, «մարդկութեան ճանչցած բոլոր կրօնքներն ու վարդապետութիւնները, ընկերային ու գաղափարախօսական դրոշմները կը դաւանին մարդը կեանքի գերագոյն արժէք», հեղինակը պահ մը կանգ կ'առնէ ազատ ծնող եւ հաւասար իրաւունքներով ապրելու սահմանուած «կեանքի մեծագոյն դրամազուլիս»ին՝ Մարդուն դիմագրաւած այլաբնոյթ սպառնալիքներուն վրայ, կը դիմէ միջազգային վարկ եւ անուն նուաճած գրողներու հնչեցուցած ահազանգին, որովհետեւ «անհատի մը իրաւունքին խախտումը բոլորի իրաւունքի խախտումն է», ինչպէս կը հաստատէ Հեգելը: Հետեւաբար, մարդուն արժանապատուութեան, արժանաւորութեան եւ արդար իրաւունքներուն սպառնացող ամէն տեսակի վտանգներուն դէմ անհատաբար եւ հաւաքաբար ծառանալու հրամայականը ընդգծելով, հեղինակը կը հաստատէ. «Արդի մարդը իր կեանքը արժանաւորութեամբ ապրելու համար երկու մակարդակի սպառնալիքներ դիմագրաւելու է: Մարդկային անհատականութեան արժեզրկումը եւ թեքնոլոժիի ստրկութիւնը»:

Գեղեցիկ խօսքի եւ դառն իրականութեան իրարու հակադրուող աղաղակող փաստերը կը դառնան այն մնայուն խայծերը, որոնք Պէպօ Սիմոնեանը կը մղեն ճիւղաւորուելու՝ մարդուն արժէքը ջատագովող բարոյական սկզբունքներէն մինչեւ զայն բարոյապէս, հոգեպէս եւ գործնապէս բարոյագրկող անարդարութիւններ:

Այսպէս, արտադրողական ուժերու բարիքներուն անհաւասար բաշխումը, կենսական պահանջներու պաշտպանութիւնը, արժէքներու վերադասաւորման պահանջը, մարդուն կողմէ մարդուն դէմ գործուած կենսալորտային բարբարոսութիւնը, Հայկական Յեղասպանութեան աղաղակող փաստը, անգործութեան, սովահարութեան, անգրագիտութեան, այլամերժութեան դառն ապացոյցները եւ մինչեւ իր մարդկային ու ազգային գոյութեան իրաւունքը պաշտպանող Արցախեան Պահանջատիրութիւն, եւ տակաւին՝ մինչեւ Նելսըն Մանտելա, Մահաթմա Կանտի եւ մարդկային ու ազգային վաւերական արժէքներու պաշտպանութիւն, վերարժեւորում ու վերահաստատում, առատ նիւթ ու առիթ կ'ընծայեն հեղինակին՝ բանաձեւելու համար իր խօսքը:

Մկրտիչ Ասլանեանի նկարագարումներով ճոխացած Պէպօ Սիմոնեանի «Մարդկային իրաւանց հարցեր» հատորը ընթերցողը խորհրդածութեան մղող գործ մըն է:



ԲԱՐՉՐՈՐԱԿ ՓԱՌԱՏՕՆ ՄԸ՝ «ՄՈՒԶԻԲԱՐՄԷՆԱ»

Գեղեցիկ ասանդության մը վերածած Վենետիկի ամառնային փառատունին, ինչպես ամեն տարի, այս տարինաեւ ինչպէս են հայ երաժշտութեան գոհարները, օտար երաժշտասէրներուն ներկայացնելով հայկական հոգեւոր, աշխարհիկ, միջնադարեան, դասական եւ ժամանակակից երաժիշտներու բնորոշ գործեր:

Վենետիկի քաղաքապետական վարչութեան կազմակերպած սոյն ձեռնարկին, որուն համերգները տեղի ունեցած են Յունիսէն Յուլիս երկարող ժամանակաշրջանին, Վենետիկի թատերական եւ համերգային գլխաւոր սրահներուն մէջ, այս տարի եւս իրենց գործակցութիւնը բերած են միջազգային եւ տեղական երաժշտական զանազան հաստատութիւններ եւ ընկերակցութիւններ: Հակառակ կարգ մը թեքնիք դժուարութիւններու եւ Հայաստանի անբարենպաստ պայմաններուն (որոնց հետեանքով «Մուզիքարմէնա» փառատօնին բացման հանդիսութիւնը կատարելու նպատակով հրաւիրուած Ս. Էջմիածնի Ս. Գայեանէ եկեղեցւոյ արական երգչախումբը չէր յաջողած Իտալիա ժամանել), Հայ Մշակոյթի Ուսումնասիրութեան եւ Վաւերագրական Կեդրոնի եւ Ազոլօ Մուզիքա-Վենեթօ Մուզիքա ընկերակցութեան միացեալ ձիգերով կազմակերպուած «Մուզիքարմէնա» փառատօնը հանդիսացած է ընդհանուր ծրագրին գեղեցկա-



զոյն օղակներէն մէկը՝ արժանանալով իտալացի ու եւրոպացի բազմաթիւ երաժիշտներու եւ մասնագէտներու բարձր գնահատանքին:

Այսպէս, Վենետիկի Պատրիարքի սիրայօժար տրամադրութեամբ, Ս. Մարկոս մայր տաճարին մէջ տեղի ունենալիք հայ հոգեւոր երաժշտութեան համերգը կամայական ինքնագլուխ որոշուով մը չեղեալ համարելէ ետք (որոշում մը՝ զոր օրին մասնոյ հաղորդագրութեամբ մը միասնաբար դատապարտեցին Վենետիկի պատրիարքը, քաղաքապետութիւնը եւ կազմակերպիչ գերագոյն մարմինը), փառատօնը ընթացած է բնականոն ձե-

ւով եւ երաժշտասէր տեղացի եւ օտար հասարակութեան հրամցուած են մնացեալ եօթը համերգները, հետեւեալ հերթականութեամբ.-

❖ 18 Յունիսի երեկոյեան, Scuola Grande S. Giovanni Evangelista շքեղ սրահին մէջ, միջազգային բազմաթիւ մրցանակներու արժանացած հայրենի համբաւաւոր դաշնակահարուհի Սվեդլանա Նաւասարդեան ունեցած է բացառիկ համերգ մը, մեկնաբանելով Պախի, Փրոքոֆիեւի, Պրամսի, Կոմիտասի եւ Տիգրան Մանսուրեանի կարգ մը ուշագրաւ գործերը:

❖ 29 Յունիսի երեկոյեան, Grande Teatro La Fanicee-ի գլխաւոր սրահին մէջ, ելոյթ ունեցած է ֆրանսահայ համբաւաւոր ջութակահար Ժան Տէր-Մերկերեան, ընկերակցութեամբ երիտասարդ դաշնակահար եւ երգահան Ժերար Գասպարեանի: Միջազգային բազմաթիւ մրցանակներու տիրացած Տէր-Մերկերեան-Գասպարեան զոյգը, որ նոյնպէս ելոյթ ունեցած է Եւրոպայի, Ամերիկայի եւ Ասիոյ զանազան ուստաններու նշանաւոր սրահներու մէջ, միասնաբար մեկնաբանած է Թարթինիի, Պրամսի, Գասպարեանի, Իզալէի, Շոսթաքովիչի եւ Սեն Սա'օնի կարգ մը բնորոշ գործերը եւ արժանացած՝ ներկայ հասարակութեան շերմ գնահատանքին:

❖ 4 Յուլիսի յետմիջօրէին, Մուրատ Ռափայէլեան վարժարանի Հայելիներու դահլիճին մէջ, ճիս յայտագրով համերգ մը տուած է օփերայի հանրածանօթ երգիչ Բարսեղ Թումանեան, որուն դաշնամուրով ընկերակցած է ճափոնցի դաշնակահար Միթսուրու Հիրանոն: Միջազգային վարկ ու համբաւ վայելող զանազան բեմերէն երաժշտասէր հասարակութեան ներկայացած Բ. Թումանեան, իր պաս-պարիթոն հարուստ ձայնով,

բացառիկ յաջողութեամբ մեկնաբանած է հայկական, իտալական, ռուսական եւ ամերիկեան օփերայի նշանաւոր գործերէն քաղուած հատուածներ:

❖ 7 Յուլիսի երեկոյեան, Կուլտոնի թատերասրահին մէջ, յաջողութեամբ պատկուած է «Մուզիքարմէնա»-ի յիշատակութեան արժանի ելոյթներէն մէկը, երբ բեմ բարձրացած է զուիցերիաբնակ երգահան Հայկ Վարդանի եւ ֆրանսահայ թատերագիր Ժան Ժագ Վարուժանի Prométhée XII օփերան, խըմբավարութեամբ անուանի երաժշտագէտ Զլաուտիօ Ամպրոլիսիի:

Հայկ Վարդանի (երաժշտութիւն) եւ Ժան Ժագ Վարուժանի (բնագիր) վերոնշեալ օփերայի առաջին արարի անդրանիկ կատարման համար, ժամանակակից երաժշտութեան մասնագէտ եւ վաստակաւոր խմբավար Զլաուտիօ Ամպրոլիսի գործի լծած է քսանամեայ փորձառութիւն ունեցող իր Ex Novo Ensemble նուագախումբը, Վենետիկի Teatro Olimpico երգչախումբի խմբավար Հիուլիանօ Ֆրանքասոյի Վենետիկի ձայնային քառեակը, թենոր երգիչ Իվան Մաթիախ (Ֆրանսայէն), սփրանօ երգչուհի Ռեգինէ Սաու (Գերմանիայէն) եւ այլ ուժեր, որոնց միացեալ ձիգերուն շնորհիւ՝ այս համերգը վերածուած է երաժշտական իսկական վայելքի մը եւ մեծ զարմանք ու հաճոյք պատճառած է ո՛չ միայն հեղինակներուն, այլեւ՝ ներկայ հոծ բազմութեան:

❖ 9 Յուլիսի երեկոյեան, Վենետիկի համալսարանի Սանթա Մարկերիթա լսարանին մէջ, տեղի ունեցած է հայ միջնադարեան բանաստեղծութիւնը ներկայացնող ուշագրաւ ձեռնարկ մը, որուն իրենց մասնակցութիւնը բերած են հայ եւ օտար մտաւորականներ եւ երաժիշտներ: Մերգէյ Փարաճանովի յիշատակին նուիրուած սոյն երեկոյին բացման խօսքը արտասանած է Վենետիկի համալսարանէն փրոֆ. Պօղոս Լեւոն Զէքիեան, որ

սեղմ գիծերով ներկայացուցած է Ս. Փարաճանովի կեանքը: Ապա, փրոֆ. Ճ. Պելլինկերի ներկայացուցած է կովկասեան աշուղական բանաստեղծութիւնը, իսկ Մայրթ-Նովայի բանաստեղծութիւնը օտար հասարակութեան ծանօթացուցած է փրոֆ. Փաուլա Միտոնեան, որ նաեւ կարդացած է Մայրթ-Նովայէն կատարած իր թարգմանութիւնները:

Յայտագիրին յատուկ փայլք եւ ուրակ տուած է հայրենի դուղուկահար Գէորգ Տապալաղեան, նուագակցութեամբ Գրիգոր Տագուշեանի եւ Կարէն Խաչատրեանի: Մայրթ-Նովայի իրաքանչիւր բանաստեղծութեան ընթերցումէն ետք, հայրենի երաժիշտները նուագած են մեծանուն աշուղի եւ այլ աշուղներու կարգ մը գործերը՝ սրահին մէջ ստեղծելով կախարդական ինքնուրոյն մթնոլորտ մը:

❖ 17 Յուլիսին, կէսօրէ ետք, Ս. Ղազարի եկեղեցոյ մէջ, տպարիչ համերգով մը ելոյթ ունեցած է ամերիկահայ անուանի երգեհոնահար

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ՀԱՅՐԵՆԻ ՄՏԱԻՈՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՖՈՆՏ

Համազգայինի հայրենի մտաւորականութեան ֆոնտի առաջին յատկացումները յայտարարուեցան Մեպտեմբեր 9ին՝ Երեւանի մէջ կայացած մտաւորականութեան հաւաքի առաջին նիստին: Այսպէս, մեզի ներկայացուած 25 գործերէն առաջին հերթին մրցանակի արժանացան բանասիրական չորս երկեր.

- Արմէն Զարեանի «Հայ ճարտարապետութիւն» (յետ մահու)
- Սարգիս Յարութեանի «Հայ առապելաբանութիւն»
- Ալբերտ Ծարուրեանի «Եղեռնապատում»
- Գէորգ Զահուկեանի «Հայոց լեզուի տեսութիւն եւ պատմութիւն»:

Ամէնէն մօտ ապագային պիտի յայտարարուի նաեւ գրականարուեստական գործերու մրցանակատույնութիւնը, ապա պիտի ձեռնարկուի անոնց հրատարակութեան:

Համազգայինի Պատգամաւորական ժողովին յանձնախումբիս կողմէ առաջարկուեցաւ եւ ընդունուեցաւ, որ սոյն նախաձեռնութիւնը վերածուի մնայուն հրատարակչական աշխատանքի: Առ այդ, ասկէ ետք յատկացումները պիտի կատարուին 300-1000 ամերիկեան տոլարի սահմաններուն մէջ, իբր պատուագին՝ ըստ ներկայացուած գործերուն բնոյթին, որպէսզի ֆոնտէն կարենան օգտուիլ աւելի մեծ թիւով մտաւորականներ:

Ատենին կը յայտարարուի նոր գործերու ընդունման թուականը: Մինչ այդ, անգամ մը եւս կը դիմենք մեր շարժոյ հասարակութեան, որ իրենց լիաբռուն նուիրատուութիւններով զօրավիճ կանգնեն այս կարեւոր ձեռնարկին:

ԿԵՂՐՈՆԱԿԱՆ ՑԱՆՁՆԱԽՈՒՄԲ
15 Հոկտեմբեր 1994

Պերճ Ժամկոչեան: Աշխարհի չորս ծագերուն, բազմաթիւ երկիրներու սիմֆոնիկ նուագախումբերուն հետ բեմ բարձրացած հռչակաւոր երգեհոնահարը իր այս համերգով մեկնաբանած է եօթը երգահաններու ուշագրաւ գործեր: Պախի, Մոցարթի, Ռախմանինովի եւ միջազգային այլ երգահաններու գործերուն կողքին՝ այդ օր, Պերճ Ժամկոչեան առաջին անգամ ըլլալով երոպացի հասարակութեան ներկայացուցած է ամերիկացի երիտասարդ երգահան Ճեֆրի Պրոտիի երկու կոթողային յօրինումներ՝ 1988ի երկրաշարժի զոհերուն յիշատակին նուիրուած Introdutione, Passacaglia e Doppia Fuga in fa Diesis Min եւ Metamorphosis/Toccata անուն ստեղծումները: Վերոյիշեալ երկու գործերուն մէջ ալ, երաժշտագէտներուն ուշադրութիւնը գրաւած է հայկական շարականներէ քաղուած թեմաներու ներդաշնակ ներկայութիւնը: Համերգին ներկայ գտնուած է նաեւ հեղինակը՝ Ճեֆրի Պրոտի:

❖ 23 Յուլիսի երեկոյեան, Scuola Grande S. Giovanni Evangelistah մէջ, տեղի ունեցած է փառատօնի փակման համերգը: Նախկին Խ. Միութեան, Ս. Նահանգներու, Ֆրանսայի, Զուիցերիոյ, Շուէտի, Նորվեկիոյ, Չեխոսլովակիոյ, Փորթուգալի եւ երոպական այլ երկիրներու երաժշտասէր հասարակութիւնը նուաճած Երեւանի Արամ Խաչատրեանի անուան լարային քառեակը, բաղկացած՝ Արտաշէս Մկրտչեանէ, Դաիթ Մովսիսեանէ, Ալբերտ Բրուտեանէ եւ Պարոյր Շախազիզեանէ, այս անգամ հմայած է Խտալիոյ երաժշտասէրներն ու մասնագէտները, արժանաւորապէս մեկնաբանելով Հենտըլի, Փորոդիսի, Կոմիտասի, Միրզոյեանի, Սարեանի, Մանսուրեանի եւ Ալթունեանի լարային քառեակները:

«Մուզիքարմէն» փառատօնին իրենց մասնակցութիւնը բերած բոլոր երաժիշտները, երգիչներն ու երգահանները, բարձրորակ տաղանդի եւ մտաւորական լուրջ պատրաստութեամբ

արուեստագէտներ ըլլալու իրենց հանգամանքով, անխտիր արժանացած են օտար խտապահանջ ունկնդիրներուն բարձր գնահատանքին եւ ըստ արժանոյն ներկայացուցած հայկական երաժշտութիւնը՝ զանազան ժամանակաշրջաններու պատկանող իր վաւերական բազմերանգ գործերով:

«ՓՐՕ ԱՐՄԵՆԻԱ»ՅԻ ՆՈՐ ԹԻԻԸ

Նոյեմբերի առաջին օրերուն, Մոսկուայի մէջ լոյս տեսած է «Փրօ Արմենիա» հանդէսի այս տարուան հերթական երրորդ թիւը, որուն գլխաւոր խմբագիրն է Ռուս-հայկական համագործակցութեան ֆոնտի նախագահ Էդուարդ Յովհաննիսեան:

Ամսագիրին այս վերջին թիւը իր նախորդներէն կը զատորոշուի աւելի ճոխ ձեւաւորումով եւ հարուստ բովանդակութեամբ: Գլխաւոր խմբագիրին «Մարդու եւ ազգի իրաւունքներու պաշտպանութիւնը» առաջնորդող յօդածէն ետք, ընթերցողին հրահրուած է մոսկուայաբնակ անուանի միջազգային իրաւագէտ Եոսի Բարսեղովի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան, որպէս միջազգային իրաւունքի սուբեկտի, ճանաչման իրաւագիտական հիմնաորումը»: Յայտնի հրապարակագիր Սվետլանա Կործոկովա ստորագրած է «Հայկական Յեղասպանութեան դատապարտումը՝ իբրեւ քաղաքակրթութեան տարր» յօդուածը, Ինեսսա Բուրկովա՝ «Ղարաբաղը փակուղի չէ» ակնարկը, յայտնի տնտեսագէտ Գէորգ Գալաչեան՝ «Մեծովեան տնտեսական համագործակցութիւնը եւ Թուրքիան» ուսումնասիրութիւնը, լրագրող Վիթալի Խալաթով՝ «Կովկասը եւ Հայաստանը» աշխատասիրութիւնը, եւ այլն: Հանդէսը հարուստ է նաեւ Հայաստանի եւ Արցախի մասին կատարուած ելոյթներէ քաղուած մէջբերումներով՝ պարունակի


Քարոլայն Քոքսի, Անդրեյ Նուկինի, պատմաբան Սերգեյ Լեզովի եւ ռուս այլ մտաւորականներու կողմէ:

«Փրօ Արմենիա» հանդէսը լայն տարածում ունի ո՛չ միայն Մոսկուայի հայ համայնքի, այլեւ՝ Ռուսաստանի քաղաքական, հասարակական, մշակութային բազմաթիւ շրջաններուն եւ ընթերցող հասարակութեան մօտ:

**ՅՈՒՇ ԵՐԵԿՈՅ՝
Յ. ԿԱՐԱՊԵՆՑԻ
ՅԻՇԱՏԱԿԻՆ**

Հայաստանի Գրողներու Միութեան քննադատներու խորհուրդը Դեկտեմբեր ամսուան ընթացքին կազմակերպած է յուշ-երեկոյ մը՝ նուիրուած վերջերս մահացած սփիւռքահայ ժամանակակից գրող Յակոբ Կարապենցի:

Կարապենցի անուան ու ժառանգութեան մասին խօսած է գրականագէտ, բանասիրական գիտութիւններու թեկնածու Գրիգոր Յակոբեան, որ ներկայացուցած է Յ. Կարապենցի «Անծանօթ հոգիներ», «Ամերիկեան շուրջպար» պատմուածքներու ժողո-



վածուները եւ «Կարթագենի դուստրը» վէպը: Գ. Յակոբեան նշած է, որ Կարապենցի ստեղծագործութիւններուն ու յօդուածներուն մէջ միշտ հնչած է ճշմարիտ, զգաստ ու սթափ խօսքը՝ մեր երկրի ու հասարակութեան մասին:

Յ. Կարապենցի ստեղծագործութիւններուն եւ անոր գրական վաստակին մասին բանախօսած են նաեւ բանասիրական գիտութիւններու թեկնածու Արգար Ափինեան եւ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Սերգեյ Սարինեան: Այնուհետեւ, արուեստաբան Լեւոն Հախվերդեան, Գրողներու Միութեան նախագահ Ռազմիկ Դաւոյեան եւ բանաստեղծ Գեորգ Էմին յուշեր պատմած են Յակոբ Կարապենցի մասին:

**ՔԱՐՎԱՃԱՌԻ
...«ԱՂՈՒԱՆԱԿԱՆ
ԽԱՂԱՇ»Ը 1079
ՏԱՐԵԿԱՆ**

1980էն սկսեալ, բայց մա՛նաւանդ 1993 Յունիսէն առդին ազատագրուած Քարվաճառի տարածաշրջանը (Քելբաջարը տակաւին 1141ին հայ մատենագրութեան մէջ յիշատակուած Քարվաճառ գիւղի թուրքերէնով աղաւաղուած ձեւն է) կ'ենթարկուի լուրջ հետազօտման: Ի թիւս արձանագրուած բազմաթիւ խաչքարերու, վերջերս Քարվաճառի մէջ յայտնաբերուած է 916 թուականի արձանագրութիւնը կըրող փոքրաչափ խաչքար մը, շրջանի թանգարանին մէջ, որ 1965էն սկսեալ այցելուներուն ներկայացուած է ատրպէյճաներէն եւ ռուսերէն մակագրութեամբ՝ իբրեւ ...«աղուանական խաչդաշ»:

Սպիտակ կրաքարէ պատրաստուած խաչքարը ունի 29.5x19x4.5 սմ. չափ: Անոր ետեւի կողմին վրայ կը կարդացուի վեց տողէ բաղկացած եւ լաւ պահպանուած 916 թուակիր արձանագրութիւն մը: Խաչքարը շրջանի թանգարան փոխադրուած է 4 Նոյեմբ-

բեր 1965ին: Հակառակ մասնագէտներու ճիգերուն, ցարդ կարելի չէ եղած փաստել, թէ անիկա շրջանի ո՞ր հնարավայրէն փոխադրուած է թանգարան:

Գեղարուեստական արժէքէ աւելի պատմական նշանակութիւն ունեցող այս խաչքարին արձանագրութիւնը կը սկսի հետեւեալ ձեւով.

«ԿԿԵ (365+551=916) Թուականութեանս հայոց, որ եւ ած (Աստուած) շնորհաւոր արասցէ»...

Վերջին երկու տողերու իմասը գրեթէ անհասկնալի է: Մասնագէտ Սամւէլ Կարապետեանի համաձայն՝ «Յարդարանքի իմաստով խաչքարը թէեւ գեղաքանդակ է, բայց այնուամենայնիւ բացառիկ լուծումներ չունի, հետեւաբար այն նախ եւ առաջ արժէք է ներկայացնում պատմական առումով»:

Շարունակելով, Ս. Կարապետեան կ'աւելցնէ, որ ցարդ յայտնի բոլոր թուագրուած խաչքարերուն ամէնէն հինը կը կրէ 876 թուականը եւ յայտնաբերուած է իր կողմէ, Արարատի շրջանի Հորթան գիւղատեղիէն: Քարվաճառի վերոնշեալ խաչքարը կը հանդիսանայ հնագոյն երկրորդ նմոյշը, 40 տարի կրտսեր Հորթանի խաչքարէն:

**ԱՅՎԱԶՈՎՍԿԻԻ ՄԷԿ
ԻՒՂԱՆԿԱՐԸ
ԿԸ ՎԱՃԱՌՈՒԻ
ԹՈՒՐՔԻՈՅ ՄԷՋ**

«Մարմարա» օրաթերթին մէջ լոյս տեսած լրատուութիւն մը կը յայտնէ, թէ Իսթանպուլի «Մաչքա մեզաթ» աճուրդի հաստատութիւնը 1994ի աշնանավերջին կազմակերպած է թանկարժէք հնութիւններու եւ նոյնքան արժէքաւոր իւղաներկ պատանդներու աճուրդ մը, որուն ընթացքին վաճառուած են նաեւ մեծ թիւով հայ գեղանկարիչներու ստեղծագործութիւններ:

Իւղանկարներուն մէջ ամէնէն ուշագրաւ եւ նշանաւոր գործը եղած է Յովհաննէս Այվազովսկիի 11x13 սմ. չափով մէկ փոքրիկ իւղաներկ կտաւը, որ կը ներկայացնէ Պոլսէն տեսարան մը: Մեծ հետաքրքրութիւն առաջացուցած են նաեւ այլ հայ գեղանկարիչի մը՝ Ջիւանեանի երկու մեծադիր պատանդները: Անոնցմէ մէկը, որ կը ներկայացնէ ծովու ալիքներուն մէջ բռնուած ալեքել նաւակ մը, նախնական 5 միլիոն լիբրայէն (թրքական թղթոսկի) բարձրացած է մինչեւ 220 միլիոն լիբրայի: Ինչ կը վերաբերի Այվազովսկիի փոքրածաւալ իւղանկարին, առաջարկուած նախնական գինը եղած է 250 միլիոն լիբրա:

**ՀԱՅԿԱԿԱՆ
ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆԸ՝
ՖՐԱՆՍԱՅԻ
«Բ. ԿԱՅԱՆ»ԷՆ**

Ֆրանսայի պատկերասփիւռի «Երկրորդ կայան»ի է. Ռաճճերիի նշանաւոր յայտագիրը՝ «Երաժշտութիւն՝ սըրտի մէջ» («Միւզիք օ քէօր»), Նոյեմբերի իր վերջին ծրագիրը ամբողջութեամբ նուիրած է հայ երաժշտութեան:

Հաղորդավարուիին իբրեւ զրուցակից ունեցած է Շարլ Ազնաւուրը, որ Հայաստանի շրջուն դեսպանի իր հանգամանքով՝ ներկայացուցած է տնտեսական, ընկերային եւ մշակութային այն դժուարութիւններն ու հարցերը, զորս կը դիմագրաւէ հայաստանաբնակ հայութիւնը: Ֆրանսահայ անուանի երգիչն ու երաժիշտը հանգամանօրէն անդրադարձած է Հայաստանի շրջափակման հետեւանքով առաջացած ուժանիւթի տագնապին, հայրենի ժողովուրդին պարտադրուած դաժան ձմրան, երկրին ճգնաժամային վիճակին եւ յարակից հարցերու:

Այնուամենայնիւ, Ազնաւուր աւելցուցած է, որ նոյնիսկ ամէնէն անտանելի պայմանները չեն կրցած արգելք

հանդիսանալ երգի եւ երաժշտութեան հանդէպ հայ ժողովուրդի տածած մեծ սիրոյն: Ընդհակառակն, դժբախտութիւնը աւելի շեշտած է անոնց երգելու պահանջը, դիտել տուած է Ազնաւոր:

Է. Ռուճերիի մէկ հարցումին պատասխանելով, ֆրանսահայ հանրածանօթ երգիչը ըսած է, թէ հակառակ անոր, որ Թուրքիա մինչեւ օրս կ'ուրանայ 1915ի ոճիրը, սակայն ինք միշտ կը յուսայ, որ օր մը, իբրեւ գիտակից ու քաղաքակիրթ երկիր՝ Թուրքիա պիտի կրկնէ Գերմանիոյ օրինակը:

Երկյսօտութեան ամբողջ ընթացքին, յայտագիրը ընդմիջուած է հայ երգն ու երաժշտութիւնը ներկայացնող բնորոշ նմոյշներով: «Երաժշտութիւն՝ սրտի մէջ» վերոնշեալ յայտագիրի ընթացքին ելոյթ ունեցած են երգչուհի Կ. Իսբիրեան, Վ. Մամիկոնեան, Ժան-Մարք Ֆելիքս, Սիփան-Կոմիտաս երգչախումբը, Կոմիտաս քառեակը եւ «Սեւ աչքեր» նուագախումբը, որոնք մեկնաբանած են հայկական եւ արեւմտեան երաժշտական գոհարներ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍ...

Հայաստանի Հանրապետութեան մշակոյթի նախարարութեան եւ Գերմանիոյ Պոխում քաղաքի քաղաքապետարանի միատեղ ջանքերով, Յուն-

ար 14ին, պաշտօնական հանդիսութեամբ կատարուած է բացումը «Նագոյն մշակութային լանդշաֆտի վերագտնում» խորագիրը կրող ցուցահանդէսին, որ նուիրուած է Հայաստանի քրիստոնէութեան ճանաչման 1700ամեակին:

Հայկական Ուսումնասիրութիւններու Կեդրոնին նախաձեռնութեամբ ու նոյն թանգարանին եւ ՀՀ մշակոյթի նախարարութեան գործակցութեամբ տեղի ունեցած այս ցուցահանդէսը վայելած է երկու երկիրներու նախագահներուն հովանաւորութիւնը:

ՀՀ մշակոյթի նախարարութեան թանգարաններու գծով գլխաւոր մասնագէտ Նորա Դայեան տեղեկացուցած է, որ Պոխումի թանգարանին մէջ կը ներկայացուին 514 ցուցանմոյշներ, որոնք բերուած են Հայաստանի II թանգարաններէ: Քրիստոնէական առաջին պետութեան հինաւորց մշակոյթը ներկայացնող ցուցանմոյշներու շարքին եղած են նաեւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի գանձատան մէջ պահուող եկեղեցական ծիսակատարութիւններու սպասներ եւ մատուցներ:

Այս առիթով, գերմաներէն լեզուով պատրաստուած է 500 էջնոց հատոր մը, որ նուիրուած պիտի ըլլայ ո՛չ միայն այս ցուցադրութեան, այլեւ պիտի ներկայացնէ Հայաստանի մշակոյթի պատմութիւնը, հնագոյն ժամանակներէն մինչեւ մեր օրերը:

Ցուցահանդէսը պիտի տեւէ մինչեւ 15 Ապրիլ 1995:

ՀԱՄԱՕԳԱՅԻՆ
ՆՀԱՆ ՓԱԼԱՆՃԵԱՆ ՃԵՄԱՐԱՆ
ՈՐՈՎԵՐՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱՆՔ

ԷԶԵՐ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՊԱՏՄՈՒԹԵՆԷՆ
—ուսումնասիրութիւն—
Մեսրոպ Արք. Աշճեան, Նիւ Եորք, 1994, 144 էջ:

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՀԵՏ
—ուսումնասիրութիւն—
Յակոբ Յ. Ասատուրեան, Թէֆլնլայ, Ա.ճ. 1994,
հրատարակութիւն՝ Սիփան, 219 էջ:

ՅԱԿՈՒՅ ՕՇԱԿԱՆԻ ՎԷՊԸ
—ուսումնասիրութիւն—
Շուշիկ Տասնապետեան, Պէյրութ, 1994, հրատարակութիւն՝
«Համազգային»ի «Վահէ Սէրեան» տպարան, 126 էջ:

ՀԵԶ ԻՐԻԿՈՒՆ
—բանաստեղծութիւններ—
Աբրահամ Ալիքեան, Պէյրութ, 1995, հրատարակութիւն՝
Անթիլիաս, 369 էջ:

ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ
—բանաստեղծութիւններ—
Մարուշ, Հալէպ, 1995, տպարան-հրատարակչատուն՝
«Կիլիկիա», 62 էջ:

ԼԻՔԱՆԱՆ

Հատավաճառ (գոյգ թիւ) 5-000 Լ-Ո
Տարեկան բաժնեգին 30-000 Լ-Ո

ՍՈՒՐԻԱ

Հատավաճառ (գոյգ թիւ) 100 Ս-Ո

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Տարեկան բաժնեգին 40 Ամերիկեան տոլար

باکین
مجلة شهرية ، ادبية فنية وعلمية
المدير المسؤول
السيد ارتين كارنيك قزانبجان

•

PAKINE
REVUE MENSUELLE
LITTÉRAIRE & ARTISTIQUE

Propriétaire
Dr. A. KAZANDJIAN

•

Բ Ա Գ Ի Ն
ԱՄՍԱԳԻՐ
ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ
ԵՒ ԱՐՈՒԵՍԻ

Խմբագիր
ՊՕՂՈՍ ՄՆԱՊԵԱՆ

Խմբագրութեան անդամ
ՍԱՐԳԻՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

Հասցէ՝
Centre Culturel SHAGHZOYAN
Bourdj Hammoud — Liban